



891.99.09

1399

0-55 Ozark 3.

Zurich 468

Whole Gushing 9700

3

0 55

Յ. ՕՇԱԿԱՆ

✓

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

1399

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

858

ԿՐՏՍԵՐ ՌՈՄԱՆԹԻՔՆԵՐ

Թ. ԹԷՐՁԵԱՆ
Յ. ՍԷԹԵԱՆ

Մ. ԱՃԷՄԵԱՆ
Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

A II
27098



ԳՐԱԴԱՐԱՆ - ՀՐԱՏԱՐԱՐՈՒՄ
Կ. ՏՇՆԻԿԵԱՆ
ԿԱՐԴԻՆԱՆՍՅԱՆ - ՍԵՆ ՍԵՐԵԼ
ՊԵՐՈՒԹ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՅ, ԵՐՈՒՍԱԴԷՄ
1954

ԿՐՏՍԵՐ ՌՈՄԱՆԹԻՔՆԵՐՈՒ սոյն հասորը
կը հրատարակենք Կիպրոսի Հայ Հասարակու-
թեան կողմէն՝ հանգուցեալ եւ մեծանուն գրա-
գէտ Յակոբ Օսականի յօբելեանին առիթով գո-
յացած գումարով:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք այս
առթիւ Կիպրահայ գաղութին, որ ինչպէս միշտ,
այս առիթով եւս գիտցաւ իր սրտի նիւթացած
սուրճը բերել Հայ մշակոյթին, անոր նուիրուած
այս հրատարակութեան առիթով:



ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

ԿՐՏՍԵՐ ՌՈՄԱՆԹԻՔՆԵՐ



Այս ընդհանուր տիպոլոգիան տակ, աւելի դիւրութեան քան թէ գրական ձգտումներէ հանդիտութեան պատճառով մը, կ'ուսումնասիրեմ քերթողական գործերը ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԷԹԵԱՆ, ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ և ՌԵԹԷՈՍ ՊԷՐՊԷՆԱՆ անուններով ծանօթ մարդոց: Ասոնցմէ Պէրպէրեան՝ իբր քրոնիկագիր, արձակ էջերու ալ հեղինակ, ունի առանձին գլուխ մը: Միւսները առաւելապէս քերթողական վաստակով մը վարկաւոր, նիւթ չեն հայթայթեր առանձին կողմերու: Յովհաննէս Սէթեանի արձակները սանկ ու նանկ կտորներ են, առանց գրագէտէ մը պաշտպանուած ըլլալու:

Կրտսերը ժամանակի յարաբերութիւն մը չի յայտնաբերեր: Թովմաս Թէրզեան արդէն բանաստեղծ մըն է երբ Պետրոս Դուրեան հազիւ կը քալէ: Աճէմեանի վերջին գիրքը՝ ԹԵՐԵԱՆ ՅԱՔԷՐ (1908) մեր երեք դպրոցներուն մահովը կրնայ ծանրապատկ նկատուիլ: Կրտսեր՝ վասնզի վաւերական ուսմանթիքները — Ալիշան, Պէշիկթաշեան, Դուրեան — զիրար կը պաշտպանեն, ժամանակին մէջ, ու իրարու նպաստ մը կ'ընծայեն, զիրենք հասկնալու ջանքը դիւրացնելու տեսակէտէն: Յետոյ կայ տաղանդներուն ալ ճնշումը: Թովմաս Թէրզեանէն ոչ մէկ քերթուած չ'անցնիր արեւմտահայ բանաստեղծութեան սրբաբանը, ինչպէս եղբրապէս Ճիշդ է այս հաւաստումը միւս երեքին համար ալ: Արդ, մենք գիտենք թէ Աւագ Ռոմանթիքներէն ամենէն քիչ օժտուածը՝ Մկրտիչ Պէշիկթաշեան, արեւմտահայ գրականութեան մէջ անփոխարինելի քերթուածներու բարերարն է:

թեանց, չքեղ երազանքներուն թափոյրովը: Ատիկա ես ըրի միւսներուն անձին կառուցման պահուն: Թէրդեան, պոտականելով հանդերձ այդ մարդոց փաղանդին, գտած է կերպը՝ իր առանձնացումը ոսկեզօծելու: Անշուշտ կը գրէ իր Սանդուխտը, իր Աբշիլը, Յովսէփը, բայց կը գրէ զանոնք մթին փառասիրութեանը (*) մէջ եւրոպական հեղինակներու: Այդ եւրոպական մեր գրականութեան մէջ զգալի ըլլալէ առաջ, ունի կերպարանք մեր հասարակութեան քաղքենի խաւերուն ալ վրայով: Մեր պաշտօնէութիւնը, բարձր առեւտրականութիւնը, կաթողիկէ հայերով ու այս յղացքը ոսկեզօծող փղշտացի, նենգ մտայնութեան համախառնուրդ յըմանքներ չենք կրնար մեր արհամարհանքին մէջ մարտիի դարձնել: Այդ ազդեցութեան գինն են մեր քանի մը տխրահոչակ վէպերը, մեր ամբողջ թատրոնը, այդ շրջանէն, մեր գրականութեան անմարդկային ըսուելու չափ սեւ թեւեթեալ, անիրական, առնուազն ապազգային վարդապետը, մինչև իրապաշտները: Թովմաս Թէրդեան հետը չհղաւ իր ժողովուրդին, այն հերարձակ գեղեցկութեամբ, որուն օրինակը կը հաստատենք իր ընկերներուն (Մկրտիչ Պէշիկթաշեան, Գերենց) զործունէութեանը մէջ: Մեր ոչ մէկ խորունկ հետաքրքրութեանց, կիրքերուն, տառապանքին այս մարդը չէ բերած սրտագին, իրաւ մասնակցութիւն: Վայելած է այս ժողովուրդին մեծ գաւըններուն համակրանքն ու բարիքը, շատ շատ զանոնք առանձնակի փոխարինելու համար շրջանին յատուկ տաղաչափական զովասացութեամբ:

Ահա թէ ինչու վարանքը, խղճահարութեան մօտ տաղնապ մը կը պաշարեն զիս, իր անունին առջև: Անոնք որ հաւանա-

(*) Ասանդուխտ Կոյսին նախերգանքը Ձուհահանի կողմէ գործադրուած իբր երաժշտական կտոր, 1908էն ետքը արտասանուած է տաղանդաւոր դերասանի մը բերանէն (Վ. Փափաղեան) ձգելով մեծ տպաւորութիւն: Ոչ ոք մտքէն անցուց թէ այդ բերանը ամենէն հասարակ ասուլիսն ալ ի վիճակի էր փառքի հանելու: Տպուածը այդ նախերգանքէն հասարակ ռոմանթիզմ է, չպարունակող որի է իրաւ, սրտէ եկած խօսք, ալ չեմ պահանջեր՝ թատերական նկարագիր մը այդ բառակոյտէն: Հէքիմեան իր ողբերգութիւնները հայերէնէն առաջ իտալերէնով երբ կը բեմադրէ Պոլիս, կուտայ փաստը սերունդին փառասիրութեան: Արդ, գիտենք որ Հէքիմեան զասընկերն էր Թէրդեանին: Եւրոպական ճաշակի մը մեր մէջ փոխադրուելու: Բայց ատկէ առաջ կանոնաւոր թատերական հասկացողութիւն մը: Թէրդեան կը յանդիմանուի Ֆաուստին թարգմանութեանը համար ու կ'արդարանայ այդ արարքէն՝ աճապարանքը պատրուակ բռնելով:

բար քանի մը սերունդ վերջը, պիտի վխտակազմեն վերջնակա-
նապէս արեւմտահայ գրականութիւնը, թերեւ պիտի զգան, իր
բոլոր լրջութեան մէջ, տաղնապը որ իմն է հիմա, ուստի որուն
վրայ, Յետոյ, այդ մարդերը անշուշտ պիտի կենան, perplexe
քիչ մը, գաղիացիներուն ըսածին պէս, փառքի մը հասկացու-
ղութեան մէջ որ միակողմէր շարունակուած, Թէրզեանին առա-
ջին քայլերէն մինչեւ գերեզմանին դռները, ու արհամարհած՝
գամբաններուն ալ լռութիւնը: Վկայութիւններ, այդ հսկայ
փառքէն, որքան առատ, գունաւեղ, վճռական, (միայն Ալիշա-
նին վայելած ժողովրդականութեան մօտ կը դալկանայ անիկա)
սերունդէ սերունդ, քառորդ դարէ քառորդ դար, նորոգուած
ու երիտասարդացած այդ փառքը, ըսի թէ անցած է գերեզմանն
ալ: 1912ին, անոր մահէն քանի մը տարի վերջ, Սուրէն Պար-
թեանը միայն, սովորական իր անզգածութեամբ, չըսելու հա-
մար անսովոր շահագիտութեամբ, եգիպտոս լոյս տեսնող Հաւա-
հանդէսին մէջ ըսած է քանի մը տարակոյսի խօսքեր, բանաս-
տեղծ Թէրզեանին տաղանդը ստուերող: Բայց այդ թուականին
Սուրէն Պարթեան վկայեալ պարսաւագիր մըն է, վարձուած
մօնետիկ մը, առնուազն իր մտածումին ճիշդ հակառակը գրելէ
չքաշուող տարօրինակ խաչագող մը: Իր այս ելոյթը անկարող
է մնացած, այդ իսկ տրտմութիւններուն գինով, փշրանք մը
բան փոխել, միապաղաղ ու փառազին, փառահեղ հիացմունքէն
որով պատմութեան ուսման իր միջակութեան շրջուած մե-
ծութիւնը՝ Թովմաս Թէրզեան: Սուրէն Պարթեան իր կասկա-
ծանքը կը բանաձեւէր Թէրզեանէն նուազ բանաստեղծ չեղող
ուրիշի մը, Յովհաննէս Աթեանին յորելեանը քիչիկ մը շքաւո-
րելու համար (1912, Գահիրէ) ու այդ իսկ հանգամանքով ունե-
ցաւ հակադիր տղիւցութիւն: Մարդիկ շարունակեցին հաւատա-
րիւմ մնալ իրենց սորվածներուն, լսածներուն: Անոր զաւակը
(որմէ մեր ժողովուրդը պատճառ մը չունի դժգոհ մնալու, քանի
որ որդիական համբուրելի առաքինութեամբ մը, հակառակ այդ
քերթուածներէն ոչինչ հասկնալու, հաւաքած է զանոնք ամբող-
ջական ծածքի մը տակ): 1929ին Արշակ Չօպանեան այդ հրկա-
հատոր հաւաքածոյին սկիզբը դրած է մէկը իր զանգուածեղ
հիացումներէն, որ ոչ միայն կը դարձանք մեզ, այլեւ կը ստեղծէ
ընդարձակ շփոթութիւն: Արշակ Չօպանեան, հին աշակերտ մը
մեծ վարպետին, ուսանողական դարձեալ սիրելի առաքելու-
թեամբ մը, այդ կենդանադիրը յօրինած է աւելի պարկեշտ
զգացումներով, բայց արեւմտահայ բանաստեղծութեան ընդհա-

նուր յղացքը (թող ներուր այս բացատրութիւնը) չառ մը կէտերէ վերադարձուաւ զժառանգ ալ պատասխանատուութեամբ մը Եթէ մեր պապերը այդպէս կը հասկնային բանաստեղծութիւնը, մեր պարտքն էր այդ հասկացողութեան ճշգրտութիւնը, ի վերջոյ մոռնալու չենք որ միշտ մեկ է հայ գրականութիւնը: Ո՞վ կայ այդ հարկաւոր քերթուածներուն հաշիւ, որ պատկանէր իմ ժողովուրդին: Այլապէս, այդ քերթուածները կրնային ստորագրուած ըլլալ Քամաթիքացիէ մը: Չօպանեանի վկայութիւնը պիտի վերածուի, աւելի անդին, իր ճշմարիտ տարողութեան:

Այս բոլորէն հասկնալով՝ թէ զժողովուրդէն է այդ անունը ու այդ գործը վտարել արեւմտահայ գրականութեան պատմութենէն: Համապատասխան, թէ Եւրոպայէն պատմութենէ մը աւելի անկախ ծրագրով մը, դարձեալ չի կրնար անդիտանալ ոչ թէ այդ փառքը (*) — կուշտ եւ յաւիտանալու չափ բոլոր կեղծ, Զուրտ, Նոյնիսկ իրաւ փառքերէն — այլ այդ փառքը կարելի ընող պայմաններու հանդէս մը: Ստիպուած եւ իր առիթով ուսումնասիրութեան ենթարկել քերթողական ըմբռնում մը, ճաշակ մը, 1860-ի սերունդին ակնբերական մէջ նորոյթ մը, որոնք բաւէին բացատրելու Թէրզեանի հէքեաթը առանձնապէս, զայն հաշտեցնելին արեւմտահայ գրականութեան ընդհանուր ոգիին հետ, առհուազն վկայութիւններ բերէին այդ սերունդին քանի մը տաղանաւորներէն: Ըրիր եւ այդ փորձը նուազ հոգեւոր անուններու համար: Զարթոնքի մարդոց հոգեբանութիւնը, մտայնութիւնը, ձգտումները թէ անբաւարար գործերու վրայով հասած մեղի, արտօնեցին զիս լայն յօրինումներու: Մնաց որ Թէրզեանի միայն իր ժամանակին փառքը չէ ապրած: Չօպանեան, անոր մահուան առիթով մեր մամուլին մէջ լոյս տեսած արտայայ-

(*) Վճռական է իմ կեցուածքը, հրապարակի բոլոր մուրացածոյ փառքերուն դիմաց: Չեմ տուած տեղ բաղմաթիւ փառքերու: Թէրզեանի փառքին նախանձորդ, անկէ աւելի ժողովրդականութիւն վայելած բանաստեղծ մըն է Աղեքսանդր Փանոսեանը որմէ հարկաւոր ոտանաւորներ իրենց փառքը կ'ապրէին արեւմտահայ գրականութեան մահէն (1915) ալ վերջը: Արդ, Աղեքսանդր Փանոսեան հասարակ տաղաչափ մըն է ու ընդ ոչ մէկ արժանիքով իր անունը փրկող: Արեւելահայերը ունին Ղ. Ա. վայեանցը որուն հետ թէ քերթողական երկերը կրնանք սրտի հանդարտութեամբ ծով զրկել, բայց պարտաւոր ենք կենալ արձակին վկայութեանցը առջև: Գէթ Աղայեանցի վէպերը չինացի տղու մը ապրումներէն չեն առներ իրենց նախանիւթը: Աղեքսանդր Փանոսեանի ոտանաւորները կը պատկանին ամենուն, այսինքն ոչ ոքի:

տութիւններն ալ ջանացած է օգտագործել իր հերոսին փառապսակին: Արդ, 1909ը թուական մըն է ուր արեւմտահայ գրականութեան կերպարանքը գտած է իր աւարտը: Այդ մահուան արթնցուցած ընդհանուր հետաքրքրութիւնը նիւթ կ'առնէր բանաստեղծէն, մարդէն, ուսուցչէն, գրագէտէն: Անշուշտ, այդ մահէն մօտ քառասուն տարի վերջը ձեռնարկուած սա ուսումնասիրութեան մէջ ինծի հազիւ թէ կը հասնին 1900ի մարդոց հիւսկական բացառանշութիւնները, ազդելու կամ գունաւորելու համար անոր զիւանէն իմ տպաւորութիւնները որոնց կշիռն է միայն ինծի համար կարեւորը: Շատ շատ ինծի կը մնայ թերահաւատ ընթերցողը զրկել քերթուածներուն, իր հաճոյքը ճշդելու, հաւանած կտորին վրայ հաստատելով այդ հիացումը արդարացնող առաքինութիւն, արժանիք: Այլապէս, այդ ընթերցողը պարտաւոր է անկեղծ ըլլալ ինքնիր մէջ. — այդ հիացումը մասնաւորել ճաշակի մը, մասնութեան մը որոնք մեղմէ անդամ հեռացած են ալ: Զօպանեանի շքեղ, հոկտոբրաշունչ յառաջարանը դարձեալ անբաւարար՝ իմ տպաւորութիւնները այլափոխելու, տրուած ըլլալով հիմնաւոր փաստը, ըստ որում՝ արեւմտահայ գրականութեան պաշտօնական դատաւորը միշտ սիրած է իր տղու ապրումներուն մնալ հաւատարիմ, զանոնք իրեն յատուկ դիւրութեամբ մըն ալ ընդհանրացնելու մէջ զնկելով ոչ միայն պըշրանք, այլև մոլեռանդութիւն:

Դործը մէջտեղն է սակայն, առանց գործաւորին պաշտպանութեանը: Անոր մէջ գտնել գեղեցկութիւն, կենդանութիւն, ուժ, այժմէութիւն, փափաքն է ամէն համադրողի: Վճռական է սակայն իրողութիւն մը. — միջին ընթերցողի մը համար անհնար է Թերզեանէն ֆերբուս մը կտրդալ: Ձեռք մատի փաթկեր իրողութիւնը: Բայց անկէ վեր, այսինքն գրական արժէքներու զգայարանք մը իւրացուցած ամէն ընթերցող անկարող է փերբուս մը աւարտել Թերզեանէն, սկսելէ վերջը այդ պարտքը կատարել պարզմտութեամբ, նոյնիսկ այդ մասին հիւսուած գուլեստներէն ալ որոշ կանխապատրաստութեամբ մը: Բան մը կը նշանակէ՞ վերջին հաւաստումը: Ապահովաբար ան որ՝ այդ գործին գեղեցկութիւնը, կենդանութիւնը, ուժը թողած են զայն դէթ քանի մը սերունդի համար: Այն պատանին որ մեր գրականութեան սպասին պիտի դայ, չի կրնար, առանց տաղնապի, ընել ծանօթութիւնը Պ. Դուրեանի տաղարանին, այնքան այս պատանիին կրակները են նոյն ատեն նաեւ իր կրակները: Լեզուի հեռաւորութիւն, բառերու պաշար, հնաւանդ ձեւեր, նոյնիսկ

նիւթ, իր անխրականութեամբը, անբաւական պիտի մնան անոր այժմէութիւնը խորտակելու: Բայց նոյն այդ տղան զրէք Թէրզեւանի տաղարանին հետ գէմ գէմի: Պանի մը չկամ թերթում ներք վերջ, եթէ այդ պատանին քեզ մը չունի թերզեւանին վրայ պատրաստելիք իր մտքին մէջ, կամացուկ մը պիտի դոյցէ հատորը ու դառնայ, փնտռելու ուրիշները որոնք իրեն խօսեին:

Եթէ երբեք արեւմտահայ գրականութիւնը, որոշ չափով արտայայտութիւնն է ժողովուրդի մը, այն ասին իմ բոլոր իրաւունքին մէջն եմ թ. Թէրզեւանի երկահատոր տաղաչափութիւնը հանդիսարան մը ընդունելու և առնուազն քանի մը հզօր, խորունկ կամ փափուկ, նրբին ապրումներու որոնք այս ժողովուրդինն էին 1860ին, 1880ին, 1900ին: Արդ, այս թուականները միայն մեր պատմութեան չեն պատկանիր: Անոնք շատ յստակ կերպով մը իրենց շուքը ունին մեր գրականութեան մէջ ալ: Այլ ինչ հարց որպէսզի արեւմտահայ մեծագոյն բանաստեղծը ինչպէս որակած է դայն՝ գէթ սիրայիցին համար՝ Արշակ Զօպանեան, քաջուի, քաջքուի աս ու ան ասեաններու: Մենք պիտի գիմենք այդ տաղարանին ու պիտի ճանչնանք այդ ապրումներուն առնուազն ստուերովի ճնշումը: Այն պարագային ուր այդ հարիւրաւոր քերթուածներուն ետեւն ինծի շնորհուէր բախտը այդ ապրումներուն յառնումին, ևս շատ գիւրգիւթեամբ պիտի հրաժարէի միւս ալ պահանջէն, — ասիկա այդ ապրումներուն անխուսափելի անձնականացումը մանաւանդ իրենց ձևին մէջ: Արդ, մենք գիտենք որ Թէրզեւանի տաղերը ամենէն շատ պատասխանատու կը մնան ձևի անխնամութեան մը: Տաղաչափ մը չէր անշուշտ, անխառն ու բացարձակ, ինչպէս էր ողորմելի հարապատութեամբ մը այդ բանը՝ օրինակի մը համար՝ Աղեքսանդր Փանոսեան, բայց էր այն անփոյթ զրոյր որուն համար ձայնը, փափուկ բառը երբեմն կ'ըլլայ տիրական, մոռցնելու չափ ուրիշ սրբազան պարտքեր, պարտականութիւններ^(*): Եւստոյ կայ միւս գեթախտութիւնը — քանի քանի անգամ ինծի պատահած է այդ սերունդէն կարողալ գիւաններ, հարիւրաւոր ոտանաւորներու գէղերուն մէջ թարթափել ու զլխկոյր, յուսահատ, գայրաջած նետել մէկգի հատորները, գմնդակ ճակա-

(*) Ողբերգականը հոն է որ Թէրզեւանի պաշտամունքը (culte) առաւելապէս ըլլայ սնած, անթերի, տարօրէն ներդաշնակ արուեստագէտի մը առասպելէն, ինչպէս մեզի կը տրուի զգալ ասոնք Զրաքեանի մը, Զօպանեանի մը խոստովանութիւններէն: Աւելի անդին ես կը դառնամ այս անթերի արուեստին անկանգնելի թերացումներուն:

տագործը այդ թոհուրոհին հտին, ներսը, մարդ մը, զգայնութիւն մը սեւեռել չկրնալու: Ալիշանի Նաւագները, Նար-Պէշի Քաւերը, Վարդէնէները, Արաւելները ինծի արժամ են ընդարձակ տառապանք: Բառերու ջրվէժ մը որ վախճան չունենար ու պուռար, պոռար:

Թէրզեանի հետ գործածուած տիտղոսները մէկիկ մէկիկ չեմ անցըներ քննութենէ: Ատիկա իմ գործը չէր կրնար ըլլալ: Բայց իմ ծրագրին ծիրին մէջն է զբաղիլ իր մօտ բանաստեղծով: Եւ որովհետեւ բանաստեղծ մը երկինքէն ինկած օդաքար մը չէ, ստիպողութիւն կը զգամ քիչիկ մը քրքրել մարդը և իր պայմանները այս անունին հտին:

Բ.

Աւելորդ է կրկնել որ Հաճապոյէները չի կենսադրեր: Բայց մարդ մը զիրերէ կազմուած յղացք մը ըլլալէ առաջ արեան հանդէս մըն է: Ձեմ հանրամտիւր ժառանգականութեան աւելի կամ նուազ վիճելի վարկածներ օգտագործելու և Թէրզեանի արուեստին կատարելութեան աղասպելին հտին, իբրև մոգական կանթեղ, հաստատել մարդ մը, յոյն, Քորսիքացի, որպէսզի Անակրէտոն թարգմանելու ունայնամտութիւնը դառնայ արեան ճնշում մը, կամ յունա-լատին հասարակ-տեղիքներու վրայ Թէրզեանի ասորժանքը բանի մը ապացուցումը ըլլալ: Հայրը կաթոլիկ դերձակ մը, հազիւ իր հայութիւնը յիշող: Բան մը կ'ըսե՞ն ձեզի այս ծանօթութիւնները: — Ա՛ն՝ որ Թէրզեանի արեան մէջ ոչինչ՝ որ բացատրէր անոր անուական արուեստագէտի համբաւը: Այս ամէնը պէտք է ըսուին սակայն: Մեր գրականութեան մէջ շողշողուն էր առասպելը Թէրզեանի ստեղծագործութեան մէջ հելլենական արիւն-աւիւնին: Ձեմ հերքեր չատ զօրաւոր արմատացած պատրանքներ, որոնց գինով դատելու արարքը մարդիկ յաւակնեցան արդար զիտոյթեան մը վարկին բարձրացնելու: Կան անշուշտ տարրեր, բայց այնքան ներքին, խուսափուկ, որ, անոնց վրայ գրութիւններ լստեակեցաւը աւագի վրայ պալատներ կառուցանելու պիտի նմանէր: Յետոյ, ըսած եմ Հաճապոյէի մուտքին թէ զգոյշ եմ բոլոր հաճելի բայց շատ նրբին ընդհանրացումներէ:

Թէրզեանին արեան պատգամէն շատ աւելի հիմնաւոր կը նկատեմ միւս փաստը. — Մուրաւս-Ռաֆայէլեանի մէջ իր աշա-

կերտութիւնը: Շատ մատաղատի՝ վենետիկ զրկուած տղան գրեթէ մանուկ մըն է, Պոլսէն հետը տարած՝ ջլային անկաղմ գրու-
թիւն մը, արթուն խելք մը, հետաքրքիր իմացականութիւն մը
ու մանկական կայտառ խանդավառութիւն մը: Աղատ էք այս
սկիզբը գունաւորել ձեր երեակայութեան ընձեռած բոլոր լոյ-
սերով: Մկրտիչ Աճէմեան, որ Թէրզեանին դասընկերն է այդ
վարժարանին մէջ, կը խօսի Հիւրմիւլէն, Բաղրատունիէն, մա-
նուանդ Ալիշանէն: Այս անուններուն հոս, Թէրզեանի պատա-
նութեան առիթով յիշատակումը ունի այն աւագ նշանակու-
թիւնը որով ալ պատմութեան կը պատկանի, իբրեւ շահուած
ստուգութիւն: Մխիթարեան արքաներու դերը արեւմտահայ գրա-
կանութեան սկզբնական շրջանին վրայ (տեսնել Համադարձեցին
Ա. Հրատարակ, ազգեցութիւններ զլուսէն Մխիթարեանները): Պէ-
շիկթաշեան, Հէփիմեան, Շիշմանեան, Նար-Պէյ, Հիսարեան,
Աճէմեան, Թէրզեան բոլորն ալ տաղանդ ունեցող խանդավառ
երիտասարդներ են: Միւս կողմէն՝ Ռուսինեան, Զօրայեան, Օտ-
եան, Միսաքեան, Իւթիւճեան, Կրճիկեան, Ոսկան Նոյնքան տա-
ղանդաւոր մարդեր են: Բայց աւելի քան իրականութիւն է եր-
կու խումբին ալ անբարարութիւնը գրական արդիւնքին տե-
սակարար արժէքին մէջ: Ինչո՞ւ բացատրել այս դատածումը
ուղիղ, իրաւ, հոսահայեաց ստեղծումին մէջ, մարդերու մօտ
որոնք առնուազն օտարներու վրայ լիակատար intuitionը բրած
էին անշուշտ արուեստի մեծ յաջողութեամբներու: Այդ խումբէն
առաջինին Վենետիկ, երկրորդին Բարիլ հասակ առած ըլլալը
ինչո՞ւ չ'անդրադառնար անոնց ստեղծումներուն վրայ: Շատ շատ
վերջինին մօտ աւելի գործնական, գրական, ընկերային ախոր-
ժակներու շեշտ մը, առաջինին օդածեմ, քնարական, պատմա-
ազգայնական ախորժակներուն ընդդէմ:

Ինծի կուզայ թէ այդ տրամութիւնները վճռապէս բացատ-
րելի վրիպանքներ նկատուելու չեն: Կա՞մ բոլոր այդ անունները
դժբախտ միջակութիւններ էին, ինքնածին, ինքնարիւր ոչինչ
ունեցող եւ կարօտ՝ ըստ տեսութեան, դուրսէն ազգեցութեան
մը, իրենք վրիկնք կերպարանելու արնպէս ինչպէս կ'երեւի ա-
տիկա իրենց ստեղծումներուն վրայ, իրենք վրիկնք յարգարելով
իրենց սորված գերերուն, պատգամներուն. կա՞մ վաւերական
տաղանդներ էին, որոնք իրենց ընդոծին ախորժակները զոհեցին
այդ օտար, դուրսէն ազգեցութեան ու տունի դարձեալ իրենց
ստեղծումներուն ծանօթ կերպարանքը: Կը հետեւի թէ երկու
խումբէն ալ վեր կայ որոշ, չըսելու համար չարաչուք ճնշում

մը, որ անդադար կը զգացնէ ինքզինքը: Հազիւ հազ Դուրեան մը կը յաջողի ինքզինքը ձերբազատել այդ կնիքէն: Դիտել կուտամ որ Սկիւտաւրցի պատանին ու քիչիկ մըն ալ Օրթաքէօյի եղերերգակը (Պէշիկթաշկեան) կը պարզին վենետիկեան մտայնութեան մէջ չկորսուած հոգեխառնութիւն մը, արուեստի մարդին վրայ անշուշտ: Միւսները երբ կը քերթեն, ցոյց կուտան նոյն տիրական անբաւարարութիւնը որ մեղքն էր ակնաւանդածութեան, եթէ կը ներուի այս նորարանութիւնը: Այդ մեղքը, ահա, մեղքն էր Աճէմեանի փառաբանած արքաներուն: Այդ մեղքը վենետիկի վրայով եւրոպական բանաստեղծութեան ժ՛հ. դարն էր որուն վրայ խօսած եմ արդէն, Միսիթարեան մտայնութիւնը վերլուծած պահու: Անշուշտ վենետիկը այլապէս զեղեցիկ ակունքներ բացած է հոն աշակերտողներու ուսումնաւ ծարաւ հոգեդաշտերուն: Անշուտ խորունկ հայրենասիրութիւն մը — անոնց ուսուցումին հոգեյատակը — արմատ է նետած այդ խումբին ներսը: Բայց իմացական կրթանքները առանձին տոնիքեան իրենց նկարագիրը կ'ամբողջացնեն: Ի՛նչ կը սորվէին սիրել, բանաստեղծութեան մէջ այդ պատկանելի տաղաչափ ներուն առջև դաս առնող տղաքը: — Ի՛նչ որ իրենց վարպետները կը սիրէին: Հարկ կա՞յ անգամ մըն ալ թարմացնելու այդ արբաներուն բանաստեղծականին մէջ պատշաճ զգայութիւնները: Չափուած բառին (*) կայսրութիւնն եր ժ՛թ. դարու կիսուն, վենետիկի վանքին մէջ, միահեծան ու անոտան:

Այդ ազդեցութեան տակ իր իմացականութեան մարմինը յօրինող պատանին — անոր կրեաք որեւէ անուն տալ, զայն առնելով Զարթօնքի Սերունդին որեւէ բանաստեղծէն, բացի Դուրեանէն — իր այլապէս բնթացիկ, շահաւէտ (չեղունք, զիտութիւններ) ուսումներուն պաշարն ալ աւելցնելով վանական լուրջ, խստամբեր, առնուազն պարկեշտ կրթանքին, դատնայ թող Պուլիս, վերցնելու իր յամինը զարթօնքի հսկայ որքան զարմանալի աշխատանքէն: Այդ պատանին, շէնչող, սպրիկ, խանդոտ

(*) Ուրիշ խնդիր՝ ինչո՞ւ Բարիզ ընող թեւէն այդ սերունդին մեզի չհասնիր՝ հարազատ բանաստեղծի մը: Կը կարծեմ թէ սկսող զրականութեանց ճակատագիրն էր քիչ մը սա արագ, պարզապաշտ ոճաւորումը: Ժանն որ այդ սկիզբին աշխատասարները ամէն բանէ առաջ տենղը կ'ապրէին մէկ անգամէն շատ բան փոխադրելու կամ իրագործելու, որակէն քիչ մը մեռնթափ, շեշտը դնելով քանակին վրայ: Կայ տակաւին հրապարակին ալ ընկալչութիւնը: Մի մտնաք որ Դուրեանը արագորակում արեւողծութիւնը (այսօր) այդ սրերուն բնական իրազեկութիւն մըն էր:

երիտասարդ, իր մուտքը պիտի ընէ (եթէ երբեք Բաշմէպի մէջ արգէն քերթող չէ մկրտուած) իր գերին մէջ . . . քերթելով, — միտքի կրթանքներէն ամենէն գիւրինը անոնց համար որոնք գրել մը սորված են: Այսօր ընթացիկ կարծիք է որ գրելու նիւթական արարքը նուաճող ամէն մարդ, նոյնիսկ առանց երկրորդական ուսման մը նպաստին, ի վիճակի է իր վէպը գրելու և պարտադրելու: Այդ վիպողը մտքէն կրնայ անցնել գրագէտի փառք մը, որ կը գիջուի իրեն . . . իր երկրորդ գիրքով: 1850ին մարդիկ աւելի համեստ ու պարզ էին: Ոտանաւոր մը, մանաւանդ գրաբար, քիչիկ մը խրթին ալ երակէն, բաւ էր որ երէկի դպրոցականը . . . անցնէր պուէտ: Միշտ այդ երիտասարդը, մէկ կողմէն Ապողոնին սպասարկելով, միւս կողմէն հալածելով զործր, գործ մը, պարապ շրջանակներէ ներս — ուսուցչութիւն, պետական պաշտօնէութիւն, մեծատան քարտուղարութիւն, ազատ ասպարէզներ — իրեն պիտի ներէ որն է դաւղում, ապրուսիք միջոցը, աւելի պարզ բառով մը ու պիտի գտնուայ իր ժամանակին վրայ կոկիկ, գեղեցիկ, նախանձելի անուն մը: Յետոյ: Անշուշտ: Կայ ժողովուրդին լուսաւորման, արեւմտացման հզօր փառասիրութիւնը: Այս գինով է որ մենք պիտի ըլլանք հանդիսատես այդ փաղանգին սխրալի, յորդ, հերարձակ գործունէութեան, վերանորոգչական բոլոր մարդերուն վրայ: Պղտկ փառասիրութիւն՝ քերթողական ալ, ժողովուրդի մը մէջ որուն կաթողիկոսները չեն արհամարհած մուսաննիւր սպասարկել, մանաւանդ ժամանակի մը մէջ ուր վենետիկեան ոսկեղարը ինքզինքը կը գերազանցէ Պոլիս, իր աշակերտներուն բանակովը, իր գիրքերուն մարտկոցներովը (pile) ու իր երէցներուն նոճեպսակ, դափնեղարդ չքախումովը:

Թովմաս Թէրզեան այդ օրերու կարիքներէն զլիսաւորներուն բերած է իր սպասը: Երբ զուտ ազգային ձեռնարկներու մէջ իր անունին կը հանդիպինք շատ քիչ, ատիկա խոսնուածքին իսկ ճնշումէն կուգայ հաւանաբար: Նոանդուն քաղաքացի, հայրենեղակ մը ըլլալէ աւելի՝ գուարթ, խոհեմ, հաճոյապաշտ մարդն էր անիկա: Ծիշդ ու ճիշդ Աճէմեանին կողապարովը: Պարկե՛շտ: Ընտանեւէր: Քերթող, այսինքն կեանքը թեթեւ կողմէն ընդունող: Այս ստորագրելները բա՞ւ որպէսզի տրպարը մարմին դառնայ ձեր մտքին: Իր գիւտնը, զժբախտաբար, ժուժկալ չէ այնքան որքան թեւադրելի էին այդ հանգամանքները մարդէն: Աս է պատճառը որ մենք անոր պիտի հանդիպինք քիչ մը աւելի բարձր մակարդակներու վրայ: 1870ին թատերական

A 7709

խենթութեան շրջան մը կը բոլորէ Պոլիսը: Շքեղ փառքէն վերջ Մ. Պէշիկթաշլեանի, նորածագ աստղը Պ. Դուրեանին: Անշուշտ: Ու անոր քովն ի վեր Թովմաս Թէրզեանին աստղը: Երկու մեծ ռոմանթիքները մտքէ չանցուցին աւելի ծանրակշիւ փառասիրութիւններ: Բայց Սրապիոն Հէքիմեան, ըսի անգամ մը, իր ողբերգութիւնները գրաբարէն խաչերէնի վերածելով, ներկայացուց Պոլիս: Թէրզեան, որ մտերիմն է այդ ողբերգակին, իր կարգին կը խառնուի շարժումին: Արշակ Բ.ը գրաւած է հայերէն և խաչերէն, իբր լիւրէ: Մէկէ աւելի են անոր հեղինակած խաչերը: Կենսագիրները չեն խօսիր անոնց ներկայացումէն: Թովմաս Թէրզեան տենդին մէջն է դարձեալ 1870ին ուր ամէն շարժում ընկերութիւններ կը հիմնադրուին, քանի մը տարիէն հիմնաքանդ ըլլալու արագ ճակատագրով մը: Կենսագիրները չեն պատմեր իր բանաստեղծութիւններէն որոնք այդ օրերուն համաճարակներէն կը նկատուէին: Չունինք իրմէ պոետիւններ (Նզիա, Չերազ, Պէրպէրեան, Ծերենց, Տիւսար): Բայց կը սպասարկէ իր հասարակութեան բարձրագոյն խաւերուն, դաս տալով: Տեղ կուտամ այս մանրամասնութեանց, վասնզի ասոնց ընդմէջէն դժուար է մեր ընկերութեան բարեշրջումը նշմարել:

Ճկուն, քաղցր, վայելապաշտ, ակնուական որքան պարզ, վառվռուն ու սրամիտ, մէկէ աւելի լեզուներու հրամայող, մանաւանդ գիւրահաղորդ, խոր հրապոյրներով օժտուած իր բնաւորութիւնը յարգարուած էր իր ճակատագրէն, գինքը առաջնորդելու համար բարձրագոյն շրջանակներու մտերմութեան, փոփոքին: Չնդուն այս արժանիքները քիչ մըն ալ պաշտպանութիւնն են վայելած ժամանակին որ մեր հասարակութեան ամենէն տիպարային հանգամանքները կը մէկտեղէ, երբ հարիւրաւոր տնուներ, խոնարհ ծագումով, կը բարձրանան քաղքենի ամբարտաւանքներ ընդոտնելով ու մեր մէջ կարելի ազնուապետական նոր դասակարգը կը հանդերձեն, ամբարտաւոր կործանում մէն վերջ, ստեղծելով ազատ ասպարէզներու տիրապետութիւնը մեր վրայ — բժիշկ, պաշտօնատար, գիտուն, ուսուցիչ, գրող, եկեղեցական բարձրորակ գործիչներ: Աւելցուցէք արեւմտեքին հետ տնտեսական իրենց կապերուն շնորհիւ դրամին ալ ազնուապետութիւնը ու դուք կը հասկնաք թէ այդ ձեռով կազմաւորուած ընկերութեան մը ներս Թովմաս Թէրզեան, Մկրտիչ Պէշիկթաշլեան, Կոնիսի Պ. Դուրեան և Յ. Պարոնեան ինչ պատկառանքի կ'առաջնորդեն քառորդ դար առաջ այնքան եղկելի գրողում մը, — ուսուցչութիւնը: Յետոյ, այդ թուականներուն

Պոլիսը զուրկ է միջնակարգ, նոյնիսկ նախնական վարժարանների ու ցանցէ մը: Մարդիկ — մեծահարուստները — դեռ կը յաժմառին կառչած մնալ աւանդութեան մը, սեպհական տուններու մէջ իրենց զաւակները դաստիարակելու սնամիտութեան, քանի որ աւելի նոր փաստ մը կը ծառայէ ընտանիքին բարձր արժանիքներուն: Գիտէք թէ Պէշիկթաշլեանէն դաս առնել մը, բարձր դասու օրիորդի մը համար ինչ անփոխարինելի զլաւական մը կը պարզուէր ընտանիքին բարեբեռն: Թէրզեան յաջորդած է Պէշիկթաշլեանին, զառնալով փնտռուած ուսուցիչ մը, որ իրեն աշակերտողներուն չափ, անոնց ծնողքներուն ալ վրայ կը տարածէ իր շնորհները: Բարեկիրթ է և զգաստ: Խանդավառ և ուսմանթիք: Շէնչող և ապրող: Այս առաքինութիւնները չեն թառամիր, «ի չգոյէ ցիւրոյ», ինչպէս կ'ըսէ Աւետարանը: Անոնք կը հանգիւղին տարօրինակ ընկալչութեան ալ շրջանին: Ալաքիկ ու Գեղանի, խօսքի մեծ տուրքերով և պարկեշտութեան ծանր արժանիքով, սա երիտասարդը, թերեւս մեզմէ ծածկուած ուրիշ ալ *charm*երու պաշտպանութեամբ կը գառնայ այդ Պոլիսին շփացուած, սիրուած մէկ անձնաւորութիւնը: Դուք որ այս տողերը կը կարդաք, կը զօնարանաք հասկնալ հաւանաբար վարժապետի մը սա վարկը: Բայց ձեր օրերէն երեք քառորդ դար առաջ մեր հասարակութիւնը մի շփոթէք ձեր քաւարանին զանգուածին հետ: Հիմա կարգացողները անօթի են, ըստ վճռին Եղիայի մօր: Ու չկարգացողները՝ իրենցմէ զուրս ոչինչ ու չկը զբաղին: Տիրական անձնաւորութիւնները երկարջիջ հոգեբանութիւններ են, իրենցմէ և զուրսէն միաւորուած: Թէրզեան կը պարզէ ուրիշ ալ արժանիքներ: Անիկա հիւանդ մը չէ որպէսզի մարդիկ արգահատին, յարգելով հանդերձ գինքը (Պէշիկթաշլեան, Դուրեան): Անիկա կէս խենթ մըն ալ չէ որպէսզի գառնայ անվտանգ, իր փառասիրութիւնները երբ կը պարտագրէ բեմերէ ու զպրօցներէ (Եղիա): Անիկա ծիծաղելի յաւակնոտութիւններով ու ուսուցիչ տրիրուն ալ չէ ազգային սահմանադրութեան, ազգային դաստիարակութեան, ազգային լեզուին (Չերազ), որպէսզի մարդիկ պահ մը շփոթուին իրենց լսածներէն բայց չուտով անդրադառնան ու իր ճիշդ չափին մէջ տեսնեն վարժապետը: Անշուշտ կայ Մամուրեանը որ ամէն բանէ առաջ լրագրող մըն է ու ատով կասկածելի: Կայ Պէրպէրեանը որուն նորածագ համբաւը կը ստեղծէ այնքան զփոփոխ հակադէմքութիւններ: Թէրզեան առանձին տալար մըն է: Կը գիտէ որո՞ր իր պաշտօնակիցներուն սայթաքումները ու գիտէ անոնցմէ

օգտուել: Գիտէ՛ մանաւանդ սանձ մը դնել իր նախասիրութեանց, փառասիրութեանց, հասարակաց կարծիքը չվիրաւորել: Ահա իր իմաստութիւնը: Մի աճապարէք ասիկա որակել անողնայարութիւն: Միւս կողմէն՝ մի ալ ոսկեզօծէք խանդոտ խառնուածքը Շիշմանեանին որ առնուազն իմաստուն բժիշկ մը իբրեւ պատրաստուած, դեր մը ունէր մեր ժողովուրդին մէջ, բայց գլխուն գինովը իջաւ պայքարի կրկէսը: Դուք տեսաք Ռուսինեանը, անայցեւուն բժիշկը: Մամուրեան պիտի քշուի Պոլիսէն, իր լեզուն չափ մը պահել չկարենալուն: Անօթի պիտի ձգենք Պարոնեանը, միշտ վարժապետ ու խճրագիր: Ու պիտի չհանդուրժենք Նար-Պէյը, զայն ոստանէ ոստան թռցնելով: Ասիկա անոր համար որ այս բոլոր անուններուն ետին մէկէ աւելի կիրքեր, արտում, մենապար ասորժակներ, ցաւագին փառասիրութիւններ ծուարած կը պառկին, յարմար առիթով պատրաստ առաջ նետուելու, այդ մարդերը ձգելու իրենց կիկլոնին կամ ճախճախտաքին մէջը, յաճախ անդարման աղէտներու ալ մղելով զանոնք: Ու նոր չէ որ մենք աններող ենք եկեղեցականին, ուսուցիչին, գրողին, հանրային սպասաւորին թերացումներուն, նուազումներուն հանդէպ: Շիտակ, պարզ, հիւանդ, բարդ, տաղանդաւոր անձերէն մենք ունինք մեր եղանակը, քաւել տալու իրենց սա ստորագրելիներուն պարտադրանքը: Պէրպէրեան մը, Չերազ մը, Եղիա մը աւելի կամ պակաս չափով մը ենթարկուած են ժխտական սա հոգեբանութեան չարիքներուն, աւերածին: Տարիներով ջոջ այդ վարժապետները, աղմկեղայոյզ այդ գրողները, հակառակ իրենց տաղանդին դէմ մեր դրած բոլոր յարգանքին, նոյնիսկ պատկառանքին, չենք փախցուցած առիթը զանոնք եթէ ոչ հալածելու, գէթ նրբին արհամարհանքի, ստորադասութեան օրոյցի մը մէջ խաբսիւսած պահելու: Ոչ մէկ ստուեր(*) , ոչ մէկ անասորժ հով չէ պղտորած

(*) Երկու անգամ Սուրբ Լամիտի կասկածները իր վրայ հրաւիրող այս պետական ուսուցիչը (առաջինը՝ Ֆրանսերէն հատորի մը առիթով, եւր Մաքսիմալիստական ծաղիկներ, գինեւորական վարժարանի տղոց մատուցուած իբրեւ ընթերցումի նիւթ, յեհապետին մտքին մէջ կ'արթնցնեն կասկածներ, պատճառ դառնալով այդ վարժարանէն իր վտարումին, երկրորդ՝ մուսաներու ճամբով, Պոստիւստ ամսագրին մէջ (օրկան կաթողիկէ հայոց պատրիարքարանին) Առ ստոյգ բանաստեղծութեան մը համար, Սուրբ Լամիտ արդիւած էր այդ բառին գործածութիւնը իր պաշտօնին (երթըրդ) ակնարկութիւն մը գտնելով անոր գործածութեան մէջ) միշտ պիտի աշատագրէ ինքզինքը իր բարեկամ-աշակերտներուն հարաջի պաշտպանութեամբը, եպարքոս, աւագ փաշաներ, պէյեր, որոնք սիրած են իրենց ուսուցիչը, միշտ անոր աշխարհիկ, ընթացիկ առաքինութեանց, զգոյշ ձեւերուն ու հոյակապ քափին պատճառով:

միապաղաղ երջանկութիւնը, բախտը Թովմաս Թէրզեան ուսուցչին որ դաս տալու արարքին մէջ անշուշտ չի պարզեր Պէրպէրեանէն կամ Եղիայէն աւելի խանդ, հեղինակութիւն, բայց Մագիստրոս մըն է վարուելակերպի իմաստասիրութեան մէջ: Մինչ վերի անունները մնայուն տաղնապններու հանդէսի մը կը վերածեն իրենց առպարէզը, Թէրզեան՝ այն շատ հազուագիւտ հայ վարժապետն է որ գտած է բարեկեցութեան շահաստանը, բանակ մը ազգականներ ապրեցնելու չափ, տէր՝ սեպհական սուէրի և դիւր կենցաղի: Մտքէս չ'անցնիր զրազէալ, բանաստեղծը իբր ազգակ նկատի ունենալ ո՞ւր արդիւնքին մէջ: Ոչ Պէշիկթաշլեանի, ոչ ալ Դուբեանի թատրոնները իրենց հեղինակներուն չոր հաց մը խսկ չեն ապահոված: Թէրզեանին Սադր-Խոսրո, որ տղայական խաղ մըն է, Վաբդ և Շուշանին (Դուբեան) տիպովը հեղինակին պիտի բերէր բացառիկ բախտաւորութիւն մը: Անոր ներկայացման հանդիսատեսն Յակոբ Պալեան արքունի ճարտարապետը, խանդավառ ու մեծանձն մարդ մը, իր հիացման մէջ խաղին «հանգոյցներէն», խնչպէս կը վկայեն կենսագրիւնները, իր պաշտպանութեանը տակ կ'առնէ երկտասարդ անոր հեղինակը, բաւական առատ գումար մը գնելով անոր տրամադրութեան տակ, որպէսզի արուեստագէտի շրջանն ընէ անիկա, Եւրոպա, ծանօթանալու համար իրաւ արուեստին իրաւ պայմաններուն: Թէրզեան Թիլեանին հետ, կ'ընէ այդ պտոյտը, Եւրոպան ճանչնալու, անոր թատերական գրականութիւնը գիրքերէն ու զրար թարգմանութիւններէն զուրս կենդանի բեմերու վրայ ուսումնասիրելու: Դէպքը պատահած է 1869ին: Արշակ Բ. թատերանուագ (հաւանարար մեր օրերու քնարակաճ սուաման (drame lyrique) է այս բառին համազօրը) ի չորս հանդէս, հայ և խալիքերթուած՝ Թ. Թ. ի և երաժշտութիւն Չուհաճեան Տիգրանայ, Կ. Պոլիս, 1871, գինն էր այդ պտոյտին: Ունինք այդ թուականէն (1871) գարձեալ Յովսէփ Դեղէցի (թատերագութիւն յերիս արարուած), նմանողարար: Կան տակաւին յիշատակութիւններ Խոսրով Բ., Մովսէս, Կաթն և Աբէլ (այս վերջինը նմանողութեամբ Պայրընի), Չոպանեանի յառաջաբանին մէջ ուր այդ խաղերէն արարուածներ տրամադրած է անիկա հայ-Փրանսերէն թարգմանութեան համար: Այս մանրամասնութիւնները բնու մը չեն այս մարդուն ճանաչումին տեսակէտէն: Ինչ զժառանգութիւն որ հասարակ ոտանաւոր պատմում մը միայն (Արշակ Բ.) պիտի բերէր այդ մարդը Եւրոպայէն: Ու լաւ պահեցէք ասիկա ձեր միտքին մէջ:

Նոյնիսկ այն պարագային, ուր, այս շատ նպաստաւոր, շատ բացառիկ իրողութեանց ետին ուղէինք ժամանակը, տրամադրութիւնները լուսաւորող, արժեւորող ոգի մը ճանչնալ (ամիրաներէ, մեծահարուստներէ, ազգեցիկ, բարձրաստիճան հոգեւորականներէ պաշտպանուած ըլլալու դասական դրուագները), դարձեալ դժուարութիւնը չի վերնար բացատրելու սա միակտուր, աննուաղ, մանաւանդ աննախանձ փառքը: Մեծարժէք ուսուցիչ՝ մը: — Ինչու չէ: Համապատկերը կրնար արդարութեամբ ուրիշ սակարան մը զրկել անոր արժէքը: Բայց կարդացէք. «Սակայն, ներկայ հրատարակութիւնը (*), առաջին անգամ մեր հասարակութեան առջեւ դնելով ամբողջութիւնը Թէրզեանի բանաստեղծական արտագրութեանց և երեան հանելով ստուար զանգուած մը ցարդ բոլորովին անծանօթ մնացած անտիպ կարեւոր էջեր. ոչ միայն կը հաստատէ արդարացի սքանչացումը որուն արժանացած էր այդ ներշնչեալ քնարերգական իր կենդանութեանը, այլ զայն կը յայտնէ աւելի մեծ, աւելի խոր, աւելի բազմաձև, աւելի հայ, և նոյնիսկ աւելի արդիական քան ինչ որ կը կարծուէր» (Յառաջաբան, ԺԱ.): Չեմ երթար առաջ, այս տողերուն ետին կեղծաւոր մը, շահամուլ մը կենթադրելու: Արշակ Զօպանեան աշակերտն է այդ վարպետին, բայց նոյն աւտին քննադատ մը: Ի՞նչպէս բացատրել սա վճիռները սակայն երբ միւս կողմէն փաստը ունի գոյութիւն այդ վճիռները թելադրող գործին զոր չես կարող այրել, չքացնել, ինչպէս կ'ընէին հիւները: Իմ վերլուծումը, աւելի անդին, պիտի աշխատի Թէրզեանը բերել մարդկայինին սահմանները: Առայժմ հոս կ'արձանագրեմ որ գրականութեանց պատմութեանց մէջ այս կարգի աստուածացումներ սովորական զէպքեր են:

Իրականութեան լայն հոսանքները, արդար աշխատաւորները ու ասոնց երեան բերած արդիւնքները արժեւորել ձգտող գործի մը մէջ, ինչպէս է Համապատկերը, պիտի չխօսէր այսքանն ալ մարդու մը ուսուցչական հանգամանքներէն ելծէ երբեք այդ մարդուն ետին մեր հասարակութիւնը աւելի քան կէս դար չըլլար ընդունած անառարկելի բարձրութիւն մը, «Եւրպաեակ, լուսաւոր դեմֆեհեմ» մէկը: Արշակ Զօպանեան այս զնահատումին կը կցէ իր սիրական գերադրականն ալ, ամենեւնի: Կարդացէք ուրեմն՝ ամենեւնի Եւրպաեակ, ամենեւնի լուսաւոր դեմֆեհեմ մէկը:

(*) Բանաստեղծութեանց Ամբողջական Հաւաքածոյ, ԹԳՂՄՈՍ ԹԵՐԶԵԱՆ, 1929: Մէջբերումը՝ Զօպանեանի յառաջաբանէն, էջ ԺԲ.:

Այն ատե՞ն: Թովմաս Թէրզեան 1860էն մինչև իր մահը Պոլսոյ բարձրագոյն մեր վարժարաններուն մէջ ուսուցիչ է . . . Փրանսերէնի: Միտք պահեցէք ասիկա: Ուսուցիչ է դարձեալ զինուորական բարձրագոյն վարժարանին (Հարոյի), Կալթա Սէրայի Լիսէին, Միլիթի որ վարչական մարդեր պատրաստող ուրիշ բարձրագոյն հաստատութիւն մըն էր, դարձեալ . . . Փրանսերէնի: Հեղինակ է շատ բռնուած ֆրանսերէն քերականութեան դասագիրքերու: Ուսուցիչ է մեծահարուստ տուներէ (հայ և թուրք) ներս միշտ . . . Փրանսերէնի: Այս տիրական զբաղումներու կողքին, իր անունը արժեւորելու, միշտ կանաչ պահելու փոյթէ մըն ալ մղուած, անիկա պիտի երեայ հանդէսներու մէջ, ատենը հեղ մը . . . քերթուածներով: Զօպանեանի կազմած հատորը անտիպներէ, սրբագրուած, վերասրբագրուած քերթուածներէ ալ ունի պատմութիւններ: Այս ամինուն միտք բանին. — սա շատ պարզ իրողութիւնը: Թովմաս Թէրզեան մեծ, այսինքն լաւ բռնուած ուսուցիչ մըն է, որ իր այդ հանդամանքը արժեւորելու, ինչպէս ասիէ արժեւորուելու գծուար հաւասարակըճութիւնը իրագործած է, կէս դարու վրայով: Բայց ահա պզտիկ երանդ մը, տարբերութիւն մը եթէ կ'ուզէք: Թովմաս Թէրզեան ջոջ տուներու աղաչուած դասախօս, պիտական վարժարաններու պաշտպանուած ուսուցիչ, իր ուժերուն լաւագոյնը յատկացուցած է օտար լեզուի մը ուսուցման: Իր շատ լաւ սորված հայերէնը անիկա չէ խօսի մտածած իր տունին լեզուն ընելու, ինչպէս կայ անհերքելի վկայութիւնը իր զաւակներուն որոնք կը յիշեն թէ իրենց հայրը հայ մըն էր ու այսքան: Ոչ չարութիւն և ոչ դառնութիւն: Ազնուական, մեծ, արդիական բանաստեղծ մը պարտքին տակն էր անոռագն հայ ըլլալու և ոչ թէ լրվանքին հոգեբանութեամբ մը իր ժողովուրդին մօտերը սլքտալու:

Խաղաղ, գրեթէ առանց տաղնապի (հրդեհի մը մէջ իր այրած հօրը կսկիծը անիկա պիտի վերածէ քանի մը քերթուածներու, գծախտաբար անկնիք, գրեթէ տափակ: Իր զաւակին (վեշտասանամեայ) մահը հաղիւ թէ ակնարկութիւն մը կ'արժէ իրեն, ուրիշի մը համար. մի օմն Տիկին Տէր ներսէսեանի մահու ան անթիւ գրուած քերթուածի մը մէջ), ու կրնամ աւելցընել իր սերունդի աչքի ընծայուած բացառիկ պատեհութիւններով ալ բախտաւորուած, գրելու թէքնիք մը ամբօրէն տիրապետած, գրական որոշ ալ զարգացումէ մը անցնող սա մարդէն, Համադարձին աշխատաւորը իր իրաւունքին մէջն է երբ կ'ակըն-

կալէ առնուազն իր համբաւը արգարացնող վկայութիւն . իր գործէն : Յետոյ, Չօպանեան, միշտ աշակերտական երախտագիտութեամբ, չի գոհանար անոր մէջ ամենեւնի ազնուական հայերէն մէկը ողջունելու, այլև կը յայտարարէ թէ անիկա Պոլսեցի մըն է : Այս տարազը, իր լսկոնական կերպարանքէն երբ ազատագրէք, ըսել կ'ուզեմ՝ երբ բանաք անոր տակ ինկող զգայութեանց հանդէսը, դուք կ'ունենաք մտատեսութեամբ, թափանցութեամբ արեւմտահայ գրականութեան ամենէն թանկ, խորունկ թեւագրանքներէն մէկուն : այն շատ ծփուն, անսեւեռ իսկութեան, հոգեղէն հեղանուտին որով կ'անձնանան մեր գրականութեան ամենէն սխալի յաջողութեանքները, քերթուած կամ քրոնիկ, վէպ կամ թատրոն, — ի՞նչ որ այդ գրականութեան անկորուստ, աննուազ հարստութիւնը պիտի կազմէ ժամանակին մէջ : Այս հատորին առաջին գիրքին մէջ ես մօտեցայ այդ զգայութեան քանի մը հիմնադրերուն : Արդ, կա՞յ այդ Պոլսը թէրզեանի տաղարանին մէջ, ինչպէս մեզի կը արուի զգալ մեր մեծ գրողներուն գործերուն ընդմէջէն (Պէշիկթաշեանի քերթուածներէն ուսանք, Դուրեանի տաղերը, Նզիւլի քանի մը արձակ քրոնիկները, Արփիարի, Չօհրապի, Հրանդի, Բաշախանի, Նուրսանի վիպակներուն, քրոնիկներուն մէկ կարեւոր մասը, Պարոնեանը՝ ամբողջ գրեթէ, Արուեստագէտ Սերունդին քանի մը տիրական յաջողութեանքները, Տիկին Եսայեան, Թէքէեան, Վարուժան, Մեծարենց, Զրաքեան) : Վճռական է հերքումը : Թէրզեանի տաղարանէն կ'ելլէ սակայն ուրիշ Պոլս մը, .աս ալ նոյնքան իրաւ, մեր գրականութեան մէջ իր շեշտ գոյնը անդրադարձող : Միջին քաղքերի ապրումները չունիմ նկատի երբ կ'ընեմ այս հաւաստումը : Ատիկա ես կը հաստատեմ Մ. Աճէմեանի գործին մէջ : Սխալ չըլլար Թէրզեանը ընդունիլ Վենետիկէն փոխադրուած բանաստեղծական ոգիին բարեփոխեալ, աշխարհայնացած մէկ արտայայտութիւնը . բարեփոխութիւն մը ուր չըլլալին աւրուած հիմնական գիծեր, բայց ըլլալին աւելցած ուրիշ երկրորդական գիծեր, երանգներ :

Իր փառքին բոլոր լիութեանը մէջ աչքերը փակող այս բանաստեղծը չունեցա՞ն ներքին տագնապի պահեր, երբ յոգնած, դառնացած տարիքին բեռէն, անցաւ սեղանին առջև, բանալու դէպքերը իր տետրակներուն ու աչք մը նետելու իր տպուած որքան անտիպ քերթուածներուն, սրբագրուած, վերասրբագրուած, ընդօրինակուած քանի մը անգամներ (Չօպանեանն է երաշխաւորողը), սանկ կշիռի մը զարնելու համար զանոնք : Զաքէն է

Նաբրիլ վերտառութեամբ պոէման գրուած է 1901ին: Այս թուականին ահաւոր փաստը ան է որ հաւանաբար Փրէնէֆֆօ (Պոլիս) գիրի ինկած այդ քերթուածին աւերած հեղինակը նեարդ առ նեարդ կը կրկնէր Վենետիկ, մօտ կէս դար առաջ գրուած Մահ Ահաբնի քերթուածին մանկամասութիւնը: Ոչ աւելի, ոչ պակաս: Անցնող յիսուն տարիները (Թէրզեան գրած է ... 1909ին ալ) անցած են առանց այդ վենետիկեան հէնքը խաթարելու: Այս հերոսութիւնը՝ ինքնիրեն հաւատարիմ մնալու՝ մեր լեզուով կը թարգմանուի անզգաճութեամբ: Եզրակացութիւնը այն կ'ըլլայ որ հեղինակին շիջումէն հազիւ երեսուն տարի վերջը անոր տաղարանը վտանգուած էր անվերադարձ: Ատկէ տուժողը հեղինակը միայն չէ եղած գծրախտարար: Մենք շատ դիւրաւ մոռցանք Ռաբ Պաբիթիւնը, Շալէր Լ Յեւէրը, Գաբառն Զֆէրը, Յոզման ժաֆէրը, այդ գործերուն ետին պարզ մեղաւորներ, մահկանացուներ միայն դաւանելով. բայց թովմաս Թէրզեան մեծ, աղնուական բանաստեղծ մըն էր ոչ կարծեօք, այլ ըստ էութեան: Ու այդ պատրանքն ալ կը թափի մեր թարթիչներէն, վտանգելով Թէրզեանի վարկին հետ՝ վարկն ալ արեւմտահայ գրականութեան մէջ շատ արժանաւոր սեռի մը — քնարեագութեան: Կը հաւատամ որ արեւմտահայ գրականութեան վրայ կազմաւորուած սխալ որքան վերաւորիչ գամբարանութիւնները, հաւատքները (գլխաւորաբար արեւելահայերու բերնով որոնք հոսհոսներու բանաստեղծութիւնը գատապարտելու ատեն այնքան հեշտագին կը զառածին Թէրզեանի գլխաւորած գպրոցին տկարութիւններով, առանց անդրադառնալու, անկանգնելի որքան անգին, այսինքն անգլիկ տափակութեանը իրենց ոտանաւորին) մարմին են առած գործին հանդէպ սա գպրոցին որմէ մեռած-ծնած քերթուածներու գէղմը տակաւին ունէր գոյութիւն հաղար ինը հարիւրէն ալ վերջը:

Ահա թէ ինչու թովմաս Թէրզեանը կը նկատեմ կեդրոնական անձնաւորութիւնը Կրտսեր Ռոմանթիքներու գպրոցին, ու անոր գործին վերլուծման առիթով՝ քննութեան տակ կը ձգեմ տարողութիւնը վաստակին զոր արեւմտահայ անդրանիկ բանաստեղծական գպրոցը (Ալիշան, Դուրեան, Պէշիկթաշլեան չեն իյնար այս սահմանէն ներս) ձգած է մեկի:

Տաղաչափներու գպրոցն (*) է անիկա:

(*) Խորէն Նար-Պէյի բանաստեղծական գործին վերլուծումը, առանձին կատարուած, անբաւարար է գպրոցի ամբողջութեամբ սեռելու, այն գլխաւոր պատճառով որ հազիւ հատոր մը (Ստուերֆ Հայկա-

Գ.

Դպրոցէն թուվմաս թէրդեան կը պարզէ ուրիշ ալ հանգամանքներ, արեւմտահայ զրականութեան սկզբնական ախորժակները շատ մօտէն, տիպարային հարադատութեամբ մը թեւադրող Բացի լեզուական, ընկերային առաջադրութեանց, ազգային կեանքէ այդ օրերու ամենէն բարդ, դարձեալ տիպարային երեւոյթներու հանդէպ այդ մարդոց քիչ մը շատ բացառիկ կիրքերուն, մնացած ցանկութիւններէն բոլորին ալ մասնակից է թուվմաս թէրդեան: Իր խառնուածքէն, նկարագրէն իմ բերած վաստերը բաւարար՝ որպէսզի անոր անձը չազդէ այն ուժգնութեամբ որուն օրինակը կը գտնենք Պէշիկթաշլեանի մը, մանաւանդ Ծերենցի մը գործունէութեանց թափին մէջ: Անօգուտ էր այդ անձնաւորութիւնը, կաթողիկէ հայ հասարակութիւնը յուզող հարցերու լուծման: Բացարձակ էր իր մօտ արուեստագէտի քիչ մը անգործնական, երազապաշտ կեցածք մը, որպէսզի մարդիկ չփորձէին իր արժանիքները օգտագործել, իրենց վէճերուն, կիրքերուն հոսանքին մէջ առնելով անոր պատրաստուած մարդու, ազդեցիկ գործիչի մը հաւանական տուրքերը: Այս կարելիութիւնները կը մտածուին իր անունին հետ, քանի որ մեր ժողովուրդը իր ամենէն անխառն բանաստեղծական խառնուածքներն իսկ լծեց իր կիրքերուն, կարիքներուն դարպասին: Դիտէք իր ուսուցչութիւնը, որ արժանի է գովեստի ինչպէս անբաւարար համակրանքի: Իմ մասիս, կ'ընդգծեմ փաստը իր սորվեցուցած Ֆրանսերէնին որ այդ օրերուն ամենէն էական տարրն է մեր մտաւորական ու առետրական խուլ ցանկութիւնները կըշտացնելու սահմանուած, մաթեմատիքին հետ համահաւասար, հացի ճամբան յարգարող: Արդ, ոչ ոք, զրականութեան մը չա-

կանք) կը պատկանի մեր զրականութեան ներկայ պարունակին: Պարտիզի, Գրիգորի, Քնուր Պանդիսի մը գրուած են գրաբար: Յետոյ, Նար-Պէյի եկեղեցական հանգամանքն ալ հաւանաբար կը միջամտէ որպէսզի գրիչը, իրենց սիրական բառով՝ մուսան ըլլայ զգոյշ, շատ շատ ազգային, տօնական, հանդիսական զնդուքներու արտօնող հեղինակը ու զնէ սանձ մը անոր զգայնութեան խորունկ ըզձաւորութեանց: Այդպիսի կապանքներով չեն տառապիր կրտսեր Ռոմանթիքները: Եղիան դուրս է մեր բանաստեղծութենէն: Ձերազ պատանիի հոգիով քանի մը տաղէ անդին չէ վարած իր արկածախնդրութիւնը: Կրտսեր Ռոմանթիքները կը մարմնաւորեն ռաբին տաղաչափին զպրօքը, իր բոլոր մեղքերովը:

ճապարկերին մէջ մտքէն պիտի անցընէ տեղ մը շնորհեւ, օրինակի համար Մինիւրան Աբիկեան ըստուած ուսուցչի մը որ մեր զբաղանութեան իր հասկցած կերպով ծառայած է, հրատարակելով դասագիրքեր, բայց դասախօսելով աւելի հիմնական նիւթ մը, թուրքերէնը. կամ Պէտրոս Կարապետեանը, համահաւասար առաջինին, գիրքերու ընդարձակ ցուցակով մը: Այս կեցուածքը ոչ միայն արդար, այլև միակ կարելին է ապահովարար: Եւ սակայն երկու թրքարաններն ալ մեր ժողովուրդին մէջ վարկաւորուած չեն այն առատաբաշխութեամբ որքան կատարուած է ասիկա Թէրզեանին համար:

Կը զբաղիմ, անցողակի, իր թատերական ալ սպասով, միշտ այս գրականութեան սպասը հասկնալով ծիրին մէջը Զարթօնքի Սերունդի ցանկութեանց: Ըսի թէ ի՞նչ կ'արժէր Սահակեան: Ներկայացման չարժանացող Արշակ Բ.ին համար չունիմ աւելի արդար, մեղմ տրամադրութիւն: Օրերայի լիւրէ մըն է անիկա, նախապէս իտալերէն գրուած (ոտանաւոր, ինչպէս կը պահանջէ արդէն սեռը, ու տառով՝ Թէրզեանի նախասիրութեանց շատ յարմար), յետոյ վերածուած հայերէնի: Դժբախտ թագաւորը, որ պատմութեան մէջ իր ճակատագիրը չէ կրցած քաւել ու գրականութեան մէջ ալ դատապարտուած է իր մեղքերը, լման ու բացարձակ, իր ուսերուն՝ բեմէ բեմ պտտցնելու: Արեւմտահայ ու արեւելահայ գրականութեանց մէջ անիկա զեռ ապաշխարութեան ով գիտէ ինչ պատիժներ ունէր մարտիք: Թէրզեանին Արշակը ուրիշ մեղքերու ալ պիտի ըլլար մեղսակից, քանի որ գրական փառասիրութեան կը խառնուէին թերեւս ուրիշ ալ աւելի պղտոր, չըսելու համար չիլ ցանկութիւններ: Չուհաճեանի Երաժշտութիւնը այդ լիւրէին վրայ: Կը յիշեմ ու ձեզի կը ձգեմ խորհրդածել: Թարգմանութիւններէն կայ փաստը Յաւապին ուրուն համար անիկա ընդունած է օրուան հասկցողներուն մէկէն թերեւ իր կեանքին մէկ հատիկ կծու կշտամբանքը, ու խոնարհաբար, քրիստոնէաբար պարզած է իր արդարացուցիչ փաստը, — անպարսկանով ըրած ըլլալու, քանի որ դարձեալ միութեան մը խնդրանքը կը գոհացնէր: Չօպանեանի յիշած խաղերը, ձեւագիր, չեն պատկանիր լրջութեան:

Թովմաս Թէրզեան, ապագային առջեւ կը մնայ պատասխանատու սակայն ոչ թէ իր ողորմելի խաղերուն համար, այլ թատերական արուեստէ մը իր հասկացողութեան արտում փաստին համար: Մեր ուսմանթիք թատրոնին վրիպանքը չի նմանիր ֆրանսական կամ եւրոպական ուսմանթիք թատրոններու վրիպ-

պանքին: Ոչ ժամանակը, ոչ ճաշակները, ոչ ալ սեռին հետ ներսէն խորունկ աղերսով պայմաններու կշիռը չեն կրնար միջամտել որպէսզի բացատրուին Դուրիանի, Թէրզեանի, Պէշիկ-թաշլիանի, Հէքիմեանի, Թղլեանի, Նար-Պէշիկ հերոսական առաջադրութիւնները, չըսելու համար յաւակնութիւնները: Իրարու հետէն, իրար կապկելով, իրարու նախանձելով՝ մարդեր, դեռ աղայ, նոյնիսկ դպրոցի սեղաններէն, կը համարձակին չափուած կամ արձակ, դրաքար կամ աշխարհիկ բարբառով բառեր տեղալ փոքրերան հանդիսականներու գլխուն, անոնց աչքերուն առջև տախտակայ կամ կտաւէ հարթութեանց ու խորքերու վրայ պարզելով կենդանի միսերով շուքերու խաղապար մը, ու հաւատալով իրենց փառքին: Դպրոցական աշխատանք մըն է Սանդուխթը, որ կը տպուի մէկէ աւելի անգամներ: Անոր հմալքը այնքան զօրաւոր է որ 1881ին Մաքիլիս ֆերուհիյան անունով կին մը անոր ֆրանսերէն թարգմանութիւնն ալ կը կատարէ, ու կը հրատարակէ ... Երուսաղէմ:

Լրջութենէ զուրկ սա վաստակը Թէրզեանին եւ չեմ նկատի առնել լրջութեամբ: Բայց իմ մեղադրանքը կ'ուղղեմ բոլոր անոնց որոնք 1870էն մինչև 1950 դեռ թատրոն մը չեն հասկցած. ըսել կ'ուզեմ՝ թատերական գրականութեան մը զգայարանքէն կը մնան անմասն: Երբ այս տողերը կը թելագրուին, Սփիւռքը իր մեծ կեդրոններուն մէջ կը սարքէ ներկայացումներ: Գահիրէն, ամենէն հանգամանաւորը այդ կեդրոններէն, կը պարզէ ամենէն անտանելի անմտութիւնը թատերական հասկացողութենէ մը: Ուրեմն ցեղային՝ այս վրիպանքը, ինչ որ կը խանդավառէր 1860ին՝ Յակոբ պէյ Պալեանը, Սանդուխթի ներկայացման ատեն, կը մնայ նոյն ու նման այն զգացումներուն որոնք Սփիւռքի ներկայացումներէն կ'անցնին ապահովաբար զանոնք վայելելու եկած հանդիսականներուն, — այսինքն՝ բան մը տեսնած ըլլալու գիտակցութիւնը կամ բան մը լսած ըլլալու յոգնութիւնը: Եւ ուրիշ ոչինչ: Մի փաթեթ մատի թէ եւրոպական թատերերգութիւններն ալ (Հիւկօ, Վիկտոր, Տիւմա, Պայրըն, Շիլլէր), նման խորքերէ բխած, հինցեր եւ տարօրինակ արագութեամբ, խանդավառելէ վերջ իրենց ժամանակները: Մեր պարագան տարբեր էր անոնցմէ:

Այսքանն ալ աւելորդ է սակայն, սպասուողու վրիպանք մը դատելու ատեն: Յետոյ, ի՞նչպէս զիմաւորել փոստը, նոյնքան հզօր, նոյնքան ահաւոր, մեր զոյգ գրականութեանց մէջ տիրական ալ վրիպանքէն, գրականութեան նոյն սեռէն:

Կրտսեր Ռոմանթիքներէն մնացեալ երեքը իրենց յանդդոնութիւնը չեն փորձի զարկած թատերական մարդի մը վրայ: Աս ալ ուրիշ իրողութիւն:

Դ.

Կրտսեր Ռոմանթիքներու մեղի ձգած ժառանգութիւնը գրեթէ այլամերժաբար կը բաղկանայ քերթողական գործերէ: Եթէ երբեք Պէրպէրեանին համար այս հաւատումը կը մնայ խնդրական, իրողութիւն է որ Համպտիլթը պիտի չկրնար զբաղիլ, առանձին քրոնիկագիր Հրաչեայով մը, հոնտոր ու զասախոս նոյն ատեն, որմէ ստեղծագործական արձակները այնքան նիհար կուգան, իր գէմքը մեղի պարտադրելու յորդ ու ծանր արարքին համար: Նոյնն է պարագան Սէթեանին, որուն պատմուածքները, պատկերները, ըսի անգամ մը, զպրոցական տղու փառասիրութեանց ծիրովը միայն կը մնան ընդունելի: Դիտենք որ Աճէմեան արձակով չէ արձակուեալ երած իր բարձրաթիւի մուսան:

Ու անմիջապէս կ'աւելցնեմ.

Չորսին համար ալ իմ վերապահութիւնը մէկ է որքան բացարձակ: Ընդունելով անոնց գիւտներուն անհերքելի վկայութիւնը, ես կը մերժեմ անոնց չորսին ալ իրաւ, հարազատ, կասեալ ստեղծումին անփոխարինելի ինչպէս անգնելի բարեքը, ու առանց պատէ պատ խօսքերու կ'ընեմ իմ դատաստանը այդ քերթուածներուն անբանաստեղծութիւն կոչուած սեռի մը շքեղ նմոյշներ միայն կազմելուն: Ուրիշ հարց՝ անոնց վարկը, որ տարիներով շփոթութիւն է ձգած միաքերու մէջ: 1900ին մեր բանաստեղծութիւնը չունէր Թէքէեանի, Մեծարեւնի, Վարուժանի բացարձակ վկայութիւնները, այդ ուղղութեամբ: Սիւլիլի զլխաւորած քերթողական եղանակը ուրիշ բան չէր եթէ ոչ Կրտսեր Ռոմանթիքներուն գործադրած բանաստեղծութեան կանոնաւորումը, լեզուական, բախտի վերաբերեալ հարցերու մէջ որոշ միօրինակութեամբ: Թերեւ քիչ մը շատ պարզապաշտ (simpliste) հանդանակներու ծառայել պիտի նշանակէր Յիւլիոս հեղինակուհիին ճաշակը պատկերող քերթողութեան համար գործածել իրաւաւտ պիտակ մը, ընդդէմ Թէրզեանով զլխաւորուած Գպրոցը յատկանշող ռումանթիքին: Խորքին մէջ շատ քիչ, չըսելու համար ոչինչ կայ փոխուած, քանի որ նոյն անբանաստեղ-

ծուծութիւնն է որ կը մնայ տիրական, Թէրզեանի ինչպէս Սիպիւի զիւաններուն վրայ մղծաւանջի մը նման առկա, աննահանջ:

Փնտռել պատճառները որոնք սա զառաժուցմը, ուղիղ բանաստեղծութիւնէն սա օտարացումը ընէին հասկնալի, պիտի նշանակէր անհարկի չափերով ընդարձակել ժխտական երեւթեաներու իմաստը: Ի՞նչ չափ՝ իջնալ մինչև Վեցեցիկ, մինչև Բարիզ, մինչև Լոնցոն, այսինքն այս քաղաքներուն մէջ ալ ժԹ. դարու սկիզբները տիրական ճաշակներուն վերլուծումին, ցոյց տալու համար որ հասարակ տաղաչափներ — Շէնիէ, Լէոբարտի, Տըլի, Տրայտըն, Փոփ, Լէսինկ, Նոյնիսկ Պայրըն, յիշելու համար ամենէն չքեղ նմոյշները — ո՛ր աստիճան մեծատարած փառքի խորհրդանիշ արտայայտութիւններ դարձան, իրենց ժամանակներուն կիսաստուածները իբրև պաշտուեցան: Այսօր Գրականութեանց պատմութիւնը մեծ գերեզմանոց մըն է, այս տեսակ անուններով իր պարագութիւնը դարգարող: Ու մեր մէջ, նուազ չքեղութիւններ՝ Հիւրմիւլ, Բազրատունի, Ալիշան, յիշելու համար ամենէն մեծակոտոյց համբաւները, որոնց մեզի ձգած ժառանգութիւնը անտարագելի գժբախտութիւն մըն է երբ դասուի, առանց նախապաշարման կամ կեղծ հայրենասիրութեան:

Դէպքերը դէպքեր են սակայն: Անոնց վերև երբեմն պտուտող մշուշը կանուխ թէ ուշ կը հալածուի, դանոնք ձգելով իրենց իրականութեանը հետ: Այսօր մարդիկ գիտեն թէ այդ մեծատարած անունները մեծատարած մեծելներ են, անդարձ կերպով մը իջած իրենց վերջնական հանգստարանը: Մեզի համար այս ամենուն մէջ տխուրը ան է որ 1900ին, այսինքն տակաւին երէկ, սպուին գիրքեր որոնց անուններն էին Թէրզեան Բազիր (1908), Արշալուէն Վերջալոյս (1912), Աթուղափան Բաւարեղծութիւններ (1929): Պէրպէրեան, աւելի զգաստ, իր բոլոր փառքին հակառակ, խելքն է ունեցած իր քերթուածները չխմբելու 1900էն վերջ (Առաջին Տեքէտը կ'իյնայ 1877ի շրջանին: Խոհ և Բաշտը՝ 1904ին, առանձին նիւթի մը շուրջը բանաստեղծութենէ աւելի մտածումներու, երազանքի, վերլուծումներու սրտագին վկայութիւն մըն է, ուր Առաջին Տեքէտը և բոցաճաճանչ ուսման թիքէն հազիւ թէ քանի մը շող կը մնան տակաւին:

Տաղաչափութիւն կոչուած աժան ու գիւրին մարզանքը, պարտաւոր եմ ըսել, չորսին համար ալ կը պահէ իր ամբողջ ծանրութիւնն ու մեղքը: Ինչպէս վերը գիտել տուի արդէն, երեւթիւ միայն մեզի յատուկ գժբախտութիւն մը չէ: Բոլոր ազգերու գրականութեանց պատմութիւնը կը պարզէ նման պատ-

կերներ: Սերունդի մը մէջ, ուր գրական ստեղծագործութիւնը ուրիշ մարդերու վրայ այնքան զեղեցիկ արդիւնքներով ինքզինքը կը պոսակէ (մեր Իրապաշտները, օրինակի համար, արեււահայ Ռոմանթիքները, Իրապաշտները՝ մինչև Վահան Տէրեան), մեզի կը զլացուի հաստատումը վաւերական բանաստեղծին: Ո՞վ է բանաստեղծը Դուրեանին մահէն մինչև Մեծարենցի երևումը, արեւմտահայ գրականութեան մէջ: Փորձեցէք պատասխանել. ու պիտի տառապիք որ ստիպուած էք արտում անուններով բաւարարուիլ, որոնք չափաբերուած տողեր միայն ձգած են մեզի, երբեք՝ իրաւ բանաստեղծութիւն: Երբեմն երևոյթը աւելի ընդարձակ է, տարածուելու համար ամբողջ դարու մը վրայ: Գրականութեանց պատմութեան խուզարկուները շատ լաւ զիտեն որ լուսաւորութեան դարը ոչ մէկ իրաւ քերթող է տուած Ֆրանսական գրականութեան, ընդդէմ բարգաւաճ, յաղթական լէգէոններու որոնք այդ ԺԸ. դարը ողողեցին մոսրկալներով, épitresներով, առակներով, նոյնիսկ պղտիկ քնարական կտորներով, բոլորն ալ գուրո՝ հարազատ բանաստեղծութեան բարիքէն: Ապշեցուցի՞ք, Անշուշտ, Ըսեր եմ անդ մը փառքը պոսակաւոր անգլիացի քերթողին (Ա. Քենիսըն) ու այն lugubre տըրտմութիւնը որով կը պոսկի յիշատակը In Memorial-ի ստեղծիչին:

Զարթօնքի Սերունդը մեր մէջ, չափով մը կ'ազատի այս գատապարտութենէն, քանի որ իր անկորուստ փառքը տուած է մեզի Պ. Դուրեանի անձովը, մէկը թերեւս այս ժողովուրդին ամենէն մեծ բանաստեղծներէն զոր կարենայինք, առանց նուաճման մատուցանել ամբողջ աշխարհի հրացման(*): Միւս կողմէն պարտաւոր եմ աւելցնել որ Պ. Դուրեան, պատկանելով հանդերձ այդ սերունդին, վեր է անկէ, անկարծելի բարձրութեամբ մը, քանի որ երեք քառորդ դար փոխանակ աղօտելու այդ տղուն զգալնութիւնը, ընդարձակած է անոր ստեղծագործ զօրութիւնը, կը կարծեմ՝ անվերաքննելի ապահովութեամբ մը: Դարձեալ, այդ սերունդին փառքին — բանաստեղծականին մէջ — կը զի-

(*) Նանրամիտ սխալը՝ հանդիպող յաւակնոտին, մեր բանաստեղծները օտարին մատուցանելու: Մինաս Ձերազ, Արշակ Չոպանեան, Ա. Նաւարեան, Ա. Փանոսեան, Ե. Դոլանճեան, Հերմինէ Հովեան իրենց ներած են այդ սրբապղծութիւնը երբ աւելի քան յստակ էր իրենց անբաւարարութիւնը իրիւ բանաստեղծ, մայրենի լեզուով իսկ, Բանաստեղծութիւն մը կը թարգմանուի բանաստեղծի մը կողմէ: Անհասկնալի բացառութիւն մը, այս ուղղութեամբ Սիւլլի, որ հայացուցած է կատարեալ յաշուուածքով, քանի մը Պոտլէռեան տալեր:

ջիւմ Մ. Պէշիկթաշեանը որմէ արեւմտահայ գրականութիւնը, այս անգամ շեշտօրէն տեղական իր իմաստին մէջ գործածելով բառը, ժառանգած է մէկէ աւելի անթառամ գեղեցիկութեամբ քերթուածներ։ Այս երկուքէն դուրս, մնացեալ բոլոր անուններուն առջև, միշտ այդ սերունդէն, անոնց ուղղակի յաջորդներէն, մինչև 1900, ինծի համար խղճահարութիւն մը չի կազմեր զանոնք խմբել մէկ դէպքի պիտակին տակ, — ատրկա կարաւանն է տալաշափնեռն ։

Այն պարագային երբ ունենանք խելքը երկու իրարմէ բուրովին տարբեր իրողութիւնները, այսինքն բանաստեղծութիւնն ու ասոր կերպարանքը հագնող տաղաչափութիւնը, արժեւորել ինչպէս որ պարտաւոր ենք ընել, մենք կը գիմաւորենք մէկէ աւելի գոհունակութիւններ։ Նախ, մեր գրականութեան ուսումնասիրութիւնը կը շահի որոշ ազատութիւն, որոշ ընդարձակութիւն, դադրելով վերաբերուելէ միայն ու միայն խումբ մը, շրջան մը մարդոց հոգեխառնութեան, տարածուելու համար ամբողջ մեր ժողովուրդին։ Ոչ մէկ փաստ, ոչ մէկ ազդանք, ոչ մէկ նկատում չեն կարող արեւելահայոց հոգիին համար ընդունելի ընել թէրզեանի մը, Սէթեանի մը, Պէրպէրեանի մը քերթուածները։ Այո, անոնց պաշտօնական քննադատութիւնը զբաղած է արեւմտահայ բանաստեղծութեամբ, ծանօթ հաւաքածոն հրատարակած ու կցած է անոր ընդարձակ ալ ներածական մը, բայց այդ հետաքրքրութիւնը, արեւելահայ մեղքը ցոյց է տուած մեր ժողովուրդի ամենական արտայայտութիւններուն, պատմութենէն մինչև ֆուք-լորը։ Անրկա այդ բանաստեղծները ուսումնասիրած է բանաստեղծականէն բոլորովին օտար ախորժակներով։ Բայց նոյն այդ չկամութիւնը այդ դպրոցը չհամարձակեցաւ պարզել Պ. Դուբանին տաղարանին առջև։ Ինծի անձնապէս ծանօթ է այդ դպրոցին տրամադրութիւնը Միսաք Մեծարենցի գործին վրայ(*)։ Ուրեմն Դուբանն ու Մեծարենցը ընդարձակող փաստը, փաստն է իրաւ-բանաստեղծութեան։ Միւս կողմէն մեր գրական խղճատանքը վերուստ տրտմութիւնները, վրիպանքները զարձեւալ կը հասկնանք կա-

(*) 1922 ին, ի. Հայաստանի ներկայացուցիչներէն (կարիինեռն Ա.) ես պաշտօն էի ստացած Մեծարենցի վրայ կատարելու ընդարձակ ուսումնասիրութիւն։ Քաղաքական գէպքերը մեզ տարտղնեցին Պոլսէն։ Ուսումնասիրութիւնը լոյս տեսաւ Հայրենիք հանդէսին մէջ երկու տարի վերջ։ Մէջտեղն է Պետհրատի կողմէ հրատարակուած հատորը որ կը խմբէ Մեծարենցի բոլոր գործը։

րելի արդարութեամբ ու կը զնենք վերջ մը ընդարձակ տարակարծութիւններու, ամուլ վէճերու: Այսպիսի տաղնապներէին փառքերը Ալիշաններու, Պէշիկթաշիեաններու, Աղեքսանդր Փանոսեաններու, Սիպիւններու, Որբերեաններու, — անսպառ է անուններու սա կարաւանը — որոնց հանդէպ եթէ հրապարակային յաղթանակներ չենք մտածեր այսօր կանգնել Երեւանի փողոցներուն մէջ, բայց Սփիւռքի իրենց ժողովուրդին փառքերովը փառաւորութեամբ մարդոց մեծ մասը գիտէ մնալ հանգիստ, առանց արհամարհանքի, բայց առանց ալ սուտ ու փուտ զեղումներու: Իրաւ բանաստեղծութեան հրաշքներէն մէկն է դարերը արհամարհել ոչ թէ քառորդ դարու մէջ հետախաղաղ կորսուիլ: Երիտասարդ մը, որոշ հասկացողութեամբ մը պաշտպանուած, այսօր ձեռք կ'առնէ յիշուած անուններէն ու է մէկէն մեզի հասած տաղարան մը, կը խորասուզուի անշուշտ որոշ հետաքրքրութեամբ մը, լայնօրէն ինքզինքը տրամադրած հաղորդելու զինքը անմիջապէս կանխողներու հոգեխառնութեան — բանաստեղծութիւնը այս հոգեխառնումը կարելի ընող ամենէն հաղորդական կրթանքն է, արուեստներէն — հազիւ քանի մը էջ թղթատած երբ կը նետէ մէկգի հատորը, փաստը տուած կ'ըլլայ ոչ թէ իր անհաղորդութեան, այլ այդ տաղարանին օտարութեան իր ժողովուրդէն: Տաղաչափութիւնը մանտարինեան կրթանք մըն էր: Ատիկա ընելու անընդունակ քիչեր՝ մեր այդ սերունդէն: Դրիգոր Օտեանն անգամ չէ գիտացած փորձութեան:

Խօսած եմ, Նար-Պէշի տոլթով, Մխիթարեան վանքին մէջ ծնունդ առած, հասակ նետած ու աճած քերթողական ախորժակէն, ու անոր այն պատկերէն զոր պիտի ունենար Պոլիս փոխատնկուելէ վերջ, հոն ուսում առած պատանիներուն միջոցով: Հազիւ կեցած եմ Զերապի մը քերթողական յաւակնութեանց, փառասիրութեանց առջեւ, այն գլխաւոր պատճառով որ Խառգեղցի մեծ մարդը ամէն բան մեծ է սկսած, առանց բան մը կարենալ նուաճելու: Պատանիներուն անգրանիկ փառասիրութիւնը աղջիկներէն համբոյր մը, մուսաններէն ալ պսակ մը կը կազմեն: Շատ կանուխէն վտարած եմ նոյնիսկ տաղաչափներու շրջափակէն երբեմնի ահաւոր փառքը, Աղեքսանդր Փանոսեանը որ բառ չափելու իր մեղքը կը քառապատկէ խառնուածքի հիմնական ալ կեղծիքով մը: Յայտնի եմ Եղիայի ոտանաւորներուն վրայ իմ դիտողութիւնն ու գատաստանը: Վաւերական համբաւով պարուրուած այս անուններէն դուրս կը մնան թով-

մաս թէրզեան, Ռեթէոս Պէրպէրեան, Յովհաննէս Սէթեան, Մկրտիչ Աճէմեան, Եղիշէ վարդապետ Դուրեան (Հովհանն Սբէնգէն առաջ, որ 1900էն վերջ գրուած քերթուածներու ժողովածու մըն է. մենք սենինք անկանգնելի քերթուածներ, նոյն այդ գրիչէն), բոլորն ալ արեւմտահայ քնարերգութեան մէջ որոշ վարկով, կշիռով:

Հետաքրքրական է նոյն տառն որ այդ անուններէն մեզի հասած քերթուածները պարզեն նիւթի, սղիի, թէքնիքի տեսակէտներէն զիրար շատ մօտիկէն յիշեցնող, իրարու հետ չփոթուելու աստիճան նմանատիպ հանգամանքներ: Այս հանդիսութիւնը սակայն բոլորովին տարբեր է այն միւսէն որ կերպարանք կը ստանայ ամէն սերունդի իրագործումներուն միջինին վրայ, բայց միշտ եղանակը կը գտնէ մասնաւորութիւն, ինքնանալու: Փափոք Դուք չէք կրնար իրարու հետ չփոթել Վարուժանն ու Սիւսանն, Մեծարեցն ու Ջրաբանը որոնք ոչ միայն նոյն ժամանակի մարդեր են, այլ որոնց մշակած նիւթերը կուզան մէկ ու նոյն աշխարհէն:

Բայց ձեր հետաքրքիր ուշադրութեան կը յանձնեմ հետագայ քերթուածները.

1.

ՅՈՒՆԻՍ 1870

Բուրեցե՛ք, ծաղկունք. բոյներ, երգեցե՛ք.
Ձեզ համար շողեր կը սփռե՛ք արեգ.
Ծո՛ւլ ծիածաւալ, գմբե՛քք երկնաւոր,
Դուք աստղեր ՚ւ ալիս ունիք բիւրաւոր:
Ձեզ են ժամանակք ՚ւ ասպարեզ անհաս.
Ես մեկ օր եւնիմ՝ այն ալ յուսահաս:
Ինչպէս արբանեակ զոր քողուց աստղ իւր,
Կ'ընթանամ յանճունն եւ չըգիտեմ ուր:
Ասխարհ իմ աչքիս համակուեր է սեւ.
Մըտուելն մեզ մուք կը ծագի արեւ:
Լափիզոյ բոցէն հալածուած ի սփիւռ
Ըսուեր մ'աչեերէս կը փախչի սքլսուր,
Ինչպէս կայծակէ զարնըւած ծառի՝
Ինչ բանի զաչիմ՝ մոխիւր կը փոխուի:
Իմ բովէս կ'անցնին անսարբեր մարդիկ,
Անսարբեր ողջոյնք, անսարբեր ժրպիսք.

Հոգիս նոնեպսակ բընար մ'է դարձեր,
 Կոծի կը փոխուին հոն ամէն ձայներ:
 Ո՛վ այնչափ անթիւ արեւներու Տէր՝
 Ի՞նչ պէտք էին քեզ հեզ մարդուն ցաւեր...:

1870 (ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Թ. ԹԷՐՂԵԱՆ)

2.

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Կուսա՛ն չֆնալ, փափուկ վարսիցդ մի ոլոր
 եւ մի պասկեր կերպարանացդ երկնաշնորհ
 Ինձ նուիրես յիշատակ.

Կ'ուզես զոքա իմ արտին մեզ կենդանի
 Պահեն յաւեհ ըզո՞ն տեսիլ գեղանի
 եւ զյուշ քոյին սիրունակ:

Երկինք երկիր ինչ որ ունին գեղեցիկ
 Ինձ յար ըզոյդ կը պատկերեն, ո՛ր կուսիկ,
 Գեղ եւ շնորհ բազմազան.

Եւ ի բնութեան որչափ հնչեն ձայն ձայն անոյշ,
 Նոքա բոլոր հծծեն յունկն իմ եւ ի յուշ
 Ըզո՞ն անուն սիրածայն:

Յերկին պայծառ՝ զամբիծ նակաս քո վնիս,
 Յայդ շողազարդ՝ զաչփիդ նայուած լուսախիս,
 Ի վարդն ըզդեմարդ շիկնած,

Ըզնազելի փափկիկ հասակդ ի շուշան
 Տեսնեմ, եւ զո՞ն կարծեմ լըսել քաղցրիկ ձայն
 Ի դայլայլիկ սոխակաց:

Ըզքեզ մոռնա՛լ... ո՛հ, ո՛չ, ցորչափ սիրտ մ'ունիմ.
 Սակայն առ իս ունել յաւեհ քո անձին
 Մի նշխարը պատշելի

Պէտքս առջեւ ըզթիպ գեղոյդ զոր բնութիւն
 Նըկարելու լաւ՝ բառական չունի գոյն,
 Այս ինձ շնորհ մ'է երկնի:

1874

(ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵԻՔ, Ռ. ՊԷՐՂԵՐԵԱՆ)

3.

ՅԻՇԱՏԱԿԻ ԱՆՅԵԼՈՅՆ

Եւ շընչէր հողմ ամառան, տատանէին ծառք համախումբ.
 Հեւ ի հեւ հեծէր հընչիւն հողմածածան սաղարբուց:
 Երրորդ մասըն հասանէր արեգ շուղին իւր լուսափաղփ.
 Լուռ էին մարդիկ համբուն, զի հեծուքեանց դընէին ունկն
 Աղաղակող բընուքեան զոր ամբոխէր շունչ մ'երկնային:
 Եւ յայնժամ յիս զարբնուին անցեալ տարեաց յիշատակք.
 Մասաղ իմ մանկուրիւն, երբ մայրենի աղու աւաշ
 Ռոտէր առաւօտուն ապշած աշացըս նինջ քեքեւ,
 Այն բուն քեքեւանինջ որ չէր մըքին, այլ լուսաւեհ,
 Յորում աշխարհ ծիրանի երեւէր ինձ, երկին՝ բենեզ:
 Եւ ապա պատանուքեան այն քաղցր օրեր հեշտալի,
 Երբ ընկերաց հասակակից այնչափ գոլջր էր տուրեւառ.
 Օրեր ուսման եւ մըրցանաց, ի մարգ մըսաց դեռաբողբոջ,
 Ուր եւ դոյզն ինչ խառնէին տարաւ դեմքեր երբեմնակի
 Քաղցրահայեաց աղջկան որոյ շըրքունք էին անոյշ.
 Անորոշ եւ վաղանց հանգոյցք հոգւոյ զոր չը գիտենք
 Եւ որ հազիւ բուլակի պարաւանդեն զսիրտ պարմանոյ:
 Ու ապա յոյզք ծանրագոյն երիտասարդ խոկուն հոգւոյ,
 Երբ պնդագոյն եւ սերտ կապանք կաշկանդէին սիրտըն դողդոջ
 Երբ ցայգ եւ չիւ գրաւեալ էին անվանելի խորհըրդով,
 Յորժամ զոյգ մ'ականոդիք ուսուցին մեզ մըսածել,
 Եւ քըխագոյն կամ խարտեաւ գլխոյ մի զնեհ գնայինք ընդհաւ,
 Աստանդական քափառող փոյր ի խընդիր մի ակնարկի,
 Կամ գլխոյն մեջ ունեւելով մի պարեգօտ հոլանաձեւ
 Կամ օձատ մի նամփուրտ աշկեալ զմարմնովքն փափկամեջ,
 Անուշաբոյր երբ մըրքնուրտ երեկոյին սըփոէր ըզնեօք
 Եւ խուկնիք ըզզըլխիչ ծեր երկրես դուրս բըխէին:

1882 - 1883

(ՅՈՒՋՄԱՆ ԺԱՄԵՐ, Յովհաննէս Սէքեան)

4.

ՀԱՆԳԻՍՏ

Դեղնած ու խանձած՝ ինչպէս չոր տերեւ,
 Կախուած էր կեանքէնք քելով մը քեքեւ.
 Եւ ան որ առնոյգ՝ աշխոյժ էր այնքան

Հիմա անճանաչ, ճիհար ուրուական,
 Կըմախք մ'ե դարձեր, կաշի եւ ոսկոր
 'Իողղոջ ծերու պէս բեկեալ՝ միջակոր.
 Ու լայն բիբն աչքին դուրս ցըցուած խորեմ
 Տըսմագին ժպտով փաղի հեզնօրեմ:

Բայց այդ ուժասպառ ու սարսամ ստուեր
 Տակաւին չճնաղ յուսով մ'որորուեր,
 Եւ իր քափանցիկ մասնէրուն՝ գաղտնի
 Յնծուքեամբ փորձեր ոսկեղեմ մասնի.
 Իղձեր՝ երազներ սաժեր վեմ կամ խեւ
 Մինչ օրնսան հսկեր իր գլխուն վերել:

Ափսո՛ս, հազուագիւտ ձիւրբերդ ու սաղանդ
 Անհետ փնացան. ափսո՛ս քեզ նուանդ,
 Որ զուարթ հոգւոյդ ծաղիկներ մի մի
 Փետեցիր դուն ինձ ձեռքով քնամի.
 Տենդը մոլեղին՝ հանոյքին հրապոյր
 Անգունդը մըկեց ըզքեզ իբրեւ կոյր.
 Ճըղակսոր քրիւ կեանքդ արդեմ խարխուլ.
 Մեր սերը մոռցար ու մեր ձայնին խուլ
 Խրմեցիր անուշ այն քոյնին կաթիլ
 Առանց կարծելու այսպէս շուտ մեռնիլ:
 Եւ այն:

1892

(ԹՐԹՈՒՆ ՅԱՆՅԵՐ, Մկրտիչ Անէմեան)

Այս քերթուածներուն ինծի բերած ճակատագրական, դը-
 րեթէ չարաշուք խոտովքը, արուեստը այս աստիճան անգիտելէն
 ծնունդ առած, անոնց հեղինակներուն հաշւոյն, պահ մը կը
 փորձեմ մօռնալ: Ու կը հրաւիրեմ ընթերցողը հեղինակներուն
 անունները փոխանակել իրարմով: Այս տեսակ դործողութեան
 մը արդիւնքը այն պիտի ըլլար որ Աճէմեանին Հաֆէաբ կրնար,
 առանց անպատահանութեան, ստորագրուիլ Թէրզեանին Յաշիւին
 հետ համահաստար: Այս փորձը նոյն արդիւնքը պիտի տար Աէթ-
 եանին և Պէրպէրեանին քերթուածներուն համար: Բայց այս
 արդիւնքը աւելի քան վճռական է քերթողի մը տեսակարար
 կարողութենէն: Ու այս տարօրինակ պարագան դատապարտու-
 թիւնն իսկ է այդ դպրոցին: Միւս կողմէն յանդգնեցք այդ

փորձը գործադրել Դուրեանին, Վարուժանին, Մեծարեւոյցին, Թէքէեանին որեւէ մէկ կտորին վրայ: Ձեր պատուահասու մը պիտի ըլլար նոյնքան բացարձակ: Ասիկա՝ համոզի՛չ, թէ ինչու նոյն բաները չեն բանաստեղծութիւնն ու տաղաչափութիւնը:

Ե.

Այս ընդհանրութիւններէն վերջ, տաղաչափներու դպրոցը ենթարկելու համար վերջնական վերլուծման ու գնահատման, կ'ընեմ բաժանումներ, յատկանշական ու պիւրի, անոնց մէջ ըսելու համար բարիքն ու չարիքը այդ մարդոց յիշատակին, անշուշտ հիմնովին անտարբեր այդ գործողութեամբ մաքսերուն մէջ առաջ գալիք շփոթանքին, թերեւ բեկումին, զայրոյթին: Միջին ընթերցողը, առանց քննադատ մը ըլլալու, ամէն օր կ'ընէ այդ տրտում աշխատանքը այդ տաղարաններուն վրայ: Սովորեմ տալ այդ դիրքերը քիչ չատ հասկցողներու, պատուիրելով կարդալ առնուազն քանի մը քերթուած, ու ինծի բերել անունը այն քերթուածին, հոգ չէ թէ մէկ հատիկ, որ անցնէր տրտում փորձը վերընթերցումին: Ձուր տեղը չէր որ 1910ին այդ դըպրոցը ամբողջութեամբ թանգարան առաջնորդեցին մարդիկ, նոր երիտասարդութիւնը այդ դիւաններուն աշխարհէն հիմնովին օտարացած, միջին ընթերցողը անոնց մէջ չգտնելով իր օրուան ախորժակներուն յագուրդ: Գրականութեանց պատմութեան ուսուցիչներուն ապրանքն հղան անոնք, այսինքն վաւերական մեռելներ: 1929ին Ձօպանեանի յառաջորդանը անկարող կը մնայ այս վճիռը բեկանելու, քանի որ փորձը, տասն անգամ կրկնուած, միշտ տուտու նոյն արդիւնքը: Մարդիկ չունէին ինծի ցուցնելիք քերթուած մը զոր առանց նեղութեան ըլլային աւարտած:

Կը գնեմ ուրեմն սա հարցերը.

- ա) — Ձգայնութիւն, խառնուածք, տաղանդ, ինքնատեղութիւն:
- բ) — Այդ տաղարաններէն ներս սեւեռուած աշխարհ մը:
- գ) — Այդ գործերուն ներսը բաբախող իմացական, պարագայական, ցեղային բարեխառնութիւնը, գիտական բառով մը՝ *փայրկեանք*:
- դ) — Անոնց մէջ ի զօրու արուեստի մը տիրական գիծերը, նկարագիրները:

է) — Սերունդի բնորոշման ուրիշ յատկանիւշներ, համեմատական առաքինութիւններ:

շ) — Ոն եւ լեզու:

Այս քիչ մը շատ պարզուած տարազներուն բարիքը հոն է որ անոնք ինծի կ'ընծայեն պատեհութիւն, առանց մանրամասնուած բնագիւրհերու վրայ պարտադրեալ կերպով յամեցող վերլուծումին, իրենց հիմնական եզրերուն վերածուին այդ անուշաներով մեր միտքին մէջ յառնող զազափարներ, լրջանան կշիռներ ու չափեր, հաստատուելի վճռապէս մեր գրականութեան մէջ երկար ատեն իր գոյութիւնը պահպանած հէքեաթի մը հանդամանքը:

Ըսի վերը թէ բացի Պէրպէրեանէն, որուն արձակը պիտի ուսումնասիրուի առանձին, միւս երեքին համար Համադարձիչը չի կրնար տրամադրել առանձին կենդանագիր: Պարտաւորուած եմ ուսումնասիրութիւնը քաշեցնել համադրական ճամբով: Յետոյ, պիտի չօտենամ երեքին ալ կենսագրական տուեալները շահագործելու մեթոտին, այն գլխաւոր պատճառով որ Թէրզեանին համար փորձուած կենդանագիրը մեծ զիծերուն մէջ կը յարմարի միւսներուն ալ: Պէրպէրեանին արձակը պիտի արտօնէ դիտքիչիկ մը աւելի լայնեալ անոր ազգային դերին: Մ. Աճէմեան Պոլսեցի պաշտօնեայ մըն է: Յովհաննէս Սէթեան՝ պատուական ուսուցիչ մը, առանց հանրային որեւէ դերի:

Ուրեմն

ա) — Ի՞նչ են, գիտական քիչիկ մը յաւակնոտ տարազով մը, տարբերը այս մարդոց զգայնութեան, խառնուածքին, տաղանդին, որոնց համագումարն է ինչ որ արուեստի մէջ ինքնասպութիւն կ'անուանենք: Այս տարազին տակ ես հասկեցեր եմ մարդոց ջղային դրութիւնը, ասոր հակազդեցութիւնները կեանքէն ու զանոնք արտաձեւելու (թող ներուի այս նոր բառը) սեպհական ընդունակութիւնը, շնորհը որով տարբերէին այդ մարդիկը զանգուածէն, մարդոց միջինէն: Այս չորս անունները (Կրտսեր Ռոմանթիքներէն) ունէի՞ն այդ տարբերէն ինքն ոչ յուզութեամբ, փարթամութեամբ գէթ այն անհրաժեշտ չափով որ պիտի ընէր ընդունակ զանոնք մասնաւորելու, ինքնացնելու, իրենց ժամանակէն, իրենց ցեղէն առնուազն որոշ չահեկանութեամբ նմոյշներ գառնալու հանգամանքներով: Այս հարցումին դժուար է ոչ թէ պատասխանը, այլ ասոր միակտուր, վճռական նկարագիրը: Ըրէք հարցումը Ազեքսանդր Փանոսեանին համար:

Ձեր պատասխանը վճռական է առանց այլեւայլի: Կրտսեր Ռոմանթիքները կը տառապին, ինչպէս համար բացարձակութեանը տակ նման վճիռներու: ասիկա՝ ոչ անոր համար անշուշտ որովհետեւ կէս դարու կեանք մը վայելող, զրեթէ բնական դարձած երախտագէտ զգացումներ կը միջամտեն մեր դատաստանին, այլ անոնց գործերէն մեր ներսը արթնցող մէկէ աւելի հակամարտ տպաւորութեանց պատճառով:

Երբ ձեռք առնենք Թէրզեանի դիւանը ու ենթարկենք ուշադիր վերլուծման մը դայն լեցնող բազմահարկւր քերթուածները, կարճ ու երկայն, պարզ որքան բարդ, լայնաշունչ որչափ կտրատ, ամէն ստեղծերու վրայ իրենք զիրենք իրադործած, անպայման մեր մտքին առջև կ'աւանդեն կենդանապիւր մը, սեպհական գիծերով, ակսորժակներով, գոյնով որոնց միջինը ոչ միայն կը յօրինէ անոր դէմքը, այլև կը թելադրէ ապրելու ուրուային կերպ մը, ժամանակէ մը տարտամ սարսուռներ, ամենէն շատ՝ սանկ իրաւի մօտեցող զգայնութիւն մը: Սեղմենք այդ մտապատկերը, քիչ մը աւելի ուժգնութեամբ որպէսզի անկա մարմին դառնայ, ըլլայ իրական ապրումներու, յոյզերու, մտածումներու հանդէս մը, ինչպէս ըլլան այդ հանդէսը անունները Պէշիկթաշլեանին, Դուբեանին, Մեծարենցին, Վարուժանին, դուք պիտի զգաք թէ ձեր ճիգին համապատասխան խտութեամբ, թանձրութեամբ մարդ մը պիտի չներկայանայ ձեզմէ դուրս... ձեր մտքին: Հոս է ահա Կրտսեր Ռոմանթիքներուն ամենէն խոցելի կողմը: Ձեռք ըսեր թէ հանգիստը դպրոցականը ի վիճակի էր այդ տաղերը խմբագրելու, բայց գիտեմ թէ փոքրագոյն ճիգ մը բաւ էր քիչ շատ խելք ունեցող ու բանաստեղծական բառարանը թերթող գրոց-բրոցի մը համար մերձաւոր տաղեր հանել հրապարակ: Թովմաս Թէրզեան պատանին, երիտասարդը, չափահասեալ մարդը, նոյնիսկ դէպի ծերութիւն առագաստ բացած և որոշ հրուանդանները ետին ձգած մտաւորականը, գրոց աշխատաւորը, պատկաւոր քերթողը կարճը և հաճել իր փորձառութիւններէն, տարիներուն իր ջիղերուն վրայ տեղացած թեթեւ կամ խոր, կարճ կամ երկարատեւ, բուռն կամ քաղցր յոյզերէն մերձաւոր հարազատութեամբ վկայութիւններ որոնք նախանիւթը պիտի ըլլան ամէն արուեստի գործի, եթէ ոչ՝ միացած է ընդմիջտ անզգայ, առնուազն խարդախ անպարար մը, բառերու հապիտ մը, որ գրելու դիւրութիւն մը, ճարտարութիւն մը միայն ունեցած է սեպհական, արտագրելու համար այս ու այն առիթներով

բազմահարկւր քերթուածներու այդ ժողովածուն: Պատասխանէն առաջ կը փութամ յայտնելու որ Թովմաս Թէրզեան իր քերթուածներուն մէջ չէ հակասած (*) անշուշտ իր կեանքին որուն պատկերը գծուեցաւ քիչ վերը, թէն ամփոփ բայց թելագրիչ՝ զիծերով: Եետոյ, այդ տաղարանը բաւական ընդարձակ, ինչպէս բացառիկ տաղնապնդով մեր պատմութեան ընդհանուր լամաստին մէջ, հետ հաշտ տարածութեան մը վրայ կ'երկարածգուի: 1855էն մինչև 1910, այդ կէս դարը կը կրկնէ մեզի մեր պատմութեան պատգամները. աւելի՛ ինչ որ նոր ժամանակները յարգարեցին մեր հոգեղէն շնորհներուն իբր հանդիսարան. — լեզու, գրականութիւն, ընկերային կեդարանք, հասարակութեան մը լիւ հանգամանքներ: Այս ամէնը կրկնին մէջը մեր ճակատագրին: Թովմաս Թէրզեան ոչ միայն անհաղորդ մէկը չէ այս ամենուն, կամ՝ այդ ամենէն մասերու միայն զգայարանքը ունեցող (վերնախնայները մեր պատմութեան հերոսապատումը, ողբասացումը, կրօնական անդամունքներ միայն նուաճել սիրեցին, օրինակի համար), այլ քանի մը անգամ կը հաշտուի իր սերունդին մայր ցանկութիւններուն թափին հետ: Իր գովալիան տաղերը, ըլլալով հանդերձ շրջանին յոյզերովը քիչ մը շատ ծանրաբեռն, տեղ տեղ գիտեն «առաւելու», անձնանալ:

(*) Ձեմ պահանջեր որ արուեստի գործ մը ու զայն արտադրող մարդը անպատճառ իրարու հաւատարիմ կերպարանքներ ըլլան: Ասիկա քիչ մը շատ պարզաոտել պիտի նշանակէր կեանքին ամենէն բարդ իրողութիւններէն մէկը: Դործին ու գործաւորին աղեկ'րսը: Անշուշտ: Բայց կայ միջին ողջմտութիւն մը. իրաւութեան, անկեղծութեան տարրական պարտք մը, ամէն մարդու ինչպէս գրողի համար գրեթէ պարտադիր: Երբ քսանամեակի աղջիկ մը (Օր. Խանճեան, ասպագայի անդուդական քերթողուհի Սիպիլը) լուսնի մը յոյժով տուած ժամանակը կ'երթայ այնքան առաջ, ըսելու աստիճան թէ այդ մոլորակը եթէ չըլլար այդ երկինքը, իր, պարման աղջկան կեանքը փոս մը, գերեզման մը կը դառնար հոս: անցած է, այդ իսկ անբնականութեան գինով, տանելիէն, ներելիէն անգին: Կեղծիքը վճռական է: Երբ աշխարհի բոլոր վայելքները մէկիկ մէկիկ փորձած ու ասոնց մեղքը դեռ չթմնեցուն, հասարակ ապրող մը, Աւետիս Խահակեան իր Արուստիկա Մանարիով մեղի կը կարգայ իր ահաւոր երեմիականը, կեանքը արմատէն իսկ չորցնելու խստեռանդն քարոզչութեամբ, կը դառնայ «նովին իսկ բանիւ» կասկածելի, ծիծաղելի անպարար մը: Այս երկու օրինակներուն ետին իմ թելագրելի ուղածը, որեւէ գործէ, որեւէ հարցոյց, իրաւ զգայնութիւնէ մը վկայութիւն դառնալն է առնուազն: Հոս բարոյական, իմաստասիրական, ընկերաբանական ոչ մէկ յաւակնութիւն ունիմ նկատու: Արուեստի գործ մը սուտ չի կրնար ըլլալ, նոյնիսկ երբ յօրինուի մեր փորձառութիւնը զանցող նախատարբերով:

եկո՛ւր, այս պայծառ լուսնին տակ
Խճչ անոյժ ե երագել.
Մի՛ր տրտմամբ, դեռ շատ մտադ ես,
Մեռնիլ չե այդ, այլ ննջել:

եկո՛ւր, նստիմք ծովափին մօտ,
Ձեռքդ բո՛ղ ձեռացրա մեջ.
Բեմալե, ըսե անուշներդ ինձ,
Ամփոփե՛ վարսդ յեկեւեջ:

ու մնացած երեսուն և մէկ դուբդաները, թէև հանդիսական, գովական սեռին պատկանող, ունին բնականութիւն մը, ապրումի ջերմութիւն մը, կեանքէն լայն չափով սեռուած հոծութիւն մը, որոնք, գործադրումին բոլոր նուազումներուն հակառակ, կ'անցնին ընթերցողին, ապսպրանքէ տարբեր վստահութիւններ ալ թելադրելով: Թովմաս Թէրզեան իր բարերարին, մտերիմին (Յակոբ պէյ Պալեանի վաղամեռ կնոջը սուգը կ'ողբայ այդ քերթուածը) բերանը կը դնէ ինչ որ իր օրերուն բանաստեղծներուն գերագոյն ապրումները կը կազմէր, կը բնորոշէր: Մեր օրերուն մարդիկ նման վիշտի մը առջև պիտի չայցուէին անշուշտ այդ օգային հրաշքներէն, երկինքի այդ կերպ պատկերացումներէն, կեանքը այդպէս տեսնելու մանկական խանդէն կամ պարզօրէիտ, սիրտբաց վայելքներէն: Թէրզեանին զգայնութիւնը այս ու նման քերթուածներու մէջ (անոնք շատ են, բացի գովականներէն, նաև մտերմիկ (intime) մենասացութիւններու շարքէն) չեմ կըրնար որակել կեղծ, ռոմանթիք, այն գլխաւոր պատճառով որ այդ ապրումներուն մէջն է որ ձև առած է իր հոգեղէն դրութիւնը: Այդ զգայնութեան պակաս՞ծը: — Անշուշտ: Ատիկա պիտի հաստատէք առաջին իսկ ընթերցումով, երբ շարունակէք վերի երկու գուբդաներէն վերջ կարդալ ուշագիւր մնացածը: Բանաստեղծ մը, ալիւնքն ալս տարազը արդարացնող գործաւորը պիտի խուսափէր, շատ զգուշաւորութեամբ, սեռին լծորդ բոլոր մանկաբանութիւններէն, կենալու համար հիմնական քանի մը վիճակներու վրայ ու տար մեղի իր սիրականին ետեւէն «խանա խանա ման եկող» մարդու հոգին, արագ, սուր, խորերը թափանցող յոյզերու ընդմէջէն: Երեսուն երեք քառեկներէն քսանէն աւելին այդ բանաստեղծը պիտի խնայէր մեղի: Մնացեալին մէջէն ալ պիտի ջնջէր դիւրին, հասարակ տողերը: Այն ատեն մեղի պիտի դար շատ շատ սրտառուչ բայց վերջնական

կատարելութեամբ հնչեալ մը թերեւս թէրգեան սակայն այդ շատ իրաւ վիշտը տեսած է իր օտար մեծահամբաւ ժամանակակիցներուն գրիչին տակ (Հիւկօ, Լամառլին, Թէնիսըն, Միւսէ) մեծատարած քերթուածներու յատակ հայթայթող։ Ու իր զառածումը զգացական ըլլալէ աւելի գրական է։ Հիւկօ, այս հաւաստումէն յետոյ, դուք պիտի հասկնաք թէ ինչո՞ւ պարագայական, հանգիստական, գովական իր ոտանաւորները չեն կրնար կարճ ըլլալ, ըսել կ'ուզեմ՝ զոհանալ հիմնականով։ Քնարերգու թիւնը այդ մեծահամբաւ վարպետներու գրիչին տակ միջոց մըն էր գիրք լեցնելու։ Գրական գործերը առաջին անգամ չուկայի ապրանք կ'ըլլային ու Պայրընի մէկ քերթուածը կը վճարուէր մինչեւ տասը հազար սթերլին։ Այն օրերուն համար արքայական գումար մը արգարեւ։ Ըսի թէ Թէնիսընի մէկ քերթուածը ձեռքէ ձեռք էր խլուեր, հարիւր հազար տոլարի գին մը կրնակին։ Այս ցուցմունքները երբ լրացնենք ուրիշներով ալ, միշտ վաճառաւորական երակէ ճարտարութիւններ (հասա, չասա հաստ թուղթ գործածել, պատկերազարդել, լայն լայն լուսանցքներ թողուլ հատորի կերպարանք մը ճարելու համար քանի մը քերթուածի), մենք կ'ուենենաք Թէրգեանի տաղարանը ուռեցնող քերթուածներուն գոյութեան պատճառը, անշուշտ ուրիշ եղանակներով գործադրուած բայց նոյն նպատակներուն նկատող։ Երկար պատմումներ, լայն նկարագրումներ Հիւկոն հարուստ մը ըրին, Լամառլինին պարտքերուն թիթեացում մը հետապնդեցին (մանաւանդ Les Harmonies), Պայրընը մղեցին փարթաւ débâcheներու։ Ինծի համար դժուար է այսօր հաշտուիլ այդ ոտանաւորին (Վլադիմիր Կոնստանտինովիչ Նազեւիչ) ձգձգուն, ճապող ընդլայնումներուն եթէ երբեք զարուհ տողեր անիկա յատկացուցած է օրուան աստիճանաւորներուն, ամիրաներուն, քերթողներուն, սանկ ու նանկ բարեկամներու, տիկիւններու, օրիորդներու, որոնք միայն իր զգայնութիւնը չեն շահագրգռած աս ու ան ձեռով, այլեւեղած են չըջանին թերեւս սիրական յուզումները։ Մեր քերթուղութեան դժբախտութիւնն է սա ենթակայութիւնը պարագայականին։ Վաճառքն իր ծուծին մէջ տեղաւորուած սա պատեհապաշտութիւնը թուփաւ Թէրգեան պիտի չկրնար մոռնալ։ Ինչ տարօրինակ փաստ որ Գուբինէն, Պէշկիթաշլեանէն վերջ առանձին մեր հրապարակին վրայ տիրապետող այս գրեթէ պսակաւոր քերթողը այնքան քիչ էջեր ըլլալ յատկացուցած Սղոյալին Սահմանադրութեան տարեգարծի հանգչաններուն, որոնք,

ըսեր եւ քանի մը հեղ, բարձրագոյն քնարական պահեր էին, երէկի գպրոցականէն տրիրուն մը, անվաւեր լրագրողէն ատենախօս մը ստեղծող: Թէրզեանի ղդայնութեան բաղադրիչ հզօր ազդակները գոուար է մէկիկ մէկիկ արտահանել: Յուշմունքներու միայն կրնամ բանալ իմ էջերը: Իր խառնուածքին վերլուծումը գծախտտարար որեւէ նպատակ գրեթէ չի հալթալթեր անոր տաղարանին, այն պարզ պատճառով որ հակառակ խորունկ, ինքնարօշ կերպարանքին, այդ խառնուածքը մտած է ազդեցութեանը տակ անոր իմացականութեան, միայն վարիչը անոր օրերուն: Միահամուռ յարգանք ու հիացում մարդիկ կը շահին միահամուռ չէզոքութեամբ մը, չեմ ըսեր՝ կեղծաւորութեամբ մը: Թէրզեան չէ քծնած: Պատիւ իրեն: Թէրզեան չէ քծնած ամենէն աւելի իր մուսային: Դարձեալ պատիւ: Բայց նոյն Թէրզեանը գտած է եղանակը ոչ ոքի սիրս կոսրելու. աս ալ ուրիշ իմաստասիրութիւն: Յիմարներու շրջանի մը մէջ կ'ապրէր: Մեր յիմարները միայն վարիչ դասակարգին չէին պատկաներ: Կային մանաւանդ գրական մարդերու վրայ: Ամենէն պատրաստուած ուսուցիչը չէր միայն, այլև ամենէն աւելի հանգամանաւոր գրագէտը, ըսել կ'ուզեմ՝ մեթոտիկ ուսումնասիրութեամբ, ընթերցումներով իր իմացականութիւնը իր ժամանակին (Եւրոպան ունիմ նկատի) trainին մէջ տեղաւորած, հանդերձաւորած մասնագէտ աշխատաւորը գրական ուսումնասիրու: Մատի չեմ փաթթեր իր ծաղկաքաղ գեղեցկագիտութիւնը, տարիներով դասախօսած Պոլսոյ զանազան վարժարաններուն մէջ ու տպած է, կեանքի վերջաւոյսին, Բաշաֆէդ հանդեսին մէջ (1901-1903), ինչպէս չեմ զրաղած Եղիայի Խմաստասիրութեան պատմութեան տետրակով, աս ալ դասախօսութեանց ծրագիր մը քան իմաստասիրական կրթանք մը: Թէրզեան հանդուրժած է շրջանին գրական սնտուրքը: Եղիայի, Չերազի, Պէրպէրեանի, Սէթեանի, Նար-Պէյի, Աճէմեանի գրական փառքերը իր աչքին տակ գտան իւրենց կառույցները: Զոյոյ, իմաստուն, շրջահայեաց, այս մարդոց զառածումներուն լայնօրէն զիտակից (այդ մասին չեմ կըրնար տարակոյս պահել), ըրաւ կարելին որպէսզի տաղաչափութեան կեղծ փառքը ինքզինքը պարտադրէ մեր հրապարակին: Չունինք իրմէ ոչ իսկ փշրանք մը ընդվզում ընդդէմ այն բանաստեղծութեան որ ամենէն շատ Եղիայի ունայնամիտ ոտանաւորները պիտի տանէր հիացման: Վարպիտ մը, այս հիւանդէն իրեն շնորհուած, բաւեց Թէրզեանի, որպէսզի գրուէին Եղիայի մեղքերը, — մեծ մասը իր քերթուածներուն: Եւ սակայն ան-

հրնար է ուրանալ թուլմաս թէրդեանի մօտ բանասերլծական զգայնութիւնը, գոնէ՝ մեծասար: Իր տաղարանը շատ մը տեղեր այդ մասին ունի անհերքելի վկայութիւններ: Անշուշտ մարդ Պոլսեցի և հոսհոս միայն ըլլալու գինով է որ իրեն պիտի ներէ սա տեսակ քերթուածներ. — Ո՛ր խմորներու աղուոր քաղուհի (էջ 275) ուր անուշեղէնի մը գովքը (քաքար պէտքէն) կը հիւսուի ճարտարօրէն, Ունենան փոքրերուն գովեստին: Մարդ ոչ միայն կը զարմանայ նման տողեր կարգադրով պաշտօնական քերթողի մը գրիչէն, այլ կը տառապի ատոր կարելիութեան իսկ հաշույն: Ա. հատորին 267ին սկիզբը կայ Աս ճշտ զաւեշտը, շարունակուող՝ ուրիշ հինգ էջերու ալ վրայ: Շարէր այդ միջատին համար երկու հարիւրէ աւելի տողեր: Պոլսեցի մը միայն պիտի չտառապէր այս եղերակատակէն: Նման արտօնութիւններ են Ծառայէն Գրքը (277, Ա. հատոր), Գառնէն Գրքը (273, Ա. հատոր), Խառն Լ Գրք (195, Ա. հատոր), Վահագն Գրք (143, Ա. հատոր), Խառն (119, Ա. հատոր), Հրէի (101, Ա. հատոր), Զբառն (86, Ա. հատոր), Պարն (84, Ա. հատոր), Վառն Գրք (80, Ա. հատոր), — յիշելու համար, սանկ արագ թուումով, քանի մը վերնագիրներ: Ու դժբախտութիւնը հոն է որ թէրդեանի երեք հարիւրը անցնող տաղերուն երեք չորրորդը կուգայ այս զգայնութեան: Ըսել թէ կեանքն ալ ունի այդ կողմերը, այդ խեղճ ու պատառ ուրախութիւնները, այդ դեռնաքարչ վայելքները չի բաւեր որպէսզի հարիւրաւոր այդ քերթուածները գրուին: Վենետիկի մէջ ուսանող մը իրեն իբրեւ աշխարհ ունէր իր վարժապետներուն աչքերը, աւանջները, մօրուքն ու պարեգօտները և կրնար այդ ամենուն զիմաց իր մուսան կրթել: Պոլսը, հարկ չեմ տեսներ թարմացնելու Հապագայիցին Ա. Գիրքին մէջ այդ մասին թելադրանքները: Թէրդեան, իր բախտէն, Պալեաններու գովքին համար քնարերգած է Յապագան Զբառն (148, Ա. հատոր) շուսագովականը, Պալեաններու ձեռակերտ այդ պալատին նկարագիրը (հին առումով) իրագործելու համար: Ինչո՞ւ պէտք՝ այս հիացականին ետին արտում բաներ ընդհամարել: Կը գոհանամ միայն զիտել տալով որ տեսեր եմ պալատը (այրումէն առաջ անիկա ուխտատեղի մըն էր արեւելեան, աւելի ճիշդ՝ պոլսական ճարտարապետութեամբ խանդավառներուն համար), միտքիս մէջ քերթուածին փառքը: Իմ գտածը բոլորովին տարբեր ապրում մըն էր թէրդեանի քերթուածով թելադրուածէն: Այդ կապուտաներկ ալիքներուն լոյն հէծքին մէջ ես առաջին անգամ չափեցի արեւմտահայ բանաստեղծութեան տկարութիւնները: Սակի

քան երեսուն տարիներ կը դատեն զիս այդ խեղամտումէն: Այո, տեսայ

. . . զայն հրաւակեալ
Որ ըսպիսակ կ'անդրադառնայ
Ծովուն յալիս կապուեալներկ
Որ կը փերին յափունս նորա:

Խօսք, ամբողջութեամբ: Դրէք այրեցաւեր ապարանքը այդ ափունքին, ամայի ու ցուրտ, տարտամ շուքերէ հակուած ու պիտի չմտածէք ոչ այդ ջուրին, ոչ այդ մարմարին, ոչ այդ ճերմակութեան, այլ այն մօայլ, կարմիր, ահաւոր կիրքերուն որոնք այդ սոկի դրասանգներուն ներքեւ եւ եկան, կրնե՞րուն, տղոց, այրերուն, այդպէս սրահէ սրահ երբ իրենց անասնութիւնն ու գեղեցկութիւնը քոսթ քոսթ կ'արժեարէին: Յետո՞յ: Այո՛:

Ոչ կի՛ն է դա, ոչ հող, ոչ վեմ,
Այլ մեծագոր հայ հանճարին
Մըսածուքիւն մըն է վըսեմ
Հոն տարանիւր հագած մարմին:

(ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՆԱՍԵՂՄՈՒԹԻՒՆՆԵՐ, ԹԵՐՂԵԱՆ, Ա. հատ, էջ 150)

Այս կարգէ տողեր, տուններ՝ շատ ցանցաւ: Դարձեալ ընտանեկան պարագաներ, խորովուած հարը, քոյրերը, սիրածները, պատմութեան հերոսներէն ոմանք, ժամանակակից արքաներ, սանկ ու նանկ կիներ, երազներ, յիշատակներ:

Ողջո՞յն քեզ, պերճ հսկայապարզ Ոլիմպոս,
Ոյր մեհաւոր վերամբառնայ յասեղս անդ
Բիւր դարերով ալեւորեալ եւ զրլուխ,
Յոր Արեւ զուր շեշե՛կ զիւրքինս բոցեռանդ:

Անշուշտ: Բայց ի՞նչ փոյթը որ մենք հետը չենք մնացեալ ութսունը չորս տողերուն թաւալման ընթացքին: Ի՞նչպէս չի՛շեղ Հայրենի լեռները (Դ. Վարուժան), այնքան հարազատ, այնքան իրաւ, մեղապատկան ու չտառապիլ թէրզիկանի հաշտոյն . . . : Պատմութիւնը, երկինքը, աստղերը, Աստուածը, նահատակները, մահը ու իր երազները, աղջիկները, փոթորիկներ, լուսիններ, նոճեատաններ, լեռնամբարձութիւններ, ներկան ու հանգերձեալը, սաղմոսասացութիւններ, ինչ զիտնամ: Թերզեան մօտեցած է աւմէն բանի: Այսինքն իր զգայնութիւնը զարկած է ամէն ապրումի

ու հաւատացած է այդ բախումին արդիւնքին որ միշտ քերթուած մըն էր, ապահով՝ իր ճակատագրէն, ընկիւք շքեղ ասպարէզէն: Կարելի է էջերով երկարել այս շարքը: Իր քերթուածները միշտ օրուան շեշտը կը կրեն ու իբր այդ աւելի կ'ըլլան դատապարտելի երբ չեն յաջողիր այդ օրը քիչիկ մը ընդարձակել: Միլիոնատէր հրեայ մը իր զաւակը կը կորսնցնէ: Թէրզեան գիտէ ազնուական թախիծով մխիթարել այդ հայրը: Չեմ գտեր հոս այս արարքէն հանուելիք հաւանական տրտում գասը: Ու կուգամ հիմնականին — Ինչո՞ւ գրուեցան այդ հարկւրաւոր քերթուածները: Կարելի՞ էր անոնց մէջէն գտնել լաւերը իրաւ բանաստեղծի մը զգայնութեան: Եւ կամ այդ քերթուածները բառախաղային յօրինումներ էին հեղինակին իմացքները, թերեւ շահերը գոհացնելու սահմանուած: Իմ մասին, առանց տառապանքի եւ կրնայի մոռնալ այդ բարաւոր տողերը, եթէ երբեք չունենայի ներքին ոտուզութիւնը թէ անոնց ետին չէր կրնար մարդահաճ մը, խաբերայ մը, անուագն յիմար մը ապրած ըլլալ: Աս ալ իմ համոզումը: Թէրզեանի զգայնութիւնը ու ասոր հետեան ք խառնուածքը, տաղանդը չեմ ներգութիւ: Բայց չեն ալ պաշտպաններ անոր մեղի ձգած գործը: Ահա իմ եզրակացութիւնը: Ո՞վ է հեղինակը այս տարօրինակ ճակատագրին: Վեներսի՞կը: Թերզեանը: Փամմանակը: Տաղա՞նը: Երբեք կը փորձուիմ այդ անունը փոխադրել պատերազմէն ասդին, սփիւռքի ապրումներուն խորը, Պոլսէն դուրս Գահրէ, Նիւ-Եօք, Բարիդ, Երուսաղէմ, Պէյրութ: Ի՞նչ պիտի գտնէր այդ քնարակիւրը ըսելիք իր ժողովուրդին ու կը հրաժարիմ հետեւիլ իմ մտածումներուն: Պոլիս մը կայ այդ տաղարանին մէջ: Անշուշտ: Բայց այդ Պոլիսը Թէրզեանին Պոլիսն է և ոչ թէ իրական Պոլիսը: Մարդ մը կայ այդ քերթուածներուն ետին: Բայց այդ մարդը, այնպէս ինչպէս կը յօրինուի իրերայաջորդ տաղերէն, գրեթէ մանկամիտ, չըսելու համար հոսհոս պուէտիկոս մըն է: Իր լեզուէն: Իր վանական frameով հոգի՞ն: Իր աղկաղկ զգայնութիւնները: Իր ճկուն իմացականութիւնը: Իր յաջողութիւնները: Իր պայծառ նսեհը, որ միշտ գիմաւորեց իր երազանքը, զայն առնել տանելու համար իր հասցէին: Թովմաս Թէրզեան վիպող մը, թատերագիր մը, գիտողութեանց ու ապրումներու արձանագիր մը, քրոնիկներու հաճելի ասպետ մը: Ինչո՞ւ չէ: Բայց ոչ քերթող մը. այնքան դժուար է այս տարազին թելադրած մտատիպարը հաշտեցնել իրմէն մեղի եկած գործին ընդհանուր ճշունմին հետ:

բ) — Զգայնութեան սա վերլուծումը ստիպուած եմ կատարել Պէրպէրեանին ալ: Այս անունը ըլլալէ առաջ սփիւռքի մէջ իբր գրական իրողութիւն, գրեթէ ամբողջական մոռացում մը, ուրացում մը, աւելի-քան քառորդ դար (1875-1915) եղած է աւրամտահայ գրական, քաղաքական, ազգային, կրթական շրջանակներու մէջ մէկը ամենէն տիրական փառքերէն: Իրապաշտները կործանեցին Եղիան, լոկուցին կամ ուրացան Չերազը, բայց ֆիսցին անյաջող՝ Պէրպէրեանի վարկը իբր մեծ, հեղինակաւոր անձնաւորութիւն — ուսուցիչ ու գրագէտ նոյն ստին — բեկանելու: Ատեն մը իր բանաստեղծութիւնը ողջունուելէ վերջ իբր հզօր գեղեցկութիւն (Եղիայի հնարքները, հրաշքները այս ուղղութեամբ ծնունդ կուտային երկար տեւող հէքեթներու), Զօպանեանով, մանաւանդ Սիպիւով վերածուեցաւ իր ճշմարիտ կազապարին: Առաջին քերտին նշուլագեղ ուսմանթիւմէն, Պէրպէրեան թարգմանական բանաստեղծութիւն մը փորձեց, անցնելով աւելի անդին քան ուսմանթիւքները ու ԺԹ. դարու ուսուցողական ամբողջական բարոյախօսութեան սպասը չարհամարհեց: Մինչ այդ իր վարժարանը արդէն մասնաւորաւ էր անոր ուժերուն գործածութիւնը, մէկ կողմէն, միւս կողմէն ազգային շրջանակները լայնօրէն կ'օգտագործէին այս ուսուցչին մէկէ աւելի կարողութիւնները կրթական, կազմակերպչական, վարչական բաղմամբ կարիքներու համար: 1880ը կանխող տասնամեակին մէջ իրենց երեսմը ընող գէմքերէն (Եղիա, Չերազ, Պէրպէրեան) մեր հանրային կեանքը ամենէն աւելի երախտաւորեալ արդիւնքները ունեցաւ Պէրպէրեանէն: «Ահեստասնամեայ», ինչպէս կը գրէ ինքը, իմաստիւղի ներսէսեան վարժարանէն իր ուսումը աւարտող ու տաքը տաքին մերձաւոր ուսանիկ քաղաք մը (Ագրիւանուպոլիս) իր ուսուցչի շքեղ ասպարէզին նսեմ մուտքը ընող պատանին, քանի մը տարի վերջ, հազիւ երիտասարդ, արդէն գէմք մըն է, Պոլիս, իմացական բոլոր մարդերուն վրայ փարթամ շնորհներով: Կը հեղինակէ, կ'ուսուցանէ, կը խօսի մանաւանդ, լայն, լեցուն, շունչով հարուստ ու գաղափարներու թարմ մթերքով մը ուշադրաւ իր ճատերը, առաջին անգամ ըլլալով հետադարձութիւնը գործածելով ազգային, հայերենատիրական իր սովոր սպասէն դուրս, ուրիշ հարցերու արծարծումին: Մարդիկ մտիկ ըրած էին Չերազը, որո՛շ գիջումով Եղիան, անշուշտ ասոնց տարիքէ մատաղութեան ու մանաւանդ անոնց նիւթերուն հանդէպ հասկնալի գիջումով: Ու յոյնա՛ծ: Այսինքն անցած ուրիշ հետաքրքրութեանց: Երիտասարդ Պէր-

պէրեանը գիտէ շօտալիել (եթէ կը ներուել այս բառը) ունկնդիր-
 ներուն հոգեբանութիւնը, հարցերը ընտրելու մէջ ամենէն առաջ
 դնելով այն discernementը, որով ի յառաջագունէ մենք մեզի հետ
 կ'ուսնենանք մտիկ ընողներու բարեհաճ տրամադրութիւնը, գի-
 ջումը: Զգոյշ է երեւում հոն ուր կիրքերը կ'իջեմեն միանեման
 ու խեղճը քիչ ունի դեր: Կ'ուզէ՞ք ցանկ մը նիւթերու որոնց
 վրայ այս երիտասարդը ասեմաբանած ըլլայ, անշուշտ առանց
 ձանձրացնելու, քանի որ այս տողերը թելադրուած պահուն ալ
 այդ ճառերուն ընթերցումը ինծի կուտայ որոշ զոհունակու-
 թիւն, արդիւնք՝ ճպտուներու (Ազգային երեսփոխանական ժու-
 դովին հրիցս երանեալ աքաղաղները) բառամարտէն արթնցած
 հակադդեցութեան որ խորունկ արգասատանք մըն է իմ մէջ բու-
 լոր խօսքի հերոսները թերեւ անիրաւ կերպով մը զգեանող: Պէրպէրեան
 խօսած է այդ օրերու (1870-75) զանազան միու-
 թեանց հանդիսարահներուն մէջ դպրոցէ, ամուսնութենէ, փր-
 կութենէ, յաւաքդիմութենէ, ներկայի եւ ապագայի, աշխիւքն հար-
 ցերէ՝ որոնց մասին մենք ունէինք այդ օրերուն տարտամ ծա-
 նօթութիւններ: Մարդիկ կը հետեւէին նիւթին, հոն պարզուող
 որոշ, հաստատ գաղափարներուն, ու հաւանաբար այդ զաղա-
 փարները դասաւորելու, մատուցանելու եղանակին ալ տիրա-
 պետութեանը տակ: Պէրպէրեան մեր այդ շրջանի խօսողներէն
 կը զատուի սա կառուցողական տուրքերով ալ: Ան խօսած է
 նաեւ նայրեմասիրութենէ, հիմնովին նորոգելով այդ զգացումը,
 զայն ազատագրելով քերթողներու, թատերադիրներու բացա-
 զանչական կիրքերէն, ինչպէս պատմութեամբ շուրջադառնալու
 հնարքով ալ ռոմանթիզմէն: Կից, մէկը իր բանախօսութիւննե-
 րէն, ուրիշ նիւթ, դարձեալ հիմնովին նոր: Ու կը յիշեմ իր
 յանդգնութիւնը՝ խօսելու դասիարակէն, աշխիւքն ամենէն ար-
 համարհուած էակէն: Այս յիշատակումներուն միտք բանի՞նս
 — Ան որ Պէրպէրեանի վարկը այդ տասնամեակին կը տարբերի
 իրազեղի գպրոցին հանդէպ զիջուած վառքէն: Ոչ հերարձակ
 հայրենասիրութիւն, ոչ ալ սանձարձակ արշաւ մը՝ դարերու եւ
 երկրներու հորիզոններէն (առաջինը կը բնորոշէ Չերազը, երկ-
 րորդը՝ Եգիպտոս), ալ նոր կազմաւորուած մտայնութեան մը ի.
 մացական՝ աշպէս ըսելու համար՝ ակնթարեաներու, բարքերու
 հանդէպ ուղիղ ըմբռնողութիւն մը, պահանջքին գիտակցու-
 թիւնը: Արդէն անկա հիմնած է իր վարժարանը, Գատը-գիւղ,
 որ տիպարային համալսմբում մըն էր, սանկ քիչիկ մը վերա-
 պահ, գրամի հովին մէջ ինքնավստահ ու կործանած ամիրայու-

թեան մեղքերէն զգոյշ ակտիւութիւններով տոգորուին հասարակութիւն մը, ուր հինն ու նորը, պահպանողականն ու ազատականը կրնային իրարու քով ըլլալ, իրար հանդուրժել: Պէրպէրեանի Վարժարանը երկար տարիներ խորհրդանշան մը ֆնայ անհատական կորովի, փայլուն իմացականութեան, յանդուգն նախաձեռնութեան: Ինչ որ քառասուն տարի առաջ լման Պոլիսը, ետին ունենալով Երուսաղէմի ալ նիւթական աջակցութիւնը (1838ի ձեմարանը, Սկիւտար, Հայկազեան Կրթարանը, 1856, Փարիզ) դժուարացած էր իրադրո՞ծել, Պէրպէրեան, Գառըղիւզի մէջ ուսուցիչ մը, անկարող հանդուրժելու ազգային վարժարանին վրայ աքաղաղային յոխորտանքը հոգարարձու թաղականներու, կը հրաժարի իր պաշտօնէն ու կը ձեռնարկէ իր վարժարանը որ յետոյ փոխադրուելով Սկիւտար, պիտի ըլլար առաջին տիպար դպրոցը, տարրական ծրագրով և երկրորդական ուսման մակարդակով: Հիմա ասոնք թուղթի վրայ կարդալը դիւրին է ձեզի համար: Բայց մտածեցէք թէ ինչ բարդ մեքենականութիւն մըն է երկրորդական կրթութիւնը, ու զայն տալու յաւակնող հաստատութիւնը սրքան մեծ է փառասիրութեան, երբ զիտենք որ հոն աւանդուող ուսուցիչներուն համար պարաստուած ուսուցչութիւն իսկ չունէր գոյութիւն: Հաճապէքը այս գիծերը չի տար հոս կենսագրութեան համար: Այդ նշմարները մասը կը կազմեն Պէրպէրեանի զգայնութեան, ու մեզ կ'ընեն մասամբ մը բացատրելի միւս իրողութիւնը, — ինչու այսքան առատ տուրքեր համապատասխան արդիւնքի չեն վերածուած Պէրպէրեանի յիշատակին համար: Մինակ այդ վարժարանին նիւթական և իմացական հոգը բաւ էր ամբողջութեամբ սպառելու մարդկային ամենէն ամուր մեքենայի մը բոլոր ուժերը: Մէկ կողմէն կը կազմակերպէ, մէկ կողմէն կը խօսի, միւս կողմէն կը գրէ, կը թարգմանէ: Բախտորոշ օրեր են: Անցած ենք 1880ը: Պոլսոյ հայութեան ինչպէս ամբողջ ազգին հոգին խուլ ապրուստներու, յոյսի և լքումի հանդիսարան մըն է: Դէպքերը կը քաշեն: Կանխող տասնամեակին չքեղ արշալոյսը տակաւ կը թուի մթազնիլ: Ու գրաքննութիւնը: Ու առաջին վախերը: Առաջին ճնշուստները: Բռնապետութիւնը որ կ'արմատայ: Հայկական հարցը որ արիւն կը թելադրէ: Մեծ սերունդէն (Զարթօնքի) ոմանք մեռած, ոմանք տարագիր, ուրիշներ գէպքերուն յարմարուելու փոյթի մը մէջ հետզհետէ իրենք զիրենք կոկելով, կոճկելով լեզու և զրիչ: Պատահելին վրայ Ռիթէոս Պէրպէրեան: Որ կը վայելէ վստահութիւնը վարժապետանի, համակրութիւնը

Մամուրեանի (այս մարդը այդ թուականներուն աւելի է քան սանկ ու նանկ ճարուած հեղինակութիւն մը, ըլլալու համար տեսակ մը խղճատանք, իմացական իշխան որ կը վարէ Պոլիսն ու իզմիրը, անշուշտ խելքի մը կամ յուսուածքի մը գինով, գոնէ հրապարակագրական, զրական և որոշ չափով՝ ազգային մարդերու վրայ), անվերապահ հիացումը զրամի ազնուականներուն Պոլիս բայց մանաւանդ գաւառները որոնք նիհար խրաչումով մը արքայական Ռոպրթ գոլէճէն, իրենց զաւակները կը յանձնեն այդ աւելի համեստ բայց աւելի սրտամօտ հաստատութեան։ Պէրպէրեան պիտի մասնաւորէ իր կարողութիւնները իր դպրոցին։ Ատենապետն է ուսումնական խորհուրդներու։ Իր շրջանաւարտներուն խօսած հոսկ բանքերը նոր քրոնիկի մը յաւակնութիւնները կ'արժանանան։ Իր մեծ գործը ազգային վարժարաններու ուսումնաց ծրագիրն է, առաջին անգամ արեւմտահայ դպրոցները իր ազդեցութեան տակ առնող ձեռնարկ։ Վարժապետեանի քաղաքական փառքին գրօշակիր, անոր արածնած ազգային ժողովներու մէջ իր որոշ զգալարանքը (քաղաքականէն) արժանութիւն է։ Բոլոր այս մանրամասնութիւնները իրենց իմաստը կը հաղնին ոչ անշուշտ բանաստեղծ Պէրպէրեանին մէջ որ կը կասի արդէն 1880էն առաջ (ըսի թէ անկէ յետոյ ինչ ակնարկներու կը սպասարկէ), այլ արձակագիր, քրոնիկագիր, գրագէտ Պէրպէրեանին մէջ։ Անկա երբեք պարզ ուսուցիչ մը չէ, ազգային վարժարաններու խոնարհ ծառայական, անձնուէր ու ատոր համար ալ անօթի ապրելու գիտութիւնը իւրացուցած, ազնուացուցած, ոսկեզօծած, եկող գալից հողարարձներու, թաղականներու թմբուկը չզարնող անշուշտ, բայց զգոյշ՝ իր ձայնը բարձր, զուլսը վեր, գրիչը բուռն ընկէ, ինչպէս Ալթեանին ճակատագիրն է եղած։ Ոչ ալ պետական պաշտպանութեամբ մուշտակաւոր ու մարդամօտ միւս տիպարը, յանձին Թովմաս Թէրզեանի, իր բարձրաքանդակը կտակած ապագային։ Իր վարժարանը տաք, իրաւ, հայաշէշ հաստատութիւն մըն է, որ աւելի քան քսեռից դար գաւառացի ուսումնատենչ պատանիներուն համար հեռաւոր, անհաս երազ մը մնաց։ Ես ինքս, իմ խեղճ ու պատառ դպրոցէն (գեղն ու քաղաքը, Պրուսան կը կրկնէին զիրար, իրենց դպրոցներուն ահաւոր ոգորմելիութեանը մէջ) խորհրդ եմ այդ դպրոցին ուր մեծ գասեր, մեծ խօսքեր, մեծ գիրքեր սկըլարբնուեին, սկըլ կուռեին ինչպէս կ'ըսէր իրմէ վերցնած կտոր մը, ուսուցիչին դերը սահմանող։ Մինչև հայկական ջարդերը Պէրպէրեան կը մնայ իր փառքին ու գերին

մէջ: 1898ին Զուլիցերիա է: Յետոյ վերստին գարոց, Պոլիս: 1900ին տօնական գրազէտ մըն է, Էֆէնցին, որուն կարծիքները կը ճնշեն ծանր, գրական ինչպէս կրթական հարցերու մէջ: 1884ին կազմուած Կեդրոնականը իր յեղափոխաշունչ մթնոլորտովը տխուր վարկ մը կը շահի կառավարութեան մօտ: Պէրպէրեան կը պահէ 1870ի մարդոց պարկեշտ հայութիւնը, չըսելու համար օսմանցիութիւնը: Եկող դացող պատրիարքներ չեն կըրնար անտեսել զինքը: Եկող դացող վարչութիւններ (ազգային) իր հատութիւնը, ձեռնհասութիւնը, հմայքը չեն վարանիր դարպասել: Ազգը զայն կը պատուէ չքեղ յօքիկանով մը: Ուսուցչաց պետն է անիկա: Իր մահը ազգային սուգ մըն էր (1850-1907): Արաք այս գատումէն Պէրպէրեանի քերթողական կարողութիւնն ինքը: Կան անոնք: Ու կը զուգադիպին առաջին երիտասարդութեան: Այսինքն մինչև 1880: Իր արձակն ալ, այդ օրերուն, հաղորդ է այդ զգայնութեան, — բուն, կըքոտ, ումանթիք, իտէալիստ, անիրական բաներու հետամուտ, որ չեչտօրէն կ'ախորժի զիրքէն ու երազէն, բայց նոյն ատեն աչքը կը պահէ հողին վրայ: Իր քերթուածներուն մէջ այս կողմերը անոր տաղանդին բաւարար չափով չեն շահարկուած, վասնզի իր կեանքը զինքը կ'ընէ մշտապէս լարուած, իրմէ պահանջելով իր ուժերուն լրիւ սպասը իր կարիքներուն: Պէրպէրեան կ'երգէ օրուան յուզումները (դպրոցական հանդէսներ, Սահմանադրութեան տօնակարգներ, մետիւսներ, ամանորներ, պատրիարքներ), անձնական ապրումներ (եղազներ, սերեր, զեփիւռներ, կարօցներ), Լամաութիւնեան թախմութեամբ, բնութեան տեսարաններ (աշուկներ, գարուններ, լուսիկներ), ինչպէս սորված էին ընել ատիկա աւագ ումանթիքները: Այս ամենուն մէջ գրականը — Այսինքն՝ տաղաչափականը, այնպէս ինչպէս մեզի կը տրուի ատիկա զգալ ու վճռել Նար-Պէյին, Ալիշանին, Նոյնիսի Պէշիկթաշլեանին շատ մը տաղերուն ետին: Անտարակոյտ: Պէրպէրեան մեծ բանատեղծ մը չէ որպէսզի իր շրջանը հանգուրժելով հանդերձ հերքէ զայն, ուրիշ շրջանի մը վրայ հորիզոն մը պատուելով: Բայց չի նմանիր իր ընկերներուն, իր տաղերը հեղինակած ատեն մեկնելով հանդերձ անոնց փառասիրութիւններով: Չերազ մը, հաւանաբար իր ոտանաւորները գրեց անոնց սղմուկին համար: Եղիա մը ուրիշ փառասիրութեանց կը ծագայէ: Պիտենք թէ ուր կը նայէին Թէրզեանի, Նար-Պէյի մտահոգութիւնները: Պէրպէրեան, գիտակից իր ըրածին, արեւմտահայ քնարերգութեան ծագայելուն խուլ փառասիրութեամբ մը կը զատուի իր ընկերներէն: Իրեն

համար քերթուած մը ազգային արարք մըն է, պարտականութիւն մը, և ոչ թէ գրչի զբօսանք, ինչպէս պիտի չվարանի կոչել իր մէկ տաղարանը Յովհաննէս Աէթեան քնարերգակ վարժապետը։ Այս լըջութիւնը բաժնէ՝ որպէսզի այդ քերթուածները խկապէս ծագայէին արեւմտահայ քնարերգութեան բարիքին։ Հոս է որ սկիզբ կ'առնէ Պէրպէրեանի կորանքը։ Անցան այն հոգեկան բարեխառնութիւնները որոնց արտայայտութիւնն էին, կը յատկենէին ըլլալ այդ քերթուածները։ Մենք չենք խօս նայուածք մը գիշիր Առ Առն. Տ. Ներսէս Ա. Արքեպիսկոպոս ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ, և հանրէի ժրջանակաբաշխութեան Եանաշար. վարժարանէ երգին ուր տաղաչափական շքեղ բառակոյտ մը կը ջանայ ծածկել խորքին անդաման հասարակութիւնը։ Ու կը փնտռենք այն կտորները ուր կը կարծենք թէ պատահութիւն կայ երիտասարդ մը, սիրտ մը ճանչնալու։ Սիրային քերթուածներն են ասոնք։ Բայց մեր սպասումը չի պսակուիր, չի վարձատրուիր, ոչ անշուշտ անոր համար որ այդ տարիքի ապրումները ունէին հասարակաց նկարագիր, այլ շատ աւելի խոր թերութեան մը զինով։ Պէրպէրեան իր սիրտի պահերն ալ կը շահարկէ . . . ոտանաւորին։ Ու կ'ունենանք քերթուածներ որոնք զրուած են զրուած ըլլալու համար, ապացոյց կազմելու համար երկտասարդ հեղինակին գրական շնորհներէն։ Նանրամտութիւն։ Չեմ երթար առաջ։ Առնուազն այդ սէրերը վաւերական զգացումներու արձագանգը կը թուին։ Բայց ո՞վ չի գիտեր արձագանգներուն տեսակարար ծանրութիւնը։ Դուրեանէն և Պէշիկթաշեանէն վերջ զժուար էր այդ զգայութիւնները արտայայտել իրաւ բանաստեղծներու մօտ միայն կարելի նորոգումով։ Այս է պատճառը որպէսզի այդ քերթուածները յօրինուի հոտին, ճաղաչափութիւն զոտնան, վտանգելով իրենց խորքին հարազատ նկարագիրն ալ։ Հոս Պէրպէրեան կը տարբերի Թէրզեանէն որ իր ոտանաւորները զրաւ է իրմէն դուրս ցանկութիւններով։ Թէրզեան մտքէն չանցուց ծառայել մեր բանաստեղծութեան, բայց չունեցաւ փառասիրութիւնն ալ մեր քնարերգութիւնը օժտելու ամուր, կոկիկ, կանոնաւոր, խանդոտ կտորներու բարիքովը, ու ասով ինքզինքը զերծ պահեց այդ քնարերգութեան շրջափոխութիւնէն։ 1909ին իրմէ քերթուած մը, ըսի ասիկա, 1855ին կրնայ մտածուիլ ինչպէս՝ զրուել։ Արդ, 1877ին տպուած Առաջին Կէրէքը անդունդով կը բաժնուի 1904ին լոյս տեսած Խաչ և Յոռիէն։ Այս հաւաստումը վճռական է սակայն։ Առաջին Կէրէքը երկտասարդութիւնն է, գրադէտին ոսկի գարունքը։ Գրեւոր Կէրէքը, իր ահաւոր յաւ-

ռաջարանով, մեղի կը թեւադրէ արդէն թէ ուր կը նալին այս քսանը նոր մասնող տղուն հոգեկան խուլ, խորունկ ցանկութիւնները: Պէտքէրեան գրական փառասիրութիւն մը միայն չի սնուցաներ երբ մամուլին կուտայ իր նախախաղիք քերթուածները, դրաբար թարգմանութիւնները (*), իր անունը պարտադրող ճառերը, քաղաքական քրոնիկները, նշանաւոր այլեւայլքը, ծանօթ անունին ներքեւ, այլ կը հաւատայ թէ կը կատարէ իր պարտքը իր ժողովուրդին: 1842ին, այսինքն երեսուն տարի առաջ այդ գրքոյկէն, մեր գիրքերը հազիւ թէ կարիք կը զգային յառաջարանով մը իրենց կեանքը սկսելու: Նոր տղաքը իրենց յառաջարաններուն վրայ կը թուին աւելի սիրտ դրած ըլլալ քան հատորիկներու բովանդակութեան: Պէտքէրեանի յառաջարանը Զերազինին հման ընդարձակ ու սնապարծիկ չէ ան-

(*) Մահ Սոկրատայ, քարգմանեալ ի Լամաքիմեայ (1871) *մեծաշունչ քերթուածին ըստը*: Ահա Առաջին ռուսի նախարանէն ... «Թէպէտ և անցեալ տարի Վենետիկ Վանքէն ի լոյս ելած Լամաքիմեայ Պետրոպոլսեան մատուցեալ առաջին հատորն կը պարունակէր յինքնա Սոկրատայ Մահուն թարգմանութիւնն ևս, սակայն պատճառ մի չհամարեցայ զայս գրքուկս մէջ իմ թարգմանութիւնն զանց առնելոյ, նախ զի իմն հինգ ամօք յառաջ արդէն լոյս տեսած է կիսով, և երկրորդ զի մի հետաքրքրական բաղդատութեան եզր կ'ընծայէր բանասիրաց և մի հերքումն այն կարծեաց որ գրաբարն մի մենաշնորհ կը համարի Վենետիկ Վանուց և մի ծառ որ միայն Ս. Ղազարոս հոգոյն վերայ կարէ բուսանիլ աճել, ինչպէս երբեմն, ըստ վկայութեան Պուտարքեայ, կը կարծէին Յոյնք թէ միայն Եւրոտասայ ափանց վերայ կը ծնանի քաղութիւնն, կը համարձակիմ ասել թէ բաղդատութենէն չվախնամ» (Առաջին ռուսի, յառաջարան, Բ): Այնքան թեւադրական են սակայն այս տողերը արեւմտահայ գրականութեան այդ շրջանէն: Սէկը, Զերազ, իր առաջին, սկսնակի մանր մունր բոլոր կտորները կը խմբէ («Գրական փորձեր») ծածքի մը տակ ու չի վարանիր այդ հատորիկին ծաւալին կէսին մօտիկ յառաջարանի մը մէջ պատմել այդ շրջութեանց ծնունդը: Միւսը, գրեթէ տարեկից, դարձեալ կը խմբէ իր յաջորդական լեզուները ծածքի մը տակ: Երկու յառաջարաններն ալ գրականութեան մասին ունին իրարու հանգոյն տեսակէտներ: Ո՞ր ստանան կը միջամտէ որպէսզի քերթողական գիրքի մը սկիզբը տուն տեղ ըլլան քերթողականին հետ հազիւ թէ աղերս մը պարզով լեզուական հարցեր: Մարդ կը դայրանայ որ խանդավառ երիտասարդի մը բանաստեղծութեանց նախաբանին մէջ խօսքն անցնի «նոյալապ Գաղապեցեանին», արդեօք անոր համար որ այս արժանաւոր վարժապետը բայց ուղորմելի տաղաչափը լուրջովիկոս Հռակնոսի Արեւիկի վրայ գիրքը թարգմանած էր ուղղափառ ոսկեգարին գրաբարով: Ու լեզուական հարցը որ գրականութիւնն իսկ կը փոխարինէ այդ երիտասարդութեան մօտ: Բայց ինչպէս մոռնալ որ Դուրեանին գերեզմանին վրայ տակաւին հողն իսկ չէր կրնար չորցած ըլլալ:

չուշտ, բայց տեսակ մը մանիֆեստ ալ է, զրական քննադատութեան էջ մը, որ գոյութիւն չունի դեռ մեր մէջ: 1904ին Խահէ և Յուշէ տրտում, սղաւոր ու մինակ (առանց յառաջաբանի), բարեբախտ ձեռով մը կ'աւարտէ Պէրպէրեանի քերթողական ասպարէզը: Երկու հատորիկները բաժնող միջոցը, երեսունի մօտ տարի, պատմութիւնն էր արեւմտահայ քնարերգութեան: Պէրպէրեանի խառնուածքը, տաղանդը իրենց հիմնական լարերը կ'առնեն համայնական, հասարակական (ահաւոր բառը) ցանկութիւններէ: Անիկա բանաստեղծ է որքան քրոնիկագիր, ուսուցիչ կամ ճառախօս, ազգային գործիչ ու լուրջ մենտոր մը սերունդներու: Այս հանգամանքները անիկա սիրած է արժեւորել, իւրաքանչիւրին համար ալ ճարելով իր մէջէն արի, պարկեշտ ջանք ու տեղին համեմատ ալ կորով: Կոռովի իմացականութիւն, զուր տեղը չտուն իրեն մարդիկ այս շքեղ գնահատականը: Մեծայարգ ուսուցչապետն ալ ուրիշ տխրոս մըն է զոր մեր ժողովուրդը սիրալոյս կցեց անոր անունին, չխորհելու որ այդ տխրոսը կրելու համար Պէրպէրեանի գլուխը առնուազն չէր արդուկուած մանկավարժական համալսարաններու սնտիքէն ու փռքէն: Գիտէք եֆեֆին, զոր իր սաները, կեանք մտնելէ վերջն ալ սիրեցին գործածել իր հասցէին, յիշեցնելով Սրբիարեանի պարզիմ վսեմը հռչակաւոր բացատրութիւնը: Այդ երեսուն տարիներուն Պէրպէրեան մաս է վերցուցած մեր զրականութիւնը շահագրգռող հարցերէն կրցածին չափ ու այդ կրցածը զանցառելի չէ (տեսնել աւելի անդին երբ կը խօսիմ արձակագիրին վրայ) բայց շատ քիչ բան է տուած մեր բանաստեղծութեան: Խահէ և Յուշէ, որ կը փակէ այդ ասպարէզը, իրաւ գիրք մըն է: Գրեթէ բանաստեղծութիւն: Կ'ըսեմ այսպէս, վասնզի ամէն մարդ բանաստեղծ է, այսինքն տաղաչափ երբ գիտէ տողերը հատածներու օրէնքներուն համեմատ կտրատել ու յանգեցուն տեսակները որոշել ... Հ. Գ. Մենեղիշեանի տաղաչափութեան կամ Դուրգէնի նոյնանուն հատորէն սորվելէ՝ վերջը զանոնք: Պէրպէրեան այդ քառասունէ քիչ աւելի քերթուածներուն մէջ մօտէն հետեւած է իրաւ բանաստեղծութեան հրաշքին: Իր նիւթը աւելի քան իրաւ, անմոռանալի որքան ահաւոր տպրումներու խտութիւնը, թարմութիւնը, կենդանութիւնը կը խմբէ ուրիշ ալ բարիքի մը ծոցը, որ առանձնակի մնալու բախտն է մեր ներսը: Ի՞նչ ունինք այս աշխարհին մեր հոգիին խորը իրենց գիծերը անադարտ պահող քանի մը հրաշքներէն զատ որոնք կը դիմանան կեանքին բոլոր հարուածներուն, աղտերուն ու մուխին

ընդգէմ: Ատոնցմէ մէկը մեր մանկութիւնն է, երկրորդը՝ մեր պատանութիւնը: Ու քանի մը հատ ալ ուրիշ յուզումներ: Մեր սէ՛րը, որուն վրայ խօսելու մենաշնորհը կը ձգեմ Սիպիլին: Մեր տո՛ւնը, անոր առաջին կերպարանքը: Մեր զաւակները: Մեր ցաւերը: Ու ցաւերուն գերագոյնը՝ երբ հոգին կը յանձնենք ամբողջ ընտանիքին խորհուրդն ու հոգին: Ասիկա, թուղթի վրայ պարզ, գրեթէ ճակատագրական, կեանքին մէջ այն դժոխքն է որ ալ չի հեռանար մեր հոգեղաշէն: Պէրպէրեան ապրած է այդ դժոխքը: Պատիւ իրեն՝ որ իր յուշերը պահած են կեանքին ոչ թէ սւղին գէթ քաղցր տարտամութիւնը, ցաւին շաղը եթէ կը ներուի այս բացատրութիւնը:

Սարսռալի տեսիլն աչքիս դեմն է միտս,
Նոյն մտախեղ ներմակ հանդերձն էր այն նիտս,
Ուրով անցունչ մարմինն էին զարգարէր,
Եւ զոր, բաբէ՛, պըսակին տակն հագած էր:
Հիմայ, շիրմի՛ն լուռ խօսեցեալ, կը պառկէր,
Մեղրամովսի դալուկն իր դեմքը պահէր:
Դողողոջ շուրթիս տակ նակսին սա՛նն զգացի,
Զայն չըկակղեց հուրն արցունքիս զոր լացի:

(ԽՈՂՔ ԵՒ ՅՈՒՇՔ, էջ 24)

Ոհա ուրիշ մը

Եղաւ ասեմ ուր երջանիկ էի ես,
Ուր ինձի հետ, իմ քով կ'ապրէր անձիս կես.
Ուր ցերեկի նըման ինձի ցայգ լոյս էր,
Ինչպէս ճիմայ օրերս մութն են զերդ զիշեր:
Ոսկի քիթուանց պէս քըռէին ժամք քեքեւ,
Կենաց ուղին կ'երբայինք մեք քեւ ի քեւ.
Ճամբուն վըրայ Սէր մեզ վարդեր կը ցանէր,
Ու կ'անուշեմար փուշ, չէր խոցեր մեր ոտներ:
Լոյսն անտի՛ն միմեանց աչքն մեզ ծագէր.
Մեր օրքանց վրայ կեանք մի երկձայն նըլազ էր ...:

(ԽՈՂՔ ԵՒ ՅՈՒՇՔ, էջ 48)

Բանաստեղծութիւն, այս արտագրումները որոնց այնքան պարզ,
ինքնեկ, անուր դնացքը կարօտ իսկ չէ հատածի, յանգի, կըշ-
ռոյթի նպատաներուն, ինքզինքը պարտադրելու համար եթէ ոչ
մեր հիացումին, գէթ մեր յարգանքին: Պէրպէրեան Առաջին Դե-
բեւէն վերջ քանի մը անկարևոր քերթուածներ միայն (որոնցմէ

կը յիշեմ՝ Մարգէի և Էրէի մօռտքը յօրինող ձօնը իր վաղամեռիկ մէկ զաւկին, 1903ի Ծառէի հանդէսին մէջ ձօն յանգ վերնադրուած յաջորդական երեք թիւերով անորակելի ստանաւորները, Աբե-
 ւեւեան Մամուլի (1903) մէկ թիւին մէջ (Առաջին) ունի երիտա-
 սարգ տաղաչափը հեռուէ հեռու թեւադրող, այնքան արձակը,
 քրոնիկը, ճառերը, դամբանականները, զրական, մանաւանդ
 կրթական հարցերը, յոռաշարքանները, իր դործունէութեան ըն-
 թացիկ պահանջները զինքը մզած էին անբանասեղծականին,
 մոռցնելով անոր երիտասարդութեան սեթեթիւ տաղերուն ա-
 նասորժ տպաւորութիւնը)։ Խնդ և Զաւշը մեծ գիրք մը է։ Ա-
 նիկա խառնուածք մը է յայտնաբերելու։ Անով բանաստեղծ մը
 չի նուիրագործուելու մեր նկատառման մէջ։ Բայց է իրաւ գիրք
 մը։ Կրսեք Ռումանիֆիկեմէն մեզի հասած քերթուածներուն մէջ
 հազիւ թէ տողեր՝ սրոնք ըլլալին արժանի մօտիկը դուռելու այդ
 մերկ տաղերուն։ Անկեղծութիւնը միայն հոն կը բաւէ մեզի,
 աննկատ թողելու հին վարժութիւններու, մարդանքներու հեռ-
 քերը լեզուական, բառական, տաղաչափական հնչուքներէ,
 իրաւ է՝ վերածուած նուագադոյն չափերու, բայց դարձեալ ըզ-
 դալի։ Այդ հատորիկը Պէրպէրեանի յիշատակը կը պաշտպանէ
 տակաւին իր մահէն քառօրդ դար վերջն ալ։ Անշուշտ այս հա-
 ւաստումը կը մնայ յարաբերական, քանի որ իր ուժը կ'առնէ
 երիտասարդական մատենին հիմնական վրիպանքէն, ամենէն
 առաջ։ Բայց այդ հատորիկը արեւմտահայ քնարերգութեան մէջ
 հանդուրժելի վկայութիւն մըն է։ Ու մենք գիտենք որ արուեստի
 գործերը պարտաւոր են մեզ հիացնել ոչ թէ իրենք զիրենք փըր-
 կել ծածղելիէն, կեղծէն։ Անիկա դասական ճաշակով հաստատ
 յօրինում մըն է ու իր բախտը կը պարտի զրազէտէն աւելի
 նիւթին։ Վերցուցէք այդ տաղերուն ներքին մարմինը, այսինքն
 սիրելի էակի մը հոգին, ու դուք պիտի գտաք թէ որքան գիւ-
 ըն, սովորական տողեր կը դառնան անոնք։ Ինչ որ ալ ըլլայ
 մօտիկ ապագային վճիռը, Պէրպէրեան նոյնիսկ Խնդ և Զաւշով
 անկարող կը մնայ իր բանաստեղծի վարկը պաշտպանելու 1910ի
 սերունդին ճաշակին առջև։ Մարգիկ ուրացան այդ անկեղծ վա-
 ւերագիրն ալ, տպաւորութեանը տակ անշուշտ շատ ու շատ
 մեղքերու, ամենէն աւելի տաղաչափութեան որուն անպաշտօն
 քահանայապետն էր արդէն սանկ քառօրդ մը դար, վերէն նայ-
 ուածքով մը հետեւելով իր ընկերներուն, բարեկամներուն քեր-
 թողական երկունքին վրայ, ինքզինքը պահելով ճարտարու-
 թեամբ, երբեմն երբեմն թարգմանութիւններու վրայէն (հիմա

գերմաններէն կէօթէ, Շիլլէր, Ուլանդ) միայն բախտը փորձելով։ Այս ընդլայնումներէն կը հետեւի՝ քերթողական վաւերատիպ զգայնութիւն։ Ձեռ գրտեր։ Միայն գրտեմ թէ Խոհ և Յաշտը մարդու մը, իրաւ մարդու մը ձայնն է, որով և խառնուածքի մը յայտարարը։ Ուրիշ խնդիր՝ այդ խառնուածքին բանաստեղծական ըլլալու կամ չըլլալու հանգամանքը։ Յետոյ, ժամանակը արդէն կատարած է նախապատրաստական աշխատանք մը։ Ձրաքեան երբ կը վարանի անոր մէջ բանաստեղծ մը ողջունել, արտայայտիչը կ'ըլլայ, թերևս անգիտակցարար, իր դատաստանէն վեր ուրիշ իրողութեան մը։ Ատիկա Արուեստագէտ Սերունդին մէջ բանաստեղծութեան զգեցած ալլապէս բարդ, իրաւ, խոր կերպարանքն էր։ Մեր երեք մեծ քնարերգականները — Թէքէեան, Մեծարենց, Վարուժան — իրենց յայտնութիւնը կ'ընեն Խոհ և Յաշտէն վերջ, այսինքն միտքով բանաստեղծութեան շիջումէն վերջ։

է) — Զգալնութիւնը Յովնանէն Սերեանին որուն կեանքը դժուար է տալ մէկուկէս տողի մէջ։ Անիկա վարժապետ ծնած է, վարժապետ ապրած է ու վարժապետ մեռած։ Կէս տող ալ կ'աւելցնեմ՝ Կ. Պոլիս և Գանիրէ (1858–1927)։ Քայց եթէ մարդը կարճատեմ է այս աստիճան, գործը, իր սերունդին ճանաչումին համար կ'ընծայէ բացառիկ նշմարանքներ։ Հանրային խոշոր հարցեր չեն յուղած այս մարդուն մօտեան։ Թէրգեանէն աւելի զգուշաւորութեամբ մը Յովհաննէս Սէթեան չէ արկածախնդրած իրեն օտար ջուրերն ի վար։ Ձէ պոռացած, ինքզինքը պարտադրելու փորձերու վրայ չէ վտանգած իր մօտային զազվադիւն անուշութիւնները, ինչպէս չէ ալ զիջում կատարած Ալփասլանի մը, եզրիչ վարդապետ Դուրեանի մը աշակերտական շարադրութիւններուն աժան դափնիներուն։ Իր առաջին հատորը, Գրական Զբօսանք (1870–1882), ինքնին արտայայտիչ է ոչ միայն անձէն այլև շրջանէն։ 1870ին, Մեծ Ռոմանթիքներուն լուրէն վերջ, պայծառ բացը լեցնելու տեսակէտէն, այլ աւելի որտադրաւ զգացման մը ապացոյցին համար։ Սէթեան Գրական Զբօսանք կ'անուանէ այն քերթումները որոնք գրուած են 1870–1882ի շրջանին, այսինքն այդ տղուն վաղ պատանութեան օրերուն։ Ուրեմն քերթող մըն է ան ճանաչելու տեսակէտէն իսկ։ Դրական սա կանխատեսութիւնը չէ որ կ'առնեմ նկատի։ Այդ կանխատեսութիւնը ունէին Դուրեանն ալ, Պէշիկթաշեանն ալ, Նար-Պէյնն ալ, Մեծարենցն ալ, Թէքէեանն ալ, Ջարդարեանն ալ, — ինչ որ ոչինչ կը բացատրէ։ Քայց այդ նկատումէն ան-

գին կայ փաստը պարկեշտութեան մը, յաւակնութենէ ղերծութեան մը, թերեւ մեծերու հանգէպ իրաւ հիացման մը որոնք գիւրաւ վերածելի են այդ մարդուն մօտ զգայնութեան տարրերու։ Ու ահա աւելի տարօրինակը։ Սէթեան Գրական Զբօսանքէն վերջ հրատարակած է Յոգման Ժափերը (1882-1888)։ Ուրիշ հաւաքում մը՝ Բլաբն է վէր, թուագրուած է 1888-1896։ Գահիրէ մեկնելէն վերջ իր հոս ու հոն հրատարակած քերթուածներուն համար ալ, մինչև 1912, իր յորեկեանին տարին գրած է ուրիշ տիտղոս մը, Տաբաթէն Քնարը (1896-1912)։ Այդ թուականէն մինչև իր մահը ունի մէկէ աւելի ոտանաւոր եւ արձակ ֆերուածներ։ Այս թուումը անո՛ր համար, վասնզի բանաստեղծական զգայնութեան որակին տեսակէտէն իր նախախայրիքը, Գրական Զբօսանքը, կը կազմէ արժանաւոր վկայութիւն։ Հարազատ քնարերգակներու ճակատագիր մը կայ այս իրողութեանց ետին։ Զուր տեղը չէ որ իրաւ քերթողները երբեմն կը մեռնին կանխահաս կերպով մը, ազատագրելով հողին ծածկոյթովը իրենց անդրանիկ զգայնութեան ոսկի գեղեցկութիւնն ու որակը։ Զեմ ընդհանրացներ իրողութիւնը։ Կեանքը երբեմն մեկի պիտի տայ այլապէս անփոխարինելի, իրմով միայն կարելի ապրումներ ու ստոնց սեւեռումին ալ մոգական շնորհը պիտի զարգացնէ մեզմէ անկախ, չկասկածուած հեղմունքներով։ Կ'ընդունիմ որ Հիւկոն իր գլուխ-գործոցը ըլլայ նուաճած շատ ուշ։ Դաբերու Զրոյցները (Légendes des Siècles) պիտի իյնան թուղթի 1859էն վերջ, շարունակուելու համար մինչև Հիւկոյի խոր ծերութիւնը։ Զգայնութենէ աւելի երեւակայութեան և բանի շնորհներ օգտագործող այդ ձե քերթողութիւն մը տարիներէն թերեւ նպաստ մը առնէ։ Բայց Առաջին Խորհրդածութիւնները (Premières Méditations) Լամաութիւնի երախայրիքն է գտած անոր երեսունէն առաջ, ու երկրորդ անգամ ալ չսեւեռուած։ Յովհաննէս Սէթեան Բանեկ վերջը վարժապետ մըն է, ոչ աւելի ոչ պակաս։ Անիկա այդ Պոլիսին թաքուն խռովքները, քաղցր ապրումները իւրացուցած է երբ իր ջղային գրողութիւնը այդ տեսակ զգայնութիւններ առնելու և տալու ամենէն ընկալուչ պայմանները կը լրացնէ։ Յովհաննէս Սէթեան մեծ երեւակայութիւն մը չէ որպէսզի այս կարողութեան ապաստանի, տարիքն ի վար, հմտութեամբ, գիտութեամբ, փորձառութեամբ պուտ պուտ մթերուած ապրումներու փշրանքները համադրէ սանկ մեծ կառուցման մը համար, գիւցադներդական, իմաստասիրական (ներքեցէք անիմաստութեանը բառին) քերթուած մը կտակելով մեր գրականութեան (Որբեր-

եանի Ծխանէրը)։ Յովհաննէս Սէթեան մեծ զգայնութիւն մը չէ որպէսզի, միշտ տարիքն ի վար, կեանքէն նետուած, փորուած վէրքերը գլխաւորել փորձէ, իր ներսէն համապատասխան լաւերի, խորշեր հանգերձելով ու այդ արարքը կերպարանէ մերկ, հազիւ արուեստ հոտող տաղարանի մը մէջ, ինչպէս են Հրաշալէ Յաբո-լէ-նը, Հովնաթան Սեֆէր (իր քանի մը յաջողակ քերթուած ներուն մէջ)։ Յովհաննէս Սէթեան մեծ արուեստագէտ մը չէ որպէսզի զգայնութեան, երեւելայնութեան վերպանքի մը պահուն բախտը փորձէ գրելու քեֆիքին ու տայ մեզի առնուազն Յովսէփը։ Այս մերձեցումները կը ձգտին առանձնացնել Սէթեանին քերթողական ճազնալը որ ամենէն աւելի յստակ կը ներկայանայ կրտսեր Ռոմանթիքներէն իր գործին ներսը։ Թէրզիան տաղաչափ մըն է, տաղանդի պահերով, բայց հիմնովին զերծ գրական տաղնապանքէն որ սերունդի մը, փաղանդի մը արտադրութիւնները կը համախմբէ, տալու համար ասոնց կնիք մը, կերպարանք մը։ Պէրպէրեան ոտանաւորին կը դիմէ գրական փառասիրութիւններով, առանց ունայնամտութեան անշուշտ, բայց առանց ալ ներքին տառապանքի։ Այդ է պատճառը որ դիւրութեամբ յաջողի մոռնալ քնարին հանդէպ իր սէրը ու փնտռէ իր գործօնութիւնը արժեւորող ուրիշ ասպարէզ, արձակն ու ուսուցումաժը, իր Ժողովուրդին իմացական սպասը։ Մահուան մօտիկ իր տաղարանը (Խնդ և Յալ) քերթուածներու շարք մը ըլլալէ առաջ, իրաւ մտածումներու, ապրումներու հանդէպ մըն է զոր ամէն մարդ կրնայ արդարութեամբ փոռասիրել և ... թերեւ ալ իրագործել։ Մկրտիչ Աճէմեան մեր գրականութեան անուշիկ, անխոյժ, անտագնապ ճպրուն է որ եղանակէ եղանակ չի մոռնար իր երգերը թափել, բնական, պարզ իրողութեան մը նման, միշտ առանց յաւակնութեան։ Բացէք Սէթեանի Գրական Զբօսանքը։

ՄԻԱՅՆ ԴՈՒՆ

Դայի շրջիլ ամբան աղուոր արեգակով
Հեղիկ ավանց վրայ ուր գոն մի հրաշով
Երկինք ի վայր էին իջած, պայծառ, փայլուն.
Անոյե էին խոսոց բուրմունք, ջուրք պաղպաղունք:
Երկամերձիկ բարձրանային վեհ կաղամախ.
Դաւարագեղ մարմանդք, աղբերք, բլուրք եւ վախ:
Շուրջ ամեն բան ժրպիտ, խաղ եր եր գրւարք,
Ամենքն ալ շատ պայծառ, վրսեմ եւ լուսազարդ:

խուռներամ դասք ներմակազգես օրիորդաց
 Կը նեմէին յեզրը ծովուն, դանդաղընքաց:
 Յածէին աչքս մեղամաղձոս այլ անքիտուր
 Տեսարանին վրայ, յամառ եւ յուսակսուր:

(ԳՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ)

Այս տասներկու տողին մէջ դժուար չէ ինծի համար կարդալ մեր ռոմանթիկ մին մէկէ աւելի հաստատ նկարագիրները: Ըսի հաստատ, վասնզի զրական գպրոցի մը աշխատաւորներէն անոնք որ բացառիկ տաղանդ մը ունին, այդ իսկ հանգամանքով կը զանցնեն գպրոցին պարտադրութիւնները ու զարտուղելու արարքը կը վերածեն առանձնացման, ինքնացման հանդէսի մը: Նոյն այդ գպրոցին միջակ, այլապէս հաստատ հանգանակներն են որ կը յարգուին, տառացի ըսուելու չափ պարկեշտ ձեռով մը, պարկեշտ, հաստատ աշխատաւորներէ: Առէք Դուրեանը իր ժամանակէն ու գրէք մեր օրերուն: Սփիւռքի ողբալի քերթողու թիւնը պիտի ստանար ոչ անշուշտ նոր կերպարանք, բայց մենք պիտի ունենայինք գիրք մը ուր մեր կսկիծն ու երազանքը պիտի նուաճուէին միշտ անմահ տաղերու վրայով: Վերի օտանաւորին մէջ կան ~) նկարագրութեան ախար, ք) բնութիւն մը որ խոշորացուած է, յարմարելու համար զինք ապրելու կանչուած հոգիին ալ կամաւոր խոշորացման, գ) ռումանթիկ ցաւը, զ) ռումանթիկ պացքները, է) Պոլիսը որոշ այլալուծումով, զ) տեսութիւն, է) կիւնքը, ու տակաւին ուրիշ նրբութիւններ: Բանալ այս շեղագրութիւնները պիտի նշանակէր մեր ռոմանթիկ մին աւագ յատկանիւնները վերլուծել: Չունիմ ատոր ատենը: Կը շարունակեմ քերթուածին արտագրութենէն այնքան բան որքան անհրաժեշտ է, հասկնալի ընելու համար Աթիւնին բացառիկ ճակատագիրը շարժումին մէջ: Աթիւն քերթուածը կը տարածէ գիւտի մը վրայ: Դժուարութեան մէջ չէք այդ գիւտը, առանց այդ քերթուածին ալ նպաստին, յօրինելու, ըլլալով ուշադիր բանաստեղծին տեսնելու կերպին, մանաւանդ՝ տեսնել ուզած բաներուն: Աւելորդ է ըսել թէ այդ գիւտը «պայծառ», «ասեղանալիւ» պէտք է ըլլայ: Տուներէն՝ նուազ: Հոյը որ օտքերուն տակ կը փայլի: Ամբոյս: Փառքի մարտչին: Նրբեմուն: Պարեգ մը աղջիկներու: Բանաստեղծը ուրուի նման օրգայով: Այս երկու տողը խտացումն է տասնընորս տողերու: Յետո՞յ: Բայց որքան տղայ պիտի ըլլաք՝ չգուշակելու համար . . . առտուն: Որուն մէջ բացուող պատկերներուն և որմէ ազդուած մտածումներուն

համար աւելի քան երեսուն տող : Լաւ կ'ըլլայ որ պահ մը հանդ-
չիք ու անդրադառնաք վերնագիրին — Մէջն Դ՛ն — որ չկայ
ու չկայ : Ուրեմն հասած ենք քերթուածին կէսին ու ահա,
անիկա . . .

Այո՛, Հեփսիւր, կենացս աղբիւր, ծաղիկ սրբիս,
Քոյր դուն ես հարսն հոգւոյս, արեգ իմ աշխարհիս,
Աղուոր հրեշտակ լուսապայծառ զոր կորուսի
եւ խաւարին բանս մը դարձաւ ինձ ծոց երկրի.
Ասեղանման լոյս աչեւոյդ կոյս անցրման,
Ոյդ նայումսդին անդունդին մէջ միտս բնկլուզան.
Այո՛, հեռու քեզի, տարտաւ եւ անհաստ
Մի անսահման ոչընչի մէջ կ'ապրիմ, ազգաս.
Առանց լուսոյ քու աչեւոյդ, չը գիտեմ ուր
կ'երթամ անյոյս, քափառալից, մըրից, զրկուր :

Ու ասիկա այսպէս տակաւին յիսուն տո՛ղ : Ըսելու համար ու-
րեմն հարիւրէ աւելի տողերու գումարով մը ինչ որ Դուրեան
մը պիտի ըսէ չորս, շատ շատ վեց տողերով : Ու հարցուցէք
հիմա դուք ձեզի, ո՞րն է ազգակը որպէսզի երիտասարդներ,
պատանիներ այսքան պարզ, իրաւ բան մը, աղջիկ մը սիրելը
վերածեն այս lugubre հանդէսին : Աթիւն ունի Հէփսիւրէն զատ
Աստարտէ մըն ալ : Աւելի ուշ՝ Սելմա մը : Սուտ կամ իրաւ,
այս կոյսերուն հետ իր խօսքերը չեն որ կը դառնան այսքան
մանկամիտ ու անհանդուրժելի, այլ այդ աղջիկներուն յօրի-
նունն իսկ, քանի որ բանաստեղծ ծնած ըլլալու պարագ մը չի
ծանրանար ձեր վրայ, աղջիկ մը սիրելու ու ան ա՛լ՝ սա հանդի-
սաւորութեամբ : 1870ին մեր գրականութեան մէջ կոյսը կը տի-
րապետէր անմրցակից : Ովքե՞ր են այդ հնչական, մութ անուն-
ներուն ետին ապրող աղջիկները : Զուր է հարցումը : Երեքն ալ
(Պէրպէրեան, Թէրզեան, Աթիւն) իրենց համար բանաստեղ-
ծական ազատութիւն կը համարեն այդ գեղունները կուսանե-
րու առջեւ : Ու գծախտութիւնը հոն է որ Դուրեանին Պիետսը
(ինչպէս կ'ըսեն կենսագիրները), Պէշիկթաշլեանին Հրանուր
(Յեթն հաւաք) նոյնքան օգտլին կիներ են, Օղանոյշներ, ըլլալու
տեղ այդ Պուլիսին մէկ իրական աղջիկը : Այս աղօտացման մեղքը
գպրոցինը չէ հաւանաբար : Երկու աւագ ուսման թիքները աւելի
բախտաւոր չեն քան երեք կրտսերները, քանի որ օղանոյշնե-
րու դարպասը կ'ընեն : Գիտենք պատմութիւնը Մ. Պէշիկթաշ-
լեանին ու իր անորակելի տարփանքին (Արբուհի վահանեան,

ապա՝ Տիկին Տիւսաբ)։ Սէթեանին համար ամէն պատահութիւն անպէտ է, մտածելու աս ու ան աղջկան ու անոր թափելու իր բառերուն շարժումը։ Աւելի ուշ, այսինքն 1888էն ասդին Բլոքն է լինել շարքին մէջ Սէթեան, Գոյե, Գոյե Կահալէի։ Ժամադրութեան, Դարձեալ Կեդի հետ, Անձաւիճի ճշ որակուած կտորները պիտի կրկնեն նոյն տղայական հասարակ տեղիքը, ինչպէս՝ Զաւր Եւ Զաւրա, Պարթէ ճշ, Կախարհաւ, Ծովան իբայ քերթուածներուն մէջ ասոր մէկ ուրիշ փոփոխակը։ Արդ, մինչև 1896, արեւմտահայ բանաստեղծութիւնը ազատագրուած էր տղայականէն, ծիծաղելիէն, եթէ երբեք մոռնալ ուզենք անմոռանալի փառքը Ալիստանին։ Ո՞վ ըրաւ այս չարիքը այս մարդուն, որպէսզի խորագոյն ապրումներ իր մօտ դառնան այսքան անհանդուրժելի կերպով ամփալ, ծիծաղելի։ Ապահովաբար մէկ ու նոյն մեղքը՝ տաղաչափութիւնը։ Սէթեանին զգայնութիւնը ուրիշ տեղեր փնտռել՝ զիս չ'առաջնորդեր կարելի բախտի մը։ Իր Պոլիսը աւելի տգոյն է, աւելի մշտաօք թան թէրզեանինը։ Իրեն յատուկ զգայնութիւններ չեւ պիտի ինչու կը պարուրուին սա անբացատրելի որքան անտանելի հանգիստաւորութեամբ մը որ մեր պարզագոյն պահերն իսկ կը ջանայ հանել քերթողականին։ Որեւէ նիւթ, հիւանդ մը, մուրացիկ մը, կոյր մը, մահամերձ մը, պտոյտէ դարձող, ծովուն վրայ թիւակի արշաւողներ մոզական մշուշով մը մէկէն կը դադրին իրականութեան պատկանելէ ու կը տարուին, սաւառնաթիւ, կայքերու ուր միզի զգուար է հետեւի անոնց։

Տարաբէն Քաւրը կը պարունակէ 1896էն մինչև 1912 քերթուածները Սէթեանին։ Անշուշտ գիտեցիք թէ ինչ կը թելադրեն տարիները։ Ու դուք կ'ունենաք մեր գրականութեան անտաղանդ ջարդապատումը։ «Պատանի, երիտասարդ, այր չափահասաւ», ճիշդ ու ճիշդ թէրզեանին նման, Սէթեան անցած է այդ Պոլիսէն առանց զայն զգուար, ըսել կ'ուզեմ՝ միզի ձգելու վկայութիւններ ուր ներուէին կարգ մը վաւերական, սկզբական, ինքնաբերալ ապրումներ, զէթ այդ քաղաքին pittoresque, արեւելքը, կայքերուն պատմութեամբ տրտմած փառքը, ու ինչ որ եղիւ ներուն, Զերազներուն, Պէրպէրեաններուն, Սիպիլներուն Մալիսները, Ժանեակները, զիփիւնները, աշունները, փրփուրները ձգտեցան թելադրել։ Յովհաննէս Սէթեան ոչ աւելի է ոչ պակաս իր ընկերներէն, այդ անմասնութեան, աղքատութեան մէջ, ինքնեկ զգայնութիւններէ։ Այնքան զգուար է ինծի ըսել այս ամէնը, քանի որ միւս կողմէն անհնար է ինծի նորէն հերքել սա տրտմութիւնը, տղայութիւնը, ծայրական ու երանգային ա-

խորժաններուն փափուկ փաստերը, որոնք կարող են հանդիպող տաղաչափէն իրաւ քերթող մը ապահովել: Յետոյ, ուրիշ տըրտմութիւն մը: *Գլխէն Զբոսանք*, առանց իր յաջորդներուն պիտի բաւէր Սէթեանին անունը թերեւ աղատագրելու մոռացումէն, եթէ երբեք յաջորդ գիրքերուն մէջ չարիքը չըլլար միծառաւ, միահեծան, կործանելու չափի զօրաւոր անդրանիկ ըսուածին մատաղ իրականութիւնը, բարիքը: Սէթեանէն ալ զգալնութիւն, խառնուածք, տաղանդ ու հետեանք՝ ինքնատուութիւնը չունին ապացուցուած արդիւնք բացի յամառ սպասէ մը, դարպասէ մը մուսաններուն:

Դ) — Մկրտիչ Աճեմեան մարդն է առանց պատմութեան: Կրնար ծնած ըլլալ ... Բարիդ, ապրած ըլլալ Մատրիտ, մեռնիլ՝ Պոլիս: Ոչինչ պիտի ըլլար փոխուած անկէ մեզի հասած քերթողական գիւաններուն ճակատագրին մէջ: Այս հաւաստումը կը դառնանայ ուրիշ զգացումով մը, խղճահարական որքան խոր: Աճեմեանի միզ ձգած գիւանը բաւարար՝ որպէսզի անոր հեղինակը ենթարկուի *Համապօկէրին* մէջ, ուրիշներու շարքին, թէկուզ իբրեւ գնահատման երբ այս արդար պարտքը զիս չի մղեր գիշումի արեւմտահայ գրականութեան կարգ մը զէմքերու գործին առջև, թարգմանչական, հրապարակագրական, նոյնիսկ որոշ չափով մըն ալ գրական (Արուեստագէտ Սերունդին մէջ Յովհաննէս Ասպետով գլխաւորուած թեւ, կիները, վաղադրաւ քերթողները): Եւ սակայն Յովհաննէս Ասպետի մը փառքը իր շրջանէն ոչինչ ունի յայտարար: Մոռցէք թէ հարիւրաւոր, հազարաւոր յօդուածներու տակ օր մը կարգացած էք այդ անունը: Մոռցէք թէ Դր. Մայիսան մը օր մը դատած է արեւմտահայ գրականութիւնը, ենովք Արմէն մը՝ մեր բանաստեղծները, Անայիս մը՝ բաղմաթիւ քերթուածներ ստորագրած: Այս մոռացումը ձեր մտքին մէջ պիտի չստեղծէ որոշ գրկանքի, կորուստի զգացումներ, դատաւարաններ նոյնիսկ: Այդ չէ պարագան ահաւասիկ Մկրտիչ Աճեմեան անունին ու ասոր զուգորդ յուշերուն, տպաւորութեանց համար: Մօտ կէս դար Մկրտիչ Աճեմեան տիտղոսաւոր բանաստեղծն է այդ Պոլիսին, պարզ, մարդամօտ ու ընտանի: Անշուշտ այս հաստատումն ալ իր կարգին պիտի ըլլար անբաւարար՝ այդ անունը փրկելու իր ճակատագրէն եթէ երբեք անոր գիւանին մէջէն եւ չունենայի ուրիշ ալ զգայութիւններ: Պէրպէրեան, Սէթեան, Թէրզեան վաւերական, բարձրաթոյն քերթողներ ըլլալու, իրենց ինքնավստահութիւնը իրենց զօրծերուն վրիպանքովը չեն երաշխաւորած անշուշտ: Երեքն ալ

ճաշակի մը, ձգտումներու փոփոխութիւններ կը նկատուին ամէն գրական-
 նութեան խղճամիտ պատմիչի մը համար: Արդ, այդ Պոլիսին
 հասարակ, սովորական, առօրեայ ապրումները ես կը հաստա-
 տեմ Մ. Աճէմեանի գիւտներն ներսը: Զուր տեղը չէ որ Յով-
 հաննէս Պալեան պատուական ազգայինը որ մեկնատուութիւնն է
 պաղտաւած Աճէմեանի ամբողջական գործին հրատարակութեան,
 կ'ընէ յատկանշական խոստովանութիւն մը, Զաւաքն Ռաբբանու-
 թէնէ հատորիկին սկիզբը: Պալեան այսպէս կը գրէ. «Աւրախ եմ
 որ ձեր հաւայիչ յանգիւրը բնութեցող հասարակութեան զմայլումին
 եւ վայելումին ներկայացնելու պատիւը՝ լոս առաջնագոյն ձեր ազ-
 ցիւ խոստման՝ ինձի կ'ընծայեք որոյ համար հաճեցե՛ք բնականիւ
 ջերմաջերմ բարեկամարկան համբոյրներս»: Աւ այս պատուական
 Պալեանը ոչ միայն ունայնամիտ մը չէր, այլ ինքզինքը կը նկա-
 տէր ճշմարիտ բարերար մը, հասարակութեան տանկելով այդքան
 թանկագին գեղեցկութիւններ: Այն տառն: «Բարականութեան
 պատմիչը պարտաւոր է լրջանալ: Այս կարգի վկայութիւննե-
 րուն տարողութիւնը անշուշտ գիւրին է կործանել մէկ հարուա-
 ծով, բայց չի կործաներ Աճէմեանին վայելած ժողովրդականու-
 թիւնը, վարկը: Իսկայն իմ մտքին կը խռովեն ուրուականները
 Ալիսիաններու, Միհրան Յովհաննէսեաններու, Սիմոն Ֆէլէկ-
 եաններու, Ստեփան Փափագեաններու, բոլորն ալ օր մը, իրենց
 շրջաններուն, այդ հասարակութեան համակրանքը, զորովը, ե-
 րախտագիտական արտայայտութիւնները վայելած: Ստիպուած
 եմ գերեզմանախօսյա այդ փոփոխութիւնները հալածել, ա-
 նոնցմէ պահանջելով տարրական ապացոյցները իրենց փոփոխ-
 րած համբաւներուն: Մկրտիչ Աճէմեան, մի մոռնաք տփկա-
 մեր զրականութեան մէջ իր մուտքն է ըրած զբարար գիւցազ-
 ներգութեամբ մը, Վահագն, որ շատ մօտիկէն կը յիշեցնէ Թէր-
 գեանի Ապագայքը, Զօպանեանէն պատուանիշ ստացած սովո-
 բական խօսքերու զբարար հանգէս մը: Այսինքն՝ Մկրտիչ Աճէմ-
 եան մէկն է իր սերունդին խորագոյն ցանկութիւններուն, փա-
 ռասիրութիւններուն հազօրդ անձնաւորութիւններէն: Բազրա-
 տունիին գաւազանակիրը, ճիշդ ու ճիշդ Թէրգեանին նման, Պէր-
 պէրեանին նման որ Մահ Ապագայ զբարար թարգմանիչը ոչ միայն
 Լամառութիւնեան իր ճաշակները մեղի կը ներկայացնէ իբրեւ բարձ-
 րօրէն բանաստեղծական վայելքներու հանգէս մը, այլ զբարարը
 Վենետիկի մենաշնորհը գաւառող ունայնամտութիւնն ալ կը
 կարծէ տապալել, յայտարարելով իր մրցումէ՝ չվախնալը . . .
 զբարար քերթելու մէջ: Այն տառն: Ո՛ւր արդարացուցիչ պատ-

ճառը իմ հաւանական զանցումին երբ մանաւանդ Գաբրիէլ Լոճէր տաղարանը ունի մէկէ աւելի տանկիլի հիթէ ոչ սիրելի յաջող-
ուած քննարկ Սաղաթուղը (Գաբրիէլ Լոճէր) առաջին տանկիլի նմոյշն է
պատմող քերթուածին, իրմէ առաջ այնքան անգամներ փոր-
ձուած մեծանուն Ալիշանէն (Հայրապետի պոէմաները), նոյնքան
բազմահոգակ նար-Պէյէն (Սաղաթուղ Հայրապետի): Տղայամտութեան
նոյն որակն ու քանակը երկու հիւղեցականներուն ոտանաւոր
պատմութեանը կ'ընեն վերաւոր որքան չեն ընէր այդ ֆլաւսը նոյն
այդ մեղքերը Սաղաթուղին մէջ: Անշուշտ մեր բախտը չէր որ-
պէսզի Մ. Աճէմեանի պարզ տուրքը, կեանք մը պատմելու,
ըլլար պաշտպանուած իրաւ արուեստին ալ բարիքովը, կրակովը,
երբ գիտենք թէ աւելի կորկոտաւոր քերթողներ (Զօպանեան,
Լեւոն Սեդրոսեան, նոյնիսկ Վարուժան) իրմէն քիչ կը տարբե-
րին, վրիպանքին մեծութեան տեսակէտէն: Յետոյ, Մ. Աճէմ-
եանին մեղի ձգած քերթուածներուն մէջ տառնեակներով կը
համրուին ճանելիները, մինչ այս բախտը չէ պաշտպանած ահա-
ւոր յանգստան ու ռամկերգու Յովհաննէսեանը ու տարաբախտ
Ֆէլէկեանը, որ մեր գրականութեան մէջ պիտի չմոռցուի ան-
շուշտ Դուրեանը սրբազրած ըլլալու հերոսութեամբը: Ուրեմն
իմ արդարացումը պարզելէ յետոյ, կ'անցնիմ ուրիշ աւելի կա-
րեւոր պարտքի մը: Իրա՞ն է որ, Պալեան պատուական ազգա-
յինին վկայութեան համաձայն, ունէր գոյութիւն հասարակու-
թիւն մը որուն հեշտանքը կը կազմէին Աճէմեանի քերթուած-
ները: (Այդ մասին կայ պատրաստ հարիւրաւոր արձանագրու-
թիւն հայոց մամուլին մէջ, Վահագնի օրերէն, բոլորն ալ մեծ
գովեստով, որոշ հպարտութեամբ, ինչպէս է արդէն վարկը ան-
զուգական, անմասն քերթողուհի Տիկին Սիպիլին, միշտ բա-
նաստեղծութեան սրբազան դաշտերուն երեսին): Մկրտիչ Ու-
ճէմեան միայն Վոսփոքը, լուսնկան, խաղաղը, Միօները, եւ-
ուանդները, որք քաղցիկները չէ երգած, դպրոցական տղոց բեր-
նին համ տալու պարզունակ փառասիրութեամբ: Անիկա պար-
կեշտ, անյաւակնոտ, մարդամօտ տաղաչափ մըն է, որ շատ
կանուխէն խելքն է ունեցած թօթափելու Մխիթարեան իր կըր-
թութեան կեղեւանքը իր տաղանդին երեսէն, մոռնալու գրա-
բարը, Վահագնները, սլացիկ ումանթիզմը իր վարպետներուն,
ու գարծուցած իր ուշադրութիւնը, նախասիրութիւնը գինքը
ուղղակի, անմիջապէս շրջապատող իրերուն, կեանքին, ասոր
ամենէն պարզ, ամենէն իրաւ յոյգներուն: Աս իսկ վճռականու-
թիւնը, խելամտումը գիտ կը մղէ ահա զիջումի: Ուրիշ խնդիր՝

իր այդ կեցուածքը տիրապէս արժեքներու իր կարողութեան աստիճանը: Կ'ընտրեալ աւելի պատասխանատու բան մը: — 1860ին երբ Գր. Օտեան Ալիշանի սովորական մէկ քերթուածը օտար իշխանի մը թարգմանելու չափ սիրտ է գրած, անշուշտ այդ քերթուածին մէջ գտած ըլլալուն հօր, խանդավառիչ գեղեցկութիւն մեր գտածը այդ քերթուածէն սովորական բառակոյտն է Ալիշանին), յիմար մը չէր, իր ճաշակին մէջ այդքան անկազմ գուրս գալու համար: Ամբողջ ժողովուրդ մը յիմար չէր երբ խենթեցած կը պոսար շառաւիղէ, Հիֆէ Լէ Լէֆէ, Բաժ, Գորգաշ, բոլորն ալ հսկայ ժողովրդականութեան արժանացած փառքեր, այսօր առանց խոկ մոխիրի: Մկրտիչ Աճէմեանին ինչու զայցուի, նոյնխոկ մոխրացման գինով, ինչ որ շոտլանդիէնք այնքան անհախճաբար իրեն հաւատար ուրիշ քերթող — տաղաչափներու: Հարիւր տարի վերջը այնքան փառաբանուած Արամեանթոյն մնալիքը: Ապահովարար ան որ կը մնայ բոլոր պարագայապաշտ քերթողներէն. — տասը չանցնող թիւ մը քերթուածներու և ... տողեր: Մկրտիչ Աճէմեանի պարագան այսպէս մասնաւորելէ յետոյ, կայ հարցը այդ մարդուն Պոլիսը — մեր գրականութեան մէջ ոչ ոք այնքան հարգատուէն ու հաւատարմութեն արտայայտած է այդ քաղաքին միջինը (*) որքան Մկրտիչ Աճէմեանը: Ըսի թէ հասարակաց եթէ ոչ միակտուր հիացում մը, գէթ ընդհանուր քաջալեր մը պաշտպան կեցաւ այդ տաղաչափութիւններուն անշուշտ անոնց խորը գոյ բանէ մը իր ուժը

(*) Համապատկերին առաջին գիրքը, Ընդհանրացումներ զուլթին մէջ, զբաղած է այդ Պոլիսով: Ուրիշ հատորներու մէջ կրկին սեղանի վրայ պիտի գայ հարցը. — այսինքն արեւմտահայ գրականութեան հայեցիւթիւնը, երբ Խրիմեան, Սրուանձտեանց, Թլկատիւնցի, Զարդարեան, Իյեան վերլուծման, Առայժմ Աճէմեանի առթիւ զիս կը զբաղեցնէ միջակ տարր այդ Պոլիսին, այն ապրումներու, ախորժակներու, սովորական զգայութիւններու և հասարակ զգացումներու գումարը որուն հանդէսն է, օրինակի համար. Պարոնեանի մեծ ժառանգութիւնը, ինչ փաստ որ նոյն Պոլիսը ըլլայ թեւադրիչը Մկրտիչի կառուց քերթուածին և Նոր Տաղիւրէն որ և է քերթուածի: Այս վճռական իրողութիւնը չի բաւարար հաստատել, Ստիպուած եմ օգտագործել ուրիշ ալ փաստեր, օտար մեծակառոյց գրականութիւններէ. Ֆրանսական բանաստեղծութիւնը 1830 - 1940 շրջանին ահա որ մթերք մը ունի ամբարած իր գետնափորներուն խորը մեռած քերթուածներու, մեծ մասը ամենէն հոշակաւոր անուններուն գինանչաններովը կնքաւոր. գիտեսալ: Այն ատեն, Պոլիսը ոչինչով է մեղաւոր Մկրտիչին յղացուելուն: Անշուշտ, կայ այդ քերթուածին հեղինակը, որ իրաւասու էր ինքզինքը արդարացնելու: Մարգրիկ Ինչ կ'ուզէին Մկրտիչ Աճէմեանէն, զմայլելու համար անոր ... յանգրուուն. — Ապահովարար ան զոր պատուական հեռագրողը տուած է իրենց:

առնող: Արդ, ի՞նչ զգայնութեան կը պատկանին Աճէմեանի Ժողով և արդարեւ (1871), Լոյս և արդարեւ (1887), Գաւառի հոգի (1892), Թեմառն յանգի (1908, ուր մտած է խառնի բարոյական անունին տակ ի յիշատակ իր սիրեցեալ կողակցին (Հելլեն Միւնկիւր) քերթուածներու շարքը, խոհ և Յաշիւն ազգեցութեան տակ) հատորները: Յիշեցի Վահագնը, Դիտեցի Զանաշն Բարձրան (1911): Առաջին հաւատաւորը այդ հատորներուն մէջ պարզ, սովորական, համեստ յանդարանի մը իրականութիւնն է, որոշ անջրպետով մը Ալփատլանի անկանգնելի տափակութենէն և Թէրզեանի սեթեւեթեալ ուրախութիւնէն: Աճէմեան ունի իր ընթերցողները (գիտէ՞ք իր հիացողները). անցած է դասագիրքերու: Գրաւած է արեւմտահայ գրականութեան պատմութեան մէջ ոչ թէ իր անկիւնը, այլ իր էջը: Թեւադրած է ուսումնասիրութիւններ: զատուած վարպետներու շարքին: Ասոնք անհերքելի իրողութիւններ են անշուշտ, նոյն ատեն ճաշակի մը վկայութիւն: Ըսի թէ իր առաջին առաքելութիւնն էր Վեցերտիլ շնոյլ: Արդարեւ հոն բնաւ ոտք չկոխող Պէրպէրեանին իսկ անկարող է եղած ինքզինքը պաշտպանել այդ հիւանդութենէն: Աճէմեանի ապրումները կուզան օրէն, բայց օրէ մը որ ոչ թուրպ խողովքներ, ծիրանի յոյզեր, ժանկազարդ զգացումներ կը խորհրդանշէ, այլ սանկ պարզ մահկանացուներու սեղանին ներկայացող հիւր մըն է: Աճէմեանին արժանիքը. — ամենապարզ ընտանութեամբ մը ընդունիլն է այդ հիւրը, օրը, անոր կերպարանքը չտանող աւելորդ նրբացումներու, կոտորումներու և . . . փրփրազարդ խորացումներու: Ահա ձեզի քերթուածներու անուններ. — Ծեր գինի, Լեւոնի լիւթեմիները, Խաչը, Լարնացոն, Պեճեմիները, Արքիւթ, Ապուշ, Փէթրոն ու իր ծով, Ապրիլ, Գաւառի, Սառնաք, Տեղի Մայիս, Իմ հաւանքը, Ինչպէս աշխարհեմն, Յաւանքը, Ան Տիկն Լեւոնի, Պաշտօն, Պարհան, Մեր կարոն, Նոյնն ու Բարոյի, Վարդ, Լայ ապրիլ, Օղի, Մշտի, Լանջի, Դեմ, Թ. Թերզեան, Լալի և Լեւոնի, Միտեալն ապահանգեալ, Մեր աղջկան, Օրհնեա՛ Տեր, Շնիկ Բարոյաւոր, Երբ աշխարհեմն, Ես, Ես, Ես . . . : Այս ցուցակը բա՛ւ թէ ինչ ախորժակներու կը սպասարկէր Վեներտիլ իր ուսումը ըրած, Պոլիս դարձէն վերջ պետական պաշտօն մը ձեռք ձգած (հեռագրական պաշտօնեայ եղած է ու իբր այդ ըրած է թուղթերու կայսրութեան մէջ քանի մը անգամներ ճամբորդութիւն: Կը յիշեմ իր երեսփոխանութիւնը ազգային ժողովի, թաղականութիւնը, որոնք իր կէս դարէ աւելի գործօն տարիներուն միակ թուարկելի իրականութիւնն են) ու չիտկէ չի-

տակ իր վախճանին համար լարուած սա պարզսիրտ, քաղցրահոգի աշխատաւորը որ կը սիրէր իր ծննդավայր քաղաքին բոլոր թացիկ ու անուշիկ հաճոյքները ու ամէն Պոլսեցիի նման ողջմիտ, ժուժկալ, վայելապաշտ, ազգասէր ու պարկեշտ ստուրգելիներու համար ունէր որոշ հակում, տկարութիւն: Չեմ տեսած զինքը: Մտիկ ըրած եմ իր մտերմութիւնը ունեցողներ: Շուքի վրայ աշխատիլ չի նշանակեր օգտագործել այդ ապրումները ուրիշներէ: Կը ներկայացնէն զինքը անհունօրէն լաւատես, քիչով զոհացող, կիրքի անկարող, քաշքշուքէ համ առնող, ուտելու, խմելու, երգելու, ծովագնացութեան համար որոշ հաճոյքներ հետապնդող Պոլսեցի մը որ չէր արհամարհեր իր ազգին ստուար զանգուածները, գաւառը, ու իր պոլսեցիութիւնը չէր ծաղկազարդեր սանկ ու նանկ մեծամասնութիւններով: Այս սըււեալները կը զոհացնէն ձեր պահանջը տրուած քերթողի մը զգայնութիւնէն: Եթէ կը գտնէք զանոնք անրաւարար, ունիք ինծի հետ պատեհութիւն՝ հատոր մը բախտովի բանալու և կարդալու

ՓՈՒՐԻԿ ԵՐԱԺԵՏՈՒ ՀԻՆ

Ա.Ա. ՈՐ. Ա., Տաեան

Երբ զարնես դու մանօլին՝
Ու ես յուզուած ունկնդրեմ,
Կ'ըսեմ՝ երգն է պըլպուլին
Որ գելգելէ այգուն դեմ:

Երբոր զարնես մանօլին՝
Ինչ շեշեր գերդ մարգարիս
Մասիկներուդ քակ ծըլին
Հասիկ հասիկ ու վընիս:

Երբ դու զարնես մանօլին
Ներդաւնակ ու մեղմօրօր,
Վիշ ու ցաւեր կը հալին
Մոմիկին պէս Տիրամօր:

Բայց երբ զարնես մանօլին
Թաւ լաւերով կորովի,
Կարծես շանրեր քաւալին,
Մեղաւորն ալ խըռովի:

Երբ նուագես մանօլին,
Խոնարհիմ քու աւջեւ ես,
Ձի սեւ աչքերդ փայլին
Ներշնչուած քրմուկույ պէս:

Քու ձեռքիդ մէջ մանօլին
Որփեսոսին հոգին է.
Հրեշտակներն ալ ըզմայլին,
Նախանձին քեզ՝ Աթինէ:

Երբ զարնես դու մանօլին,
Յեռոյ յոգնած մըրափես,
Այդ քեմն է եմ սխալին ...
Կ'ապշինք զի դեռ մանուկ ես:

Ու խորհիւ որ այս քերթուածները կարելի էին այս դարուն սկիզբը: Ոչ միայն կարելի, այլև . . . սիրելի: Ոչ միայն սիրելի, այլև բաւ՝ որպէսզի անոնց հեղինակները նկատուէին բանաստեղծ ու . . . մեծ բանաստեղծ: Մի կարծէք թէ բախտը երբեմն յիմար է, մեզ ձգելու համար այս ողբերգական տղայամտու թեանց վրայ: Առէք Աճէմեանի ամենէն յաջող, վարկաւոր քերթուածներէն մէկը, օրինակի համար՝ Վահագնը:

Այեաց մեջէն կանգնած վեր՝	Խարսեաւ վարսիւ՛մ աչք նուաղ
Ջոյգ հրաւայի աշխարհներ,	Դու եւրոպա հարս չքնաղ,
Ապշած դիտեմ միտ գիրար,	Եւ քաւ մօռուօ՛ք յօնք նսեմ,
Իբրեւ երկու սիրահար,	Ասիան՝ քո նստի դեմ.
Եւ Տեր ժպտի ձեր վերայ	Ո՛վ հեռոս ավուցն վոսփորայ,
Սիրուն ավուցն Վոսփորայ:	Տերն իսկ ժպտի ձեր վերայ:

Ու ասիկա այսպէս տակաւին պիտի շարունակուի . . . վաթսուէն տողերու վրայ, որպէսզի մեզի ըսուին բոլոր այս ծանծաղամիտ նախնութիւնները, հոսհոսութիւնները: Ան որ չէ տեսած այդ Վոսփորը, այդ եօթնաստուէր անցնող տողերէն կաթիլ մը իրաւ զգայութիւն չեմ կարծեր որ առնէ: Վասնզի վերը արտագրուած տասներկու տողերը եղջերուաքաղի մը նման պիտի մանեն ձեր միտքէն, որ կը դժուարանայ ալիքներէն «կանգնող» հրաւայի՝ աշխարհները նիւթի վերածել: Աշխարհներ որոնք «ապշած իւրարու երես կը նային», «սիրահարներու նման»: Այս պատկերները ոչ միայն ձեր մէջ չեն արթնցներ իրական զգայութիւններ, այլև կը տարտղնեն ձեր հաւանական չահագրգռութիւնը: Դուք իրաւ տարրեր կ'ուզէք ու կը տրուի ձեզի այդ ապուշ նմանութիւնը: Երկրամաս մը որ սիրահարի կերպարանքը առնէր: Արտագրուած երկրորդ վեցեակին մէջ եւրոպան հարս մըն է, Ասիան փեսայ մը: Ի՞նչ հարկ վերլուծման: Դուրս՝ տարրական իսկ լրջութենէն: Ու այս անպատասխանատու շաղկապփուլութիւնը մարդիկ բանաստեղծութեան հետ երբ կը շփոթէին, անկեղծ էին անշուշտ, սկսեալ զայն թափող գրիչէն մինչև զայն հրացումով վայելող . . . մտաւորականները: Մկրտիչ Աճէմեան իբրև զգայնութիւն կ'ընկղմի տաղաչափներու դպրոցով մեր մէջ մտայնութիւն կազմած անորակելի հոգեխառնութեան մը մէջ: Անոր վաղագոյն, չըսելու համար անդրագոյն կերպարանքը սխալ չըլլար մինչև Ս. Ղազար երկարիւ ուրկէ եկած է մեզի այս բան մը չըսող, որևէ բան չափով ըսելու և զայն բանաստեղծու-

թիւն դաւանելու, անով եզակի, անհուն քերթող դասուելու մանկամտութիւնը։ Այս մարդը ուրիշ ապրումներ չունէ՞ր այդ Պոլիսէն։ Չունէ՞ր այդ ապրումները դարձեալ բոլոր մեծ ու պղտիկ, նշանաւոր կամ աննշան միութիւնները Վենետիկի չքահոյլին, ասոնց աշկերտ տաղաչափներու փաղանդին։

Զգայնութեանց սա վերլուծումը, դժբախտութիւն է ըսել, որ դաւանութիւն միայն բերաւ ինծի։ Եւ որովհետեւ բանաստեղծութիւն մը շատ բաներ փառքով, չքեղութեամբ ըլլալէ առաջ, միշտ խառնուածքի մը հրիտակն է, կը հասկցուի թէ ինչու այդքան շուտ հինցան մեր քերթուածները, այդ դպրոցէն, չկարգացուելու ճակատագիրը շատոնց անցած, մեր մէջ ստեղծելու չափ տեսակ մը զայրոյթ։ Ինչո՞ւ օր մը օրանց այս մարդիկը մտիկ ընել չեն զիջած իրենց սիրտին, որ, վստահ եմ, կը փոխադրէր իր վարկերուն վրայ աշխարհ մը իրաւ յոյսերու։ Յետոյ, սա նուազումը հիմնականէն (միշտ բանաստեղծութեան մէջ) պիտի պարտադրէ ինքզինքը։ Մարդիկ Դուրեանը պիտի բացառեն, անոր անսովոր ապրումները ճամբարտակութիւնը պիտի ընեն վերագրելու իր հիւանդութեան ու պիտի փնտռեն իրենց հասարակ ապրումները ոսկեղծող դրութիւններ։ Ի՞նչ հարկ տափակութեան համար տառապիլ, երբ մէջտեղն էր փառքը եզակի քերթողներուն, որոնք նոյն այդ տափակութիւնները չափով ծախեցին մեզի։ Մէջտեղն էր փառքը Մկրտիչ Պէշիկթաշլըեաններուն, Նար-Պէշիկերուն, որոնց գործին ամենէն աւելի ծաւալ գտնող, վարկ ճարող մասը ապահովաբար կը պարունակէր օրուան երգերը։ Այսպէս է որ, կէս դար յետոյ, մենք այդ խոռվքներուն հանդէպ երբ կը հանենք արդար անտարբերութիւն, երբեմն ցատու՛մ, չենք նանրամտիւր նոր արժէքներու սակացոյցներ առաջարկելով։ Ի՞մ ուզածը իրա՞ւ, իրա՞ւ, իրա՞ւ յոյն էր այդ մարդոց ջիղերուն։ Ու մի ըսէք թէ այդ մարդոց ջիղերը անգգայ կրնային ըլլալ սա տեսակ տողերու համար, տաքը տաքին, իրենց աչքերուն տակ իսկ յօրինուած։

Ոչ ոք ըսաւ. «սա քղիմ
Պատենք սիրք տրամագին,
Նայինք ինչե՞ր գրուած կուն».
— Հոն հրդեհ կայ, ոչ մտեան:

(Պ. ԴՈՒՐԵԱՆ)

Անչուշտ որ ցաւէն անցնիլ մը, սէրէն այրիլ մը, մահէն այցուել

մը մինակ քերթողներուն սեպհականութիւնը չեղան։ Մտիկը
 րէք մեր ժողովուրդը, իր աշուղ բանաստեղծին բերանով երբ
 կը խօսի սիրու ցաւէն։

Թեպուզ հազար դարդ ունենամ, ես սրբոսումս ա՛ն չիմ ասի։

Իմ հուճիկի հեքիմըն դուն իս, ես է՛լ ուրիշ Շահ չիմ ասի։

Սայար-Նօվին ասաց. զալում, ես եմ մահին մահ չիմ ասի՝

Հենչափ ըլի՝ դուն վրէս լաս մազըդ շաղ Տալով աշկիլում։

(ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ)

Այս ամէնը գոյութիւն ունէր անշուշտ երբ Պէրպէրեան, Թէր-
 զեան, Սէթեան, Աճէմեան իրենց տաղերը կը յօրինէին։ Այս
 ամէնը զգացին անշուշտ այդ մեծահամբաւ բանաստեղծները
 նախ մարդկօրէն, առանց գրական սնամփառութեան ու իրենց
 սրտին ձայները կարծեցին մեղի անցընել իրենց տաղարանե-
 րով։ Կրտսեր Ռոմանթիքներուն զգայնութիւնը, որքան ալ աշ-
 խատինք, չենք կրնար բանաստեղծական աշխարհին մը մէջ տե-
 ղաւորել, իրենց գիւտներուն աշխարհին մէջ անշուշտ։ Այն
 ատե՛ն։ Ի՞նչ են ըրած այս մարդերը։ Այս հարցումին պա-
 տասխանը կը բանայ ուրիշ գլուխ մը։

Զ.

Այդ գլուխը կը հետաքրքրուի Կրտսեր Ռոմանթիքներու
 աշխարհով, միշտ իրենց գիւտներուն վկայութեամբը միայն
 կարելի։

Ինչերո՞ւ բացուեցան սրտերու դռները այդ մարդոց։ Դիտ-
 ուած է որ իրաւ բանաստեղծութիւնը շատ բարդ վաթաթնիկ է
 չ'ախորժիր։ Մարդիկ միշտ պարզ չեն, քանի որ ընկերութիւնը
 կարգուսարքի, պատշաճութեան ու պարտքերու, չըսելու հա-
 մար ոսկեղօծ կեղծիքի պահերու է վերածած մեծագոյն մասը
 մեր ժամանակին։ Ասոնցմէ ազատագրուիլ, ինքզինքը իր գէմը
 ունենալ մերկ, առանց մշուշի կամ պատմութեան։ Չվախնալ
 այդ ինքնիր հետ առանձնութենէն ու մտիկ ընել խորունկէն (մեր)
 քաջող նուազ ձայներու։ — Ասիկա իրաւ բանաստեղծութիւնն
 է, մեր ներքին աշխարհին վրայ երբեմն ցաթող զարնադեղ հիւ-
 սիսայդը։ Նման պահերու վկայութիւններ կը կազմեն ահա բո-
 լոր յաջողած քերթուածները, հին թէ՛ նոր. ժամանակը անաղ-
 գեցիկ է անոնց վրայ։

Վերակազմել Կրտսեր Ռոմանթիքներու աշխարհը, կրկնել չի նշանակեր ինչ որ վերը ըսուեցաւ անոնց զգայնութեանը մասին: Զգայնութիւնը այդ աշխարհը իւրացնելու անջատ արարքին նշանն է, խոստովանութիւնն է մեզմէ գուրս, երբ կը մարմնանայ: Ունինք, ուրիմն, հասարակաց մէկէ աւելի բարձեր (բառը դործածելով մեր հին գրականութեան մէջ ընթացիկ իմաստով) — արտաքին աշխարհ, տեղական պայմաններ, մտայնութիւններ, ընդհանուրին պատկանող ծանր, հոծ ապրումներ, ուրիշ խօսքով՝ ինչ որ մեր ջղային գրութիւնը կը մնայ պարտական մեր միջավայրին, ժամանակին: Այս գլխաւոր գաղափարներուն արտահանումը, ըսել կ'ուզեմ բացուիլը՝ անշուշտ մասով մը կը մօտենայ զգայնութեանց ընդհանուր տուիքներուն, անոյցմով է պայմանաւոր, բայց զանոնք հասկնալի ընծայող գերագոյն միջոցն է, քանի որ Պոլիսը Վենետիկ մը չէ. այսինքն՝ ունի զօրաւոր անդրադարձումներ, չատ մը զգայարանքները, առաւել՝ իմացականութիւնը շահագրգռող: Ուշագրաւ է որ բացի Պէրպէրեանէն, միւս երեքին համար ալ տեղութեան բաւարար միջերք մը ըլլայ հասարակաց: Իրարու մօտիկ ծննդեան թուականներով, իրենց ապրումներուն ընդհանուր թելադրանքը գրիթէնոյն պայմաններէն ստացած, այս տաղաչափներու զործերը մեզի համար առնուազն պարտաւոր են յստակ, մասնաւորութեամբ վկայութիւններ վերբերել իրենց շրջանէն:

Ան որ կ'իյնայ Նոսթր քերթուածաշարքին անծայրածիր ամայքներուն մէջը, զուր տեղը պիտի տառապի քանի մը հիմնական ապրումներու պողոտան գտնելու իր շատ արդար փափաքէն: Ալիշանի քերթուածները այդ բարիքը չեն շնորհեր ոչ ոքի: Ոչ պատմութիւնը, ոչ երկինքը, ոչ ալ մօտի աշխարհը չեն գտած այդ քերթուածներուն մէջ անհրաժեշտ թանձրութիւնը իրենց վրայ կրելու բաւող դուրսէն հետաքրքրութիւններ, ինչ որ հոմանիշ է բառերու աշխարհի մը քաղաքացիութեան: Առէք, ատկէ վերջը, տաղարանները Պ. Դուրեանին և Մ. Պէշիկթաշլեանին: Առաջինէն քսան մը քերթուած, երկրորդէն տասնեակ մը ձեզի պիտի տան բարիքը հաստատ գետինին, ուր մենք կրնանք մօտենալ ձեւերու, պատկերներու, կայքերու, մեզի ոչ ծանօթ, բայց մեզի համար ոչ անկարելի: Պիտի զգանք ձայներ, այդ կտորներէն, յար և նման անոնց որոնց շուրջը երբեմն կ'ընդգլխանք մեր ներսը: Պիտի կրենք յուզումներ, ի հաշիւ այդ տառապող տղոց ու հանգիստօրէն մեզի: Այս թելա-

դրանքներուն լոյսով է որ կը մօտենամ կրտսեր Ռոմանթիքնու-
րու մեղի ձգած գիւտանքներուն, այսինքն անոնց աշխարհին:

ա) — Արսաբին աշխարհ մը որ թէ՛ն չի պատկանիր իրաւ
արուեստին, բայց մէկուկէս դարէ ի վեր հոգեկանին չափ կշիռ
է ստացած: Կը հասկցուի թէ կ'ակնարկեմ անոնց Պոլիսին, գէթ
ասոր նկարչական կերպարանքին: Չեմ հարցնիր թէ ներքին
պատկերացման անընդունակ թէրզեանը ինչո՞ւ արտաքինին հա-
մար ըլլայ նոյնքան անընդունակ, վասնզի թէրզեանի քերթուած-
ները այդ փառասիրութենէն անդին կը նային: Մահիկ, նոճի,
ծով, ափունք, ալիք, անտառ: Երբեմն յատուկ անունի փըշ-
րանքներ: Երբեմն ալ որոշ մարդ մը: Բայց որոնց չըլլար տըր-
ուած բախտը իրենք զիրենք ըլլալու: Բանաստեղծը՝ նկարիչ մը:
Համաձայն եմ, Բայց, այն ատեն, ի՞նչ է այն մարդը որ կը գրէ,

Իբրեւ մանկունի որ կ'ելլէ ծովէն՝
Շըղարեւ լողիկն ըսպիսակաբոյր
Հողմէն ծուփ ի ծուփ, եւ ձիւն ուսերէն
Մարգարտակայլակ կ'երկննան վարսփ իւր,

Այլն ալիքներէն երկինքն է ելեր
Եւ իւր կարճաբուխ ցակասուն վըրայ
Թաւմ վարդի կոկոնք պըսակ են կապեր.
Ա՞ստղ է քի հրեւտակ որ հեռուն շողայ:

Եւ համապարփակ մըտուելն ծոցէն
Ծովն եւ հեռաւոր կըղզեակք, եւ ցաւն այն,
Եւ մահիկն ի հալս, եւ ցուրք մինարէն
Յրադի մեջէն կարծես կ'երեւան:

(Թ. ԹԵՐԶԵԱՆ) (ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՏՈՒԹԻՒՆՆԵՐ, էջ 311)

Նկարագրելու համար առտու մը: Պարտաւոր էք այս Զարթօնքը
(վերնագիրն ալ է քերթուածին) մաս մաս մարտիլ, ընդմէջ աւ-
նըրջոցն և իրականութեան, տակաւին ութսունէ աւելի տողերու
երկայնքով, անշրջագիծ տեսիլներու և անհակակշիռ սլացքնե-
րու թաւալումը ստիպուած ամբակալ պահելու միտքիդ հասու-
ղութեան, մտածումէ, փափաքներէ, իրաւ վարդերէ ու յօրին-
եալ պատկերներէ համատրոփ քառսի մը մէջ, մինչև որ յոգնիս
ու փրթին քերթուածին լարերը ձեռքէդ ու հարցնես դուն քեզի
թէ ինչո՞ւ գրուած են այդ ամէնը: Ո՞ր աշխարհին կը պատկա-

նին այդ կայքերը. ո՛ր ժողովուրդին՝ այդ զգացումները. ո՛ր մարդուն՝ այդ ապրումները: Թէրդեանի Պոլիսը, ինչպէս հոն ապրող իր ժողովուրդը անկարող կը մնան իրենք գիրենք միգրի պարտադրելու: Հոս մեզքը տաղաչափութեան վերագրելի ըլլալէ աւելի, կուգայ թերեւ խառնուածքէն: Կան մարդեր որ, անկարող կայացնելու ներկան, կ'ընեն շրջանը վտանգին, պահալով անոր շուրջը ու շինելով: Պէտքերեան հազիւ քանի մը քերթութեամբեր ունի արտաքին աշխարհին հետ հեռուէ հեռու աղերսով մը (Աշխ, Հեռէ է Բէն), իր փառասիրութիւնը դրած ըլլալով հոգեղէնին նուաճման: Այնքան կը նկարագրէ առանց վախի, կասկածի, չմտածելով իսկ թէ այդ գոյները, այդ գիշերները, այդ արշալոյսները, Մայիսները, արհաւիրքը, ծաղիկներն ու ալիքները որ երկրագունդին վրայ կը թաւալին: Իրաւ Պոլիս մը, Աճէմեանին պարզուկ տողերուն ներքեւ: Դժբախտաբար անկնիք, տափակ Պոլիս մը: Չորսին համար ալ սա արտաքին աշխարհին հանդէպ տկարացումը աւելի է քան տխուր, պարզ հաստատումը: Թող ունենային անոնք ուրիշ աւելի կարեւոր ըսելիքներ, այսինքն՝ այդ դիւթական կայացները ընտրած ըլլալին աւիթ, անոնց ետին դնելու համար իրենց սիրտերուն կարելի տրոփը, տազնապանքը, հո գարձեալ պիտի ընէի իմ զիջումը, մարդկեղէնին սիրոյն որոշ չափով մը հանդուրժելու սա ողորմելի արտաշխարհը: Մարդիկ, այս անգամ իրաւ արուեստագէտները (Լամաութին, Թէոֆիլ Կոթիյէ, Լոթի, Ժիտ, յիշելու համար քանի մը անուններ), այդ տեղերէն առնուազն անմոռանալի տեսարաններ դիտած են, ուր նկարչականին զուտ, ճշգրիտ տարրերուն հետ, առանց ուղեւու տուած ալ են հոգեղէն որոշ սեւեռումներ: Մեր բաժնուր: Ամենէն հանգամանաւոր էջը Եղիան (Մէր Պաֆուրը, որ անշուշտ աւելի է քան Աճէմեանի հասարակ տեղիքը) է ստորագրած այդ քաղաքին վրայ ու գուք ինչ զայրոյթով մէկդի կը նետէք այդ բաջաղանքը: Երուսաղիմ գործին մէջ (Աֆրայիմ Աշխիւ) կայ աւելի իրաւ բոնալիք մը: Ներաշխարհը միւս զեղծանումը կ'ընէ, կեանքը գրիթէ գոհելու գոյնին: Թէրդեան, Պալեաններու գործը փառաբանելու առիթով, Հիւկոյական տողերու կը վստահի սքանչելի պատեհութիւնը արուեստն ու բնութիւնը կրկնախորք բայց միեւնոյ կառոյցի մը մէջ նուաճելու ու կը գրէ ծանօթ քերթութեամբ (Յապաբան Զրաշխէ) որուն մէջ ո՛չ Պոլիսը կայ ոչ ալ Զրաղանը:

Աշխարհ մը, սակայն, միայն արտաքինով չի կայանար: Արդէն անոր օգտագործումը արուեստին համար երկրորդական,

չորրորդական նկատողները անշուշտ յիմարներ չեն, քանի որ արտաքին աշխարհը կ'արժէ զայն տեսնող աչքերուն, հոգիին անդրադարձելու կարողութեամբը: Հրանդի գործին մէջ չկայ այդ Պոլիսը, բայց հոն բանտակենցաղ տառապող իր ժողովուրդին հոգեւիքն Պոլիսը, այնքան իրաւ, այնքան արտառուչ որ ես կը մոռնամ շատ սիրով ներքինի փափկութիւնները Սիպիլին, նոյն իսկ Տիկին Եսայեանին նկարագրող պատկերներուն: Կրտսեր Ռոմանթիքներուն գործը, այս տողերէն կէս դար ետքը պիտի հագնի, արդարութեամբ անշուշտ, ճակատագիրը Ալիշանի, Բագրատունիի, մանաւանդ Հիւրմիւզի *pastel*ներուն, չապրուած տեղերէ իբրեւ բառակնիք ու հետեաբար անկնիք վկայութիւն: Ու ինչ որ մեզ կը նեղէ Բաբարոսին (Հիւրմիւզ), Հայոց աշխարհէին (Ալիշան), Հրա-էրազ Սրբաբանին (Խրիմեան) ու նման չափակաւ ուրիշ գործերուն մէջ ոչ անոնց գրական անբաւարարութիւնը կամ վրիպանքը կը մնայ, այլ այդ ամենուն ետին, ներսը՝ պակասն է երկրորդ, ներքին աշխարհին, այսինքն մարդուն:

Արդ, ի՞նչ ապրումներու գումարն էր ամենէն առաջ ինքը՝ Թովմաս Թէրզեանը, — ըսինք անգամ մը — մտայնի, երիտասարդութեան բոլոր շնորհներով զարդարուն, գործածելու համար տափակ բայց իրաւ ձեւ մը խօսքի, որ աւելի քան կէս դար իր ջիղերը պտտցուց այդ «չնայալ ավերուց» վրայ, բայց մանաւանդ հոն հաւաքուած իր ժողովուրդին ալ ընդհանուր յոյգերուն, խռովքներուն մէջ անշուշտ ունեցաւ իր ալ բաժինը: Քիչ տաղանդով բայց շատ փառասիրութեամբ հրապարակագիր մը, Մինաս Զեքալ, իր պատմուածքներուն, քրոնիկներուն ոմանց մէջ այդ ապրումներէն իր սեւեռումներուն համար կ'ըլլայ իր խտառատ աշխատանքը մը ոչ թէ մեր գրականութեան, այլ մեր մշակոյթին: Հոս բոլորովին կը գտուիմ հասարակաց հիացուածն, Թովմաս Թէրզեանին մէջ մեծ, ազնուական հայ մը յայտարարող հիացիկ գպրօցէն (Զօպանեանով զխաւորուած մարդերու խումբը) ու զիս այս խոստովեան հարկադրողը անշուշտ անոր զիւանին գրական նուազումը չէ, այլ անոր պարապօրէնք իմ ժողովուրդը յուզող հոգեւէն, զգայնութենէն: Իմ պահանջը չի սահմանափակեր ինքզինքը տուփիկ, նեղծիր ազգային զգայարանքի մը, բախտաւոր բառով մը՝ հայեցիութեան: Այդ հայեցիութիւնը, հաստ, հաստատ, ամուր ու կոշտ, ինչպէս կայ անիկա Սրբանձտեանցի մը . . . ազգազրական հաւաքումներուն ու նկարագրական ցանցառ պատանիկներուն մէջ, կ'իյնայ գրականէն անդին, քանի որ վաւերական տաղաչափի մը, քերթողի

մը գործը չէ եղած: Իմ թելադրել ուզածը պարզ, արդար մարդկայնութիւնն է, օրինակի համար այն հոգեդէն զրոյթիւնը որուն զգալութիւնը կ'առնենք Պետրոս Դուրեանի մը Տաղերէն: Հայ է այդ տղան ըսիւր չի նշանակեր Պոլսեցիները զարմացնել, այլ այդ տղուն մէջ կը նշանակէ զգալ մեր ճակատագրին մէկ քանդակը, ցաւին հետ ու մէջ ստեղծել կրնալու հազուագէպ բայց անհերքելի տաղանդը: Խորհնցէք անգամ մը ձեր պապերուն, ըսել կ'ուզեմ՝ ձեր պատմութեան: Ու գտէք բաւարար հանգիստի անհրաժեշտ շրջան մը որպէսզի սեղծուէին մեր մշակութիւնն ամենէն տարրական, ամենէն ամուր արդիւնքները, — մեր զբաղանքիւնը, մեր երաժշտիւնը, մեր նարսարապետութիւնը, մեր լեզուն: Ուրիշ ո՞ր ժողովուրդը 1850էն մինչև 1900 պիտի յաջողէր կերպարանք տալ մեր նորագոյն արժէքներուն, առաքինութեանց, ու հարցուցէք ձեզի թէ ինչ արիւն-արցունք էին տարիները մեր գրողներուն, մեզմէ ինչպէս դուրսէն անոնց ուսերուն բարդուած չարիքին լեռներովը: Եւ սակայն զեղեցկութիւն է Հրանդի գործը: Թշկատինցին աշխարհ մըն է. Դուրեանը՝ ուրիշ: Ահա իմ ուզած հայեցիութիւնը: Ահա այն մայր մտահոգութիւնը որուն սլաքներուն տակը ես ձեռնարկելի եմ իմ սպառիչ, սպաննող Համադակներին: Մեր հոգին, հայ հոգին: Սուփեստութիւն է այդ հոգին արժեզրկել, ու փառաւորութիւն ջանալ անկէ վեր, Զօպանեանին բառովը՝ համամարդկային հոգիի մը փաստերով որոնք իր թէ գոյութիւն ունին թէրզեանի զրւանին մէջ: Համամարդկայինը ըլլալէ առաջ՝ ատիկա պարզ մարդկայինն է, ու պարզ մարդկայինը՝ իրաւ մարդկայինն է, այսինքն խոնարհ կարողութիւնը լալու, յուզուելու, սիրելու, զգալու: Արդ, Թովմաս Թէրզեան կը սիրէր իր հայրը. ատոր հակառակը մտածել հրէշութիւն պիտի ըլլար: Զորս-հինգ քերթուած է յատկացուցած անիկա, այդ կրակներու մէջ մոխիր դարձած պատուական մարդը ոգեկոչելու. կը զրկեմ ձեզ զրւանին հրդեհներուն ու պարտք կը դնեմ, նկարչական խաղերը արհամարհելով, հասնելու այդ մարդուն սրտին: Կարդացի աւելի քան երեք անգամ այդ քերթուածները ու իմ գտածները բառ էին, գոյն էին, բացադանշութիւն էին, երբեք իրաւ կսկիծը որ զաւկինն է, իր ամենէն սիրելի ապրումներուն հանգոյցը երբ կը քայքայէ, այդ քան եղբրական պայմաններու մէջ: Կ'ըսեն թէ սիրոյ մեծ երգիչ մըն է Թովմաս Թէրզեան: Ես Դուրեանէն երկու քառեակ բաւ կը նկատեմ այդ զգացումը ճանչնալու: Աւելի քան յիսուն քերթուած Թովմաս Թէրզեան յատկացուցած է այդ

զգացումը արտայայտելու՝ Առնուազն կը տառապիք իր, բանաստեղծին հաշուոյն, որ այնքան քիչ, գէշ բաներ միայն կը հանէ խորունկ այդ վիճակներէն ու մեզի կ'ըսէ ապրումներ սրունց մանկականութիւնը գրեթէ մեզ կը ձգէ ամօթահար։ Աւելորդ է ծանրանալ այս նուազումներուն։ Թէրզեանին չափ աղօտ են միւսներուն ալ վերքերածները այդ աշխարհէն։ Աէթեանի exotique, խորհրդաւոր անուններով աղջիկները ոչ մէկ առաւելութեամբ կը յաջողին արդարացնել իրենց հնչական, տարօրինակ ձայնական տարազները։ Յետոյ, դժուարութեան մէջ եմ չափել կարինալու համար սիրային սա զեղումներուն աղայութիւնը, չըսելու համար տղայականութիւնը։ 1900ին երկտասարդ տաղաչափները (Մերուժան Պարսամեանէն մինչև Գարրիէլ Քանճեան) դոնէ կիրքի թանձրութիւն, սուտուփուտ հով մը կը թելադրէին իրենց հաստ տողերուն ետին։ 1870Բն։ Բայց մոռցէք թէ Պէշիկթաշեանն ու Դուբեանը անցիր են այդ փորձութիւններէն։ Մկրտիչ Աճէմեան արդէն իր սիրային ապրումները չի յօժարիր ոսկեղօծել, թելադրելու համար բացառիկ հոգեվիճակներէ յաճախուիլ մը։ Պէրպէրեան իր «կուսումնով կը կենայ քովիկը Թէրզեանին և Աէթեանին։

Զգացական այս փաստերէն դուրս՝ չորս քերթողներուն զիււանները հեռուէ հեռու արձագանգներ միայն կը թելադրեն ծաւաւնակ մը յատկանշող հաւաքական յոյզերէն։ Ըսի թէ որքան քիչ էին այդ յոյզերուն հարազատ աղբիւրները, ինքնին։ Թէրզեան չէ խանդավառ իր ժամանակով, որուն իւրաքանչիւր բուպէն անիկա պիտի գործածէր աւելի աշխարհիկ, չըսելու համար երկրային (terre à terre) ապրումներու, վայելքներու։ Իր ազգային քերթուածները ոչինչով կը տարբերին 1860ի, 1870ի պոռաքցուած ոտանաւորներէն։ Չեմ մեղադրեր, բայց չեմ ալ հրապարտ՝ սա նուազման հաշուոյն, քանի որ այս զգուշացումները, պարկեշտութիւնը այս մարդը չէ ցուցուցած ուրիշ կալուածներու վրայ, անսպաս զովեստով մը պղտիկցնելով ինքզինքը, իր օրերուն աս ու ան մեծաւորին դադաղին կամ յիշատակին հաւելէն։ Պէրպէրեանի դպրոցական երգերը, չորս ինք կ'ախորժի շարական յորջորջելէ, փաստն են ուրիշ, թշուառ ճաշակի մը, չըսելու համար փառասիրութեան մը։ Պէրպէրեան կը հաւատար իր ուսուցչութեան, գէթ առաւելագոյն չափով, քան իր հարաւգատ քնարերգակ մը ըլլալուն։ Աէթեանէն ունինք տարագրի մը քերթուածաշարքը, Գահրիէ տաղաչափուած, տարիքէն ընդոտնեալ մարդու մը սովորական խօսքերէն գոյաւոր։ Ատիկա

հաւանաբար վճարում մըն էր այդ պատուական ուսուցչէն օրուան պարտքերուն, 1896էն վերջ այնքան շատ մեր գրողներուն տոմարներուն վրայ: Աճէմեան կ'անդրտանայ այդ հարցը, հարցերը, իր պաշտօնական համազգեստին մէջ ամրակոծակ ինքզինքը պաշտպանած իր սերունդին բոլոր ոչ-օրինաւոր ցանկութիւններուն ընդդէմ:

Կրտսեր Ռոմանթիքներու աշխարհէն քանի մը հիմնական սա բաժիններուն վերլուծումը թերեւ աւելորդ ալ էր, եթէ երբեք իմ կողմէ չունենայի պարկեշտ ճիշդ այս անուններուն փառքը գէթ հանգուրժելի ընծայելու, հանելով անոնց գործերէն տախտակներ, շերտեր ուր մեզի ներուէն, արտօնուէր տաքը տաքին չփուսի մտնել ժամանակին հզօրագոյն քանի մը կիրքերուն հետ: Նար-Պէյլի Սոս-էրէ Հայկաճ, հակառակ դրական իր բացարձակ ձախողանքին, մեզի համար տախտակ մըն է 1860ի, 1870ի հոգեբանութիւնը, աւելի պարկեշտ բառով մը՝ հոգեխառնութիւնը հասկնալու: 1860էն մինչև 1890 ազգային տաղարանները լիցնող մեծահոջակ կամ համեստ երգերը անչուշտ չեն կրնար հաշիւ տալ իրենց փառքերուն, կամ գնել զանոնք, բայց կը խօսին այդ շրջանի մեծ, խորունկ յոյզերէն ու իրր այդ կը մնան եթէ ոչ շահեկան գէթ կը թելադրեն քիչ մը բան միշտ այդ հոգեխառնութիւնէն:

Կրտսեր Ռոմանթիքներէն թէրզեանն է որ իր Ապոթոֆէզ գրարար գիւցաղներգութեամբ Վինետիկի աւանդութեան շարունակողը կը սիրէ հանդիսանալ: Կան իրմէ Քրէստոնէայ Նահապէն է Հռոմ, Նախբեքոն (Անդրախո ողբերգութեան), Ջաբէ Լ Նաբդէ կամ Ճֆնաորն, Վահագն Վիշապար, Տէրմայր առ Խաչեցել, Արա՝Վեղեցի, Երբ էրէն Բեքիւնց անուններով քերթուածներ, որոնց դժուար է յարմար պիտակ մը տալ: այնքան անոնց նիւթը (պատմական, աւելի ճիշդ՝ պատմողական եղանակով ԺԹ. գարու poème, արեւելահայերուն պոեման) ու զանոնք մշակող եղանակը զիրար քիչ, գէշ կը պաշտպանեն: Եւրոպացի մեծ ու մանթիքները այդ ձև քերթողութիւնէ մը հանած են տանիլի, նոյնիսկ գեղեցիկ կառույցներ: Թէրզեան միամիտ է տաղտալ փութեան վրայ իր վտտահութեանը մէջ: Կը հաւատայ թէ երեք քերթողներու բերանը ոտանաւոր տողեր գնելով, պիտի յաջողի մեզի թելադրել մեր պատմութեան ամենէն բանաստեղծական մէկ միքիմ ալլապէս նուրբ, փափուկ շնորհը: Կը գրկեմ ընթերցողը այդ կտորին, որպէսզի գտնէ անոր ներսը ինչ որ Զօպանեան կը կարծէ գտնել, այսինքն բարձր ու խորունկ հայրենասիր-

բուժական անմահ վկայութիւն մը: Բայց դիւցադնաշուքն ողիէն իր աղքատութիւնը աւելի քան պարզ ձևով մը երևան կուգայ վերը յիշուած բոլոր կտորներուն մէջ: Ասոնցմէ ոմանք գրուած են յառաջացած տարիքի մէջ: Զաբէն և Նարէկը 1900էն ալ առգին կ'իյնայ, ու տասով զիս կրկնապէս կը տառապեցնէ: Այդ աստիճան այս մարդը անմահն էր ապրած բանաստեղծութեան ընդհանուր շրջափոխութիւնէն, որպէսզի իրեն ներէր այդ անկարելի պատմումը, պատմութիւնը: Դէթ ունէր աչքին առջև փառք Տիկին Սիպիլի Ժանեակներ, Դարալեքէի հիւանդ պատմումներուն: Անէմիանէ ունինք այս երակէն Սառապը (Դարալեք հոգեք) որ պարկեշտ է մեր օրերուն պատկանելու պարզութեամբ մը բաւարարուելու: Անթիանի Տարաքէն Քաւարէն Ան Եւր, Մեծ Եւր, Սեփ, Սեփ Անտարալեք կը պատկանին ջարդապատումին, ուղղափառ և անխոստփելի, որոշ յուզումի մը տարրերով բայց միշտ չազատագրուած, ըսել կ'ուզեմ՝ փոխառիկ բանով մը վերաւոր, այնքան այս մարդիկը (կրտսեր Ռոմանթիքները) պիտի գոհարանան իրենց քնարներուն սովորական եղանակները լքելով, ուրիշ լարերու վրայ նորութիւններ զարնելու, կարծես աւնարժան համարելով այդ թէև սարսազին բայց ոչ մուսայիկ ապրումները, երբ անդին իրեն կը սպասէին արշալոյսները, աշունները, գարունները, զեփեռները և բազմապիտակ կոյսերը: Նոյն մարդէն պատմող սևոին կը պատկանին (Բլաբն է վերէն) Պարֆէ մը, մանաւանդ Զաբէ և Զաբէն, թեթևոտն ու արագ, որոնց մէջ Յովհաննէս Անթիան արտօնուած է երրորդի մը ուսերուն վրայ բեռնել իր բոլոր կարօտներուն կապոյցները, ոմանթիք ըզմաւորութեանց հինումին ծրարները, Հիւկոյի Les Contemplationներուն, Les Orientalesներուն գնացքովը, թափառազին հեշտաւորութիւններով:

Ուրիշ: Այսինքն այս դիւաններուն ներքը չունին գոյութիւն այն քանի մը հզօրագոյն տաղնապները, խոսովքները, կիրքերը, սարսուռները որոնց վկայութիւնները այդ մարդիկը ապրեցան ալ իրենց հաշւոյն, տեսան ալ ուրիշներու բանաստեղծութեանց մէջ: Կ'ենթադրեմ թէ Պէշիկթաշլեանի թագումը ազգային սգաւոր հանգէսի մը պէս կատարող ժողովրդական հսկայ թափօրին կտին հայ բանաստեղծութեան մեծ ու պզտիկ աշխատաւորները ինքնամփոփ մտքի առջև բերին Օրթապեղի քերթողին անմոռանալի տաղերը, ու զգացին թէ որքան իրաւ երգած էր այդ զմայլելի հիւանդը, մագաղաթեայ իր մահուան դիմակէն աղատագրելով անոր նոյնքան դժայլելի զուլը ու պտտցնել:

լով զայն այդ հրաշախառն վայրերուն, ավերուն ու անտառներուն, սրահներուն ու զարդասուցերուն ընդմէջէն երբ այդ կործանումը վայլեցնող երիտասարդը կը գրէր իր քերթուածները։ . . . Փոփոքիւ Լ Կրասնով (1871) տպող երեսունէն հազիւ վեր երիտասարդը Մ. Աճէմեան անշուշտ որ կարդացած էր Սէբեյը, Դրեյքը, Յոլմը, Լեյնը, ու քանի մը ամիս վերջը անցեր էր Սկիւտար, դարձեալ ծովածաւալ բազմութեան մը ապահար նայուածքին առջեւ խելամուտ ըլլալ բանաստեղծի մը պատանաւոր փառքին ու . . . խորհիլ իր ալ ողորմելի տաղերուն, արդար զայրոյթով մը ուխտելով կատրիլ զրիչը, իր ահաւոր անբանաստեղծութիւնը մէկ անգամէն խնայելու համար իրեն ու . . . մեր գրականութեան։ Հաւանաբար հոն ըլլալու էր Թէրզեանը որ գրաբար իր քերթուածներուն յաճախանքէն պաշտպանուած, կը գծուարանար հասկնալ այս թելադրիչ բայց շատ շքեղ փառք տղու մը որ Ալիշանէն ու Բազրատունիէն առանց զոտ առած ըլլալու, գերեզման չիջած գեռ կ'անմահանար . . . Այս շեղումները քմայքներ չեն սա էջերուն վրայ։ Իր բնական ըստման հետեւ Օր. Խանճեանը (Սիպիլ) մինչև 1885 պիտի գրէ ճաշակին մէջը իր պարմանութեան հիացումներուն որոնցմէ թանկ վկայութիւն մըն է Ողջոյն Կոմիտէն։ Բայց հինգ տարի վերջը պիտի անդրադառնայ այդ անկարելի հեշտանքներուն մանկականութեանը, պիտի պատռէ այդ քերթուածին շուրջը հիւստեան քովեաններուն վկայականները և պիտի ստորագրէ Դաւթբեկի հեռագրը (1871)։ 1880ական թուականներուն չքեղ համբաւի մը արժանացած Նայնի Կոմիտէն (Եղիշէ վարդապետ Դուրեան) որ ծաղկաքաղներու գծուարահաճ դոներն ալ forcer էր ըրած, Հովհաննիս Սէֆեյին (1908) մէջ պիտի չունենայ մուտք, վասնզի Եղիշէ եպիսկոպոս Դուրեան, շատ աւելի մատուցած քան Աճէմեաններն ու Թէրզեանները, հասկցած էր շատ նախնական բան մը։ — բանաստեղծութեան մը առնուադն ձևական (formel) պարտքը ու փոխած ոտանաւորին զգեստը, քանի որ խորքին համար նման բախտ մը էր շնորհուած իրեն։ Նոյնն էր պարագան Սիպիլին։ Տեսանք թէ Աւագին Կոմիտէն որքան հեռու էր Խոհի և Յոլմի մարդը։ Ձեզ կը զրկեմ Թրեման Թափերուն որուն մէջ բաժին մը, Խոհի Բոլորմէր, կը պատմէ սուգը սիրեցեալ էակի մը։ Այդ քերթուածաչարքը զրուած է 1906ին, գրիթէ հօթանասնամեակի մարդու մը կողմէ որմէ մեր պահանջը անշուշտ պիտի չըլլար գումարը ուրիշ տարիքի մը յոյգերուն։ Բայց . . . ու մտիկ ըրէք։

Վ Ե Ր Զ Ա Լ Ո Յ Ս

Յուզուած դիտեմ վերջալուսին
Բոսոր շողեր ու կը հոսին
Նոնիներուն հիւսուածքէն քաւ
Ու կը մարին սակաւ սակաւ:

Մուրը կ'իջնայ
Լեռան վըրայ:

Բայց մուր մեռու շուտ կը հալին,
Ու ցնծումս կը փալփրլին
Լեռներ, ծովեր, անտառն ու դաշտ
Ներ լուսնակին հեգիկ ու հաշտ
Դեմքը ցոլայ
Անոնց վըրայ:

Այդ շողերուն գգուանգին սակ
Խայտան ջուրերն ալ կապուտակ,
Ու մեռուէն պատանքը քաց
Կը քանձաւայ կամաց կամաց:

Մուրը կ'իջնայ
Ծովուն վըրայ:

Մեռու մը գործ պատէ, աւա՜ղ,
Նրազներուս հոյլը չքնաղ.
Հոգիս սուգի հաւսնիք ունի,
Իմ վերջալոյսն ալ տոգունի:

Մուրը կ'իջնայ
Կեանքիս վըրայ:

Ներ յաղթական մահուն քեւեր
Խոնջած գլխուս ամեն ստուեր,
Ա՛հ, իցի՛ւ քե իմ սիրելոյս
Նրկնահաւեր ու սրբալոյս

Ժըպիս ցոլայ
Հոգւոյս վըրայ:

(1907)

(ԽՈՒՆԿԻ ԲՈՒՐՈՒՄՆԵՐ)

Այս քերթուածը Աճէմեանին ամենէն յաջողակ ստեղծումներէն
մէկն է: Անշուշտ գլխունցիք որ ինչպէս անոր երկու երրորդը կը
կրկնէ այդ մարդուն առջի երիտասարդութեան ակտիւ գործունէութիւնը:
Թէ վերջին երկու քառանկներուն սուղը եթէ ոչ սուտ, գէթ
անկշիռ ճշշում մըն է, գործադրուած առաջիններուն մանկա-
մտութիւնը ծանրացնելու: Հաւանաբար կնիջը գերեզմանին վե-
րէն է ունեցեր անիկա այդ յաճախանքը մահուան: Ու կը հար-
ցընեմ. — ա՛յդ ըլլալու էին յուշքերը, վերապրումները մար-
դուն որուն տարածալեզուն օրերը, որուն սրտին մէկ կէտը, եթէ
ոչ աւելին արդէն կը պատկի քարին ներքեւ . . . : Աւելորդ կը
նկատեմ այս գիտողութեանց ընթացք տալ:

Կրտսեր Ռոմանթիքներու հոգեկան ապրումները, ցեղային խռովքները, բանաստեղծական ըմբռնողութիւնը, արուեստի ըզ-
դայարանքը բացառիկ թեթեւութեամբ մը, չըսելու համար դա-
տարկութեամբ մը կը ծանրանան, աւագ, այդ մարդոց յիշա-
տակին: Ըսեր եմ որ արեւմտահայ գրականութիւնը դեռ կրնայ
պահել Մկրտիչ Անեմեան անունը, բայց չի կրնար պահել անոր
գործը, որ իր վերջնական կերպարանքին մէջ Թէրեզեան Յանգերը
կը պատկանի պատմութեան, այսինքն գերեզմանին: Պարծեալ
հակառակ Արշակ Չօպանեանի խանդավառ հաւատումներուն,
Թէրեզեանի գիւտնէն մեր ժողովուրդը ոչինչ ունի սորվելիք, չեմ
ըսեր հարիւր տարի վերջը (գրական գործ մը իր բարիքին մէջէն
պարտաւոր է ճարել իր փառքին տարրերը), այլ ապա:

Իր բոլոր անբաւարութիւններով (արուեստի տեսակէտէն)
Զարթօնքի Սերունդին մեզի ձգածը դարձեալ կը ստանայ որոշ
կշիռ, երբ բազմաառի Կրտսեր Ռոմանթիքներու տաղարաննե-
րուն հետ: Ինչո՞ւ հիմնաւորուէր սա գէշ բանաստեղծութեան
պատրանքը, հարազատը մոռցնել տալու չափ: Կար ժամանակ
մը երբ Թովմաս Թէրգեանէն քերթուած մը շուք մըն էր, պա-
տիւ մըն էր որեւէ հանգչսի: Կ'ընդունիր փաստը: Բայց կը դնեմ
ձեր նկատուման միւս ալ փաստը, միշտ այդ ժամանակէն, ուր
մարդիկ երդիծաբանի մը (Յ. Պարոնեան) կը յանձնէին Պ. Դուբ-
եանի թատերգութիւնները, օրուան վարկաւոր մարդէն առնե-
լու համար գնահատման չափ մը որով արտօնուէին այդ խաղերը
լոյսին Արմոն Ֆէլէկեանին՝ Դուբեանի քերթուածները որպէսզի
սրբագրուէին, լոյս տեսնելու արժանաւոր դառնալու համար:
Այս արտմութիւնները անշուշտ բան չեն փոխեր Կրտսեր Ռո-
մանթիքներու գործէն ներս մեր գտած անոտիքէն, որ ոչ ան-
գութ բառ մըն է ոչ ալ անիրաւ վճիռ մը: Դիրք մը մարդ մըն
է: Ու նոր չէ որ մենք կը քաշուինք մարդոց երեսին ըսելու
ինչ որ մեր ներսէն կը մտածենք իրենց վաւերական արժէքին
վրայ:

Եւ որովհետեւ այս դատապարտութիւնը կրնայ շփոթութիւն
ստեղծել մտքերու մէջ, ստիպուած եմ վերլուծման գարնել իւ-
րաքանչիւրէն մէյ մէկ քերթուած: Այս վերլուծումը կը կատա-
րեմ ամենէն յաջող նկատուածներուն վրայ: Աւելորդ է ըսել թէ
երկար քերթուածները չեն կրնար նիւթ հալթայթիլ նման աշ-
խատանքի մը:

Է.

Ունինք սա քերթուածը .

Մ Ի Ա Յ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

- (1) Երբ մենաւոր կը կարծես զիս
Մօս ամայի ծովափին,
Կամ անհառաց խորն՝ ուր տեղեւ
Եւ բոյնք ու վճակք կոծկոծին,
- (5) Կամ աչքս յառած աստղի մը վրայ
Որ կը բռչի՛, կը բռչի՛,
Կամ խոտին վրայ ընկողմանած
Խօսիմ մոռցուած մեկ ծաղկի,
- (9) Կամ ամենի ալեաց կռնակն
Մտածուիմ հեծած անհանդարտ,
Անոց հետ ինքն ալ կ'ալեծփի
Ներքին մըրքեաց դիմամարտ,
- (13) Ո՛չ, ո՛չ, միմակ չեմ, այլ տրտում
Հոգւոյս փոփեմ՝ լուսասու
Անբիծ ըսուեք մ'ինձ կ'ուղեկցի,
Սիրուած 'ւ անբիծ... 'ւ այն ես դո՛ւ:
- (17) Հետզ՝ անբարբառ, զերծ աշխարհիս
Տաղտուկներէն, հե՛տ ժամեր,
Անհունութեան մեջ կը կանգնեմք
Երջանկութեան պալատներ... :

(Թ. ԹԵՐԱԵԱՆ)

(ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆՆԵՐ, էջ 211)

Ինծի ընտանի եղանակով մը այս քերթուածը կ'ենթարկեմ

ա) Խորքի }
բ) Ձեւի } վերլուծումներուն

ա) — Խորքի ֆնոնետիկ: Ի՞նչ կ'ըսեն այս քսան տողերը
Ահա մօտաւոր պատասխան մը. —

1-4 տողերուն մէջ մեկը, ծովափ մը, անտառ մը կը գտնուի: 5-8 տողերուն մէջ՝ այդ մեկը աստի մը կը յառի, ծաղիկի մը կը խօսի: 9-12 տողերուն մէջ՝ այլեւեւուն կը նայի, ներսէն մտնելով: 13-16/ն՝ միւսակ չէ, սիրուած ստուեր մը իրեն կ'ուղեկցի: 16-20/ն՝ անհունին մէջ, այդ ստուերին հետ պալատներ կը կանգնէ:

Այսինքն: Քսան տող — որպէսզի մենք անհունութեան մէջ երջանկութեան պալատ շինողներու հետ ըլլանք: Ինչ որ ես անընթաց կ'անուանեմ, ահա այս անպատասխանատու ազատութիւնն է Թէրզեանին, իր բոլոր քաջքները, տենջանքները, երազանքները մեզի մատուցանելու անգութ անփութութեամբ մը: Ո՞վ չի գիտեր որ զարգիւն (Ռոմանթիք) սա զեղծանումը, Վենետիկէն ու արեւմտեան միւս ոստաններէն վերջ, Պոլիս պիտի վերածուի աւելի դառնազին կորանքի մը, նոյնիսկ խառնուածքի որոշ պաշտպանութեամբ ալ, անբաւական դուրս գալով ձեռնարկ քաջքին բռնութենէն ինքզինքը ազատագրելու: Նորէն չիմ գիտեր անուններու (գործերէ ինչպէս դէմքերէ) փաստը: Մենք կը հաւատանք որ Թովմաս Թէրզեան կոչուած մարդը, վերի քսան տողերը գրելէ առաջ, այցուած է այս Մէջ-Նո-Ռէ-Նը թելագործ հոգեվիճակէ մը: Քայքայ կը ցաւինք որ այդ վիճակին նուաճումին համար նոյն այդ մարդը չըլլայ այցուած արուեստին լրջութենէն, առնուազն զինքը կարգաւել կանչուած մարդոց մէջ իր առաջ բերելիք հակազդեցութեանց տագնապէն: Այս անտարբերութիւնը, անփութութիւնն է ահա որ մղած է մեր կրտսեր Ռոմանթիքները իրենց բերին եկածը մեզի աւանդելէ, հոգ չէ թէ այդ ամէնը ընկուղի կնեպը անբաւական գան լեցնելու: Հետի ինձմէ նիւթին, նիւթերուն խորհրդաւոր պաշտամունքը: Քայքայ վայ անոր որ կը հաւատայ թէ պոետի ընթացքին իր տեսածները պիտի բաւեն իրեն ապրող գործ մը ստեղծելու, առանց այն ահաւոր պատրաստութեան alchimieին, որով այդ նախանիւթերը կը փոխակերպուին: Ի՞նչ է ի վերջոյ յատակը վերի քերթուածին: — Անշուշտ տղայամիտ չէք, Թէրզեանին չափ, գոհանալու՝ անհունութեան մէջ օդիզէն թէկուզ երջանկութեան պալատներու ճարտարապետութեամբ մը: Հետեւաբար, նպատակին հիմնական վրիպանքէն վերջ պիտի աշխատիք այդ գոհացումը փնտռել, ճարիւղ դեպի հոն հանող ուրիշ վիճակներով: Կուգամ ուրիշն ձերն քննութեան:

1-2 տողերը, կարծիքի մը փաստովը, զիս կը ձգեն անտարբեր: Քերթողներու հետ մենք շատ քիչ անգամ պիտի մտա-

ծինք կարծեկան (թող ներուի այս նորութիւնը) կարելիութիւն ներու։ Ո՞ւր է որ այդ բանաստեղծը կը կարծէ որ զինքը մինակ կը դատէ իր սիրականը։ Այսինքն՝ ո՞ւր կը թաւալին քերթուածին պարագայական (տեղ, ժամանակ, եղանակ եւայլն) հանդամանքները։ Նոյնիսկ երկինքին խորունկ ալքերուն համար երբ Պետրոս Դուրեան սանդուխներ կը դնէ, հպատակ է մեր սա պահանջին։ Ուրեմն, բանաստեղծը ծովափ մըն է։ Եթէ դուք այդ ծովափին ամայքը կը հանդուրժէք, բարով վայելէք զայն։ Ինծի համար ամէն մէկ բառ պարտքին տակն է ինքզինքը անհրաժեշտ ընծայելու։ Վերցուցէք ամային, ծովափը կը մնայ ծովափ։ Ուրեմն այդ ածականին ներկայութիւնը կը ձգէ զիս ոչ միայն անտարբեր, այլ կ'ընէ քիչիկ մըն ալ անտրամադիր։ Յետոյ, 2-4 տողերուն մէջ, քերթողական աղատութեամբ մը, թովմաս Թէրզեան զիս կը կանչէ անտառ։ Ձինք կրնար չհետեւիլ, բայց կ'ըսենք իրեն։ Ի՞նչ հարկ մեզ ծովափ կանչելու, երբ նոյն ակնթարթով պիտի հրաւիրէք անտառ։ Ի՞նչ ընելու, սակայն — Հոս է ահա ողբերգութիւնը։ Դուք պիտի իմանաք այդ պատուական քերթողէն որ այդ անտառին խորը սերեւներ, բոյներ, վսակներ կը կոճկոճին։ Բայց թող ներուի մեզ հարցնել թէ ի՞նչ է մեր գործը այդ տերեւներուն, բոյներուն, վտակներուն հետ։ Ատոնց գեղեցկութիւնը պիտի վայելինք։ Բայց կոճկոճինը անբաւական է թելադրելու որեւէ խորունկ ու լայն ապրում։ Մենք այդ բառերուն իմաստը իրեն չափ գիտենք։ Հատ հատ կրնանք Հայկազեան Բառարան գիտել, ատոնց բառարանային իմաստին հետ հաղորդ ըլլալու։ Ու քերթուած մը բառարան մը չէ։ Անցած են չորս տողեր։ Մենք չենք վարձատրուած ոչ մէկ իրաւ, խոր, չըսելու համար մեզի անծանօթ կամ քիչ ծանօթ յոյզերէ։ Եղածը չեղածը բառերու շարք մըն է։ Մի քանի թէ բոլոր քերթողները բառեր միայն ունին իրենց տրամադրութեան տակ։ Լա՛ւ։ Ահա ուրեմն ձեզի ուրիշ քառեակ մը։

Որքան ունիս դու ալի,
Ճակասս այնքան խոց ունի.
Որքան ունիս դու փրփուր,
Սիրսս այնքան խոց ունի բիւր։

(Պ. ԴՈՒՐԵԱՆ)

(ԼՃԱԿ)

Կիրարկեցէք նոյն եղանակը այս չորս տողերուն ալ վրայ։ Առաջինը իմ աչքիս կը փռէ վէրքեր, երեսը ջուրին, սանկ քիչ մը հեռուէն տեսնուած։ Անշուշտ արտաքին աշխարհի ամէն շահա-

գործում մեղի վտանգ մը կը հեռազդէ։ Ով կ'ուզէ ըլլայ այդ շահագործումին հեղինակը, մենք նկարագրութիւնը կը նկատենք կասկածելի, ըսելիք չունեցող մարդու աճալարաբութիւն։ Բայց մեր գծագրանքը խոփոյն կը սանձուի, երբ երկրորդ տողը իր հաւոր մարդկայնութեամբ կը պառկի դարձեալ իմ աչքերուս։ Կը տեսնեմ քսանամենի պատանին որուն ճակտին վրայ վարդի տեղ ցաւին ակօսները կը բուսնին, այդքան վաղահաս, բայց անդիմադրելի։ Ու հակառակ հոետորական, ումանթիք չափազանցութեան, թիւէ ու չափէ, իմ միտքը կ'անցնի անդին այս սեղմումներէն, վասնզի կը հաւատամ թէ այդ տղան, այդ արեւնեւորուն թիւովը, եթէ ոչ աւելիովը մտաւորներ, ցաւեր էր սպարեցուցեր իր գծաբախտ ճակտին ետին։ Տուէք Պետրոս Դուրեանին գիտակցութեան (ըսել կ'ուզեմ գիտակցուած ապրումներուն) տասը տարի։ Դիէք այս թիւին իր ստորաբաժանումներէն ամէն մէկուն մէջ (օրերը ցաւ են մարդոց մէկ մասին համար) ինչ որ կեանքը կը բաշխէ իր զրկանքէն, տառապանքէն։ Աճեցուցէք այդ սեւ սերմերը այդ մատաղ ջղայնութեան կրակին ու արցունքին մէջը։ Ըրէք անօթի, ծարաւ, ըղձաւոր, յիմար, երանակոծ տղան, որուն միտքին ըլլան արձակուած բոլոր սահմանները։ Որ ինքզինքը զգայ կանչուած սա աշխարհէն առնելու, ուրիշներուն պէս ու չափ, իր բաժինը անոր բարիքներէն։ Որ երկարէ իր գութը այդ ապրումներու անձրեւին ու հոն ինկած հեղուկը երբ տանի բերանը, զգայ թէ արին էր ու արցունք, բախտին անողոք մատուցներէն հոն ճմլուածը։ Է՛, Կեանք է ասոր անունը։ Երբեմն մէկ հատիկ օրուան մէջ ես ունեցեր եմ Վոսթորը լեցնելու բաւող դառնութիւն, այդ փուռներն երբ դողի ու արցունքի մէջ սպասեր եմ մահուան, թուրքին կախաղանովը, սուրովը կախ իմ մտքիս առջև։ «Ի՞նչ եր իմ յանցանքը»։ Պետրոս Դուրեան այդ օրերէն հազարներ է գրած իր սրտին տունը։ Ահա թէ ինչու իր տողը ինծի չի թուիր չափազանցեալ։ Ընդհակառակը։ Դեռ միտքս ազատ է աւելիին խորհելու։ Քառասակին 3-4 տողերուն մէջ, մտածումը արդէն կ'արդարացնէ իմ ենթագրութիւնը։ Բանաստեղծը չէ գոհացած լիճին երեսի բերաւոր վէտերուն իրեն իր մտահոգութիւնները թելադրող պատկերով, զի իրականութիւնը աւելի ընդարձակ էր։ Ու երկրորդ երկեակին մէջ մեղի կը փոէ, միշտ աւելի սրտառուէ բայց ձեւին մէջ զրուիչ ուրիշ պատկերով մը։ — Ալիքին երեսին գուք համարած էք փրփուրները։ Ոչ տղայական, ոչ ալ ումանթիք չափազանցութիւն։ Անոր սիրտին խոցերը աւելի են քան գումարը այդ փրփուրները։

րուն: Ու մինք կը նուաճուինք, վասնզի մէկէն, այդ փրփուր-
ներուն ուղիովը կ'իջնենք սիրտին մէջը երիտասարդ, մահազիր
քերթողին: Ու նոր է որ պուտ մը մարդկային խելք, բայէ մը
գիտակից ապրում կը բաւեն լեցնելու ոչ միայն քանի մը կոն-
քերը լիճերուն, այլ նրբին ամբաւութիւնը: Արձակեցէք ձեր
միտքէն սլաք մը դէպի խորունկները երկնակամարին: Թող այդ
սլաքը ինքզինքը վերածէ իր լարերուն, ամէն մէկ աստղի մէ-
ջէն անցնող իրը կախարդական առանցքներ, լեցնէ այդ աստ-
ղերուն առասպելական գունդերը, անցնի աւելի անդին, ողողէ
տարածութիւնները, անջրպետները իր իսկ իսկուքեամբը: Ա-
սիկա ոչ միայն կարելի, այլև միակ իրաւ սիտփանքն է մարդ
կենդանիին, ինչպէս կը տեսնէք: Տասը տողերու պզտիկ բանտը
ի՞նչ տիեզերք է երբեմն: Մի քանի թէ մեծ բանաստեղծի մը
չուքին մէջ անարդար բան է հանդիպող տաղաչափը խաչը հա-
նել: Թովմաս Թէրզեան մեծ բանաստեղծ է այդ օրերուն, ա-
ւելի վարկաւոր քան Սկիւտարի դժբախտ սոխակը: Ու իբր այդ՝
պարտքին տակն է մեզի թելադրելու առնուաղն լուրջ ապրում-
ներ: Արդ, կը հարցնեմ ձեզի որ այս տողերը կը կարդաք. ո՞ր
է անկարելին, քերթողականը՝ ծովափէ մը անտառ թոչեւու,
երեւակայութեան թեքը երբ մեզ կ'առնեն կը տանին: Ուրի՞շ
բան է ըսածը Թովմաս Թէրզեանին:

Կ'անցնիմ երկրորդ քառեակին: 5-6 տողերուն մէջ աստղ
մը: Չ'ուռնաք ասիկա: Որ մեր գիտցածէն պիտի տարբերի իր
չիլ կրնալովը, անշուշտ աստղարաշխական ընթերցումի մը ար-
ձագանգ՝ անոր մտքին մէջ, քան թէ քերթուածէն թելադրելի
իրողութիւն: 7-8 տողերը մեզ կը տանին դաշտ, խօսելու ծա-
ղիկի մը: Ուրեմն երկու հիմնատարը, արտաքին աշխարհէ: Իրն
ըլլան այդ աստղը, այդ ծաղիկը երբ անոնք քերթողին հոգե-
կան ապրումներէն ոչինչ ունին ինծի յայտնելիք: Հարկ կ'ա՞յ
խորացնելու վերլուծումը ու այդ բառերէն պահանջելու իրենց
վկայականները թէ ո՞ր իրաւունքով եկեր են խառնուելու Մէյ-
ն-Բլէն հոգեվիճակին: Մնաց որ ոչ մէկ փոխաբերական գրգիռ,
ոչ մէկ ձայնական շնորհ կը պաշտպանեն այդ մերկութիւնը:
Ու կարճ ըլլալու համար կ'ըսեմ. մենք չենք կրնար երեւակայել
մէկը որ ըլլայ անկարող այդ աստղը, այդ խոտը, այդ ծաղիկը
այդպէս քով քովի բերելու, քանի որ ատկէ դուրս ուրիշ ոչ մէկ
գործողութիւն է Թէրզեանէն կատարուածը:

Երրորդ քառեակին նորէն ծովափ, ալիքներուն վրայ հե-
ծած մտքով: Հոս ներքին մտիկները պահ մը կը թուին միջա-

մտել, բայց կ'իյնան թևաբեկ, քերթողին մտածումին նման։ Անցած են տասներկու տողեր ու մեր դառնացումը տակաւ կը վերածուի զայրոյթի։ Կա՞յ ուրիշ որակում մը նման անփուշ թուխիւնները դատելու, եթէ ոչ խորունկ արհամարհանք այս մարդուն՝ հանդէպ իր ընթերցողին։

Չորրորդ քառեակին մէջ մենք պիտի իմանանք որ անբիծ ստուեր մը (օ՜, բծաւոր, աղտոտ ստուերը) բոլոր այդ վսեմ աւրաքներու ընթացքին կ'ուղեկցի քերթողին։ Այս վիճակն ալ զերծ է տղայական երանգէն որ խակ ուսմանթիզմին մէջ այնքան իրաւ է սակայն։ Ու հինգերորդ քառեակը մեղի պիտի պատմէ, վերջապէս, թէ ինչու գրուած է քերթուածը։ Ձեռք կրկներ մանկամտութեան, չըսելու համար ծանծաղամտութեան սա փաստերը դատապարտող իմ առարկութիւնները։ Մարդիկ պալատներ շինելու համար երկինքները լի՞նչ գործ ունին։ Թէև, միւս կողմէն, բանաստեղծը ճամբայ մըն ալ ցոյց է տուած այդ երկինքները առաջնորդող։

Ամբողջ քերթուածին մէջ ոչ մէկ բանաստեղծական հարազատ ապրում։ Կ'ուղէ՞ք փաստ այդ ապրումներէն։ Նորէն կը դիմեմ Դուրեանին։

Ձեռքս արաւ կուրծքին. հոն
Սիրոյ երկինք մ'որոտար։
Թօցնեցայ զիրկն ես իբրեւ
Համբոյր մ'անհուն, դալկահար։

(Պ. ԴՈՒՐԵԱՆ)

(ՆԵՐԱ ՇԵՏ)

Չորս էջ չի բաւեր չորս այս տողերուն ինծի թելադրած տպւումներուն գումարը բովանդակելու։ Գործադրեցէք թափանցումի եղանակը, քիչ վերը փորձուած՝ Լճակի քառեակին վրայ ու դուք կ'ունենաք այդ գումարը։ Թէրգեանի քերթուածին մէջ խոտը, ծաղիկը, աստղը, ալիքը, պալատը կը նմանին չորցած, կոնծած հունտերու։ Ոչ մէկ շունչ անոնց մէջէն պիտի կրնար ծիլ մը կեանք շարժումի հանել։

Ամբողջ քերթուածին մէջ ձեւական ոչ մէկ գեղեցկութիւն։ Բացէք դալկահար համբոյր որպէսզի տեսնէք հազէն բղքտուած ճեղք ճեղք եղած շրթներուն կապտորակ, դալուկ իսկ ըլլալու անկարող շրթունքներուն ահաւոր իրականութիւնը։ Ի՞նչ ամօթ, բեռ են, եղան անոնք անոր պատանիի բերանին երբ համբոյրի հեծքին տեղ արիւն փոխադրեցին երբեմն խոտին, երբեմն թաշկինակին, երբեմն ալեակին, երբեմն գերեզմանի մը մարմարին

վրայ, հազի մը հետ կամ անկէ վերջ, ու ըլլալու տեղ կեանքին գերադոյն թաւշութիւնը, թովչութիւնը, գինովութիւնը, ուրիշի մը սիրտին մէջ մեղմէ աղբերացող, եղան մեղմէ փախչող կրակին, կեանքին, համին, երիտասարդութեան աղն ու արցունքը: Այդ շրթներուն համար դալկանաւ որքան տեղին է անշուշտ բայց որքան ալ քիչ: Բանաստեղծ մը բանաստեղծ է նոյնիսկ իր փշրանքներուն մէջ: Հապա րօքնի՛լը: Համբոյրը որ կը թուամի: Կրցա՞ք խելամտիլ թէ ինչ կը նշանակէ ձեւական գեղեցկութիւն: Թէրգեանին քսան տողերը ահաւոր, քար լռութեամբ մը կը մնան զուրկ այդ կարգի ամէն նշմարանքէ:

Ամբողջ քերթուածին մէջ ոչ մէկ յուզման տարր: Կը կարգանք ու կ'անցնինք, հանդարտ: Հեռու, օտար, չհաւատալով բանաստեղծին որ իր կարգին չի կրնար հաւատալ երկինքներու մէջ կառուցուելիք ապարանքներուն ու ասոնց ներսը այդ «անբիծ» ստուերին հետ գլուխ գլխի ապրումներուն մարդկային իրականութեան:

Ամբողջ քերթուածին մէջ ոչ մէկ զգայութիւն: Ոչ մէկ ըզզացում. Ոչ մէկ մտածման կայծ: Ոչ մէկ իրական քրքիռ: Ոչ մէկ սարսուռ: Այն ատեն, ինչո՞ւ գրուած են այդ քսան տողերը: Պարզ է պատասխանը: Այդ քսան տողերը գրուեցան դժբախտ ապահովութեամբ մէկու մը որ վանկերը համբել գիտէ ու յանգեր կրնայ յարմարցնել:

Ինչպէս կը տեսնուի, վերլուծման այս եղանակն ալ ուրիշ տեղ չտարաւ զիս եթէ ոչ մէկ ու հիմնական նկատումին, — տաղաչափութեան:

Արդ, փորձեցէք այս եղանակը Թովմաս Թէրգեանէ ստորագրուած որեւէ քերթուածի վրայ: Կրնայ պատահիլ որ քսան երեսուն տողերէ վերջ, սող մը ինքզինքը պարտադրէ ձեզի, վերը աչքէ անցած քանի մը նախապայմաններէն բարերարուած: Կ'ընդունիմ այս վկայութիւնն ալ: Բայց վճռաբար կը յայտարարեմ որ չի կրնար պատահիլ հակառակը, այսինքն հսկողի պոմը բերքուածի մը որ քալէր, իր թափը առնելէ վերջ, զէպի իր ճակատագիրը, ըլլալու համար մեր օրերուն ալ արժեք մը կազմող վկայութիւն մը: Որքան ալ դառն ըլլայ այս հաւաստումը, չի դադրիր իրական ըլլալէ: Փորձը ընելը ձեզի: Ես աւարտեցի այս մարդուն հետ խառնումը, սաղանգի, մտայնութեանց էական հարցերուն ոչ թէ լուծումը, այլ այս հարցերուն իսկ զգայութիւնը, միշտ մեզի մնացած փաստերէն առանջնորդուած: Կը մնայ վերադառնալ ուրիշ կարելիութեան: Այսինքն

Թերզեանը տեսնել իր ժամանակին մեջ: Բայց անոր զգայնութիւնը դարով մը չի բաժնուիր մերինէն: 1900ի ապրումները այսօրուան ապրումներ են տակաւին մեզմէ շատերուն համար: Յետոյ, վա՛յ այն բանաստեղծին որ իր ժամանակը միայն կ'ապրի:

Թէրզեանը կը դաւանին իրրե ներդաշնակ, դասական, քըն-քուշ տաղերու, տողերու virtuose մը: Հոս ալ կը բաժնուիմ հասարակաց հիացումէն: Թէրզեանի լեզուն պահեց Ալիշանի որձևէդ բարբառին բոլոր թացիկութիւնները: Յարեցաւ այդ ոճը գրաբարեաններուն աղմուկին: Չունինք իրմէ որեւէ քերթուած ուր Սիպիլի մը (1870) աշխարհաբարը գոնէ ըլլար յարգուած: Արշակ Զօպանեան, Գրիգոր Զօհրապ, Եղիշէ վարդապետ Դուրեանն ալ սպասարկած էին այդ բարբառին: Բայց ինչ բնականութեամբ թօթուեցին լեզուական անոտիքը ու գրեցին իրենց պայծառ աշխարհաբարը: Թէրզեան 1900էն վերջն ալ ունի անտանելի խառնուրդը գրաբար – աշխարհաբար ոճին որուն զուխ – գործոցը Գարագաշի թարգմանած Նոբ Կոստաւնէն էր, իննսունական թուականներուն:

Պիտի կրկնեմ փորձը Սէթեանին ալ վրայ:

ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

- (1) Մարդիկներէն հեռացած,
 Խաղաղիկ նեմելով,
 Դիւեր մըն եր գեղապանծ
 Երբայիմք դեպի ծով,
 Որուն խորին է յասակ
- (6) Դեղեցիկ լուսնին տակ:
- (7) Յիւստ արգետ, Հեփսիւրէ,
 Ինչ պայծառ եր երկիմք,
 Որուն նշուք արծաթէ
 Դգուէր բու խոսողիք,
 Երբ ծովափանց մօտեցանք
- (12) Դեղեցիկ լուսնին տակ:
- (13) Չեմ գիտեր քե բու բագով
 Կուրծքիս մօտ հանգչելով,
 Ի՛նչ քելերու յեղեղով
 Դիպեցաւ արքիս բով.
- (18) Զի աս ժամայն լիքն հրնուանք
 Ըզգացի լուսնին տակ:

- (19) Ի՞նչ անոյշ եր այն ժրպիս,
 որ շրքանցւոյ վրայէն
 Տարածուելով հեղափրքիք,
 Սփռեր վեհ լոյս մ'անդին.
 Կարծեցի ես մի հրէհեսակ
- (24) Տեսնել հոն լուսնին տակ:
- (25) Զե՞ որ շրքունք սիրալոյզ,
 երբ փայլին բու աչեր
 Տարածելով սէր եւ լոյս,
 Մըմնջեն աղօթքներ.
 Այսպէս եղաւ, իմ տառակ,
- (30) Դեղեցիկ լուսնին տակ:
- (31) Բառեր ի զուր խնդրէի
 Քու սրբիւ ուղղելու.
 Ի զուր, շրքոք, եղկելի,
 Զանայի խօսելու.
 Լըռին եւ մունջ շրջեցանք
- (36) Դեղեցիկ լուսնին տակ:
- (37) Եւ մինչ երկիր եւ կամար
 Ժրպէսին երկինքին,
 Զերդ զոյգ ասեղք սիրահար
 Որ անխօս փայլիւրիւն,
 Հոգւով եր որ խօսեցանք
- (42) Դեղեցիկ լուսնին տակ:

(Յ. ՍԵՅԵԱՆ)

(ԳՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ)

Այս արտագրումը կատարած եմ Սէթեանի անդրանիկ տա-
 ղարանէն այն զլխաւոր պատճառով որ Յովհաննէս Սէթեան ան-
 խառն քնարականութենէ աւելի փառասիրութիւն մը չունի հե-
 տապնդած: Ու մենք մեր պատանութեան, շատ շատ երիտա-
 սարգութեան է որ ամենէն աւելի մօտ կը գտնուինք այդ վի-
 ճակին ու զայն նուաճելու մէջ ալ օժտուած կ'ըլլանք որոշ
 միամտութեամբ, լաւատեսութեամբ: Կեանքին (որ երբ կը զըր-
 ուի երկայնքով, ինչպէս է պարագան Սէթեանին) հարուածները
 մեզ չեն կործաներ ու ծիծաղելի չենք երբ քսանամենի աղջիկ
 մը առած ծովափ կ'իջնանք: Մնաց որ, ինչպէս գիտեի առիւ վե-
 րերը, Սէթեանի անդրանիկ հատորը, խառնուածքէն իւր յայտա-
 րար, շատ աւելի մեծ ու համոզիչ փաստեր է արձանագրած

քան այն միւսները որոնք տարիքին հետ կը թուին թանձրանալ: Ընտրուած կտորը, միւս կողմէն, կը ցուցնէ Սէթեանի բոլոր ակորթակները, որոնք պարզ էին, սիրայով, նկարագեղ կայքերէ խանդավառուող, քիչիկ մը տրտմութեան, չըսելու համար արցունքի համար ալ փոյթ պարզող: Ըսի թէ ապրեր էր իր գլխուն, իր ժողովուրդի մեծ տաղնապններուն մէջ անշուշտ, բայց անոնցմէ ինքզինքը հեռու պահելու չեմ ըսեր նուազ, բայց բաւական ալ ճարտար զիտութեամբ մը իր անձը պաշտպանելով: Իր Կահիրէն չի նմանիր Իրապաշտներու Եւրոպային: 1896ը 1870էն քառորդ դարով մը զուր տեղը չէ որ բաժնուած է: Սէթեան Լուսնէն Կալ քերթուածին մարդն է, նոյնիսկ Տաւադէն Քաւրէին մէջ ալ:

Այս ծանօթութիւնները կարեւոր են քերթուածին ոչ թէ անշուշտ ըմբռնումին, այլ այդ 42 տողերուն հախի թրթռացող վիճակը տղայամտութենէ ազատագրելու իմ ջանքին համար: Քառսուն երկու տո՞ղ: Կատակ չէ սակայն: Ի՞նչ է ըսածը այդ տողերուն: Ահա վերիվերոյ անոնց ըսածը.

1-6՝ — գիշեր մը, դէպի ծով:

7-12՝ — շող մը կը դգուէ աղջկան մազերը:

13-18՝ — աղջկան բազուկը կը դպի սրտին մօտ լարերու: Իր հրճուանքը ատկէ:

19-24՝ — աղջկան ժպիտը: Հրեշտակ մը:

25-30՝ — շրթունքին մրմունջը, աչքին փայլիլը:

31-36՝ — լուռ պոռոյտ:

37-42՝ — սիրահար աստղերու պէս հոգիով կը խօսին անոնք:

Հաւաքեցէք այս տարրերը: Դուք պիտի ունենաք երկու տող հազիւ լեցնելու բաւ հոգեմիւր: Մնացեալը: — Այն շատ տխուր փաստը զոր այդ օրերուն մարդիկ քնարերգութիւն կը յորջորջէին: Ձեմ դներ կասկածի տակ Լուսնէն Կալ վերնագրուած վիճակին (ամէն քերթուած շատ մը բաներ ըլլալու հետ, է ամէն բանէ առաջ հոգեվիճակ մը, չմոռնաք ասիկա) վաւերականութիւնը: Ձեմ ալ լայնիւր վերլուծումը, ձեզի թելադրելու այդ կարգէ վիճակի մը հետ զուգորդ գգայութիւններու հանդէս մը: Ունիմ միակ առաքում մը, դարձեալ Դուրեանին տաղարանին: Հոն դուք պիտի գտնէք Նեբա հեփ վերնագրուած, նոյն շրջավայրէն, նոյն հոգեբանութեամբ տրուած մերձաւոր վիճակ մը: Պ. Դուրեանն ալ ապրած է Սէթեանին անխառն քնարականութեան արշալոյսին: Ան ալ այդ պահերը վսեմացուցած է (մի խոր-

հիփ Ֆրէօյտին) իր պատանի հոգիին բոլոր ջերմութեամբը, խան-
դաղատանքովը, երկինքն ու երկիրը իրար խառնելով, աստ-
ղերը վկայ բռնելով իրենց ուխտին, երդումին: Բա՛յց: Ու այս
բայցը հոս կը կտրէ սահման մը ընդմէջ բանասեղծութեան և
անբանասեղծութեան: Հիմա չունիմ ատեն Դուրեան վերլուծե-
լու: Կը գիշիմ ձեր դատապարտութեան Ներսէֆին մանկական
ռոմանթիզմը, բայց կը պաշտպանեմ բոլոր ժամանակներու կա-
րելի բոլոր դատափետուքներուն դէմ քերթուածին հզօր հաղոր-
դականութիւնը, զրեթէ ճշմարտութիւնը որ միս մինակը կը հա-
կակոչէ տղայութիւնները: Ու կը դառնամ Աէթեանի քերթուա-
ծին, այս անգամ փնտռելու համար կարելի գեղեցկութիւններ,
յոյզեր, սարսուռներ, ապրումներ, զգայութիւններ, զգացում-
ներ որոնք լուսնին տակ դէպի ծովափ իջնող զոյգի մը հոգե-
պահերը կը յօրինեն: Հոս Պոլիսը շատ շատ տեղական տարրեր
պիտի նետէ, այդ հոգեպահերը մասնաւորօրէ՛ Էսկանը՝ քեր-
թուածին մէջ՝ կեանքին, իրաւ, հարազատ կեանքին զարկն է
մեզի համար:

Առաջին վեցեակին առաջին երկեակը՝ աւելորդ: Զիս եր-
բօք չի շահագրգռեր այդ զոյգին «մադրիկներէն հեռանալու»
վսե՛մ առաջադրութիւնը: Մի քանի ինծի ինչ որ զիս պիտի
ձգէր անտարբեր: Բայց մի անարգէք զիս երբ ձեր գնացքը չէք
տար պատշաճ լրջութեամբ: ձեմելը ինծի կը յիշեցնէ դժբախտ
նեմականները, առաւել՝ այդ բառին հանդէպ գործադրուած ա-
հաւոր զեղծումը, այդ թուականներուն: Քալիլը սովորականն
էր, պարզն էր, ամենուն էր: ձեմելը՝ քերթողներուն: Բարով
վայլեն այդ բառերը: Երրորդ տողին զեղալանքը սուտուփուտ
ածական մըն է: Գիշերի մը կոնակը դրէք այդ որակականը ու
կանչեցէք ձեր զգայութիւնները: Ե՛րբ է գիշեր մը գեղապանծ:
Ինծի չէ տրուած այդ գիծէ զգայութիւններու երջանկութիւնը:
Հսկայ հրդեհներու, հրաբխային ժայթքումներու հանդիսատես,
ես մտքէս չանցուցի այդ դարհուրանքին մէջ գեղեցկութիւն,
պարծանք փնտռել: Իմ գտածը ահաւոր բան էր: Իսկ Պոլսոյ
մէջ գիշեր: Ո՞վ չունի: Բոլոր գիշերներուն պարզութեամբ,
բնականութեամբ: Լուսին մը, պղտոր միգամած մը, սանկ խուլ
ծով մը վերին ուր աստղերը ուզէին ալիքներ բլլալ ու չկարե-
նային: Զուրերը, մութը որ անտառն էր, դաշան էր, տունե-
րուն կառույցն էր: Գեղապա՞նծ: Երբեք: Մի գրէք բան մը զոր
չէք կրնար արդարացնել: 3-4-5-6 տողերը դարձեալ անհրաւ-
թելտ չեն: Յերեկը ձեզի տրուա՞ծ է տեսնել ծովին յասկը որ-

պէսզի տեսնէք զայն խորին, զիշերը լուսնին տակ, Ի՞նչ է մնացածը այս ամենէն, որ զիմանար, կամ բերէր ձեզի ձեր ընթերցումին զիջումը, ընէր ձեզի համար եթէ ոչ վայելք, առնուազն անտարբերութիւն: Հոս դուք կը տառապիք սա անլըրջութեան համար, ամենէն առաջ բանաստեղծին հաշտոյն:

Երկրորդ վեցեակին մէջ Հեփսիլեի հնչադեղ ոգումը գեղեցիկ սկիզբ մըն է: (Խօսեցայ Սէթեանին կոյսերէն): Տարաշխարհիկ, նոր, թեւագրիչ: Օ՛ն անդր: Գրեթէ մոռցած ենք առաջին վեցեակին ձախորդ տպաւորութիւնը: Նոր յոյսեր: Բայց վայ մեզի, անբախտներուն: Նորէն ստիպուած ենք «պայծառ երկինք» մարտիլու: Յետո՞յ: Արծաթէ նշոյլ մը որ պիտի «զգուէ» Հէփտիւրէին խոպոպները: Անցան վեց տողերը, մեզի տալիք ոչինչ ունենալով: Սէթեան քսան բառ է զործածած որպէսզի լուսնի շող մը աղջկան մը մազերուն ձգէ: Անոնք որ մեր Ռուս մանթիքները աղայական կը յայտարարեն, հաւանաբար իրենց ուժը կ'առնեն այս գիծէ նրբութիւններէ: Ուժով, խորունկ, կատաղի ումանթիզմը Դուրեանին այս նուաղ կոտ դալկացումներուն մօտ իրաւ որ անհասկնալի պատահար մըն էր երբ Դուրեան ողջ էր:

Երրորդ վեցեակին միակ հաստատ տարրը քերթողին կուրծքին վրայ ծանրացող բազուկն է Հէփտիւրէին: Պիտի ըլլայի զիջող՝ պատահարին մարդկայնութեան եթէ երբեք զիս ասկէ չարգիլէին «յեղիլովուկ քելեր» որոնք «սրտին քոյն» են, այդ բազուկին տակ լեզու ելլելու: Ահա թէ ինչ կը նշանակէ բանաստեղծութիւն: Ինծի չէ տրուած բախտը բազուկին որով լարերը կհանքի կանչէի: Ձեզի՞: Ձեմ գիտեր: Բանաստեղծը որքան աղայ է իր «վեհ հրնուանքովը», որ ծնունդ է այդ յեղյեղուկ թելերուն: Իրաւ որ երանելի օրեր ըլլալու էին այդ հօթանասնական թուականները ուր երիտասարդներ այս մանկամտութեամբ քերթող կը դառնային:

Չորրորդ վեցեակին նիւթն էր աղջկան ժպիսը: Ձեմ նրբանար լուսնին տակ ժպիսը դժուար եթէ ոչ անկարելի յայտարարելու աստիճան: Բայց կը տառապիմ անուշեմ որ ձրի բառ մըն է (չեմ գիտեր կա՞յ ժպիտին թթուէն): Բայց կը տառապիմ մանաւանդ այդ ժպիտին հեղափոխութիւն (հետունահանող) տարածուելէն ու «վեհ լոյսի» փոխուելէն, որպէսզի այդ միզամածային վառարանէն հրեշտակ մը ծնի: Դիչ անգամ մեր քնարերգութեան մէջ սա միամտութիւնը պիտի գտնենք այոքան մերկ, «յանցանքի վրայ», ինչպէս կ'ըսեն: Յովհաննէս Սէթեան, ծնած

1858ին, այս քերթուածին ծնունդին վար էր երեսունէն: Լուսնին տակ Հէփալուրէին հետ խօսելիք ունէր անշուշտ: Ի՞նչ հարկ սակայն վայրկեանին վսեմութիւնը նստեցնելու: Անրկա կերպը կը կարծէ զտաժ ըլլալ այդ դժուարութենէն ինքզինքը ազատելու, հրեշտակի վերածելով կուշտի աղջիկը: Մեզի կը մնայ տրտմօրէն լսել այս աճալարութեան առջև:

Հինգերորդ վեցեակը վերլուծելի չէ, անոր համար որ բանաստեղծը ինք մեզմէ առաջ կը լուծէ տագնապը իր լուսթեան «այսպէս եղաւ» վսեմ հաստատականով մը: Վեցերորդին մէջ մենք խկապէս կ'արդահատինք այդ աղուն որ ծովափին ամայութեան մէջ, լուսնին ճաշիկ թափելու կը փնտռէ՝ աղջկան մը ուրտին ուղղելու: Իր խօսքերը որոնք չեն կրնար ըլլալ: Խեղճ, շփոթ, եղկելի: Ինձմէ աւելի անգութ մը թերես պիտի նետէր սա տողերուն վրայ ժողովուրդին բառը որ նման վիճակները կը պատկերէ: Բանաստեղծը իր Հէփալուրէին հետ «լուռ ու մունջ» լուսնին տակ պտըտցնելու զրկելով հանդերձ, ես ինծի կը լըրջանամ ու առանց ճշոր, շփոթ, եղկելի» բառերու կը ջանամ հասկնալ այդ կորագիր, ոչ անշուշտ մեր օրերու զգայապաշտ արձակութիւններուն փաստը շահագործելով, այլ քիչիկ մը ըլլալով իսկ 1870ի պատանին որ աղջկան մը աչքին իյնալն իսկ (Պ. Դուրեան) երջանկութիւն կը դաւանէր: Անցած, հասած մարդու լրջութենէն անկախ ոգիով մը երբ դատեմ այս վսեմացեալ պահը, իմ փաստերը ես չեմ առնիր Սէթեանէն, ալ երիտասարդէն: Այլ՝ այդ կորանքը խորհուրդի, խորհրդանշանի հանող պայմաններէն: Անշուշտ սա զոյգին մատները ունէին դեր մը: Սա զոյգին սիրտերը ունէին ձայն մը: Սա զոյգին շըրթները ունէին ծարաւ մը: Մէկը Պոլսեցի քնարակիր մը: Միւսը դրացիին աղջիկը հաւանարար, իր տարերկրեայ պատմութեանը (Հէփալուրէ) թագուհիի մը պէս նետած ուսերուն: Շրջեցէք պատկերը: Մեր օրերուն: Անոնք պիտի ըսեն ինչ որ անբանաստեղծ բնագոյնները կ'ըսեն նման պահերու:

Ու վերջացնելու համար չեմ առնիր նկատի «կամար»ը, «երկիր»ը, «երկինք»ը, որպէսզի տեսնեմ սա զոյգին «սիրահար աստղանալը»: Նման գոյափոխումներ անկարելի չեն քմայքներու աշխարհին մէջ: Ֆանթազիա կը փոխաբերէ քմայքն ու բանաստեղծութիւնը: «Հոգիով պիտի խօսի» այս զոյգը լուսնին տակ: Ի՞նչ: Իրենց հարցուցէք:

Յովհաննէս Սէթեան, նոյնիսկ այն պարագային երբ ըլլար օժտուած արտայայտութեան հզօրագոյն տուրքերով, պիտի մնար

դժնդակ դժուարութեան մը մէջ սա վիճակը տղայականէն փրկելու, վասնզի իր ողբերգութիւնը անդիտանալն էր այդ տղայականին: Տեսէք ինչպէս այդ տղայականը կը փրկուի այս անգամ իրաւ բանաստեղծի մը գրչին տակ:

... Ու վերջապէս ան եկաւ
Այգիներէն քաղցրաբոյր՝
Ուր ողկոյզներն, ըսինքներու պէս լեցուն,
Հողին վրայ կը կախուին,
Մօր մը գրկէն, որ իր մազերը խաւրճաւ
Ամեն առտու, նանանչներու պէս, սանձեղ,
Շուշաններու պարտեզէն՝
Ուր արտիկներն Ամեղուրի՛ւնը կ'երգեն,
Ան վերջապէս ա՛լ եկաւ:

... Երբ ներս մըտաւ իմ շեմքս
Ձիւն կարապետն օձանապուկ վիզերնին
Կարկառեցին դեպ' անոր,
'Իհպ' մարմարէ իր ոսկերուն համբոյրին:
Եւ շունս հըլու, փորին վրայ սողալով,
Եկաւ լիզել կրունկներն անոր ադամանդ.
Ժպտիսներով աչքերը լի, վիթի պէս,
Ան ներս մըտաւ իմ շեմքս:

Տնակըս բոյո՞ւ վեցուեցաւ,
Ձի ծորիներն ծորեցան
Պատուհանին քլանցեցին,
Ձի արեւով օծուած ոսկի մազերէն
Թուրեան մեղրեւ ծորեցան.
Եւ բիբերէն՝ մարգրիտներու պէս փաղփուկ՝
Թափաբլիեցան ասուպներ.
Տնակըս լոյսո՞ւ վեցուեցաւ:

Անշուշտ: Այս քերթուածը Լուսին Դաւիթի հազիւ քառորդ դար ժամանակով մը: Մի քանի թէ Դանիէլ Վարուժան Դուրեանին պէս մեծ բանաստեղծ մըն է: Իրաւ բանաստեղծ: Ապահովաբար: Անիկա փոխանակ հոգւով խօսելու, կը չինէ «գրգարան»:

... Դարձան բոլոր վարդերը գոգ գոգ բերած՝
Յարգարեցի մեր անկողինն Հիմէնի.

Նունուֆարներն՝ որոնց ծղօսները կակուղ
 Յօսուպ սուրխս ներքեւ արիւն ծորեցին՝
 Մեր գլխունն քակ բարձ եղան,
 Ծաղիկներովն հոսին եւ ջինջ ջուրերուն,
 Ալուամազով քաքակներու դունչերուն
 Մեզ գրգարան թինեցի: . . .

(ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ)

(ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ)

Պէտք պիտի ըլլար արտագրել ամբողջ քերթուածը, միանգամ
 ընդմիջող լուծելու համար կրտսեր Ռոմանթիքները զարնող ող-
 ւերգութեան առեղծուածը: Մարդկային սիրտը շատ չի փոխուիր,
 մանաւանդ շուտ չի փոխուիր: Մնաց որ Դուրեանին քերթուածն
 ալ ժամանակակից կրնայ նկատուիլ Լաւեն Գալին:

Իր ամենէն տանելի մէկ քերթուածին մէջ Սէթեանի սա
 կորանքը, որ մերձեցումներով (Դուրեանն և Վարուժան) չունիմ
 նպատակ եղերական զգացումներու հանդէսի մը վերածելու:
 Բան մը միայն ստոյգ է ինծի: Արուեստը այն մարզն է ուր մի-
 ջակը, սովորականը, տկարը չեն արտօնուած մուտք ունենա-
 լու: Արուեստը դարձեալ այն մարզն է ուր անսովորը, անմարդ-
 կայինը, ֆանթասթիքը լաւ կ'ընեն չմոլորելով: Ան որ արուեստ
 տին կը պատկանի, ինքն է ամենէն առաջ, բայց ինքն մը որ
 առանց ձևի, դժուարութեան կը նոյնանայ ձեզի, մեզի հետ:
 Կրտսեր Ռոմանթիքներուն գերագոյն դժբախտութիւնը մարդկա-
 յինէն վեր կամ վար մնալու ճակատագիր մըն է: Անոնք կը հա-
 ւատային թէ իրենց լեզուական, ձայնական շնորհները կը բա-
 ւէին իրենց արկածախնդրութեան:

Ահա ձեզի գերագոյն փաստը այդ փափկահունչ նուազում-
 ներէն: Ատիկա կ'առնեմ Առաջին Գերեմիին երիտասարդ տաղաչա-
 րին հանրածանօթ մէկ փառքէն:

ԱՌ ԼՈՒՍԻՆ

Լո՛ւսին, դու անոյ խորհրդալոյս,
 Նիւփա՛յդ երկնից ամօրեամ,
 Մելամալձիկ նակասքո՛ կոյս
 Անպէայ շղարշիւ սփռած,

Եւ քո աչաց մի հեզիկ բոց
 Կ'իյնայ յանկարծ ի խաւար
 Ուր զիմ յուշոց եւ երազոց
 Դիտեմ զքիւր զհեռանկար,

Սիրող սսուերց՝ ժամուց լըռիկ,
 Ոսկի մագերդ ցիր եւ ցան,
 Երկնից դաշտաց մեջ երբ մեծիկ
 Մոլորաբայլ կու գաս ման,

Առ քեզ ի վեր զարտաւազիմ
 Հանեմ զաչկունս իմ խոհուն,
 Եւ քսմանոյս յերես քոյին
 Պիտ՝ հարցանեմ, ո՞վ ես դուն:

Արդեօք իրա՞ն Անահիտն էս,
Համեսուքեան դիցունի,
Որ գողանալ լոյսն կ'ուզես
Զքնալ հրապոյրիդ սարփելի:

Երբեք դեխո՞յ մ'ես դու այրի,
Որ՝ ի գիշեր սեւասօղ՝
Յերկնից ի ծագ ինչ ամալի
Խնդրես շիրիմ մի ի դող:

Կամ արեւու դո՞ւստն էս բամբիւ
Հրագես ասղի մ' սիրահար,
Եւ ա՞յնր ի խոյզ նազիս շրջիս
Սրտսրով ի քափառ:

Ու այսպէս տակաւին չորս քառեակներ պիտի գործածուին որպէսզի այդ լուսինը նկատուի ա) սիրահարներու ուխտերուն աւանդառու, բ) յոյսի փարոս, գ) էին մէկ խոնր, զ) աչքը անհուն սիրոյն: Յետոյ

Ո՛հ, ո՛ եւ ոք, զի՛նչ եւ իցես,
Լուսնա՛կ, ասղի՛կ սիրադեմ,
Դու Արարչին մի մեծ գործն էս,
Խորհրդաւոր եւ վրսեմ:

Կամ մի ոգի՞ր էս դու զըքած
Յայդ կերպարան լուսանիւք,
Որ յայց կ'ելնես լեռալ շիրմաց
Եւ հիւզեկին ցած ու մութ,

Մի ցող կաքել ի սեաւ անդր հող
Զոր մահացուաց աչք մոռնան,
Եւ սպրդել մի քաղցրիկ շող
Հիփն յանձպիտն օրեվան:

Թե խանդից շահ ելոյց ըզեզ
Ասուծոյ մասն անդ յերեր,
Զի հերթողին ըզհուր վառես,
Հանես զոգին իւր ի վեր:

Խցկիս խորեն, սրսիս խորեն
Կ'օրհնեմ ըզեզ, ո՛վ լուսնակ.
Առ եեզ ի վեր ձօն կը հանեմ
Հոգւոյս արցունքն՝ հառաչանք:

Թե դու չեիր, քանի՛ սրխուր
Լիներ աշխարհ, ո՞ւր գիշեր
Զիւր հրապոյրս, զիւր խորհուրդս ո՞ւր
Պուրակն, երա՛զ զքնէր Սեր:

Խոնից լապտեր՝ միտք քափառկոտ,
Անյուսուքիւն՝ զիւր բեւեռ,
Յող սփովիչ՝ աչքն արցունքոտ,
Մանուկն Ասուած ո՞ւր զքնէր:

Եւ զուրկ շողեդ քե մնայր շիրիմ,
Մեռելոց ո՞ր արեւակ.
Զի տիւ ցուրտ է ոգեաց նոցին,
Քե՛զ կը սիրեն, ո՛վ լուսնակ:

Յանհունութեան ի դաշտս անբաւ՝
Խորին խորհուրդ մ' Արարչին
Ըզեզ երկրի ընկեր տուաւ.
Փայլե՛, լըցո՛ գբաշխ փոյին:

Դժուար չէ ինծի համար մտնել հոգիին մէջ, իր շքեղ երիտա-
սարդութեան բոլոր փառքը զգեցող (քերթուածը զրուած է
1876ին, Պէրպէրեան ծնած է 1850ին) բանաստեղծին երբ քեր-
թուածին տակ իր ստորագրութիւնը գնելէ յետոյ կը յանձնէ
զայն . . . մամուլին: Այդ վիճակը յաղթանակին արբողանքն է:
Այդ օրերուն արեւմտահայ բանաստեղծութեան մէջ լուծ են
Պէշիկիշեանի, Դուրեանի վաւերական, սրտառու ձայները:
Արշալույսի մշուշին ետին՝ իր անտանկի ազօթ քներուն: Նորածագ
փառքերը Աթեանին, Թէրզեանին, Աճէմեանին, Ջերազին ու
Եղիային: Այսինքն՝ երջանը մեր բանաստեղծութեան ուր քնա-
յալ, խմբագրութիւնը, բան մը ըսելու մարմազը, լուսնեգութիւնը
կը կազմէին կարելի փառասիրութիւնը: Նախ-Պէշ տպած էր իր
Սոս-էր-Հայկաճը: Կայ ուրիշ աւելի նսեմ բախտը սկսնակնե-
րու: Կան հանդէսները, օրաթերթերը որոնք ոտանաւոր կ'ուզեն
ճարակել: Զարթոնքի Սերունդին մեծ աշխատանքները լրջա-
ցած՝ մօտ են ֆանգուսեան շրջանին: Կրտսեր Ռոմանթիքները կը
սիրապետեն ոչ միայն մեր բանաստեղծութեան այլև իրենց
հմայքին տակ կը ձգեն արծակն ալ, յանձին Պէրպէրեանի:

Այս ամենէն դուրս, վերի քերթուածը որ չափով հաւա-
տարիմ է շրջանին խորթականերուն, ցանկութեանց, իսկալնե-
րուն, գործածելու համար Պէրպէրեանէն իսկ նուիրականացած
օտար, գրեթէ անամէջ բառ մը: Ինքզինքը ամէն քառեակի
կրկնել պիտի նշանակէր Աս լուսն քերթուածը տուն առ տուն
վերլուծել: Կը գործածեմ համագրական եղանակը:

1-2-3-4 տուներուն մէջ, այսինքն 16 տող՝ դիմաւորա-
կան կոչ մը լուսինին (որ նիւթիայ մըն է ճակատը սքողած ու
կը սիրէ ստուերները, երկնքի դաշտերուն մէջ ման դալով: Բոց
մը անկէ կ'իյնայ մութին ուր կ'ապրի հեռանկարը բանաստեղ-
ծին երազներուն: Հարցում. ո՞վ է այդ լուսինը):

5-6-7-8-9 տուներուն մէջ՝ պատասխաններ իր հարցու-
մին. (Անահիտը, ալրի դշխոյ մը, արեւին բամբիւ աղջիկը որ
սիրահարուած կը վազէ աստղի մը ետեւէն, ոգի՞ մը որ այց է
եղած շիրիմի, հիւղակի):

10-11-12-13-14-15 տուներուն մէջ՝ շարունակութիւնը
հարց պատասխանին (Ջահ, որպէսզի բոցավառէ քերթողը, ա-
ւանդառու՝ սիրող սրտերու ուխտին, փարոս մը, Աստուծոյ
խոհը, անհունին աչքը):

16րդ տունը վճռական պատասխան մըն է՝ այս հարցումնե-
րուն. — լուսինը Արարչին մէկ մեծ գործն է:

17րդը՝ կրկնութիւն մուտքի բացադանչութեան :

18-19-20 տունները կը խօսին վիճակներէն որոնք լուսնին պակասովը պիտի գոյանային (գիշերը՝ առանց հրապուրի, պուրակը՝ առանց խորհուրդի, սէրը՝ առանց երազի կամ երազը՝ առանց սիրոյ : Միտքը՝ առանց լսպտերի, անյուսութիւնը՝ առանց բեւեռի, աչքը՝ առանց ցօղի սփոփանքին, մանուկը՝ առանց Առտուծոյ : Ո՞րն էր արեւը մեռելներուն, առանց միշտ այդ լուսինին, տիւր ցուրտ է մեռելներուն որոնք լուսինը կը սիրեն) :

21րդ տունը կը փակէ այս տարակուսանքը. — լուսինը ընկերն է երկրին :

Գաղափարներու սա համապատկերին մէջ Պէրպէրեանի քերթուածը իր շրջանին պատրանք մը կ'իրագործէ նախ իր նիւթովը, լրջօրէն լուսինը գէմ առնելով, անոր պատմելու համար վերը աչքէ անցած մտածումներն ու պատկերները : Գրեթէ լուսնակաճարակ համաճարակ մը ունի անցուցած մեր գրականութիւնը : Այդ վարակումին կեդրոնական թուականին կ'ընայ Պէրպէրեանի կառոյցը : Ունէ՞ր, այդ օրերուն, այդ ապուշ մոլորակը սա ձգողութիւնը մարդոց վրայ : Ստոյգն ան է որ լրջամիտ և զգօն Ալիշանէն մինչև անժառանգ Գամառ-Քաթիպաները ու մինչև հերետիկոս Ջրաքեանները սիրտ, չըսելու համար հեշտանք են դրած այդ սխալգործութեան մէջ : Իմ նիւթէս գուրս է սա լուսնեղբայրութիւնը վերածել իր եղբերուն : Պէրպէրեան առնուազն յիմարութիւնը չէ ըրած լուսնին շուրջը օպտուկ հիւսելու (գիմել Թէրպեանին, Աճէմեանին), սուս ոսկեգօծելու (գիմել Սիւպիլին, Չօպանեանին, Գամառ-Քաթիպային, Ալթեանին), խորհուրդ խալալու (գիմել Ջրաքեանին), հիւանդութիւն, տրամուրդիւն երազելու (գիմել Մալէգեանին), յիշելու համար քանի մը վճռական լուսնանուագներ : Բայց ի՞նչ է իր ըրածը : Հոս է որ կը ծագի դժուարութիւնը՝ քերթուածը եթէ ոչ ազատագրելու, գէթ զայն գրողին dignitéն, լրջութիւնը ծիծաղելիէն փրկելու : Պէրպէրեան հիւանդ մը չէ, յիմար մը չէ, գլուխ արգուկող մը չէ, մութ բաներէ համ առնող մը չէ : Այս ամէնը լաւ : Բայց ի՞նչ է խորին իրականութիւնը որուն սլաքներուն, թելադրանքին առկա անիկա գրեց այդ 84 տողերը : Գրական նորոգ : Շատ պիտի փոքրէր սա վերագրումը այդ ոսկեճամուկ երիտասարդին զգօն, յանգուզն, հաւատաւոր լրջութիւնը : Անիկա անշուշտ կարգացած էր ֆրանսացի ուսմանթիքները, որոնց ոտնաւորներուն մէջ երեքը դեխոն կանչուած էր շատ աւելի պատասխանատու վիճակներու վկայութեան : Անիկա գիտէր որ Շաթոպրիան

լուսնածաղը նկարագրելով մեծ գրագէտի տիտղոս էր վաստկեր... Յետոյ կային շիրիմները, անոնց տակ մեռելները, պուրակները որոնց թաւուտներուն ներսը սէրն ու երազը ճիւղ ճիւղի կը քնանան։ Կային հիւզերը, (Դուրեանի նշանաւոր քերթուածով իրենք զիրենք պարտադրող) սիրահարները, աղջիկները, բանաստեղծները, գիցարանութիւն և երկինք։ Բոլոր այս հաստատ տարրերուն վրայ լուսնի լոյսը անկարող՝ պատրանքին վարագոյրը հիւսելու և կախելու։ Ինչպէս կը տեսնէք, Պէրպէրեան բառերու հետ չ'աշխատիր միշտ։ Իր բառերը են նոյն ատեն կայուն իրողութիւններ, հանգէսներ։ Ինչ որ այսօր մեզի տարօրինակ կուգայ քիչ մը, ան ալ այդ կայուն իրողութիւններուն աղերսն է երբեք ոչ թէ այլի՝ այլ անկայուն այդ գշտոյին հետ։ Չմ գիտեր, այդ լուսինը ժամ մը հաց տարա՞ւ։

Հիփին յանժայիսն օրեվան.

Կամ ուէ բանաստեղծ (իրա՛ւը) այդ լուսինէն իրաւ տող մը ճարեօց իր սիրտին տաքնապանքը կրկնու, փոխադրելու ընդունակ։ Ռոմանթիք զեզումին նկարագիրը իր խոշորութիւնն է, մանրամասնութիւնը, գիծերէ համ չառնելը կամ զանոնք զանցնել։ Պէրպէրեան իրապաշտ, նկարիչ, հայրենասէր, պատմամուլ, օգային, սանկ ու նանկ բաներու վաճառորդ տաղաչափ մը չէ։ Համաձայն եմ։ Պէրպէրեան չէ կեցած լուսնին ճակ աղջիկներուն գեղեցկութիւնը երգելու։ Կ'ընդունիմ։ Պէրպէրեան չէ կեցուցած իր գնացքին մէջ այդ մոլորակը՝ անոր տալու համար անհուն սիրով իր ողջոյնները և պատմել փորձուելու անոր իր սրտին լուռ, մութ տաքնապանքը։ Դարձեալ կ'ընդունիմ։ Ինչ որ չեմ կրնար ընդունիլ, ատ ալ այդ քերթուածը ոտքի կեցնող ներշնչումն է, գէշ բառով մը։ Այս առարկութիւնը անկարող է սակայն կործանելու այդ քերթուածին քնքուշ ջերմութիւնը, դաշնաւորութիւնը, զուսպ յուզումները, քնարակաւին շատ մօտիկ ինքնաբերական հաղորդականութիւնը։ Այս յատկութիւնները զրական են դժբախտաբար։ Անոնք կրնան քերթուածի մը բախտը հիւսել, բայց չեն կրնար այդ քերթուածը ապրեցնել, վասնզի քերթուածը կ'ապրի այդ բոլորէն դուրս, տարբեր ուժերով։ Նուազ ներդաշնակ, նուազ տաք, նուազ հաղորդական է Լուսնին առաջ ժողովրդական երգը, բայց կ'ապրի գրեթէ անմահ։ Կ'ապրի վասնզի ժողովուրդի մը կեանքին ամենէն խորունկ զգայութիւնները կ'արտաբերէ ամենէն քիչ զարդարուն, ամենէն պարզ ճամբով։ Ու մեր ռոմանթիզմին մենք նոր չէ որ կ'ընենք քըն-

Մկրտիչ Աճէմեանէն մինք ունինք, ըսի անգամ մը, գրա-
բար գիւցաղներգութենէն զամ (Վահագն) Ժողով և արտասուք,
Աճէմեանի նախախաչիքը քերթողականին մէջ: Այդ երեք հա-
րիւր էջերու մօտեցող քերթուածաշարքէն, տպուած մեր գրա-
կանութեան հերոսական օրերուն (եօթնասնական թուական-
ները, նշանաւոր Յ. Պալեանի մեկնասութեամբ). 1908ի վերջ-
նական հատորը որ կը կրէ Թեման յագեւր ընդհանուր արտգոյրը,
հազիւ քանի մը հատերու մուտքն է արտօնած: Բան մը կ'ըսէ՞
այո խտտապահանջութիւնը: Ձեռք բաժնիւր լաւատես լուծում մը,
նոյն զեղջը կատարած է Ալթեան իր Արշալոյսէն Վերջալոյս (1912)
յորքերկնական հատորին կազմին համար, նետելով մէկգիւր կէսէն
աւելին իր քերթուածներուն, առանց կասկածելու որ կը գոր-
ծադրէր թերեւ իր գերագոյն հերոսութիւնը: Թէ՞ Աճէմեան, թէ՞
Ալթեան իրենց անդրանկութեան տարիները անիրաւարար ըն-

դոտնած են, վասնզի իրենց քերթուածները չըլլալով պարտա-
կան իրենց խորունկ էութիւններուն, դատապարտութեան տակն
էին բաւերով պատրուելու։ Այդ է պատճառը թերեւս որ մենք
այսօր որոշ անհանգստութեամբ մը, դառնութեամբ մը կարդանք
օրինակի մը համար՝ Տաւադէի քերթուածաւարքը, գրուած
1896էն վերջ, Սէթեանէն ու յստակ տառապանքով մը՝ Խաչիկ
Բաբայանի (գրուած 1906էն վերջ) Աճէմեանէն։ Այս ուսումնա-
սիրութեան ընթացքին ինծի տրուեցաւ առիթ Աճէմեանէն հիւ-
րէնկալելու մէկէ աւելի նմոյշ քերթուածներ։ Կ'ընեմ զիջումը
արտագրելով ուրիշ մը։

ՈՐՐ ԹՈՉՆԻԿԸ

Մեր Տանիքն բունիկդ առկալս
ձիւ նիւ երգես, բռնիկ անցեր,
Ու Բու լեզուով կ'ըսես ա'լս վա'լս.
Ձմեռն եկաւ՝ Բու ընկերներ
Թռան գացին հեռու երկիր,
Դուն մինակուկ հոս մնացիր։

Սիրքս լեցուած յիշեմ յանալս
Ան կտրինք որ գնաց ձեռքէ.
Ու Բեզի պէս կ'ընեմ ա'լս վա'լս.
Նրբոր Ասուած գարունդ զրկէ՝
Քու ընկերներ նորէն կուգան,
Բայց ա'լ չի գար իմ սիրական։

Նւ անձկութեամբ լի՝ աչ ու ձալս
Կը նայիս քէ կուգա՞մ արդեօք,
Ու Բու լեզուով կ'ըսես ա'լս վա'լս.
Թռչի՛կ, քեզիս որք եւ անոք,
Յուրսին փութին կը համբերես
Ձի դուն անյոյս չես ինծի պէս։

Շիրիմն անուր՝ ծածկէ ցմախ.
Գնա՛ր բռնիկ, քառի՛ր վրան
Ու Բու լեզուով քեզ՝ ա'լս վա'լս.
Որք եր' հոգւոյս հասորն եր ան.
Ըսէ՛ր քէ կարճ է կեանքիս քել,
Շուտով կ'երբամ զինքն ընդ-
գրկել։

(Մ. ԱՃԵՄԵԱՆ)

(ԹՐԹՈՒՆ ՅԱՆԳԵՐ, էջ 43)

Այս քերթուածը գրուած է 1892ին, Աճէմեանի մահէն քառորդ
դար առաջ (1917), բայց ծնունդէն (1838) երկու քառորդ դար
վերջը։ Թուականներուն փաստը մի արհամարհէք։ Բանաստեղ-
ծութիւնը կա՛մ հոգիի փաստ է կա՛մ բառերու խաղ։ Ու հոգին
բերեւս մէկ երկրորդ երեսն է ժամանակին, որ հոս կը նշանակէ
պարզապէս ապրումներու անընդմէջ հիւսիսայգ մը։ Մկրտիչ Ա-
ճէմեան չի նմանիր իր ընկերներուն որոնք գործօն կեանքին
յոյզերուն մէջ գէշ աղէկ կը կրին որոշ անդրադարձներ։ Հեռա-
գրատան պաշտօնեան չունի վարժապետին նոյնիսկ տրամուծիւն-
ները։ Ահա թէ ինչու այդ մարդուն գրիչէն ելած քերթուած-

ները հազիւ թէ վենետիկ, գիրք, գրաբար, գրականութիւն, տաղաչափութիւն պիտի հոտին, բայց պիտի ըլլան, իրենց կարգին, այլապէս դժուար տարազելի վկայութիւններ: Թերեւս աւելորդ չըլլայ հոս յիշել թէ վերի քերթուածին զրուած թուականներուն մեր Իրապաւոստիւնը իր վճռական փառքին մէջը կ'ապրէր: Ամենէն քիչ բանաստեղծ Սիպիլը, մեր պառնասեան պսակաւոր քերթողուհին, արդէն ստորագրած էր Ժառանգէրը, Դարաւերջի հեռաւոր գլուխ-գործոցները, ինչպէս ողջունուեցան այդ տաղաչափուած պատմութիւնները: Կային նոր սկսող Լեւոն Սեդրոսեանի նոյնաչունչ քերթուածները: Միհրան Յովհաննէսեան անունով մարդ մը զրելով իր Ափսոս Խաչի ժողովրդական ոտանաւորները, կը նկատուէր նոր երակէ բանաստեղծութեան մը պիտները, գործածելու համար արեւելահայերէն շատ սիրուած բառ մը: Արշակ Զօպանեան հրատարակած էր Արշալոյս Զայէրէն վերջ թրքաշէրը (1892): Հայրենի օրաթերթին մէջ պատմող, ընտանի, պարզ քերթողութիւնը կը քաջաւերուէր եղիայի, Թէրզեանի, Պէրպէրեանի, Սէթեանի ոտանաթիղջին ընդդէմ: Մկրտիչ Աճէմեան Որբ Եւրոպայի ոտանաւորը գրած է այդ ապրումներու զուգարին ընդմէջէն ու ասով՝ զարձակ կը նմանի Պէրպէրեանին որ գրած էր Աւարակը, տարիներ առաջ, ուրիշ ապրումներու հպատակ: Յետոյ, կայ քերթողին ալ տիրական, մնայուն Գլխաւորը որ երկար ժամանակ հոմանիշ նկատուեցաւ հարգատե Բանաստեղծութեան: Ըսի թէ 1908ին Պալեան մը ինչ երկրորդած զգացումներով կը մեկեմնասէ Աճէմեանի թարգմանութիւնները:

Որբ Եւրոպայի ուր կը զատուի սակայն Աղեքսանդր Փանոսեանի նմանաչունչ հարիւրաւոր հասարակ-տեղիքներէն: Վերլուծումը շատ ծանր եղանակ մըն է զոր աւելորդ պիտի ըլլար գործածել Աճէմեանէ ստորագրուած որեւէ քերթուածի վրայ: Անշուշտ այս վերապահութիւնը, այս վախը ծնունդ չեն տուեր պարզութեան, ընտանութեան պայմաններէն որոնք Աճէմեանի ոտանաւորին մնայուն յատկանիշները մնացին, բայց որոնք նոյն ատեն կը պատկանին բարձրագոյն բանաստեղծութեան, երբ աւսիկա կուգայ անգրագէտ բերաններէ, այսինքն ժողովուրդէն: Գուհակի մը, Սայեթ-Նովայի մը, Անդրանիկի մը առջեւ հոս ներդուծեան մէջ չիմ իմ վերլուծումը կիրարկելու: Պարզագոյն բառերը ամենէն մաքուր ապրումներու հրատակն են երգին: Բայց Մկրտիչ Աճէմեան դժբախտ է բանաստեղծ ծնած չըլլալու անգնելի դժբախտութեամբ մը: Այն ատենու Այսինքն ինչ ա-

նուն տալ իր հարվաբաւոր ոտանաւորներուն: Իր ժամանակը չունեցաւ սակայն սա խղճահարութիւնը և զայն մկրտեց պատկաւոր բանաստեղծ: Կէս դար վերջը պատրանքը (*) ինկած է քոլորին ալ աչքերէն: Համապարհեցը տեղը արժէքներու իր մտահոգութեան մէջ քիչ անգամ կը զբաղի պարագայականին ալ փաստերովը: Անհերքելի իրողութիւն է որ աւելի քան քառասուն տարիներ Աճէմեան բանաստեղծն է որո՞ւ՝ սակայն — Ոչ անշուշտ հայ ժողովուրդին որուն զգայնութեան ջերմութիւնը, կենդանութիւնը, երբեմն տարակարգ շնորհները միշտ զգալի են նոյնիսկ ժողովրդական իր երգերուն ներսը: Բայց կայ Պոլսը, հոն կերպարանքի մտած զգայնութիւն մը: Եթէ իրաւ են Դուրեանի, Պէշիկիւշեանի շղային զրութիւնները և ասոնց արտայայտութիւն՝ իրենց քերթողական գիւանները, ապա ուրեմն պիտի ընենք զիջում Աճէմեանին ալ զգայնութեան: Ամբողջ հարցը կը վերածուի թիւրիմացութեան մը բարձումին: Մ. Աճէմեանի ըզզայնութիւնը բանաստեղծական դաւանիւն էր ստիկա: Սրբագրեցէք վերագրումը: Դուք պիտի ունենաք այս անգամ պարզ զբոյսի բանուոր մը, համեստ սրբան ընտանի: Որ, առջի երկտասարդութենէն իսկ իր ակտիւականները զգոյշ է պահած զբռնակ ռումանթիկէն, Միսիթարեան տաղաչափութեան ծալիկալ կեղծիքէն ու փոխանակ նանրանալու, նրբանալու, քերթողանալու, երգած է իր ապրումները դիւրին, աման, անբռնագրոս տողերու

(*) Մկրտիչ Աճէմեանի քերթողական փառքը առանձին երևոյթ է: Չի նմանիր անիկա իր ընկերներուն վայելած ճանաչաւոր իրողութեան: Մեր մամուլը միշտ քաղցր, չըսելու համար չէղոք վերաբերումով մը ընդունեց այս պատուական Պոլսեցիին հատորիկները որոնք ոչ Վենետիկ էին ոչ ալ ողբերգական տրտմութիւններու հանդիսարան: Միւս կողմէն, մեր մամուլը այդ թոյլատու ոգին չսակարկեց աւելի թշուառ, թշուառական փանոսեանին, անոր մէջ մեծ բանաստեղծ մը ընդունելու չափ առաջ տանելով կեղծաւորութիւնը: Դարձեալ միշտ այդ մամուլն էր որ Եղիան, Չերազը, Սիպիլը վերածեց քերթողական փառքերու: Գիտենք թէրգեանին պնդեաւոր պատմութեանը, քօկան, Պատերազմէն վերջ, նոր գրող մը, Արմէն Սեւան, Հայրենիքի հանդէսին մէջ (Ամերիկա) անոր նուիրած է երկարաշունչ ռեպուտացիոնութիւն մը: Այս փաստը զիս կը զարմացէ ինչպէս կ'ընէ խելամուտ ուրիշ բանի մը, ան թէ՛ յայտնեցաւ եւ քաղաքապետը: Բայց այն տաղաչափութիւնը որ գրեք. գրարար, դասական հմտութիւն չի հոտիր: Որ մեր տղայութիւնը օրօրող ոտանաւոր պատմութիւններուն (յաճախ աշուղներուն բերնով մեզի մատուցուած, նոյնիսկ թուրքերէն Տեքսանները) անուշութիւնն է մեր ընկալչութեան վրայ: Աճէմեանը այսօր Հոմապոսիկիին մէջ իր տեղը զբաւելու մղող զգացումն ալ թերեւ ծնունդ է սա վարմունքներուն:

մէջ: Իր բախտէն, շատ քիչ անգամ այդ պարզուկ տողերը կը ծածկեն խոր, իրաւ, նոր ասորումներու տաղնապը: Աճէմեան այդ Պոլիսին միջին ներկայացուցիչն է: Ջանդուածին սիրելին: Ասոր զգայնութեան հասարակ լարերուն ճարտար շարժիչը: Այս հարազատութիւնը մենք չենք տեսներ իր ընկերներուն գործին մէջ, որոնք, առնուազն քերթողական սուտուփուտ փառասիրութեանց կը մնային պաշտօնեայ: Թէրզեանի մը քերթուածները քիչերու խօսող յօրինումներ են: Ու այս հաւաստումը ճիշդ է դարձեալ միւսներուն համար ալ:

Ուրեմն ճիշդ է առածը որ, գրականութեան մը ամենէն հարազատ ներկայացուցիչները կը գտնէ այդ գրականութեան ամենէն միջին, միջակ աշխատաւորներուն փաղանդին մէջը: Դէ՛ Պէշիկթաշլեանը մարդիկ երգեցին, լաւը վայելողներու սակաւաձեռն խումբին դիմաց: Դուրեանը վայելողները վեր են ոչ միայն բարձրորակ միջինէն, այլև ընտրանիի մը սովորական խմբեկութիւններէն: Մկրտիչ Աճէմեան բանաստեղծը չէ այդ Պոլիսին: Այս մասին ոչ մէկ տարակոյտ: Բայց է այդ Պոլիսին մէկ կերպարանքը: Հիմա, սփիւռքի մեր կերպարանքը գրեթէ հետաւ խաղաղ ծածկած է այդ հեռաւոր տեսիլը ժողովուրդի մը որ քաղքենին է, բայց առանց դասակարգին ծանր մեղքերուն: Աճէմեանը կը կարդային, փափաքով ու փառքով (ձգեցէք իր ստեղծած զմայլումներն ալ) բոլոր անոնք որոնք հայերէն մը հասկնալու տարրական արարքը կրնային երկրորդել լրագրի մը, հանդէսի մը բաժանորդ գրուելու *luxem*ով: Ու Եւրոպա ըրած մեր վաճառականները, ասոնց քարտուղարները, ազատական ասպարէզներու երջանիկ տնտեսները, ուսուցիչները, քահանաները, եպիսկոպոսները, վարժուհիները անոր սիրական յաճախորդները կազմեցին, լման երկու քառորդ դար: Դրականութեան մը վաւերական հասարակութիւնը: Մեր մէջ այդ գիծէ հրաշք մը չունեցաւ գոյութիւն: Քանի մը տասնեակ զրոյներ կարելին ըրին այս մարդը հանդուրժելու, քանի որ ոչ ոքի կը մնասէր. միւս կողմէն՝ ոչ ոքի *սսուեք* կ'ածէր. ինք իր ստուերին մէջ ամբաւածուկ, չխառնուելով օրուան կիրքերուն, չգովելով, ոչ ալ գովեստ սպասելով:

Ու Պոլսեցիքն սիրեց զայն: Ստիպուած եմ լրջանալ սակայն: Կը գտնէ՞ր այդ տողերուն տակ իրաւ, հարազատ զգացումներ: Հաւանաբար, այնքան որքան կը գտնէր զանոնք իր թերթերէն: Ատեն մը մեր հասարակութիւնը գրականութիւն ըսելով Պարոնեան կը հասկնար: Աւելի ուրիշ հասարակութիւն մը, դարձեալ

այդ ժողովուրդէն, Երուանդ Օտեանին ստորագրութիւնը վերածեր էր կարդալու արարքին ամբողջ տարողութիւնը: 1890ին մեր բանաստեղծութենէն համ առնելու ընդունակ միտքեր գրծուարութեան մէջ չէին իրենց ախորժակները զոհացնելով երբ կը կարդային Խաչողը, զոր վերածեր ալ էին եղանակի, Յաւիտէրը, որոնց մէջ սենեակ մը ու օրուան պարզ ապրումները իրար կը պաշտպանեն, Բացա՛ն, ուր թեթեւ տեղումի մը մէջ Պոլիս մը կը շրջանակուի, Վա՛նքը որ կը պատմէ փառքը այդ չքնաղ ափերուն, Սէկարը, Օւլին, Հա՛նքը, Հա՛նք և Բրէնձե՛ն, Խեղճ Մը՛ն, Մէաց-Էալէն պարահանութեւր, Յե՛ր յե՛ռն յի՛շտը, Օրհնէ՛՛՛ Տէրը, Սապարողը, յիշելու համար քանի մը քերթուածներ որոնք Աճէմեանինն ըլլալէ առաջ միջին Պոլիսիցն էին ապահովարար: Զուարթութիւն, ողջամիտ զոհունակութիւն, լաւատեսութիւն, համեստութիւն, ցաւին հանգէպ իմաստուն համակերպութիւն, թեթեւ, զողտրիկ հաճոյքները տունին, օճախին, ջուրերուն, չէնչող բնութեան մը: Ընտանի անուշիկ սէրեր զաւկէ, կնոջմէ, ազգականներէ, նոյնիսկ հաւերէ ու ... կատուներէ: Անշուշտ: Բայց կայ աւելիլին: Կէս դարու շրջափոխութեան մէջ Աճէմեան տեսած է մէկէ աւելի տաճարութիւք կացութիւններ: Իր ժողովուրդը զարնող հըս-կայ ողբերգութեան հանգէպ իր լիութիւնը կը զիջիմ թուրք պաշտօնեայի իր հոգեխառնութեան: Մկրտիչ Աճէմեան պատմած է անհատական կործանումներ (Սեհաբը, Խեղճ Մը՛ն, Սփառն, Վաղափա՛նքը, Սոփ, Խաչէն լոսնէկն), թաղէ թաղ պատահած սրտաճըմիլիկ մահեր: Ասոնք գիւղերու մէջ նիւթ կուտային ժողովրդական երգերու: Պոլիս Աճէմեան անոնց շուրջը հիւսած է այդ անյաւակնոտ պատմումները:

Արժէ՞ք: Ինչ հարկ դատախազի խտտութեամբ պահանջներ բանաձեւել: Մարդը չունի զոյութիւն որպէսզի այդ պահանջները իմաստ առնէին: Չունի դարձեալ զոյութիւն այդ քերթողութիւնը կարելի ընծայող Պոլիսը: Կը գոհանամ այս նկատողութիւնները հոս արձանագրելով: Մկրտիչ Աճէմեան բանաստեղծ մը չէ, այն ըմբռնումով որ այս բառը կը թելագորէ երբ գործածուի Դուրեանին համար: Բայց չէ տաղաչափ մըն ալ, այն ըմբռնումով որ այս բառը կը թելագորէ երբ գործածուի Ալիշանի մը համար: Ոչ մեծ և ոչ սուտ: Պարզ ու միջակ: Ու կը բաւէ ասիկա իր անունին համար անշուշտ: Իր գործը դուրս է մեր զգայութիւններէն:

Ը.

Համառոտակի կ'անցընեմ վերլուծումէ կրտսեր Ռոման-թիքներու մօտ

ա) — Արուեստի զգայարանք մը.

բ) — Սերունդ մը բնորոշելու ծառայող յասկանիւցներ.

գ) — Ոնց ու լեզուն:

Այս բաժանումներէն առաջինը այդ մարդոց մօտ դոյ երկու հիմնական պայմաններու գումարը կը ներկայացնէ: Ինչ որ աւնոնք իբրեւ ջղային գրութիւն բերէր էին սա արեւին ներքեւ (և որ անցաւ քննութենէ, զգայնութեան, խառնուածքի յատկացուած գլուխին մէջ) ու ինչ որ անոնք գտան իրենց ընկալուչ պատանութեան ու կեանքին տնողութեան, առաւելապէս գրական հանգամանքներէ ազդուող: Ուրեմն կը դնեմ հարցը:

Ի՞նչ էր մեր գրականութեան ընդհանուր մթնոլորտը 1870ին երբ կրտսեր Ռոմանթիքները վար են երեսունէն ու իբր տաղանդով օժտուած երիտասարդներ իրենց սպասը կը սկսին մեր արուեստին:

Անոնց անդրանիկ պատանութիւնը: Երկուքը կուգան Վենեսիկէն: Պէրպէրեան և Սէթեան Վենետիկէն եկողներուն հիացուած մին մէջը կազմած են իրենց գրական խառնուածքը: Վենետիկ, 1860ին կը նշանակէ Բագրատունի, Հիւրմիւզ, Ալիշան, Դրոնք իւրենց կարգին կը նշանակեն ոսկեգոծ տալիսիութիւնը որուն յատակ ծառայէին Ժ. Դարու դասականութիւնը, լաւ չընկերացած (acclimaté) ռումանիզմը Ժ. Դարու առաջին կեսին, Միսիպարեան հայրենասիրութիւնը, գրաբարին մոլեռանդ պաշտամունքը, կրօնազգած զգայնութիւնը: Այս վերագրումներուն երբ աւելցնէք (ասոնք՝ տարտամ, անհակակշիռ ըզձաւորութեանց ձևով) Ժ. Դարու միշտ առաջին կէտին յատուկ գրական աշխարհիկ ալ ձգտումներ (Հիւզօ, Լամարթին), դուք կ'ունենաք ամբողջ այդ մարդոց գրական խառնուածքին նախատարրերը:

Այս տարրերէն Վենետիկեան քերթողներու դերը ես նկատի առած եմ, ներքիւ ընդլայնումով մը, Համապատեչին առաջին գիրքին մէջ: Ուրեմն ընթերցողը հոն կը գիտէ գտնելու համար դժուար ըմբռնելի սա աշկերտութիւնը լուսաբանող ազդակները: Ու կ'ընեմ գերագոյն ալ ցուցմունքը. — գրականութեան մը առաջաւորներէն միայն անոնք կ'ընին այդ գրականութեան

ընդհանուր արժեզումարին մեջ որոնք իրենց աշխատանքները մոռցած են անվերադարձ. ուրիշ խօսքով՝ եղած են ՍՏԵՂՇՈՒՄԻՆ, ՆՈՐԻՆ սպասարկու։ Միւսները այդ գրականութեան մէջ անուններ են, աւելի կամ նուազ գերերով, բայց այդ գրականութեան վրայ, ժամանակն ի վեր չունին կշիռ։ Մենք այս վերջիններն ալ կը զնահատենք, բայց իրենց իսկ շրջանակին վրայ։ Կարդալ Պետրոս Դուրեանէն քերթուած մը, 1999ին, կը նշանակէ այդ քերթուածը ապրիլ այդ թուականին։ Կարդալ 1940ին Թէրզեանէն քերթուած մը, կը նշանակէ թանգարան մը այցելողի հոգեբանութեամբ աչքէ անցնել մոմիա մը, Ֆոսիլ մը. այնքան այդ քերթուածը չորցած է, ոսկրացած։ Ու ապրումին և ծանօթութեան երկու արարքներուն հիմնական տարբերութիւնը նախազգիւր մըն է, այս բառը գործածելով Շթէնգլէրեան առումով մը։ Կ'ըլլամ կարճ՝ ոսկեղծ տաղաչափութեան միւս ստորոգելներուն հետ, վառնդի բազմաթիւ տեղերու մէջ եւ մօտեցած եմ անոնց զանազան երեսներուն։ Կրտսեր Ռոմանթիքներուն նիւթերը, ասոնք ընդլայնելու կերպերը մեծ չափով կը պատկանին ԺԹ. դարու բանաստեղծական ըմբռնումներու։ Ներպական ուսմանթիվմին անոնց վրայ ունեցած յաւելումն է որ զիս կը զրաղեցնէ այս բարակրափին մէջ։ Մեր գծաբախտութիւնը (գրական) այնպէս մը կարգադրած է սակայն որ այս յաւելումն ալ մնայ նախնական, չբարձրացնէ մեր քերթուածները գոնէ այն տարողութեան որով պոսակաւոր իջած են մոռացման անդունդը Հիւկոյի, Պայրընի, Լամառթինի, Միւսէի տաղաչափական երկունքին մէկ շատ կարեւոր մասը (կենդանին թէ և քիչ, բայց կը մնայ անխորտակելի նոյն այդ մարդերու գործէն)։ Նրբ Պէրպէրեան Մահ Սոյեապայն կը թարգմանէ վենետիկեան գրաբարով, անշուշտ դրաբար գիտնալու մանկամիտ փառասիրութիւն մը չի փառասիրէր միայն, այլ յոյզին մէջն է ֆրանսական ուսմանթիվմին այդ փաղփուռ, ջերմ, ոգեպաշտիկ հեղումներուն, 1870ին Պոլիս դեռ իրենց բոլոր կենդանութիւնը պահող երբ անդին, նոյն այդ քերթուածին հայրենիքին մէջ մարդիկ յոգնած են այդ ամենէն ու անցած ուրիշ յոյզերու, պաղ, իրապաշտիկ, մետաղափայլ քերթողութեան մը։ Հիմա, դուք այդ տրամադրութիւնը քսանամենի երկտառարդին տեսէք, մեր միջավայրին իսկ ճշոււթիւն մէջը։ Զարթոնքի Սերունդ, Մեծ Ռոմանթիքներ, մեր նոր փաղեքնին, մեր լրվանքին ազնուականութիւնը, մեր առեւտրականներուն անյապ, գեղնաբաւ տխրութիւններ, մեր պանպանդակաւորութիւնը (գրողներու, եկեղեցականներու, ուսուցիչներու խայ-

տաքզէտ երամակով մը կազմուած), մեր գրական լեզուն, մեր ուսուցչութիւնը (որ դեռ աշակերտ [Նզդիտ, Ձերազ, Պէրպէրեան] կը վարէ մեր ոչ միայն գրական այլև ազգային կեանքը, առանց չափազանցութեան) բոլորը մէկ կ'ընեն իրենց ազգեցութիւնը որպէսզի գրական այդ փոխառիկ վարդապետութիւնը այլայլի, այլանդակուի ու կերպարանքը առնէ Կրտսեր Ռոմանթիքներով մեզի հասած անորակելի արդիւնքին: Եւրոպական ռոմանթիզմը մեզի հասած է, անճանաչելի ըլլալու չափ ձեռագրած: Գիտենք որ կայ յաւիտեանական ռոմանթիզմը, զպրոցական կապանքներէ, փառասիրութիւններէ բոլորովին զերծ: Ա՛ն՝ որ ամէն ժամանակներու մեծագոյն խառնուածքները կ'ազատագրէ ու Ներսէս Շնորհալիի մը քովը իսկ ինքզինքը կ'ընէ զգալի: Ա՛նր Ա՛ն Ռոմանթիքներէն կենդանի մեր ժողովուրդի կեանքը տնկողը կուգայ այդ ռոմանթիզմէն և ոչ թէ ժ.թ. դարու եւրոպական գրական նորոյթէն: Արդ, Կրտսեր Ռոմանթիքներուն վաստակը ամբողջութեամբ կ'ընկղմի ահա այս նորոյթին սնտարքին մէջ: 1880ին առնուազն անտանելի է Քրիստոսեայ Նահապետ ի Հռոմ (Թ. Թէրզեան) քերթուածը, անոր քեֆնիքը մանաւանդ, երբ այդ թուականին արգէն եւրոպական միտքը այդ զիծէ վերարտադրութիւնները ենթարկած էր ամենախիստ ստուգութեան մը պարկեշտ թելադրումին: Անշուշտ Թէրզեան կարդացած էր Հիւկոն (Խաբէր-ըն-ըրդէն) բայց չէր կարդացած, լրջութեամբ ու պարկեշտ հետաքրքրութեամբ էր Գոնդալ Լիլը (Հէն Բերթոնաճնէր, Բաբարոս Բերթոնաճնէր) որպէսզի համոզուէր թէ պարզ տաղաչափութեան մը պաշտպանութեամբ մարդիկ յաւակնելու չէին հնութեան մէջ թաղուած զգայնութիւնները կեանքի կանչելու, առանց ամենածանր incubationի: Մի մոռնաք որ պատմական վերաբնակումի պարկեշտութիւնը տակաւին նախապայման մըն էր միայն: Սնկէ անդին կային կեանքի, դրամի, գործողութեան կառոյցին, նորին, մեր օրերու զգայնութեան մէջ այդ իրողութեան փոխակերպիչ պատկերը գտնելու այլապէս բարդ, այլապէս ստիպողական պարտքերը: Քերթուածը ինծի տալու էր կայսերական Հոովմի ոչ թէ Թէրզեանին ըրածին պէս բռնկողով, այլ ինքրիմով սպառազէն, ինքրիմով ահաւոր կերպարանքը գոնէ, վասնզի ստեղծագործականին մէջ նուազում մը այդ զինով կարելիութիւն կար դիմաւորելու: Թովմաս Թէրզեան իր մարդոց բերնին ոտանաւորներ միայն գրած է որոնք կրնան Ալիշանն ու Չօպանեանը հաճ պահել բայց աւելին ուղղով մը նեղել: Այս է պատճառը որ տրամութեամբ ընդհատուի ընթերցումը Ապապոթէ քերթուածին,

որուն չքեղ տողերը — լեզուական — չեն գիտեր թէ ո՞ր կեանքը ունին նուաճելու պարզուկ պաշտօնը: ԺԹ. դարու ամենէն փորձիչ այդ սեռէն (poëme) այս չքեղ կորանքը (որուն մէջ իրարու մօտաւոր չափերով հաւասար կը մնան Ալիշանն ու Նար-Պէյը, Աէթեանն ու Աճէմեանը) չեմ տանիր ընդարձակ ակտանշաններու տօնակեր ակտորժանքին: Ունէլի՞ն մերինները այդ գերազանցապէս բանաստեղծական սեռին շահուելիք յաջողութեանքներ: Կ'ենթադրեմ թէ այո՞: Աւելի ուշ, երբ Վարուժան ձեռք զարկաւ անոր, մօտեցաւ նախորդներէն շատ աւելի չափով մը այդ յաջողութեանքին: Եթէ անոր ալ վիճակուեցաւ չհասնիլ բացարձակ յաղթանակին (Հաբճէ, Աբդուհէն իրենց գրական ըլլալու մեղքը չեն կրցած քահլ ուրիշ առաւելութիւններով), ասիկա կուգայ թերեւս արեւմտահայ բանաստեղծութեան ընդհանուր բարեխառնութենէն: Մինչև մեծ պատերազմ (տաշինը), մեր մէջ, քերթուածը քիչ անգամ լրջութիւն է ու տալնապ, շատ աւելի քիչ անգամ՝ ստեղծման տառապանք:

Ի՞նչ կաղապարներ գտան պատրաստ Կրասեր Ռումանթիները, իրենց աշխարհները անոնց ներսը թափելու համար: Միտք չունիմ տաղաչափական վիճակի տեսութիւններ արծարծելու: Զորոն ալ Կրասերներէն գործածած են հայկական չափը ու աշխարհարարին յատուկ կաղապարներ: Երկար վերծանումներ հետը հետէ ընտանի կ'ընեն ընթերցողը այդ արարողութեան հետ: Զեմ ըսեր թէ յանգին ու վանկին տիրական մտահոգութեանը տակ գրուեցան անոնց գիւանները, բայց վստահաբար կ'ըսեմ որ չորոն ալ իրենց լաւագոյնը ըրած ըլլալու հաւատքը ունէին ամէն անգամ որ կոկիկ, կանոնաւոր, օրինական տողերը կը յաջողէին յաջորդել ուրիշ նմաններով: Եւ ոչ մէկը անոնցմէ աչքէ հեռու համարձակած է պահել չափին ու ձայնին օրէնքներուն կշիռը: Աւելի՛: Երեքը գրաբարին մէջ կը գաւանին ուրիշ ալ թովչութիւններ: Աճէմեանին աշխարհիկ մուսան անշուշտ ծիծաղելի չըրաւ զինքը: Բայց վարանք ստեղծեց միտքերու մէջ, քանի որ սանկ լիք, հարուստ, գրաբարին ներքին գաշնակութիւններով քրքուռն որեւէ քերթուած չպտտցուց, հեշտազին, պանդուխտութեան վայելումին: Խորքին ընդհանուր, հասարակաց աղքատութեան վրայ ձեւին սա ծաղկեկար (fleur) վարդարանքները, գրական զգայարանքը, աւելի յաւակնոտ տարազով մը՝ արուեստի զգայարանքը կը փոխանորդէին: Այս պատրանքով ահաւասիկ ծնունդ առաւ արեւմտահայ բանաստեղծութեան կարելի, պաշտօնական կաղապարը որուն տիրական քեֆնիսիքն՝ Թովմաս Թէրզ-

հան անուշով երջանիկ վարժապետը մնաց երկար տարիներ, չըսելու համար լման երկու քառորդ դար:

Վենետիկէն, Եւրոպայէն դուրս կա՞յ ուրիշ ազգակի որ դեր մը ըլլար ունեցած այդ մարդոց ոտանաւորին (թէ՛ խորք, թէ ձե) կաղապարման մէջ: Այսինքն՝ ո՞ր արտաքին ցանկութիւններ գոհացնելու կանչուած էին այդ մարդերը, իրենց տաղաբանները երբ կը մատուցանէին հանրութեան: Դիտէ՛ք դուք բախարը մօլդաւէ և Ալթաւաւիւն: Ունէլէ՛ք դասակարգը որ զրական սերունդները ոչ միայն կը ծնի այլ մանաւանդ կ'ապրեցնէ: Ի վերջոյ մեր իրապաշտ փառանգը իր հտին կը զգար գրեթէ ժողովուրդ մը: Հայրենի՛ օրաթերթը ուժ մըն էր: Մեր Արուեստագէտ Աերունդը կը վայելէր պաշտպանութիւնը մեր կարելի, կարգացող հասարակութեան: Նման հաւաստում մը դժուար է առաջարկել Կրտսեր Ռոմանթիքներուն համար: Անոնք հասարակութիւն մը չունէին, դէթ այն իմաստով որով կար այդ հասարակութիւնը Պէշիկթաշիեանին, Ծերենցին, Նոյնիսի Տիւսարին հտին: Այլ չեմ խօսիր Եղիայէն, Չերպէն որոնք փառքեր էին: Կրտսեր Ռոմանթիքները իրենց մեծ ու պղտիկ ցաւերը, հաճոյքները, յոյզերը, «ժպիտն ու արտասուքը» երգեցին, իրենց Սոֆիները, Հէփուլուրէները, կուսանները քնարական պայծառութեանց մէջ անընդունելին, փոյթը չառնելով իրենց հտին պակասող իրաւ մարդոց ջերմութեան, խռովքներուն, կիրքին, որոնցմով միայն անհատներու մէջ սնորհմաբար դրուած զգայարանքը կը բեղմնաւորուի, կ'ըլլայ ազգային իրականութիւն: Գաղտնիք չէ որ շրջանն ալ անտատակ է մնացած այդ անձնաւորութիւնները արժեւորելու: Թէրզեանը կրցաւ մոռնալ իր ժողովուրդը: Ան կամ մեր ժողովուրդը հաղիւ յիշեց թէ Թոլմաս Թէրզեան աւնունով տարտամ փառք մը ունէր գոյութիւն, որ կը գրէր սանկ տարօրինակ լեզուով մը ոտանաւորներ: Ու ա՛յլ չմտածեց ասկէ անդին: Այդ ժողովուրդը գիտէր որ Ալթեան անունով ուրիշ վարժապետ մը ունէր գոյութիւն, աւելի պարզ ու համեստ, որ կը գրէր զբօսանքի պէս իր յուզման ժամերը ու կը խօսէր տարտամ, նուրբ, հեռաւոր ինչպէս հեռաւուր բանիւրէ: Աճէմեանին ժողովրդականութիւնը պատուհան իսկ պիտի կազմէր իրեն, զինքը արգիլելով արուեստին, իրաւին՝ խղճահարութենէն, տաղանապանքէն: Քերթողութիւնը խակ օրերու կամ տարիքի զբաղում մըն էր ոչ իմպական Պէրպէրեանին համար որ շատ լուրջ պաշտօններ կը դաւանէր իր լայն, պայծառ ճակտին հտին տրոփող մեծ իմացականութեան համար: Այս ցուցմունքները կ'ուզեն

հասկեցնել թէ շրջանն ալ չէ պաշտպանած կրտսեր Ռոմանթիք-ներու մօտ իրաւ արուեստին զգայարանքը:

Կարիք կա՞յ այդ անուններուն հետ դնելու ինքնասպու-րեան հարցը, որ միայն իրաւ արուեստագէտին մօտ փորձանք դառնալէ հազիւ կ'աղատի: Մէջտեղն է Եղիային փաստը: Նուազ ինքնատիպ, այսինքն ատիկա ըլլալու համար աւելի ըզ-գուշաւոր, խնամածու, հետեւողական (զործածելու համար գէշ բայց իրաւ բառ մը) Եղիան մեր գրականութեան կտակած ըլլար թերեւ ճշմարիտ վաստակ մը մեծ գրագէտէ մը: Այսօր զուրկ ենք այդ բախտէն վասնզի միայն ցաւագար, մենագար ուղեղի մը թափառկոտ ճիգերը չեն որ Եղիան զսուածեցին ուղիղ ար-ուեստէն, այլ ինքնասպու արուեստագէտի մթին վարկ մը այս հիւանդը թէ՛ հալածեց թէ՛ շոյեց: Արդիւնքը մէջտեղն է: Առէք Նեքստիւֆը կարդալու: Վերցուցէք այդ կառոյցին մէջէն ինչ որ ինքնատպութեան մթին, չըսելու համար շիւ մարմաջ մը նետած է հոն, դուք պիտի ունենայիք իրաւ մատեան մը որ պատկա-նէր ժողովուրդի մը, շրջանէ մը ըլլար պարկեշտ կամ յանդուգն վկայութիւն մը ու ցեղային հարստութեան վրայ դառնար յա-ւելում: Արտայայտութեան ինքնատպութիւն մը գրեթէ կործա-նած է այս գեղեցիկ կարելիութիւնը: Տուէք Մկրտիչ Աճէմեա-նին Մեծարենցի մը արտայայտութեան բարիքը, դուք կ'ունե-նայիք սակայն հասարակ տաղաչափի մը փոխարէն իրաւ ար-ուեստագէտ մը որ հասարակաց խմորէն — իր ժամանակին կեան-քը, ինչպէս կը տրուի մեղի զգալ Աճէմեանի թուրիկ, նոնոչիկ, ոսնկ ու նանկ տողերուն թափանցիկ աստառին ընդմէջէն — պիտի ձեւէր ճշմարիտ, մնայուն քանդակներ: Ինչ սրտառուչ ի-րականութիւն է Յեֆ յէսառ յֆառը: Դրէք այդ հոգեխառնութիւնը ինքնատիպ քերթողի մը թէքնիքին ներսը, դուք կ'ունենայիք անմահ էջերէն մէկը արեւմտահայ գրականութեան: Առնուազն երկու բիւր մարդեր անցած են այն ասլուֆներէն որոնց զու-մարը դուք կը զանէք Աճէմեանի մէկ ուրիշ քերթուածին մէջ, Խէշ Մէշ: Այսքան հարազատ այս խորքէն դժբախտ, անինք-նատիպ աշխատաւորը ոտանաւորին հանած է հասարակ տեղիք մը, դժբախտ որքան տափակ: Հեղինակը այս աղէտին: — Միշտ ու միշտ՝ տաղաչափութիւն: Այսինքն այս անգամ ոչ անբանաս-տեղծութիւնը, այլ գրական նանրամտութիւն մը, սնտիքին վրայ խոշոր պատրանք մը: Աճէմեանին համար քերթուած մը երբեք

հոգեկան պահանջ^(*) մը չէ, այդ թերթին մէջ հատորիկի մը ձեւով տարօրինակ ապրում մը, տեսակ մը վայելք չիմ ըսիր գովեստէ (չատ խուլ ապրող մը գերին կրնայ չըլլալ այդ սոսինձին: Ու մենք գիտենք թէ որքան զգոյշ եղաւ անիկա իր օրերու հանգիստաւորութեանց մասնակցելու, շարժումներուն մէջ երեւալու արարքները գրեթէ արհամարհելով) այլ պարզուկ, ողջամիտ հաճոյքէ մը զոր ծանօթ մը, երբեմն աւելի մաքրիմ մը, քիչ անգամ հրապարակային բերան մը (խմբագիր, զրող և այլն) պիտի պատճառեն իր միայնութեան, ամայքին ներսը: Ի՞նչ կարիք այս վայելքը գնել վտանգի ու գրել ինքը իրեն համար:

Ինքնատպութեան տագնապ մը խոտելի փառասիրութիւն պիտի նշանակէր թէրզեանին, Սէթեանին, մանաւանդ Պէրպէրեանին համար: Այս երեքէն թէրզեանը գրեթէ պսակաւոր պաշտօնեայ մըն է հարուստներու ապարանքներուն ներսը: Թուրք վարժարաններու, մեծահարուստ հայ և թուրք պալատներու մէջ իր ստեղծագործ ուժին վատնումը մարդ պիտի ընէր միայն ու միայն թէրզեանին գինով: Ձեռք ըսիր թէ հարուստներուն, մեծաւորներուն համար գրեց իր քերթումները: Բայց կը հաւատամ որ անոնց հաճելի եթէ ոչ սիրելի ըլլալու մտահոգութիւն մը գեր մը ունեցաւ իր քերթողականին հետզհետէ ստա-

(*) Այս հաւաստումը իր բոլոր ծանրութիւնը կը գտնէ երբ կը կարգաք խոսնկի բուրումները, նոյն հոգեբանութենէն Պէրպէրեան գրեթէ մարդկային գիրք մը հանած է (Խոսիկ և Յուսիկ), Աճէմեան անշուշտ մարդ էր մեր ամենուն պէս ու երբեք՝ ջլախտաւոր փառամուլ մը: Յաւերուն ամենէն կսկծալին (իւր ձեռքով իր կեանքին կէսը հողքը իջեցընելուն անդաման ցաւն էր ատիկա) գինքը այդքան քիչ խոզովեալ պիտի ընէր որպէսզի գրուէին այդ տափակ քառասունները: Առնուազն տողերուն վրայ թեթեւ խնամք մը բաւ էր իրեն, անոնցմէ վտարելու համար կիսազարեան իր վարժութիւններուն սնուցիքը (տող չափելու) ու անոնց տեղ զնելու բառեր ու պատկերներ որոնք իրն էին եղեր, անզառնալի կերպով մը: Մահը գրական քեմա է երիտասարդին համար: Անիկա երբ տուներու մէջն է, այն ատին կը բացուին մեր աչքերը ու կը տեսնենք բաներ որոնց կասկածը չունէինք, կը զգանք բաներ որոնք առնելու անատակ էին եղած մեր զգալու կեդրոնները: Բայց մանաւանդ մանկն ամօղի՞ն: Կ'աղիարկեմ կեանքին որ մեռելինն է շատոնց հոգ իջած: Անիկա ամէն առարկայի հետ կը բուսնի կողքիդ. գիրքիդ էջէն կը նայի քեզի, հայելիի մը երեսին կը շինէ իրեն կաղապարը քու գէմքիդ քովիդ: Սենեակէ սենեակ, կայքէ կայք: Յիշատակ իսկ չի կրնար ըլլալ: Ու ողբերգութիւնը քունին որ երբեմն տարիներ կ'ըլլայ կեանքէն աւելի իրաւ հանդէս մը: Աճէմեան քովէն է անցած այս ամենուն, ինչպէս քովէն էր անցած իւր կէս դարին:

ցած կերպարանքին մէջ։ Խօսեցայ իր ողբախուազներէն որոնք երկարելու, էջեր լեցնելու պարտք մը կը վճարէին, իրենց հասցէներուն։ Բայց չխօսեցայ իր գրաբարախառն ընդարձակ կառույցներէն, անայժմէ թարգմանութիւններէն^(*) որոնք զժուար է հաշտեցնել Պոլսոյ պահանջներուն։ Աճէմեան, Նար-Պէյ, Հէքիմեան, Թէրզեան իրենց գրաբար թարգմանութիւններով ի՛նչ կ'ապացուցանեն ուրիշ եթէ ոչ Վենետիկեան փառքը։ Ու, ինչպէս որ այդ Վենետիկի արքաներուն համար բանաստեղծութիւնը դարձեալ համանիշ է հասարակութեան, առնուազն անինքնատեղութեան, նմանապէս այդ ոգիին լայնօրէն հաղորդ կրտսեր Ռոմանթիքներուն համար հասարակաց զգայնութեան մօտիկ մնալը ոչ միայն պարկեշտութիւն է այլև թերևս պարտականութիւն։ Ու հիմա կ'անցնիմ ամենէն ծանր տաղնապին։ — Աճէմեանը քաջառելով, որ չէ այցուած երբեք արուեստի տաղնապանքէն, միւսները խորունկ փառասիրութիւններու սպասարկու երիտասարդներ են։ Գիւրին է այդ անունները զետեղել շուքին, մշուշին մէջը իրենց հիացումներուն (Ֆրանսացի ոմանթիքներ) ու հետեցնել անոնց հետեակութիւնը։ Այդ Լամաութիւնը ծծած էր Պ. Դուրեանն ալ։ Միւս կողմէն՝ աւելի քան ստոյգ է որ Սկիւտարի անմոռանալի տղան նախնական կրթութեան մը բարիքը միայն ունէր իր ուղեղին մատուցած։ Իր ամենէն ընկալուչ տարիները այս տղուն յայտարարեց պողոտայ զինքը զգնանող հիւանդութեան որպէսզի ցաւին ճիրաններուն մէջէն գտներ ժամանակ, աւելի ետքը, արուեստի տաղնապաները ճանչնալու։ Բայց, միւս կողմէն, փաստերը կան Հոգաւոր Սընէին, Խոհ + Երազին, որոնք առնուազն պարկեշտ, որոշ ինքնութեամբ գիււաններ են։ Ինքնատիպ։ Գրեթէ։ Ի՞նչն է պատճառը որ բախտը ըլլայ զլացուած Թէրզեանին, Աճէմեանին, Սէթեանին ու դարձեալ այդ Պէրպէրեանին որ Խոհ + Երազին առաջ, Առաջին Գիւրինէն տարիներ վերջը կոկիկ տաղաչափ մըն է, Արայ ստորագրութեամբ ոտանաւորներուն, թարգմանութիւններուն մէջը անկանգնելի կերպով տափակ։ Ստիպուած եմ համադրել իմ դատախազութիւնը։ Կրտսեր Ռոմանթիքները իրենց ժամա-

(*) Անալիթիկ մեր գրաբարին կը նշանակէ Ռագրատունիին ստուերը հաճեցնել։ Ապստամբը որ ազատ թարգմանութենէ մը քիչ կը տարբերի, դարձեալ երախտադրութեան տուրք մըն է Վենետիկեան գրաբարին։ Իր թատերական յարմարեցութենէն ալ ուրիշ փառասիրութիւն չեն հետապնդեր։ Չեմ կարծեր որ Թէրզեան ըլլար անծանօթ Անակրէտին մը անարժէք արժէքին։

նակի՛նը ըլլալու գերագոյն ցանկութիւնը միայն ունեցան: Իրենց արուեստի զգայարանքը չանցաւ աւելի անդին քան ինչ որ կ'ուզէր և ուզեց իրենցմէ այդ ժամանակը: Ու հոս է որ կը զատուին այս մարդիկը, արեւմտահայ գրականութեան աշխատաւորներուն ընդհանուր հանդէսին մէջ: Թշնամի հակառակորդ կամ բարեկամ ու իրարու պաշտպան մեր գրողները ինքնաբերաբար իրարու քով կամ իրարու դէմ դիրք են բռնած: Կրտսեր Ռոմանթիքներուն դժբախտութիւնը կազմեց իրենց առանձնութիւնը, հարկադրեալ ինքնաբաւութիւնը ու հետեանք անծակ միամտութիւնը, անամտութիւնը: Ներքին յաւակնութիւն: — Գուցէ, որպէսզի այս առանձնացումը կերպով մը ըլլար հասկնալի: Բայց արդիւնքը մէջտեղն է: Ինչ որ զտան, Աւետարանի առակին մէջ պատահածին նման (ածուենիւր առակը) ան միայն տուին: Ահա թէ ինչու արեւմտահայ գրականութիւնը այս մարդերէն ոչ մէկ իրաւ, տիրական գեղեցկութիւն է ժառանգած: Վերցուցէք Թէրզեանին ընդարձակ դիւանը, թերեւս բարիք մը ըրած պիտի ըլլայիք նախ հեղինակին, երկրորդաբար՝ արեւմտահայ գրականութեան: Արեւելահայերը նուազ փաստեր պիտի ունենային մեր հոսհոսութիւնը ծագելու, դատապարտելու: Ու ասիկա ճիշդ է եղերապէս միւս երեքին ալ քերթողական դործին համար:

Դառնազին բան է խառնուածք և թերեւ տաղանդ ալ ունեցող երիտասարդներու երկար ասպարէզներուն հետեւիլ, գուրգուրազին ու ակնկալութիւններով տրոփուն հոգեվիճակով մը, իրենցմէ գալիք գեղեցկութեանց հաշւոյն մտածելով, ու ստիպուել այդ յոյսերուն թառամած պսակները ողբալ: Այս է սակայն վիճակը գրականութեան պատմիչին, երբ հազարաւոր քերթուածներ կարդալէ վերջը չունի մխիթարանքը գոնէ տառնեակ մը, նոյնիսկ կէս տառնեակ մը մնայուն արժէք մատնանշելու ցեղային հարստութեան: Իմ ինչուն պէտք որ այդ Աճէմեանին քերթուածները շատերու վայլանքը արժեցին. Թէրզեանը պսակաւոր քերթողի մը պատմութեանովը իջաւ «սոսուերներու առիւտ յուրիւնը»: Եւ կամ մարդիկ զողտրիկ հաւանութեամբ մը սիրեցին Սէթեանին տաղերը իրարու յանձնարարել իբր գործերը մարդու մը որ պարզ էր ու բարի, անյաւակնոտ էր ու աշխատող, որ լուռ ու մունջ քաշեց կիսադարեան լուծը հայ վարժապետին ու տառապեցաւ դասակարգին բոլոր վսեմ տառապանքները: Այսօր իր այդ տաղերը ոչինչ կ'ըսեն մեզի: Ահա գումարը, հաշուեկշիւը, եթէ կ'ուզէք այդ առանձնացեալ, «միանձնացեալ» քնարակներուն, պուէտներուն մեղի ձգած վաստակին:

Չունիմ կարիք որքան սիրտ, սա բացարձակ կորանքը բացատրել ջանալու: Ատիկա պիտի նշանակէր արեւմտահայ գրականութեան համար յօրինել հսկայական խարոյկ: Դալիք սերունդը, աւելի քիչ զգացական պարագերով բեռնաւոր, ինքնաբերաբար պիտի գործադրէ այդ ստիպողական վանդալութիւնը: Արուեստի զգայարանքը անզիտանալը երբեք անպատիժ չի ներուիր մարդոց:

Այս մարդերը իրենց ժամանակին մէջ:

— Դարձեալ ողբերգութիւն: Դուք բաւական բան գիտէք անոնց ապրումներէն: Բայց չէք կրնար ճիշդ տեսնել անոնց ներքին, խորագոյն իրականութիւնը: Երբ աւելի քան ծանօթ են մեզի մինչև 1900 արեւմտահայ գրականութեան մեծ անկիւնադարձերը, մեր իրաւունքին մէջն ենք այդ մարդերը տեղաւորելու շրջանին իրական զատանքներուն մէջը: Ուրիշ հետ է այդ Թէրզեանը 1870ին: Իր խուժ ոտանաւորը հերքումն իսկ է իրաւ բանաստեղծ Պէշիկիթաշեանին աւանդութեան: Իր սին խորքը տիրական հեզնումն է իրաւագոյն բանաստեղծ Պ. Դուրեանին անմահ կենդանութեան, արիւնին, կսկիծին: 1890ին մեր ոտանաւորը կը լրջնայ, առնուազն կը ձգտի մերկանալ Վենետիկեան *oripeau*ները և հալումաշ, չըսելու համար ծթաւո՞ւսուման թիգմին կարկտանները: Բայց ինչպէ՞ս դատել քերթող մը որ 1900էն վերջ դեռ չի վարանիր Զարեհ և Նարեկէ կամ ձգնա՞սն եղջերուաքաղը ստորագրել: Այս փաստերուն աւելցուցէք պալատական, մահադրական, մաղթական, մանկական, զաւեշտական կտորներու դիմաց իր Ալիշանեան լրջութիւնը ու ըսէք թէ ո՞ր սերունդին կը պատկանի այս ոսկեգիր անունը: Ու փորձը, նոյն արդիւնքներով, միւսներուն համար ալ:

Իրաւ է որ Եղիան ալ մենաւոր մըն է: Բայց անոր արձակները, գէթ անոնց մէջ որոշ քանակ մը, բխած են այս ժողովուրդէն: Իրաւ է որ Չերազ ալ անձնապաշտ, մենամուլ հովիւով մըն է գրականութեան դաշտերուն երեսին, բայց խելքն է ունեցած իր երիտասարդութեան շուքերը, փէշերը հաւաքելով հեռանալու, ուրիշ դաշտերու մէջ աշխատելու հաստատ առաջադրութեամբ: Բացի Պէրպէրեանէն որ իբր ուսուցիչ ունեցած է որոշ դեր, բայց մանաւանդ իբր արձակագիր իր ժամանակը դատած է, չըսելու համար ըստ արժանւոյն ապրած, միւսները ո՞րեւէ ատեն, ո՞րեւէ տեղ կարելի տաղաչափներ են, ինչպէ՞ս արդէն տուած ալ են փաստը այդ հրաշքին: 1858ին Բաղձափէղի բոցաճաճանչ Թէրզեանը, ըսի անգամ մը, հեղինակն է, ճիշդ

յիսուն տարի վերջ, Տալ Վերակենդանութեան վերտառուած քերթութեամբին, հաւասար ալլուրութեամբ մը իր ըրածին անհեթեթութեանէն: Ու այս փաստը դարձեալ իրական է Սեթեանին որ 1920ին ալ կը գրէր ... արձակ ողբեր: Ինչպէս իրական է դարձեալ Աճէմեանին:

Այս կնիքէ վուրկ, իրենց անձնականութեան խորխին ներսը ամբողջով աբուհետին համար բութ, չըսելու համար անգոյ զգայարանքով մարդերու գործը արեւմտահայ զրահանութեան մեղքերը ուռեցնելէ զատ ուրիշ գեր մը պիտի ունենայ: Գրականութեանց պատմութիւնները մեզի կուտան բազմաթիւ օրինակներ այս կարգի զժրաստութիւններէ: Բոլոր շքեղ համբաւները, գէշ ճաշակին թեւոյժը տարածուած, երկու սերունդ վերջը կը գտնեն առնուապն արդար հաւասարակչութիւն մը: Մարդիկ սանկ երեք քառորդ դար վ. Հիւսիսի անունը արտասանեցին աստուածներու վալսոյ երկիւղածութեամբ մը: Այդ կուռքը տապալող հոգեբանութեան մէջ այդ պաշտամունքին դէմ բնական հակազդեցութիւնը աճեցուն չափով մը արժեւորել պիտի նշանակէր քիչ բան հասկցած ըլլալ մարդկային հոգիէն: Հիւսիս տապալեցաւ որովհետեւ բառի, բանի, պատկերի գործաւոր մըն էր, խաղարկու մը, գրեթէ յանգահարուած խաբերայ մը: Իր տուրքերը տուրքերն էին խօսքի կշիռներուն: Բայց բանաստեղծութիւնը խօսքը ունի իրեն միջոց և ոչ թէ նպատակ: Ձեն կարդար այդ շքեղ արհեստաւորը՝ անոր մէջ կեանքին բաժինը շատ քիչ, չըսելու համար աննշան գտնելուն: Յիշեցէք մեր Սիամանթոն, առանց որմէ ոտանաւորի մը արտասանման սանկ քառորդ մը դար մենք չբացինք մեր հանդէսները սուգէ, յիշատակէ, դպրոցէ ու հանգանակութենէ: Կրտսեր Ռոմանթիքներէն այս մեծատարած փառքը աւելի քան երեսուն տարի մեր բանաստեղծական հորիզոնին վրայ փայլեցաւ ամեմապայծառ, գործածելու համար կասկածելի Ձրաքեանէն ոչ նուազ կասկածելի փաղաքշական մը, այդ դպրոցին գլխաւորին հասցէին:

Հաշուեյարդար մը է է որ կ'ընեմ: Ալիշանին, Միթիթարեան տաղաչափներուն, Դուրեանին ու Պէշիկթաշլեանին համար զրահան սա գործողութիւնը ներելի գտնելով հանդերձ, անոնց զրեթէ ժամանակակից, անոնց ոգիին ու ձգտումներուն չարունակողները ըլլալ սիրող Կրտսեր Ռոմանթիքներուն համար ստիպուած եմ ընդհանուր չափերով բաւարարուիլ, վասնզի 1950ին Հիւսիս կարծեք որ 1940ի բանաստեղծական մեր խաւարումը պիտի ինք-

զինքը ազատագրած ըլլայ դարձեալ գէշ ճաշակի մը պատուհասէն: Այսօր չեմ զարմանար որ Սմերիկայի մէջ Վաշինգթոն (Կ. Սիտալ) անունով ծիծաղելի եղջերուաքաղ մը ողջունուի իբր հսկայ, չքեղ զիւցտղներով թիւն մը, ինչպէս չզարմացայ երբ Աթուալա Մահաթի անունով ուրիշ բառակառոյց կեղծաւորութիւն մը դասուեցաւ արուեստի մարդին մէջ բացառիկ մեծութիւն, գեղեցկութիւն: Եւ որովհետեւ Համապալէքը չի գրուիր աս ու ան մարդերը զահ առաջնորդելու կամ գահնկէց ընելու տրտում փառասիրութիւններու սպասարկու ողիով, անոր Հեղինակը կը սիրէ ծանրանալ այդ կարգէ իրողութեանց գերին, տարածութեան ու ասոնց արդիւնք մոլորանքին, կորանքին վրայ: Պէտք պիտի ըլլար որ Մեծարենց մը, Վարուժան մը, Թէքէեան մը մեր պատրուած աչքերէն վերցնէին խաւը գովեստով հիւսուած սուտուփուտին ու մենք տեսնէինք հարազատ բանաստեղծութիւնը, ու չպարծենայինք Թէրզեանի, Ալթեանի, Պէրպէրեանի, Աճէմեանի ոտանաւորներովը, ինչպէս ըրինք: այնքան լըջութեամբ, ստեղծելով 1900ի տաղաչափներուն այլապէս դժբախտ դպրոցը որոնցմէ անա արտօնուած կը զգամ ինքզինքս հոս, այս առիթով, անունները — Գ. Խաժակը, Մ. Ուղուրխանը, Ա. Նաւարեանը, Մ. Պարսամեանը, Ե. Գոլանցեանը, Լ. Էսաւանցեանը, Ժ. Սայապալեանը, Լ. Լաբեցը, յիշելու համար քանի մը շատ շփացուած փառքերը այդ դպրոցին: Արտաչէս Յարութիւնեան՝ ուրիշ ողբերգութիւն: Ասոնք կարելի եղան ուրովհետեւ գրելու սկսող այդ տղաքը կ'ապրէին ծիրանեմին փառքին մէջը Կրտսեր Ռոմանթիքներուն ու ասոնցմէ սերած ոչ նուազ անբանաստեղծ բայց աւելի մեղամօտ տաղաչափներու (Սիպիլ):

Ինչ տրտմութիւն որ իրերը ըլլան դասաւորուած սա պայմաններով, այսօր հիմնովին մոռցուած Թովմատ Գոռնէյլ մը (եղբայրը մեծ Գոռնէյլին) իր օրերուն ըլլայ աստուածը Ֆրանսական թատրոնին ու իր փառքին տակ խեղճութիւններու վերածէ իր եղբորը իրաւ հանճարը և անցնի իբրեւ անհատասարելի թատերագիր: Չէ՞ք յիշեր, այս պղտիկ օրինակին ետեւէն, մեծ Թէրզեանը որմէ ակնածանքով պատկառ կեցան մեր գրականութեան տաղանդաւոր ու անտաղանդ բոլոր աշխատաւորները: Քննադատը անկարող արարած մըն է այս կարգի հրաշապատում իրողութիւններ բացատրելի ընելու գերին մէջ իսկ: Այս է պատճառը որ այդ հսկայ սրբագրութիւններուն նախաձեռնութիւնը ձգուի ժամանակին: Կրտսեր Ռոմանթիքներէն գրեթէ չունիմ անուն մը հոս յիշելու որմէ քերթուած մը կարդացուի, ինչպէս

ինքզինքը կը կարդացնէ Դուրեանը, լաւ երակէ Պէշիկթաշլեանը: Չեմ ըսեր որ Տրդատի անթերի զուխ-գործոց մըն է: Հեռի ինձմէ նման միամտութիւն մը: Բայց կ'ըսեմ որ իր բոլոր վրիպանքներուն հակառակ, ասոնցմէ վեր՝ այդ քերթուածը բանասեղծութիւն է, այսինքն իրաւ ձայն մը իրաւ խղմմանքէ մը, ջղային կիզանուց դուրսեցնէ մը: Ու կը յայտարարեմ որ գրական, տաղաչափական, լեզուական բոլոր շնորհներուն դափնեպսակները եթէ լիաբուռն բաշխենք Կրտսեր Ռոմանթիքներու դիւաններուն, դարձեալ այդ քերթուածներէն եւ ոչ մէկը պիտի նշուածէ արուեստէ հասկցող, արուեստին բացուած միտք մը, սիրտ մը: Ասիկա վճռական է: Եւ սակայն այս մարդիկները հազիւ թէ կը զատուին մեր օրերու զգայնութիւնէն. այնքան քիչ է տեղուածքն իսաւր ընդմէջ Մեծարեցիկն և Թեոքրեանի, քանի որ Թեոքրեան հող իջաւ Մեծարեցէն տարի մը վերջը նոյնիսկ, գրելէ ետքը Տաշ Էփրակէ-Կանաքեանը, 1908ի Յուլիսեան դէպքերուն ազդեցութեանը տակ:

Երկրորդ մեծ մեղադրանքս այդ դպրոցին դէմ իր չարափառ հերձուածողութիւնն է արեւմտահայ գրականութեան գործիքին, լեզուին վրայ իրենց կամայական, չըսելու համար տղայական խաչակրութեամբ: Ով որ կը կարդայ 1870ի աշխարհաբարը Դուրեանին գրիչին տակ, յստակ զգայութիւնը կ'առնէ թէ կը գտնուի լեզուի մը դիմաց որ կը բաւէ խորագոյն ապրումներն իսկ առարկայելու ամենէն մեծ բանաստեղծական զգայնութեան: Կը նշանակէ թէ գտնուած է գրականութեան մը գործիք: Այդ ո՛ր ճիւղաւորին փառասիրութիւնը կը միջամտէ որ այդ թուականէն ասդին Կրտսեր Ռոմանթիքներու քերթուածները զրուին լեզուով մը որ ոչ գրուած է որեւէ ատեն և ոչ ալ խօսուած՝ որեւէ բերանէ, միշտ որեւէ ատեն: Այսօր կատակի կ'առնենք ուղղախօսութիւնը, ընտրողական աշխարհաբարը, Գուրգենեան աշխարհաբարը, մոռնալով թէ ինչ կիրքերու արտայայտութիւններ էին անոնք իրենց ժամանակին: Կրտսեր Ռոմանթիքները (Աճէմեան աշխարհաբարը ուրիշ տկարութիւն, քանի որ երրորդական գրիչի մը ներքեւ լեզուն միշտ ենթակայ է աղաւաղուելու, առնուազն չտանուլ, ճռչելու վտանգին: Դուրեանի տողին և Աճէմեանի տողին մէջ գոյութիւն ունեցող տարբերութիւնը միայն տաղանդներով բացատրելի իրողութիւն մը չէ, այլև հարադատ գրագէտին և անբաւ գրագէտին ձեռքերուն մէջ զրուած գործիքէն մեր գտնելիք ուրիշութիւնը: Աճէմեանին հետ մեր լեզուն չէ ըրած ոչ մէկ նուաճում: Բայց իրմէն շատ քիչ աւելի տաղանդ ունեցող,

դարձեալ անբանաստեղծ Սիպիլը այդ լեզուին ձեւին մէջ դրած է բարերար ազդեցութիւն մը ողջամիտ ճաշակին: Աշխարհաբար—զրաբար պայքարը գիւրին է այսօր սնտախք անուանել. — ինչ որ անոր տակ թաքնուած գրական խորունկ իրողութիւնը անտեսել կը նշանակէ) ոչ միայն մեր մէջ փաստակար դարձան բանաստեղծական յլացքը ԱՆԱՃՈՒՆ հետեաբար մեռած պահելու, այլ մեր աշխարհաբարին ինքնացման, հասունցալուն մէջ ձգեցին իրենց չարաշուք ազդեցութիւնը: Իրենք ոչ միայն գրեցին լեզուին համար (իրենց գիւտնները ուրիշ քիչ բան կ'ապացուցանեն), այլ լեզուական ճարտարանքը զիտակցօրէն շփոթեցին խառնուածքին անմահ հեղումին հետ, ինչպէս տեսեր էին իրենց վանական վարպետներուն գործին մէջ երբ գրաբար քերականութեան նրբանուրբ ու իրարմէ խրթնախորան օրէնքներու կիրարկումը բաւ սեպեցին իրենց կառոյցները արդարացնելու:

Ինծի կուգայ թէ անիրաւութիւն ինչպէս անգլութիւն պիտի ըլլար կրտսեր Ռոմանթիքներու ետին գրական սերունդ մը ընդունիլ, այս իրողութեան կապուած յղացքներուն հետեանքները փնտռելու պարտքով մը անոնց գիւտններուն մէջ: Արդէն Պէրպէրեանը իբրեւ միտք չի պատկանիր խմբակին, քանի որ անիկա կուգայ Եղիայէն, Ջերադէն: Աճէմեանը օտարական մըն է գրական հանրապետութեան մը մէջ ու անմասն է հաւաքական ապրումներու յոյզերուն, ինքզինքը, իր պզտիկ հաճոյքները, զինքը սիրողներուն նոյնքան պզտիկ, ճիղճ ակորժակները հաճ ընելուն մէջ գնելով Տալաշալիեալ փառասիրութիւն մը: Իր մէջ արուեստին մարդը հիմնովին կը պակսի, ըսել կ'ուզեմ՝ կիրքի, կրակի, սլացքի ճակատագրական նուիրեալը որ իր յոյզերը կը փոխադրէ իր շրջապատին, զանոնք իրը ընելով, առնելէ վերջ հում, նախնական կերպարանքներու տակ: Թէրզեանին մէջ ինչ գտնել որով ներելի ըլլար յատկանշել սերունդ մը: Այո՛, իր բոլոր ձախաւեր, անճարակ, արուեստին հիմնովին անհաղորդ գործին քանակովն ու որակովը Մկրտիչ Խրիմեան Վանեցին, պատրիարք և կաթողիկոս ըլլալէն առաջ Ջարթօնքի Սերունդին եռանդն ու հաւատաւոր աշխատանքի կիրքը կը բաժնէ հաւասար ուժգնութեամբ ու կը պատկանի այդ սերունդին որուն բոլոր ցանկութիւնները հաշտ են արդէն Վանեցի գործիչին ակորժակներուն հետ: Նոյնն է պարագան Սրուանձտեանցին: Նոյն՝ պարագաները Ջօրայեաններու, Ռուսինեաններու, Օտեաններու, Իւթիւճեաններու: Ո՞ր սերունդին կը պատկանի սակայն Թէրզեան ըսուած թատերագու վարժապետը: Այս հարցումին

պատասխանը մենք կը փորձենք գտնել ա) կեանքին, բ) գործին։ Երկուքն ալ անցան բաւարար վերլուծումէ որպէսզի պատրանք մը ըլլայ ներքի, այս մասին։

Քեքրուած գրելը, թէկուզ ներանուրը զրաբարով, կամ ու կեճամուկ ումանթիզմով, սերունդի մը յատկանիշ չ'ապահովեր անշուշտ։ Այդ մուսայիկ, մուսայապաշտ զբաղանքէն դուրս այդ մարդերը ոչինչ ունին իրիրահաշտ։ Անոնց երեքին ուսուցչութիւնը դարձեալ շատ հոռուէն, չըսելու համար շատ խոտոր կը համեմատի գրականութեան կրթոտ կրթանքին հետ։ Թովմաս Թէրզեան ոչ ոքի մուխդ դեպի քեզ չէ ըսած։ Աճէմեան հուր ու ջուր ապրած է մեր քաղքենիին ու ազնուական հարուստներուն լըվանքին խաւերուն հետ։ Պէրպէրեան ունի իրեն կոնակ պատւիրարքարանը, այսինքն այդ թուականներու իմացական կեդրոնը։ Իր վարկին տկարացումը (Իրապաշտներու օրով) չէ աւելած ու Իրապաշտներուն հրապարակէն քաշուելէն վերջ, աւելի քան մեծապայծառ, ճաճանչաւէտ շարունակած է ապրիլ այդ փառքը, հասարակաց ներման մէջ կրկնապէս ազուրուցած։ Այնքանը չին կրնար մոռնալ գինքը ճանչցողները, ոչ անշուշտ իրեւ բանաստեղծ մը, այլ անմոռնջ, միսթիք աշխատանքի իր տիպարային հերոսութեանը փառքին մէջ։ Այս մարդերը սերունդ մը չեղան որպէսզի ինծի տայի հոգը անոնց գործին ընդմէջէն այդ սերունդին յատկանիշերը սեւեռելու։

Ի՛նչ որ կը մնայ իբր բանաստեղծութիւն այս մարդերէն (բացառէք Խնդ և Յուշը գէթ իբր ցանկութիւն) կը նոյնանայ մէկ կողմէն Վենետիկի գրաբար քեքրուութեան, միւս կողմէն Պոլիսին հոսոսական տաղաչափութեան որուն պատկաւոր ներկայացուցիչն էր Ալիփասլան։

Թ.

Կրտսեր Ռոմանթիքներէն Աճէմեան արձակ չունի (կարդացած եւ իրմէ կցկտուր էջեր — յիշատակ, նամակ, տպաւորութիւն — շատ ցանցաւ գրողի դէմք մը ուրուադրելու համար)։ Թէրզեանի Ասրուդը թատերական լիզուին հետ տարրական խոկաղերս մը չի պարզեր, որպէսզի ներքի ինծի զբաղիլ այդ արգիւնքին սիրոյն, ընկողմ դժուար զիջում մը, մեծատարած այդ փառքը հասկնալի ընծայող։ Իր գեղեցկադիտական յօդուած-

ները (Բաշմալէպ, 1901—1903) գրականութեան չեն պատկանիր։
Կը մնան Սէթեանն ու Պէրպէրեանը։

Սէթեանի արձակը ունի իր պատմութիւնը ինչպէս փառքը։
1912ին Սուրէն Պարթեան այդ փառքը կարծեց արդարացնել
ոտանաւորէ մը, Սէթեանը գերադասելով Թէրզեանէն։ Իրողու-
թիւնը քինախնդրութեան կամ մարդահաճութեան վերագրելէ
առաջ (Սուրէն Պարթեանին հետ այս կարգէ մտածումներ ան-
խուսափելի կը դառնան) կը ջանամ բացատրել Սէթեանին իսկ
վկայութեամբը։ Երկար տարիներ անիկա Պոլսէն մեկնելէ ա-
ռաջ, բայց մանաւանդ անկէ մեկնելէ վերջ ստորագրած է ար-
ձակներ որոնցմէ ընտրովի — անշուշտ իր իսկ միջոցովը կա-
տարուած — փունջ մը կայ իր Արշալայէն Վերջալայ հաստրին մէջ։
Հոն արձակները խմբուած են երկու որոշ բաժիններու։ Ասոնցմէ
առաջինը կը կրէ տարտամ վերնագիր մը — Արշալէ Էջէր, ունե-
նալով տարեթիւ 1896—1912։ Պոլսէն տարագիր գրողի մը էջերն
են անոնք։

Ասոնք գտնուէ առաջ պարտաւոր եմ օգտագործել տարի-
ներուն իմաստը։ Սէթեան իր բոլոր խելացնոր յափշտակութեան
մէջ ապրած է Իրապաշտներու քրոնիկը, ասոր ասքը։ Մեր գրա-
կանութեան ամենէն իրաւ խառնուածքներուն ու ամենէն իրաւ
գործաւորներուն (Իրապաշտներ) փառքովը պատկաւոր Բոնիկը
ճշմարիտ գրական սեռ մըն է մեր մէջ, տաք, կենդանի, երբեմն
իրաւ գեղեցկութեան ու յուզումին ալ բարիքներովը։ Այս տո-
ղերուն հետ մտքէս կ'անցնին անմոռանալի էջերը Արփիարեա-
նին, Զօհրապին (որուն քրոնիկները Մախին մէջ առաջնորդու-
ցեր ըլլալէ առաջ, իրաւ, ամուր, պարկեշտ իրագործումներ են
հարցերը, իրողութիւնները, գէմքերը զուսպ բայց շատ յատկա-
նշական ուրուագիծերու վրայ նուաճող) Հրանդին, Հրանդ Ասա-
տուրին, Սիպիլին, Բաշալեանին, Եր. Օտեանին, Կամսարակա-
նին, — բոլոր իրենց լրջութեամբը, շնորհովը, Կամսարականին
բառով՝ fini (արտայայտման երանգ մը կը դնէր անիկա այս ո-
րակականին ետին) նկարագիրներովը, ու կ'անցնին նոյն ստե-
նի միւս ալ էջերը երկրորդական գրողներու (որոնցմէ ոմանք՝ ինչ-
պէս Զօպանեան, Շաքիեան կը պատկանին առաջին գիծի աշխա-
տաւորներու, բայց քրոնիկին մէջ չեն գտած իրենց ազդանդ-
ներուն հաւասար արժանաւորութիւն), ինչպէս Տիկին Մ. Սվաճ-
եան, Վահրամ Սվաճեան իրենց չափաբերուած կամ ազատ տո-
ղերով, երբ Ֆրանսական գրականութեան մէջ փառքի հասած
ազատ երբուածը կը ջանան մեր օրաթերթային պայմաններուն

պատշաճեցնել, խօսած էմ Հաֆապֆէրի ընթացքին այս կեղծ սեռին չարիքէն, այնքան ծաւալուն, վարակելու աստիճան ոչ միայն Իրապաշտներէն մէկ քանինները (Չօպանեան, Բաշալեան, Սիպիլ) այլ մանաւանդ միահեծան տիրապետելու 1896էն սուղին: Մեր Արուեստագէտ Սերունդին բոլոր մեծատաղանդ անունները չեն դիմաց փորձութեան: Եղիային գիւտը և Չօպանեանին նըւէրը եղող այս արձակ քերթուածն է ահա որ հրապուրած է Յովհաննէս Սէթեան քերթողը: Արշակ էջէք պիտակին տակ խըմբուած կտորները լայնօրէն կը քննան հաղորդ սեռին բոլոր չարիքին, քանի որ Սեթեան անոնց սպասը բրած է սեռին ծնունդին իսկ օրերէն ու շարունակած իր դարպասը այդ կեղծ գեղեցկութեան: Entre temps, ինչպէս կ'ըսեն գաղիացիք, գրուած էին Հանրմեանի, Մալեգեանի, Գալէմքեարեանի, Անայիսի, Զ. Ե. սայեանի, Միքայէլ Կիւրճեանի ու անանուանիկի ուրիշ թշուառութիւններու յաղթանակները, Արտաշէս Յարութիւնեանի (և 1900ի մարդոց ողորմելի ճամարտակութիւններէն, ինչպէս են, օրինակի մը համար, Գեղամ Բարսեղեանի, Միսաք Մեծարենցի, Յակոբ Տէր Յակոբեանի նոյն սեռէն ստորագրած տրամուծութիւնները) Թէգօւնէն մինչև Արշակ Չօպանեանի Գեղքն ի պարհապաշտները, 1880ի մարդոց, այսինքն Կրասեր Ռոմանթիքեանը (գրէք այս անգամ եղիան ալ) փորձն էր որ կը կրկնուէր մեր արձակին վրայ: Յովհաննէս Սէթեան չէր կրնար ինքզինքը պաշտպանել այս համատարած փառքին սոսինձէն:

Կը գտնուէր խելօքն Հայրէկէն և Պէրպէրեանն յէշաֆաֆէն վերնատանը կտորները որոնք առնուազն բանաստեղծական չարաշահութեան անընդունակ նիւթեր կը թուին, քանի որ չեն արտօներ բառամարտիկ գրիչը գառածելու գէպի աժան հեշտանքները Վոսփորեան գիւթանքներուն, ու կը թուին պարտադրել մարդկային յարգանքը, ասոր պարզ ու պատշաճ չահագործումը: Ի վերջոյ մեծատարած համբաւի մը առջև կիսադարեան վաստակաւորի մը, մարդիկ՝ թէկուզ եռամեծ քերթող, չեն արտօնուած սարեր ու ձորեր, շաղ ու ցօղ, ժաննակ ու լուսին քնարերգեւու: Եւ սակայն կը բաւէ աչք մը պտտցնել խելօքն Հայրէկէն յիշատակին նուիրուած էջերուն, համոզուելու համար թէ որքան քիչ բան է հասկցած Իրապաշտներուն քրոնիկին խորագոյն իմաստէն, ինչպէս քիչ էր հասկցած Դուրեանին և Պէշիկթաշլեանին քնարերգութիւնէն: Ութի մօտ խիտ էջեր երբ իննան վերլուծուի, ձեզի կրնան տալ իբրև նիւթ առառաւելն կէս էջ: Մնացեալը: Բայց փրփուրն ու ծաղիկները արձակ քեր-

թողութեան: Մնացեալը տողերուն յեռումն է ածականներով, հոմանիշներով, փափկահնչիւն որքան յաւակնոտ, որոնք կը միջամտեն, կը յորդին, կը ծանրաբեռնեն արգէն ինքնին նիհար մտածումը ու դուք ավիրեիրան ստիպուած էք հանդուրժել այս կոհակ կոհակ խուժող յարձակողականը: Կ'ընեմ քանի մը տող մէջբերում:

«... Վասնզի ան (Որիմեանը) հայ ազգին բովանդակ ամբողջութեան սրտին տրոփումընքը բարախեց. վասնզի անդուգական մարդասիրութեամբ և աննման գթութեամբ օժտուած բըժիշկի մը նման, թշուառ ժողովուրդի մը բազկերակը անդուզ անդադար շօշափելով, դարերու աղէտքներովը և թշուառութիւններովը հիւանդ ազգին կուրծքին զրած ականջը, ողորմած, կասկածէն դողալով, մտադիր, հանգուշն ինքնամփոփ, մատն ի շուրթն, մտիկ ըրաւ այդ բազմաչարչար լանջքին հսքը» (Արշալոյսէն Վերջալոյս, էջ 189):

Ի՞նչ կ'ըսեն այս ութը տողերը, որոնց գրուած օրերուն Մկրտիչ Որիմեան տակաւին չէր հաւնզած, բայց տուած էր կշիռը իր գործունէութեան: Հերոսութիւն չէ մեր կործանումը վերագրել անոր ու նմաններուն: Կ'ընդունիմ: Բայց ի՞նչ անուն տալ այն մտայնութեան որ ձրի պատմութեան ձեւեց փառքին մեւ տաքսին այլապէս օտար, ոչ-հանգամանաւոր մարդոց: Յիշատակի հանդէսի մը մէջ, նոր հողք իջնող մարդու մը յիշատակին նուիրուած համախմբում մը դատապան ատենան մը չէր անշուշտ: Բայց ըլլալու ալ չէր այս սուտն ու փուտը անձրեւի պէս ընդունելու դատապարտուած խեղճ, տկուր ամբօս մը: Ինքզինքը, մանաւանդ մեռելը յարգող մարդ մը Որիմեանի վաթսուէն տարիներէն ունէր հանելիք անհուն դաս, նոյնիսկ զեղեցկութիւն որոնք սակայն իրաւ էին ըլլալու, եղած ալ էին: Ի՞նչ աժան բառերով Սէթեան Որիմեանին սիրտը կը նոյնացնէ հայ ազգին սրտին: Ո՞ր հայուն սիրտը արդեօք տարբեր տրոփեց, բացի դաւաճաններէն, հարուստներէն, պղերգներէն: Ընթերցողին ներողամտութիւնը չարաչար չեմ գործածեր երբ այդ ութը տողերը կը քննեմ պարզ, ուղիղ մտածելու, այդ մտածումը պարզ, ուղիղ արտայայտելու մարդկային օրէնքներով: Ա. և Բ. տողերէն չունիմ առնելիք ոչ մէկ բառ: Մեր մը բաւ էր փոխանորդելու այդ ինը բառերը: Փորձեցէք ու պիտի գտնէք որ իրաւ է այս առաջարկը: Հալը ազգ է անշուշտ և ոչ թէ շանաձուկերու վոհմակ մը: Ազգ մը ամբողջութիւն մըն է անշուշտ և ոչ թէ մասունք: Սիրտը մարդու մը գործարանն է անշուշտ,

բայց այդ մարդէն յետոյ՝ աւելորդ: Տրոփմունքը սիրտին պաշտօնն է անշուշտ ու հետեւաբար անպէտ կ'ընէ բաբախեցը: Ահաւասիկ ինչի է վերածուած այդ տողը:

Գ-Դ. տողերը ունին միակ բառ մը, բժիշկը: Անգուղական մարդասիրութիւնը և աննման գրութիւնը, բացի իրենց հոմանիշային կրկնութեան մեղքէն, ունին մեղքն ալ սուտ ըլլալու: Խրիմեան՝ կրքոտ, հարցախոյզ, բուռն խառնուածք մը և տնահանգարտ միտք մըն է: Եկեղեցականներու մարդահաճ ու պատահապաշտ, պորտաբոյժ վարժութիւններուն դիմաց (որոնք Պոլսեցի եպիսկոպոսներուն մէկ կարեւոր մասին նկարագրիրը և զան) այս ճշգուծները բան մը կ'ապացուցանեն: Խրիմեան ոչ անգուղական մարդատէր մըն է ոչ ալ աննման զթացող մը: Մարդն էր անիկա որ պահին, տեղին ցուցմունքին համեմատ կուլար ու կ'որոտար, վտանգելով արցունքին արդիւնքը, ինչպէս տկարացնելով որոտումին հաւանական դերը: Բայց այս ստորագուծները չեմ գիտեր թէ ինչ տիրական աղետ ունին եկեղեցական գործիչի մը հետ: Ո՞րեք աղերս: Անշուշտ: Բայց մեր բառերը պարտքեր ունին ու հոս այդ բառերը Խրիմեան տալու են կանչուած և ոչ թէ բան մը ըսելու, ռանկ ու նանկ: Հետեւաբար երբ այդ բժիշկն ալ հարազատ, անհրաժեշտ չէ, այն տառն կը մնամ ձեռնուռայն: Դիտեցիք հարկաւ որ չորս տող անցաւ իմ առջեւ, առանց ինծի հիմնաւոր բան մը ըսելու: Նմանութիւնը իզանակ մըն է, բայց ոչ անհրաժեշտութիւն մը. բերան փոխ մըն է, բայց ոչ կշտացնող տարր մը:

Դ-Ե. տողերը շարունակութիւնն են բժիշկ քլիշէին թելադրանքներուն: Բժիշկ — բազկերա՛կը: Օն անդր: Որո՞ւ բազկերա՛կը: Բայց թուաւ ժողովուրդին, իբր թէ ըլլար մէկը անծանօթ այս հանգամանքին: Ձեմ ընդունիր ժողովուրդին ալ ներկայութիւնը, քանի որ Ա. տողին ազդը դեռ չէ պաղած իմ տպաւորութեան մէջ: Անդու չէ՞ր բաւեր: Սէթեան կը հաւատայ թէ գլուխներ ենք մենք ու կ'աւելցնէ անդադարը: Ձեմ մեկներ: Դօտալիլը թէքնիք բա՞ռ է թէ բառարանէն բերուած անօգուտ տարր: Ձեզի կը ձգեմ գատիւ: Բազկերակը զգեստ չէ որ հագնինք:

Ե-Զ. տողերու աղեքը, թուաւութիւնը (դարերով) մեզ կը նետեն դասական բառամարտին կրկնքը ուր այնքան փայլուն խաղեր խաղային Աւետիս Ահարոնեաններ, Սուրէն Պարթեաններ, արեւելահայ ու արեւմտահայ բոլոր ջարդերգականները, մեծն ու պզտիկը, մեր տհաւոր ողբերգութիւնը անգամ մըն ալ նահա-

տակութեան սեղանը հանելով . . . թուղթի վրայ ու լղրճելով այդ նիւթին ամպարազիժ տրտմութիւնը, խռովքը: Զեմ ընդունիր իւր իւր, չընդունելուս՝ ազգը: Մնացեալ կէս տողը, բժիշկ Բլիշէին թեկադրանքը մասամբ, մասամբ ալ սուտ, անպէտ (ողորմիլը բժիշկներուն մօտ ուրիշ զգացում է. կասկածեմ դողալը գարձեալ կասկածելի զգայութիւն մըն է): Այս տողն ալ ինծի ոչինչ բերաւ:

Է-Ը. տողերը իրենց ածականներուն կառաչարովը (մասն ի շուրքն ալ՝ որակական մըն է) կ'անցնին ոչ մէկ հետք ձգելով իմ մաքին:

Ու ահա հաշուեկշիռը. յիսուսի մօտ բառ որոնք տարօրինակ ճակատագիրը իրագործէին քով քովի գալով ըսելու սա աւանդանարակ իրողութիւնը. — Խրիմեան բժիշկի մը պէս եղաւ մեզի հետ: Ողբերգականը ան է որ հղանակը նոյնութեամբ ինքզինքը կը կրկնէ այս ընդարձակ բառապատումին ո՞ր էջին վրայ որ ուզէք փորձել վերլուծումը: Այս է ահա չարիքը արձակ քերթուածին, ու անկէ սերած հստորաշունչ շատախօսութեան որուն աւագ շահագէտը պիտի ըլլար Սուրէն Պարթեան. մէկը որ գրիչը կը բռնէր միտքին մէջ ոչինչ ունենալով. կը վառէր սրկառը ու տակաւին կէսին չհասած՝ աւարտած կ'ըլլար իր էջը, ճիշդ ու ճիշդ վերի նոյնին կաղապարովը, Սէթեանէն աւելի տրտում արդիւնքով անշուշտ, քանի որ ըսելիքին լրջութիւնն ալ չէր պաշտպաններ բառերու այդ կուռ տեղատարափը: Հասկընալի՞ս հիմա Պարթեանին համակրանքը Սէթեանին:

Երկրորդ կտորը, Պէրպլեւնի յէշտափէն, աւելի կատարեալ կորանք մըն է: Լուսեղբայրներ էին ի բանաստեղծութիւն: Պաշտօնակիցներ էին դաստիարակութեան ապերախտ բոլոյ վսեմ ասպարէզին վրայ: Զրար կը ճանչնային «անգլոսիին ի սղայ սիոց», Եոյնաճաշակ գէմքեր էին «յարուեստ»: Սէթեան ամենէն աւելի իրաւասու մէկն էր Սկիւտարի մեծաշատաւ գաւառիցովը, ձկնանոցովը վայելչապէս, նոյնիսկ որոշ գեղեցկութեամբ, յուզումով ներկայացնելու: Վեց ընդարձակ էջեր վատնուած են, ըսելու համար ամենուն զիտցած տեղիքը, չըսելու համար սեռ տիքը: Մարդեր camper ընելու համար մինք կարօտ չենք նոյն իսկ օսլանդի: Եղեր ենք մեր տիպարներուն հետ, ասեր անոնց մէ անփոխարինելի տպաւորութիւններ, տեսեր ինչ որ հետուէն մատչելի չէ երեակայութեան աչքերուն: Մենք այդ տիպարները տալու համար կարօտ ենք շատ պարզ բանի մը, — տարրական պարկեշտութեան, զրականութենէ սարսափի մը ու բա-

ռերէ փախուստի մը որպէսզի գիծերը, դրուագները, կողմերը հարկադրուինք հաւաքել: Սէթեան ողբասաց մըն էր իր ոտանաւորներուն մեծագոյն մասին մէջ: Հոն էր ձեռք բերած հաւանաբար վարժութիւնը սուտ կամ չափազանցեալ ցաւերուն, չըսելու համար կեղծ սուգերուն: Ու իր ողնածուծին մէջ տեղաւորուած այս բաւակրթանքը վարած է զինքը նոյնիսկ հոն ուր այդ կրթանքը անտեղի էր ու պարզապէս ֆիւստակար: Սէթեանին վարկը իբր արձակագիր — ուրիշ մը պիտի սրբագրէր՝ քրոնիկագիր — կը մնայ անպաշտպանելի:

Բուն առձակ ֆերուածնէ՞րը սակայն: Կան անոնք ալ: Կարողացէք Խնդրեալ Գեղարքէնէն մը, Հէսանդէն Գեղարքէնէն, Պարսկէնէնէն Գեղարքէնէնէն, Բարէ Գեղարքէնէն, Պարսկէնէնէնէն վերնագրուած արձակները: Ձեռք կրկնէր ինչ որ ըսուեցաւ վերը: Կ'աւելցնէմ: Այս կտորներուն մէջ իրականութեան զգայարանքէն որոշ անկախութիւն մը հեղինակը կը վտանգէ, զայն արտօնելով կայքերու, տպաստութիւններու որոնք կը ծփան ընդմէջ անխառն ֆանթազի (fantaisie pure) ու բռնագրօսեալ յարգարումին: Տեղեր, անձեր, տեսարաններ, ձայներ, ոճիւրներ, կուէներ, — բոլորը ջարդապատումին sauceովը ու քիչէովը: Եղանակին ամենէն տիպարային կերպարանքը զուք կը գտնէք Անգլիայէն Գեղարքէնէնէն հատուածին վրայ: Կատակ չէ: Տարիներու բացակայութենէ մը վերջը տարագիր բանաստեղծը իր դարձը կ'ընէ իր մանկութեան քաղաքը: Ու ... կը տեսնէ ... կը տեսնէ փոխուած պատկերները, փոխուած տղան, լման քաղաքի մը զիւմագիծը ու կը յիշէ ... պարկեշտ մարդ մը սրտայոյզ, անմահ վկայութիւններ միայն պիտի հանէր այդ թանկագին առիթէն: Բայց զուր տեղը չէ որ մենք կը մտերմանանք մուսաներուն որոնք յաճախ իրենց մարմինները բառերու մշուշովը վարագուրած կ'իջնեն մեր մօտը: Այդ է պատճառը որ Սէթեան այդ սիրական վայրերէն, յուշքերէն ալ անտանելի բառամարտ մը միայն յաջողի գործագրել:

Միակ կտորը ուր որոշ ապրում մեղի հասնի ամենէն քիչ մեղքով, տառապանքով՝ Վալտէր Եղարքէն է, թէև Մէր Պարսկէն (Եղիա) շատ փառաբանուած կտորին չարաշուք ազդեցութեան մէջ մարմին առած: Բայց Սէթեան աւելի պարկեշտ է, չըսելու համար աւելի խղճամիտ, վախկոտ, զգուշաւոր արձակագիր մը: Ձայն սկսողը կը համակուի որոշ ախորժով, թերեւ ոտանաւորին, միւս արձակներուն անտանելի, օղային, անպարկեշտ խաղերէն պահ մը ինքզինքը ազատուած գիտնալուն: Այժմ, որ

գոյնը կը փնտռէ ու կը գտնէ. գիծը գիտէ պատշաճ ու պարկեշտ քաշել. Անշուշտ Աէթեան միշտ ու ամէն տեղ բանաստեղծ է, այսինքն բնութիւնը ներկող զպրօցի մը անսրբազրելի աշակերտը: Բայց այդ կտորին մէջ ընդարձակ մարդերու հետզհետէ մատուցումը նայուածքի զաշտին պատճառ է որ արագ ըլլայ հետեւելու և սալու արարքներուն մէջ: Յետոյ կան մտածումներ, պատմութեամբ թելագրելի (ու 1870ի մարգերը fort են պատմութիւնը այդպէս իբր ժանեկազարդում կարատելու ածայրաբութեան մէջ: Ձերազ ամենէն հասարակ քրոնիկին մէջ իսկ առիթը կը ստեղծէ պատմական քանի մը խոշոր անուններ տեղաւորելու: Ծանօթ ենք Եղիային յիմարական մենագարութեան, առանց պատմական յատուկ անունի մը (մարդ, տեղ, դպրոց) գրութիւն մը ստորագրելու: Վալէն Նեղոսը ունի ուրիշ ալ թելագրանքներ, հայ տարագրին հոգեկան զիճակէն: Կ'անցնիմ:

Աէթեանի արձակ էջերը բնու մըն են իր յիշատակին: Ձեն պաշտպանութիւն ոչ մէկ բարիքով: Ու կը կրկնեն իր ոտանաւորին դէմ բանաձեռուած վճիռը: Անոնք գրականութիւն ընելու չարաչաք հիւանդութեան տաւորդ փաստերը կը մնան: Ու կը դառնան դատապարտութեան անհրաժեշտ փաստեր, մանաւանդ ժամանակին ընդմէջէն: Ասոնք ստորագրողը յիտունէն վեր փորձ, հանգչած, գրականութեան բոլոր քմայքները չափած մարդ մըն էր: Տղու մը գրչին տակ պիտի մնային հանդուրժելի, առնուազն բարեւաման խոստումի մը իբր նշաններ: Ձափահաներու չեն ներուիր կարգ մը խակութիւններ, որովհետեւ անոնք անսրբազրելի մնալու սահմանուած են:

Կ'անցնիմ նորավեպերու: Թիւր շատ չէ անոնց: Բայց յատկանշական կողմեր կը պարզեն Աէթեանին ախորժակներէն որքան արեւմտահայ գրականութեան մեղքերէն: Անոնց աշխարհը Պոլիսն է որ կուտայ ամբողջութեամբ (բացառիկ պահակեր մըն է Նեղոս Կէրէնը): Ու այդ Պոլիսին մթնոլորտը ունի անոնց ներքը որոշ թանձրութիւն մը: Երբ այդ նորավեպերը կը կարդաք քիչ մը ուշադրութեամբ, տակաւ ձեր մաքին մէջ կ'ուրուանայ, յետոյ կը կերպարանուի յստակ, անձածկելի տրամութիւն մը, հաւանաբար արդիւնք աւելի բարձր ցաւի մը: Յաւը ոչ թէ այդ նորավեպերուն գրական ձախողութիւն — որ կրնար քաւուիլ հազարումէկ ուրիշ նկատուածներով(*) — այլ անդադնալի կու-

(*) Ունինք նոյն ձախողութիւն շատ աւելի ընդարձակ մէկ փաստը Բշոյ Դեղամի գործէն որուն Տարօնի աշխարհէն հանած պատկերները,

բուստին որուն վկայութիւնն են այդ խեղճ ու պատառ գրուագ-
ները: Խնչ յուզումով ես կը յատիմ այդ Պոլիսին, փարթամ
քաղաք, թերեւ մեր Անիներուն, Դուիններուն, Սիսերուն,
Աղձններուն վայելած վարկն ու փառքը քանի մը պատիկ ետ
ձգող: Այս դարուն սկիզբը, անկէ առաջ տարի առաջ մինչեւ
չքեղ ժողովուրդ մը կ'ապրէր հոն, հրաշալի ընդունակութիւն-
ներու փաստերը ամէն մարդի վրայ արձանացուցած: Ունէր մշա-
կոյթ մը յատկանշող բոլոր առաքինութիւնները և ունէր մա-
նաւանդ բացառիկ ալ բախտը ցեղին ու ժերը անընդմէջ ձգող ու-
թեամբ մը աւազանելու, չըլլալով արեւմտեան ոտաններուն
մեկալօքոլիսը, այսինքն ցեղային հոսուտին անմահ ազրիւրներէն
զրկուած զանգուածը մեծ ու մահապարտ քաղաքին սր չի կրը-
նար իր արիւնը նորոգել ու ինքնիր մէջ նրբանալու, ապա այ-
լասերելու գաղափարուած է անվերաքննելի կերպով: Դիմե-
ցէք պատմութեան, դուք հարիւրներոյ պիտի գտնէք այդ Եւր-
տում ճակատագրին վկայութիւնները, սկսելով հեռու եզրպտա-
կան ոտաններէն, ասորական ու պարսկական մայրաքաղաք-
ներէն մինչեւ Հոովմները ու մինչեւ Պոլիսները յոյներուն, խոր-
քին մէջ առողջ ու զիւղացի, հողին կապուած մեր ժողովուրդը
իր արեան լաւագոյն *métastase*ները դրած է այդ Կոստանդնուպո-
լիսը յօրինելու տանի: Երեք դարու սա բնական ընտրութիւնը
մեզի արժած է թերեւ մեր բնագաւառին ակարացումը, բայց
դրած է փառքն ալ այդ Պոլիսին: Երբ հոն էինք, մենք անոր
մեղքերը միայն աճեցնելու անփառանակ խաչակրութիւնը ը-
րինք, ամէն ճակատի վրայ: Հիմա միայն իր բոլոր շքեղու-
թեանը մէջ կը պայծառակերտուի իմ հոգին աչքերուն մեր ժո-
ղովուրդին այդ հոյակապ յիշատակարանը: 1896էն վերջը Աէթ-
եան կ'ապրի իմ վիճակը իր Պոլիսէն: Է աւելի բախտաւոր քանի
որ տարագրութիւնը զեւ չէ կատարելագործուած իր ժողովուր-
դին բնաջնջումով, մանաւանդ գոյութիւն չունի սփիւռքին զը-
ժովիքը որ մեր մարմինը մաղ մաղ ծածկելէ ետքը օտարին թոյ-
ներովը, փաթթած է մանաւանդ մեր հողին, անկէ ուտելու,

խառն պատմութիւնը, քնարաշունչ նկարագրականները այսօր դարձեալ
կը ծառայեն բանի մը որ ոչ նուազ կարեւոր ու արժանաւոր է թերեւ
որքան Որուանձտեանցի հաւաքութիւնը: Ատիկա հում կեանքն է, ճիւրիմ
աստուածային բարիքը որ վաղը, քանի մը հարիւր տարի վերջը միս միտակը
պիտի գիմանայ, իմ ժողովուրդին շատ մէկ ամուր, հարուստ հատու-
ծէն ազատուած բարիքին, հոգեխառնութեան անփոխարինելի մթերք-
ներովը:

սրբելու համար մեր ցեղային գերագոյն պահպանակներն ալ — մեր կրօնքը, ժամը, զիրը, բարքերը, Հիմա կը գրուին զիրքեր որոնք հայհոյութիւն են մեր հոգիին երեսին արձակուած, ու կ'արժանանան ոչ միայն զնահատման այլեւ կը դասուին իբր անհաւասարելի զեղեցկութիւններ, այս ցեղէն երբեք չէ ստեղծուած . . . : Դառնալով Սէթեանի նորավեպերուն, կը մասնաւորութիւն ու կը տեսնեմ զանոնք փառքին ընդմէջէն արեւմտահայ նորավեպին որ իր մէկէ աւելի մշակներուն տաղանդովը մեր գրականութեան մէջ արական յաղթանակ մը կազմեց մէկէ աւելի սերունդներ խանդավառելու բաւող : Սէթեան ոչ միայն կարողացած ալ ապրած է Զօհրապի նորավեպերը, ոչ իբրեւ գրական ազդեցիկ յաջնորդուած, ինչպէս նկատուեցան այդ կտորները այս դարու սկիզբը, պատրելով զանոնք հեղինակող աստուածային մարդը ինչպէս զանոնք հիացող զանգուածը, այլ այն ներքին իրողութիւնը որ այդ քաղաքէն վերբերուած տիպարները, յուշերը, ցանկութիւնները կը համախմբէր, կը միաձուլէր : Մեքէ ժողովուրդ մըն էին, 1890ին, չեմ ըսեր առաջին անգամ, այլ երկար, դարաւոր գերութենէ մը անբանացած ոչխարահօտէն «նորափետուր» պիտի յանդգնէր եղիտ, ինքզինքը իր ոտքերուն վրայ տարօրէն զնող մարդերու ընդարձակ միութիւն մը : Սէթեան անցած է երեք սերունդի հոգեխառնութեան մէջէն : Սէթեան ապրած է բոլոր ծանր ու խորունկ կիրքերը 1870ի, 1880ի, 1890ի մարդոց ու 1900էն վերջն ալ բախան է վայելած քիչ գրողներու վիճակուած, — բախտը կեանքին ու արուեստին ընդմէջէն որոշ բացառի մը միջոցէ ու ժամանակէ հետաւորութեան մը : Բաներ որոնք մեր կեանքը անկարող են բարեբախտաբար յիշատակի վերածելու, բայց զայն կ'ազատագրեն ներկային սպաննող նկատուածներէն, կապանքներէն : Վստահաբար կըրնամ ձեզի յայտարարել որ Ալէհաբէլ Կարաէֆէ (Զ. Նոյանի) չէր կրնար գրուիլ Պոլիս ոչ ալ 1910ին : Գրուեցաւ այդ զիրքը ճիշդ ու ճիշդ յարմարագոյն պայմաններու հանգոյցէ մը պաշտպանուած : Ու զուլս — գործոց մըն է անիկա : Ու եթէ մօտէն քննէք անոր ճարտարապետման մեքենականութիւնը, պիտի զանէք շատ պարզագոյն բան մը : Իր անցիակին դէմ իրաւ հուզիով մը կենալ կրնալու տարրական առաքինութիւնը, զրեւ կրցող — չեմ ըսեր գրողէս մը ծնող — ամէն մարդու համար կարելի : Տիկին եռալեան մոռցած է թէ գրականութիւն ըսուած իմարութիւն մը կար, որուն իր տուրքը այնքան ազեղալի կերպով վճարէր էր Շնորհաւ Ֆարքէի վէպին, Ալէհաբէլ Էրեւանցի :

որակուած անորակելի պատկերներու կերպարանքներովը ու զիւ մեր ուղղակի՝ այդ կեանքը, իր մանկութիւնը, անդրանիկ պարմանութիւնը անկէ առնելու սրբազան առաջադրութեամբ: Սրգիւնքը ճիգին՝ շքեղ է: Յովհաննէս Աէթեան թող չպատմեր մեզի իր յիշատակները: Բայց ասոր մեզի կեանքը որ այդ երեք տերունիները խանդավառած էր, լացուցած ու իր մաքին ետին Գահիրէի բուրգերէն աւելի ծանր հաստամետ մը ինչպէս կը բռնանար: Տեղ մը ըսեր եմ ու չեմ քաշուիր հոս կրկնելու: Թող շնորհուէր ինծի դար մը կեանք ու տրուէր պատենութիւն գրելու, այդ բիւրաւոր օրերը պիտի մնային անբաւական նուաճելու մինակ իմ գիւղին ապրումները, հազարաւոր գիրքերու վրայ: Կեանքին հետ մի ելլէք կատակի: Մէկ մարդու մը ապրումները կը յորդին հարիւրաւոր հատորներէ: Պալլաք մը միտ մինակը կրնար աշխարհ մը լեցնել: Էւ Յովհաննէս Աէթեան մը չրջան մը նուաճել . . . Պոլիսէն:

Չենք կրնար մարդարէանալ կերպարանքը կեանքին զոր պիտի ունենայ մեր ժողովուրդը ԻԱ. դարու կէսերուն: Պահելով ցեղային ընդունակութիւնները իրենց պատշաճ դարգացման մէջ ու աւելի այդ օրերու մարդոց քիչ մը աւելի արդար, ազատ պայմաններ ու ասոնց հետեանք՝ աւելի բարձր հետաքրքրութիւններ, կը խորհիմ թէ պիտի ըլլայ կազմուած այդ օրերուն ալ փաղանգը մարդոց որոնք ցոյց տային որոշ շահագրգռութիւն իրենց ժողովուրդի հետ ու որքան մօտիկ անցեալէն: Այդ մարդիկը այդ հետաքրքրութիւնը գոհացնելու համար մեղմէ աւելի նպաստաւորուած ըլլալու էին անշուշտ: Անոնք ժիւ. դարու վերջին քառօրը մտապատկերելու համար ըստ արժանւոյն, պիտի ունենային արեւմտահայ մամուլը անշուշտ, իրադարձութեանց մեծ գծիկները, թիւերու և թուականներու ամբողջ դրութիւններ, ու երկրորդական շատ ու շատ աղբիւրներ: Բայց կը հաւատամ թէ մեր ժողովուրդը իրապէս տեսնելու համար անոնք պիտի պրօպէն արեւմտահայ վեպը, վիպակը ուր ապաստան ունենալու ճակատագրուած են մեր ժողովուրդին տիպարային անձնաւորութիւնները: Ան որ պիտի կարդար Աէթեանի նորամէկերը, ի՞նչ տպաւորութիւններ պիտի քաղիր անոնցմէ, միշտ այդ ժողովուրդի մտապատկերման մէջ անհրաժեշտ նպաստները հայթայթող: Պիտի տեսնէ՞ր մեր բարեքը որոնք ամէն ժողովուրդի ամենէն ամուր հոգեյատակները կուտան: Այս մարդերէն դար մը առաջ եւ իմ մասին գրեթէ ոչինչ ունիմ սորվել իմ Աէթեանի վիպակներէն որոնք եթէ յատկի մէկ վրայ կը բարձ-

բանան, կ'ընեն ատիկա, տեղ մը ըլլալու, անոր վրայ կենալու, թաւալելու անհրաժեշտութեան առջև: Այլապէս Աէթեանի պատմութիւնը կրնալին բնութենէն առհրաւէր, Ամերիկան, Եւրոպան, ըսել կ'ուզեմ՝ հոն հաստատուած մարդերու համայնութիւնը ապրելաժողովը ինչպէս և ոչ թէ լայնօրէն իրենց արմատները արձակած ըլլալու արժանիքն ունենալ, այն ենթահողն ի վար ուրկէ կը բուսնին մեր մարմինները ու անոնց ստուերայնացումը յօրինող հոգիները: Աէթեանի վիպականներուն մէջ գրեթէ ոչ մէկ տախտակ մեր բարքերէն, փրկուած՝ իր միջոցներով: Ծաւալի հարցը չորրորդական ազդակ է հոս: Լեւոն Բաշալեան երեք չորս պատմութիւններ մէջ դասակարգի մը հիմնական գիծերը, բարքերու շատ յստակ մթերքի մը վրայ, ձգած է մեզի իր Ժողովուրդներէն: Ամենէն անհաստատ վիպողը՝ Արփարեան, դարձեալ քանի մը հարիւրը չանցնող էջերու վրայով ըրած է սեփականութիւնը ոչ միայն բարքերէ, այլև նուաճած է մտայնութիւններ: Ամենէն անփոթի, խաղարկու, անգրագէտ Զօհրապը միակ պատմութիւններէ մը մէջ (օրինակի համար՝ Փաշալը) քանի մը աշխարհներու բարքերը փրկած է կորուստէ: Չեմ խօսիր Աֆրայէն առջիկէ հատորին կոթողական փառքէն, միշտ բարքերու կալուածին վրայ: Աէթեանի վիպականները արդէն չեն իսկ անդրադառնար նման պարտքի մը գրողին կողմէ:

Դարձեալ Ի.Ա. զարու կէսերուն այդ խուզարկները պիտի տեսնէ՞ն իրաւ մարդեր այդ Պոլիսէն: Չեմ գործածեր տիպար, աւելի պատասխանատու, աւելի հանգամանաւոր տարազը: Ու անմիջապէս փաստը. — գրեթէ համոզուած եմ որ Աէթեանի անձնաւորութիւնները վաւերական մարդեր ըլլալու էին, գրողին զգայնութեանը մէջ ինչպէս թերեւս անձնական աղետներով: Մէթաֆոր կտորին բոլոր անձնաւորութիւնները միջին թիփեր են, այսինքն կարելի մարդեր: Բայց կը նմանին չորցած հողէ աղիւսի, որոնք զժառիտ են մնացած արուեստին հնոցէն անցած չըլլալու: Արդ, կրակէ այդ մկրտութիւնն է ահա որ թիփը կը վերածէ առնուազն զիմացկուն կաւի: Ուրիշ խօսքով՝ այդ մարդերուն հասարակ croquisները կը մնան իրենց սովորականութեանը մէջ որպէսզի զիմացկուն ուրիշ բարեխառնութիւն մը: Տուէք այդ մարդերը Արփարեանին ու դուք պիտի ունենայիք առնուազն քանի մը անթաւաճ ուրուագիծեր միջին քաղքենիին: Այդ Գրիգոր աղան, որ վարպետորդի, քանի մը սնանկութիւններով իր շէնքը շտակած ու նոյնքան թիւով շէնքեր կործանած վաճառականին հիմագիծերը կը թուի թելադրել, այդ Արփար-

եանին գրիչին տակ պիտի բարձրանար անմոռանալի կարկառի։ 2050 թ. մարգերը պիտի խենթենային անոր հարազատութեանը վրայ։ Ժինչգեռ Սէթեանի վիպական մէջ անոնք պիտի գտնեն շատ շատ քիչ մը աւելի տժգունած ինչ որ 1950 թ. պիտի գտնէր ուրիշ մը, կամ ինչ որ ես կը գտնեմ այսօր. — ունէ մարդ մը։ Այդ Միհրան ալան իր կարգին կը կրէ Սէթեանի տաղանդին բոլոր տկարացուցիչ տարտամութիւնները։ Մնիկա պատահութիւն ունի մեզի մարմնաւորելու ձախողած աստուածները, այնքան շատ որեւէ ատեն, բայց բացառաբար շատ՝ այդ 1890 թ. շրջաններուն երբ մեր վաճառականները այնքան արագ կը կրէին կեանքին étapeները ու կրպակէն՝ Շուկայի (Մենմը) վրայ խանութ, խանութէն՝ խաներու մէջ մաղաղամբ, մաղաղայէն՝ ամբողջ խան մը կը վարէին ապշեցուցիչ ճարտարութեամբ մը, օգտուելով հայէն ու թուրքէն, երկինքէն ու երկրէն, ինչպէս աւելի համեստ մարդեր, չես գիտեր ո՛ր ձեռքերէ տակաւ կը մխրճուէին իրենց ծանծաղուտքին մէջ, խղզուելու համար օր մը կա՛մ ցիխին կամ ջուրին խորերը։ Երկու հիմնական անձնաւորութիւնները կը մնան անշահական, վասնզի չեն ունենորում բառին տալով յատկանշական ստորոգումներուն կնիքը։ Պարձեալ քսու ունեներ են Միհրան աղային զոյգ աղջիկները որոնք, կը հաւատամ, իրաւ ապրած են Սէթեանի աչքին առջև, բայց անոր պատմութիւն մէջ մնացած են չեփում աղիւսի ճակատադրով։ Այն մէկ հատիկ նորաժէպը ուր անձնաւորութիւնները քիչիկ մը կը զոռնաւորուին, իրաւ մարդեր թելադրելու պատրանք մը ստեղծելու չափ։ Այդէ անունը կը կրէ։ Այնքան իրաւ է հոն ուրուադրուած տոմարին յատակ կազմելու կանչուած մարդոց խումբը, բայց մեր բախտէն այնքան քիչ, գէշ է մշակուած անոնց կազմախօսութիւնը որ պատմութեամբ դարձեալ կը վրիպի։ Հոն ունինք երանիկ հանրմ մը, մանկամարդ աչրի, երկու աղջիկներով։ Հարիւրներ կը ճանչնամ ես այդ Պոլսէն, ճիշդ ու ճիշդ նոյն պայմանները երկնող։ Հոն ունինք Մարիկ ալա մը, այնքան իրաւ մարդ մըն ալ ասիկա, ամէն քայլափոխիդ հանդիպելի։ Անշուշտ մօտէն կամ հեռուէն ազգականի կապեր, որպէսզի այդ տունի, աղու, գիրքի ու պատուի տէր մարդը զայ Ալիին տունը, ազատ, բարեացակամ, հոգածու, ալիին կարելի դժուարութիւնները հարթելու։ Սէթեան այդ մարդոց օրփիմալները դարձեալ կը հաւատամ որ ունեցած է աչքի աստղ։ Յետո՞յ։ Պէտք չկայ մեծ գուշակ մը ըլլալու որ մանկամարդ ալիին ու պտտուաւոր ազգականը իյնան սիրահար իրարու։

Տոսման ալ ոչ բացառիկ է ոչ ալ խոշոր։ Աէթեանին վրիպանքը կուգայ անկէ որ այս տարրերով անիկա փոխանակ բարեքերու վրիպակ մը ճարտարապետելու, փորձած է իրեն հիմնովին անծանօթ հոգեբանական տալման։ Արդ, այդ վրիպակին գրուած պահուն արեւմտահայ գրականութիւնը գրեթէ կ'անգլիտանար վրիպային հոգեբանութիւնը։ Ու լաւ ընտրուած, լաւ սերտուած այդ երկու անձնաւորութիւններուն շուրջ մեր զգացած շահագրգռութիւնը — արդիւնք՝ լաւ գիտուած, լաւ ճանչցուած գիծերու գործածման — փոխանակ աճելու, ամէն էջի կ'ենթարկուի ջլատիչ ընդհատներու։ Մենք որոշ հետաքրքրութիւն կը շարունակենք պահել այդ կնիկին տառապանքէն, բայց էջերով նոյնը մնալու մեղք մը այդ տառապանքը կը վերածէ անկշիռ եղելութեան մը։ Գրեթէ եղերական գեղեցկութիւն մը մէկէն կը զաննիք այդ կնոջ աղջկաներէն մէկուն զոհարեմանը մէջ։ Անիկա գիտէ իր մօրը մեղքը։ Ու պիտի մեռնի այդ գիտութեան պատճառած տհաւոր քեկումով։ Կարճ այս տողերուն ետին դուք կ'այցուէք արուեստագէտին հրաշքէն որ այդ վրձակները պիտի շահագործէր ահաւոր խորութիւններու առաջնորդելով պատահարը։ Պատմուածքին մէջ երրորդ յաջող անձնաւորութիւնը, հակառակ քիչ, գէշ մշակուած ալ ըլլալուն, մեզ կը համակէ խորունկ համակրանքով մը։ Աէթեան իր գրական կեանքին մէջ այնքան հետապնդած ու միշտ վրիպած լուրման տարրը (մի մոռնաք Յուդաիստ, Տալմայիս, Գալիլայիս ապրողներու սանքիմանքալիզմը) այդ նորաձէպին կէս էջին վրայ վերջապէս կը նուաճէ երբ լուս հալող աղջկան մահուան հետանկարին առջեւ խղճահար, սարսափահար այդ թշուառ մայրը իրեն հանդիպելէ խուսափող աղջկան անկողինին եզրին կ'ըսէ.

— «Գերիդ ըլլամ, խօսէ, բան մը ըսէ ինծի»։

— «Բան մը չունիմ, մայր, հետք Մաքրուհի՝ ձեռքը ազատելով»։

Նորաձէպը յաջորդ էջին վրայ ալ կը պահէ սա սրտախոյզ բարեթիքը։ Աղջկը թաղուած է։ Մայրը, «աշնան առաւօտ մը» գերեզմանին է անոր։ Կուգան բանաստեղծական նկարագրումի քանի մը ծանր, գրեթէ անտանելի տողեր։ Կ'անցնիմ՝ ձեզ չնեղելու համար։

«Յաճկեկ տապանաքարի մը առջեւ հասած, կը ծնրադրէ ու գլուխը քարին յեցած՝ կը մնայ անշարժ»։

Աէթեան տեսարանը յարգարած է իր ռումանթիկ միւս տեսական մղումներուն ներքեւ։ Մի սպասէք rétrospectif մեթո-

տին բարիքը, մեռելէն կեանք իջնելու, այնքան զեղեցիկ արգելեքներով:

Կուտամ ձեզի քանի մը տող այդ ապրումներէն.

... «Կեանքը բեռ մըն է դարձած, ծանր, շատ ծանր որմէ անձնասպանութեամբ խուսափելու արիւթթիւնը իրին կը պակսի: Ծարաւի է մահուան, ինչպէս անապատին մէջ մոլորած ճամբորդը ջուրի: Աղեխարշ լացերով, կողկողազին նալուած քննրով կը պաղատի Երկինքին, ինչպէս երբեմն ընդունայն պաղատեցաւ Աստուածածինին (*), որ զրաւէ իր կեանքը՝ եթէ ոչ ուրիշ բանի համար, զէթ որպէսզի չկարենայ յիշել անցեալը»:

Այս գրեթէ իրաւ տողերուն կը հետեւին Էլիսէ ապրումները

(*) Աստուածածինը Արմաշի Զարխափանինն է: Այդին կը սկսի հովուերգական քաղցրութեամբ պատկերացումով մը ուխտագնացութենէ մը դէպի այդ ուխտավայրը: Պոլսեցիները ամէն աշնան քիչիկ մը կը հանդէժին քաղաքին յոգնութենէն երբ յաջողէին շարժուան մը համար հեռանալ ծանր ոստանին թոհուրոհէն ու գտնել աննենդ վայելքները իրաւ բնութեան: Անոնց վոսփորային վայելքները քաղաք կը հոտէին: Սէթեան այդ զեղեցիկ պատահութիւնն ալ զոհած է նկարագրութեան: Եսը պատմելու մոլուցքի մը մէջ չէ անդրադարձած թէ ինչ անաւոր խորութեամբ յուզումներու հետ կը մտնէր հաղորդակցութեան, հեռիք է որ մտնէր ժամ, զողջւար հոն խռնուած հաղարներուն յուզումովը և պատմէր զգացածը: Աւելին: Անհաւասարիլի pittoresqueով բարքերու դաշտ մը կը պարզէր այդ տաղաւարը, հին օրերու մեր վանքերուն հոգեխառնութիւնը յիշեցնող: Հոն էին այդ Պոլսին ամէն թաւերէն ամենէն յատկանշական նմոյշները, հարուստին հետ չքաւորը, պարմանին աղջկան քով կաթուածահար անոր մայրը, սէրէն կոտորուած այրիին թւին իր որբուկին սրտառու զալուկը, բանուորն ու գրողը, յիմարն ու իմաստունը, կտրիճն ու ... մատնիչը, քով քովի, պահ մը թեթեւալու Պոլսէն ու անոր հոգերէն: Բայց հոն էին մանաւանդ իրաւ բարքերը իրաւ ժողովուրդին, շրջանի գիւղերէն հոն խուժող հաղարներու կերպարանքին տակ, ամէն մէկը իր տարազին հետ, հոն փոխադրելով պարերը, երգերը, խմիչքները, տօնականութեան ձևերը, մոռցած իրենց «սեփ»ին դառնութիւնները, տրտմութիւնները, ուտելով, խմելով, նուազելով օրն ի բուն, գիշերն ի լուս: Եղբայրութիւն մը զառակարգներու, քաղաքի ու գիւղի, ինչպէս ըլլալու էին այդ ուխտագնացութիւնները, քաղաքին մէջ, մեր հայրենիքին վաւերական ոստաններուն ներքոյ, — Վան, Սիս, Էջմիածին: Ես աղբեր եմ այդ պահերը իմ պատանիի հոգիին բոլոր թարմութեամբը ու զգացիւր զարկը իմ կուրծքիս տակ իմ պապերուն ոչ միայն հաւատքին, այլ կեանքը ընդունելու, հագնելու իրենց զմայլելի ամբողջեան, իմաստութեան: Տարի մը ակոսայէն, հացէն, կեանքէն զրկանքով՝ ճարուած ոսկին, մայր մը, իր գաւկիին սիրոյն, ոսկի սիրտ մը կը բերէր ու կը կախէր այդ Աստուածամօր կուրծքին: Ու զոհ էր այդ վճարքով: Տղան, կրնար մեռնիլ: Բայց կրնար ալ գտնել իր սիրտը:

այդ անցեալին : ... «Ո՛հ, այն հրճուալից զրկախառնութիւն-
ներն ու սրտազեղումները իր երիտասարդ ամուսնոյն հետ՝ իրենց
ազջիկներուն մատղաշ գլուխներուն վերեւ Ո՛հ, այն ժպիտները
զոր կը փոխանակէին՝ իրարու ցոյց տալով ճիշդ բազումներու
ծիւնն ու բամպակը, նորաբոյս մաղերու ոսկին ու մետաքսը,
դեռափթիթ հայուած քներու ծագումը կուսած աղիկներու նման» :
Անշուշտ, մարդ զուր տեղը կէս դար մուսաներու չի սիրաբա-
նիր : Ամենէն խորունկ ու բնական ապրումներն իսկ մենք պիտի
տանք սա ծիրանաժառ ոսմանթիլովով :

Այս երկու նորաժէպերուն վրայ քիչ մը մանրամասն սա-
ցուցմունքները նոյնութեամբ բայց աւելիով գործածելի են միւս-
ներուն բոլորին համար ալ : որոնք կը տառապին ընդհանուր տկա-
րութենէն Սէթեանի եղանակին : երբ անիկա իրաւ մարդերու
առջեւ իսկ անկարող կը մնայ կեանքին բնականութիւնը, սոսկա-
կան շահեկանութիւնը նուաճելու ու սեւեռելու, կը հետեւի թէ ինչ
տրամութիւններու պիտի մնայ ենթակայ այն պարագաներուն ուր
տրուած ուրուագիծէ մը կը յաւակնի կենդանագիրներու բարձ-
րանալ : Կարգացէք Աէֆֆէն Տը Զրաֆէրէն կտորը : Մանր տառերով
տասնըմէկ էջեր ունի Յովհաննէս Սէթեան (իր կեղծանունն էր
Եղոսեայ Վանսնրնսեհ, անունին զիրերովը կազմուած տարահն-
չիւն տարագըր, հաւանաբար եղիտայէն նախանձուած ու ճարուած)
իր տրամագրութեան տակ, ծովամոյն (ինքնասպան) երիտա-
սարգի մը հոգեբանութիւնը յօրինելու : Դարձեալ չեմ ենթարկեր
կասկածի այդ երիտասարդին երիտասարդ իրականութիւնը :
Բայց ձեզ կը զրկեմ պատուածքին որպէսզի գիտնաք թէ ո՞ր
ժողովուրդին կը պատկանի անիկա : Կը գուշակէք սակայն որ
այդ երիտասարդը սիրուհի մը ունի անշուշտ որուն հետ պիտի
ուզէր առանձին ըլլալ այդ երիտասարդը, առտու մը : Եւ որով-
հետեւ մէկ օրինակ հաւասար է տասը խօսքի, ձեզի կուտամ
պատենութիւն այդ վիճակը ապրելու Սէթեանին զրիչին տակ :
... «Ո՛հ, այս առաւօտ բնաւ չէր նման ուրիշ առաւօտներու :
այս արեգակը չէր այն զոր ամէն ժամանակ տեսան մարդիկ
երկնից մէջ : Ծաղիկներու բաժակները, դեռաճեալ տերեւներ ե-
բոցբոջներ, այգուին շաղովը ցօղակաթ, մէն մի աչքեր էին մինչ
յարտասուս գորովայոյց ի տեսեալ այս երկնաւոր երանութեան,
այն երկու հոգեւոյ երանութեան, մոլորած, կորսուած, մեկու-
սացած, մոռացիտ անձին՝ այդ բուսեղէն ծովուն խորհուրդին
և երկրի ալքերէն բարձրացող և ամպերէն տեղացող այն ան-
համար, անըմբռնելի ազմուկներուն լուութեան մէջտեղ» : Ծանչ-

ցածք սա առաւօտը որ երկու հոգիի վրայ կը ցաթէր։ Բայց մօտիկ ըրէք, ուղղակի շարունակութիւնը. «Սոսանձին քեզի հետ ո՛վ Մ... արշալոյսի շունչէն փայփայուած այն ծիւրերուն անասելի շրշիւնին մէջտեղ, նոր ապրիլ սկսող աշխարհի մը մտադաշ ձայներովը օրօրուած. երգերու այն սկզբնաւորութեանց դանդաշու մովը երազացնոր, լոյսը երկնոյ բնութեան հեշտալի երկունքի սարունակներուն մէջտեղ, բնութեան որ կը դողար արփաւէտ երկինքի հուրերուն ջերմաջերմ համբոյրներուն տակ ... — Ո՛հ, ո՛րպիսի հիմէն»։ Անտարակոյս, Պր. պուէտ, անտարակոյս։ Որպիսի ոգրերգական հիմէն մը։

Չեզ կ'ապահովցնեմ որ այդ տասնութիւն էջերը գրուած են այս նկարագրական հիւանդութեան հաշուին, անոր հեշտանքին մէջ։ Սէթեան իրա՞ն որ մեծ բանաստեղծ էր, ինչպէս կը թեւագրէր անդգամ Պարթեանը։

Բարքերէ, Ժպարներէ սա աղքատութեան, անհարազատութեան առջեւ ծանր է աւելցնել կառուցողական բնագոյնի ալ նախնականութիւնը։ Վերի կտորին մէջ, Մէկնաթէ ճշ ջրափէջը, վերջին նախադասութիւնը կ'արտագրեմ։

«Երէկ, պատահմամբ իմացայ որ Մ. Նշանուհի է Կարապետ Ա. եանին հետ»։ Չարաշուք պատահա՞րը որ կը հեղինակէ ծովամոյն անձնասպանութիւնը մեր բանաստեղծ հերոսին։ Սէթեանի վիպակները այնպէս ծանրածանր առարկութիւններու ընթացք տուող վարդապետ մը ունին։ Յարդէ Բոջ ճշին հերոսը, Տիգրան, որ իբր լեզափոխական ամբաստանուած ինկեր էր բանա, «չլիմանալով հարցախնդրեան ճանջանքներուն՝ մեռած եր»։ Այս, ինչ կ'ախտելիք սոմանթիզմ է սա մարդերը այդպէս անխնայ հալածողը։ Մեռնող այդ տղան նշանած մը ունի որ կը սպասէ ... մօտիկ ըրէք։

«Մայիսի առաւօտ մը։ Սկիւտարի բարձունքներուն վրայ նորածագ արեւը, որ դեռ իր բոլոր ոտկին չէր սփռեր, մշուշի սպիտակութիւն մը կը ծաւալէր։ Ոչինչ աւելի հրապուրիչ քան այդ մէկ քանի վայրկեանը։ Հազիւ արթնցած թռչուններ, հեռուէն հեռու, ասղին անցին ձայն կուտային իրարու։ Յօդաթուրմ տներն էր լոյսը վերտաին տեսնելու ուրախութենէն կարծես՝ կուլալին։ Դեռ խաղաղութիւնը, անտահման, կը թազաւորէր։ Կեանքը էականութեւ ծոցին մէջ կէս քուն կէս արթուն, կը գանգաւէր։ Յաւիտենական Իսիսը աչքերը կամաց կամաց կը սկսէր շփել՝ թմրութեան արբեցութիւնը փարատելու համար։ Չամըճալի բարձրերէն, վերէն, հորիզոնէն, կապոյտէն, աներկ-

ւոյթէն, անտեսանելիէն, մէկը, հոկայ մը գալու մօտ էր, կեանքը, արթնութիւնը, շարժումը, այսինքն արեւը»:

Այս, երկրորդ աշտ, Պր. Սէթեան: Կը հաւատանք որ արեւը կուգա՞յ, այսքան ամականներէ վերջը: Է՞, ըսեր եմ քիչ վերը: Դուք կատակի կ'առնէք հիմա այս հերոսապատումը: Բայց 1900ին անիկա լրումն էր արուեստին: Ողբալին այս ամենուն մէջ ան՝ որ արձակ քերթուածէն սա զտածումը մենք կը զըտենք բոլորովին երիտասարդներուն ալ մօտ: Այդ 1900ին Արշակ Չօպանեան ուրիշ ոճ պիտի չգործածէ հողեմիճակներ արտայայտելու համար (Հայրենիք օրաթերթի արձակ էջերը, Ծաղիկի վիպակաները): Բիւզ մը աւելի անգին Սուրէն Պարթեան նոյն թէքնիքով պիտի յօրինէ իր անկանգնելի Ասյա: Նոյնիսկ իրաւ ու զուսպ արուեստագէտ Տիկին Եսայեանը իր արձակ քերթուածներուն մէջ (Աշուղը, Խաչմա, Ալեքսանդր Վերջալոյսէ) հազիւ պիտի ազատագրէ սա անտիքէն իր վարկը, շնորհիւ իր զմայլելի ըզգայնութեան: Բայց նոյն այդ թուականներուն կան Թլկատինցիի, Զարգարեանի, Զօհրապի իրաւ պատմութիւնը:

Եթէ զբաղեցայ Սէթեանի վիպականերով, չըրի ասիկա հաճոյքով: Մտրդ կործանելը միշտ արտում առաքինութիւն մըն է: Իմ մէջը երումները բաժն օտկայն որպէսզի արեւմտահայ գրականութեան դէմ բանաձեւուած դատապարտութեան վճիռները ըլլային հասկնալի: Թող ուղածնին չափ գովեն Սէթեանը՝ Զրաքեան որ անոր քերթուածներուն մէջ չեմ գիտեր ազնուական ինչ մը կը զգայ, Պարթեանը՝ ձեզի ծանօթ զրդապատճառներով: Թիֆլիսի մէջ մարդիկ կային կարգացած մեր Իրապաշտները, որոնք անգամ մը ախանին առած գիտէին Կրտսեր Ռոմանթիքներուն քերթուածներէն ու հիմա այդ զպրօցին չարափոխեալ մէկ կերպարանքը կը տեսնէին վերեւ արտագրուած չքեղ նմոյշներուն փարթամ առատութեամբը ու կը նախատէին այդ հոս հոսները որոնք յիսուն տարուան ընթացքին ոչինչ էին սորված, ու չէին մոռցած առնուազն վենետիկը: Պատմուածք մը գրել տալն է գրագէտի ամենէն ապահով փաստը: Կրտսեր Ռոմանթիքներէն ոչ մէկը այդ վտանգը զիմաւորած է Սէթեանին հերոսութեամբը: Թէրզեան իր ծիծաղելին կը կարծէ փրկիլ աւղափութեան ապաւինելով (Հրաշ և Արաւ, Ճգնաբլու և այլն) ու սրէման ու նորազգացը իրարու կը խառնէ անհաւատալի միաւատութեամբ մը: Իր ըրածին մօտ բան է ինչ որ կը գտնենք Աճեմեանի ստանաւոր պատմութիւններուն մէջ (Խօսեցայ Սաղապողէն), Պէրպէրեան իսկ չէ գիմացած փորձութեան, ստորագրելով զըզ-

բոցականի մը կեանքէն պատմում մը, բայց լըջօրէն մնալով
դպրոցական: Ուրիմն վրիպանքը ընդհանուր է որքան բացարժակ:
Ինչո՞ւ:

Շատ են ազդակները, իրական որքան ենթադրական: Կը
դնեմ մէկդի բալօր մեղմացուցիչ գէպքերը և կը ծանրանամ
մէկ ու նոյն մեղքին, գրական ֆալանգի անբաւարարութեան:
Ինչ որ զարկած է այս մարդոց բանաստեղծութիւնը և զանոնք
մղած տաղաչափութեան, ծնունդն է միշտ այս արմատական
խօթութեան: Ի վերջոյ երկու ածական, մէկուէս մակբայ, քանի
մը բացադանչութիւն տողերու վրայ յարդարելու ածպարարու-
թիւն չէր կեանք պատմելը: Վիպակը կարօտ ալ չէր մեծ տա-
ղանդի, ըսի անգամ մը: Անիկա կ'ապրէր կեանքով, այսինքն
մեղմէ դուրս կեանքին բարիքովը: Ու տաղաչափները գրեթէ
միշտ այդ իրականութիւնը պիտի ստերիւրեն, զայն անարժան
համարելով իրենց ուշադրութեան:

Արձակին ինչպէս չափաբերեալ տողերուն մէջ պատիժը
մէկ է սակայն: Ձենք կարգար այդ կարգէ էջերը:

Ժ.

Կը մնայ խօսիլ արձակագիր Պերպերեանի մը վրայ:

Կը կանխեմ ընթերցողին անհանգստութիւնը, այս անունին
հետ իր մտքին սաղմ կապած մէկէ աւելի հակասական դատաս-
տաններէ:

Իրապաշտները, Եղիայի հանդէպ իրենց ահաճ տրամադրու-
թիւնները թերեւ աւելորդ խստութեամբ մը, տարածեցին անոր
ընկերներուն ալ վրայ: Պոլսէն դեռ չբաժնուած. Սինտա Չերպ
մեկուսացուած է ճարտար խաղերով: Եղիան վերածուած իր
հիւանդի խրտուիլակին: Պերպերեանը հոմանիշ ըրած են հոե-
տորութեան, անոր ատենարանութիւնները (ժողովրդական լսա-
րաններու մէջ) դարձնելով ծիծաղելի, չնրելով մանաւանդ ա-
նոր ճառերը, աւելի հարադատ վերնագրով՝ հուսկ-բանքները, իր
դպրոցը աւարտող տղոց ուղղուած, ճառեր՝ որոնք հանգիստեան
են, ինչպէս պարտաւոր են ըլլալ, բայց կը պահեն խօսքին ջեր-
մութեան հետ որոշ մտածումին ալ բարիքը, անշուշտ դժբան-
կան բարոյախօսութեան մթնոլորտով մը ծանրաբեռն, բայց
վերջապէս ապրումին ջերմութիւնը յաճախ փոխանցող ունկն-
դիրներուն:

Արուեստագէտները այդ արժեզրկումը փութացին ոչ միայն սրբագրել, այլև անցնիլ աւելի անդին: Ձրաքեան երբ ճմեծապայծառ իմացականութիւնն՝ կ'անուանէ իր ուսուցիչը, բարաճոփմը չէ: Արուեստագէտներու կրասեր թիւը (թէպէկ և ընկերք), մամուլը և ազգային շրջանակները այդ վերանորոգուած պաշտամունքը կը տանին իր բարձրակէտին՝ չքեղ յորեկանով մը: 1900ին Ռեթէս Պէրպէրեան արեւմտահայ գրականութեան զահերէց անձնաւորութիւնն է:

Եւայս՝ վաստա՛ կը:

Առանց ալ Առաջին Կրեւելի ռաւանաւոր մասէն: Անցողակի ըսուած էին հոն ներկիակ Արշակունիքի ալ մասին քանի մը խօսք: 1877ին լոյս տեսած այդ հաւաքածոյին արձակները կը բաղկանան հառերէ, այլեւայլ անունին տակ խմբուած պատմական, բանասիրական, վիճարկական գրութիւններէ: Անդրանիկ այդ հատորին մէջ չափուածին բաժինը չեմ աճեցնել: Պէրպէրեան այդ գիրքէն վերջ տակաւին պիտի աշխատի քսան մը տարի: Բայց պիտի աշխատի արձակի վրայ: (Իր թարգմանութիւնները, զըպրոցական երգերը չեն պատկանիր բանաստեղծութեան: Գիտէք ի՞նչ և Յոշքը): 1880ին՝ երկու գրքոյկ, զարձեալ բանաստեղծութիւն (Թշառառութիւն և Գոմ, Գեղեցիկ և Գեղարեւոտ, Ժողովրդական շքանքներ): Մարտի և Իր (1885) քրոնիկներու շարք մը, Հրաշքայ կեղծանունով լոյս տեսած Սէրաֆիմի հանդէսի 1883-1884 տարիներուն: Այս հատորին մէջ է որ Պէրպէրեան սկիզբը կ'ընէ իր հոլակ-բանասիրուն: Հոն կան նաև ուրիշ առիթով խօսուած կրթական հոլեր և դաստիարականքներ: Գաղափարային իճ իճ (1901) ուր ամփոփուած են վերջին խօսքերը — հանդիսական խօսքեր, Կիրակնուր խօսքեր, հրաժեշտի խօսքեր, գրեթէ բոլորն ալ լոյս տեսած արեւմտահայ մամուլին մէջ (1886-1901): Գործ և Գործիք (1907), կրթական և գրական նիւթեր, զարձեալ լոյս տեսած մեր մամուլին մէջ: Առանց մէ գուրս՝ Իր (անտեսագրիտական բանաստեղծութիւն) ու դասագիրքեր (անտեսագրիտական և լեզուական): Պէրպէրեան այն բանաստեղծ գրողն է որ յաջողած է իր ցրիւ յօդուածները համախմբել հատորներու ծածքին տակ:

Բան մը կ'ըսէ՞ ձեզի այս ցանկը: Ու եթէ այո, այս ցանկը և Պէրպէրեանի վարկը իրարու կը միան հաւատարիմ: Յետագայ շրջանը պատասխան մըն են այս հարցերուն:

Այն լայնամտութիւնը որուն վաստը տուի Հաղապարհի առաջին հատորին մէջ, Ձարթօնքի Արուեստի վաստակաւոր գէմ-

քերը արժեքները կարենալու համար, Պէրպէրեանին առթիւ ալ կը միջամտէ որպէսզի նաեւրուի իրեն կենդանագիր մը գրագէտի: Ինքզինքս չեմ արդարացներ ճառախօսներու հանդէպ սա զիջումին համար: Ուսուցիչ մըն էր Ստեփան Փափաղեանը, զօրաւոր անձնաւորութիւն ու խօսքի ինչպէս զիրի որոշ հեղինակութեամբ: Բայց այդ շնորհները այդ մարդը զործածեց իր անձը արժեքներու: Անձ մը կ'արժեքներու կիրքերու, զուպարի, գրոհի ու աղմուկի ընդմէջէն: Խօսեցաւ, գրեց Ստեփան Փափաղեանը. Պէրպէրեանին նման դասագիրքեր ալ հրատարակեց ու եղաւ ազգային շրջանակներու մէջ մեծազգեցիկ արիւրուն մը: Բայց Համալսարանէն սա յիշատակութիւնը ընելով իր գէմքին, կը մատուցանէ անոր անձին օրինակը, հանրային սպասաւորին հանդէպ յարգանքի հարկէ մը մղուած, ինչպէս ուղեւոր ալ թեւադրել ալն միւս ցաւը որ առաջ կուգայ ուժերու անպտուղ վատնումէն: Պէրպէրեանի գործը — այդ ճառերու միջոցը — անշուշտ չի պատկանիր զրականութեան պատմութեան: Բայց վկայութիւն մըն է, ինչ որ չեն կրցած ըլլալ Փափաղեանի, Մուրաթեանի, մանաւանդ Ա. Հայկունիի գործերը, վասնզի այս բոլորին ետին անձին պաշտամունք մնացած է տէր ու տիրական: Ոչ նուազ կրքոտ, յանձնադաստան, յաւակնոտ անձնաւորութիւն մըն էր, իր խորքին մէջ, մեթէս Պէրպէրեան: Բայց ունէր, այդ կիրքերուն քովն ի վեր, շատ ապահով զգայարանք մը ողջմտութեան: Յետոյ, իր կրթական գործը ըմբռնելու և վարելու շատ ապահով ուրիշ զգայարանք մը:

Ուրեմն կը մերժեմ իր անձին ու գործին շուրջ զոյացած մերժումին, ուրացումին անդթութիւնը որքան այդ անձն ու գործը տօնադարգոյ հէքեաթը: Պէրպէրեան ծիծաղելի հոկտոր մը չէ և կամ գէշ ազէկ ինքզինքը պարտագրող ուսուցիչ մը: Անիկա, առանց համալսարանական պատրաստութեան, քսան անգամ աւելի արդիւնք է տուած քան իր ժամանակի և աւելի վերջը գոյցերիական կամ գերմանական համալսարաններէ վերջապէս մեր սուտ ու փուտ մանկավարժները: Ասոնք յոտակ խօսքեր են: Բայց այդ Պէրպէրեանը չէ նոյն ատեն ալն մեծապայծառ իմացականութիւնը որուն շնորհարաշխը եղաւ Զրաքեան, հաւանաբար միսքիֆ կեղծիքի մը ընդմէջէն, հաւատալով իր ըսածին, իր չհասկցած իմացականութեան (բոլոր անոր համար անկայուն է յաճախ) փաստը գտած ըլլալը յայտարարելով հաւանաբար այդ մարդուն անձին մէջ: Կործը 1906ին մէջակողն էր ու անկարող մշուշ, տարակոյտ ստեղծել: Դաստիարակի մը

ճառերը շատ շատ գաստիտիտի մը ճառերն էին ու Պէրպէրեան զրազէտի բացառիկ տուրքեր ալ չէր յայտնաբերած այդ ճառերուն տարողութիւնը գունաւորելու, մշուշելու, ընդարձակելու :

Ըսի թէ ինչո՞ւ ուրացան զինքը : Բայց 1890էն առդին ուրացողները իրենց թերթին մէջ (Հայրէնէ) անոր ստորագրութիւնը (Կիրակնաւոր խօսքերու շարքը հոն է լոյս տեսած) — կ'ախորժէին օգտագործել : 1910ին Պէրպէրեան որոշ խաւարում մը կ'անցնէր, ինծի համար հասկնալի դարձեալ, քանի որ տասը տարի առաջ անոր փառքը, լիայիր որքան կատարեալ, կանչուած էր ստեղծելու այդ հակազդեցութիւնը : Այդ օրերէն երեսուն, քառասուն տարիներ են անցեր : Արեւմտահայ գրականութիւնը, այդ մարդուն զաւակին՝ Շահան Պէրպէրեանի գրիչին տակ, չահած է ճշմարիտ, խորունկ, անհոնտոր խօսքին նմաններն ալ, միշտ նուազ — բանքին շարունակութիւնը իբրեւ, բայց այս անգամ առանց զարդի, տօնական հանդերձանքի : Հիմա գիտենք թէ ինչի կարելի էր խօսիլ երկրորդական ուսում աւարտող աղոց, երբ նման բանի մը կարիքը զգայինք : Այնպէս որ ուրացողները իրենց արդարացումը չէին կրնար այսքան հեռուններէն գուշակած ըլլալ : Իրողութիւնը սակայն, իմ կարծիքով, ծնունդ էր Պէրպէրեանի իբր բանաստեղծութիւնը ոչ միայն թէքնիք այլեւ աշխարհ կը փոխէ : Ըսի՞ թէ տասը տարի առաջ Մեծարենց մը կարելի պիտի չըլլար : «Մեծապա՛ծ առ խմայականութիւն»ին հէքեաթն ալ նման է ուրիշ նման հէքեաթներու : Արձակագիր Պէրպէրեանին մէջ ես կը գտեմ —) — քրոնիկագիրը, ք) — մեծումներու մարդը, ք) — գրական հարցերու հետաքրքիր մը, չըսելու համար քննադատը :

Այս բաժանուններէն առաջինը, քրոնիկագիրը, իր կարգին կը մնայ ենթակայ որոշ ճշգրտմի մը, retoucheի մը, եթէ կ'ուզէք, որպէսզի ձեր մտքին մէջ չստեղծէ շփոթութիւն : Քրոնիկը, մանաւանդ 1880էն առդին, մեր գրականութեան մէջ յաճախ գեղեցկութիւն մըն է : Այդ բանին հետ իմ մտքիս մէջ կը յառնեն փառքերը Գ. Օսեանին, Արփիար Արփիարեանին, Լեւոն Խաչաւեանին, Տիգրան Կամսարականին . . . : Դարձեալ այդ բոլոր ինծի կը թելադրէ շքեղ վաստակը Պարոնեանին որուն Աշխատէ՛ք Ձեզե՛քը քիչ մը ձեռագրած, բայց աւելի գիմարեցուն քրոնիկներ են, ուրիշ բաներ ըլլալէ առաջ : Ու կը թելադրէ, նոյն գրածով, Մերեմքը, Մամուրեանը, Չեռազը, Յովան, այսինքն մեր լրագրական ճաշակին վրայ շրջանէ մը վկայութիւն : Զօհրապ Է Զրանդ Աստուր, ինչպէս Զրանդ այդ սերուն մէջ զրին ուրիշ տար-

րեր: Պէրպէրեանը: Մարտի 1 և Իրքը այն հատորն է ուր 1880ի մարդոց և իրողութեանց շուրջը երկտասարդ իմացականութիւն մը իր տպաւորութիւնները, դատաստանները կ'արձանագրէ, երբեմն ջերմ, յաճախ ողջամիտ, միշտ պարզ ձեռք մը: Դիտեցիք հարկաւ որ զգուշացայ գրականէն: Արդ, այդ գրականը չունէին Արփիարեանի Օրաւն կէտէն վերտառուած կտորները, Հրանդի Պաշտօնէին կէտէնները: Բայց կը կարգացունին մինչև այսօր ու պիտի կարգացունին թերևս քանի մը սերունդ ալ: Պէրպէրեանի քրոնիկը կը տառապի բազմաթիւ տկարութիւններէ, խօթութիւններէ: Անիկա ծանրաբեռն է հասարակ-տեղիք նկատողութիւններով, մտածումներով որոնք գիրք կը հոսին, վարժապետը յիշեցնող շեշտով մը որ բարքերու շուրջ կը ստեղծէ դառնութիւն, հասարակ քննադատութիւն: Անիկա նիհար է շատ կեանքով: 160ի մօտ էջերու վրայ Պէրպէրեան զբաղած է տաննակը չանցնող մարդերով (վերնագիրին մարդիկը անշուշտ ասոնք) — ուսուցիչ Խիկեմեանը, Նիլան, Տիւսաբը, Նարայը, Ձիլինկիրեանը, Վարժապետեանը կուտան կուտաւ այդ նկարներուն: Պէտք է մասնաւորեալ ուրիշ ալ պարագայ մը: Պէրպէրեան հաճոյք կը զգայ պարտաւէն, (շատ բարեկիրթ է հայհայտնքի զիջելու համար): Արեւելի խմբակին, զխաւորաբար Արփիարեանի վրայ իր լուստանալից տողերը կը պարզեն գառնութիւն ու կորով, շատ աւելի չափով որքան չէին ասոնք զգալի Աւագին պէտքի յարձակումներուն մէջ Տէրոյնեցի վրայ: Մեր հանրային կեանքը շատ մը կողմերու վրայ ներկայացնող այդ անձնաւորութեանց վրայ Պէրպէրեանի ճիշդ նկարագիրներ սեւեռելու, ճիշդ է մնացած զժրատարար: Խանդավառ ու խոտադատ այս վարժապետը ճիշդ բաներ տեսած է անշուշտ այդ մարդերուն գործունէութիւնէն: Նիլան այդ էջերուն մէջ անշուշտ շփացուած է, բայց գործածելով լուսանկարչական տարողութեամբ, բայց ընդունուած ալ է առաջին իրաւ վերապահութիւն մը ուր ցաւը կայ արտայայտուած այդ ձեռագրած գրողին անկայուն իմացականութիւնը ճիշդ դատողի Շփացուած նկարներէն է Ձիլինկիրեանը որուն Ուղեւորութիւն է Կ. Պոլսը մեծ գիրքի մը փառքին արժանի նկատելու առան, հեղինակին լուրջ ու լեցուն միտքին հմայքին տակն է ինկած, բնագրական հակումով մը, համակրութեամբ մը, քանի որ իր ալ նամակները Նիլանիւնին մէջ կը պարզեն նոյն լուրջութիւնը, ծանրախոհ գնացքը իրերէն և մարդերէն զիտելի վերացումներու: Ձիլինկիրեանի գիրքը աւելի յաջող Մարտի 1 և Իրք մըն է, տրուած ըլլալով Իզմիրցի քրոնիկագիրին համեմատական

անկախութիւնը, բարձրութիւնը (մանաւանդ ասոնց մութ, պղտոր երեսներուն) շուրջ յօրնաղեան իր կեցուածքը, գործնական ու նոյն ատեն յաւակնոտ ընդհանրացումներու իր ակնորոշութեանը: Պէրպէրեան, սենեակի գլուղ, զարգացուցած չէ իր զիտողութեան զգայարանքը ու իր մարդերը տեսած է մատենագարանի մշուշի մը ընդմէջէն: Այս է պատճառը որ այդ մարդերը քնան մշտային, հեռու: Չունիմ ձեզի իրը նմոյշ առաջարկելիք անթերի կենդանագիր մը: Յաջողագոյնը անոնցմէ՝ Վարժապետեանին մահուան առթիւ քիչ մը սամբիւմանքով, բայց ամբողջութեան մէջ զուսպ ու իրաւ պատկերացումն է ուր եթէ ձեզի չի տրուիր վայելքը, տիրական դէմքի մը հետ ըլլալու երանութեան, դէթ կը փոխանցուի արդար համակրութիւն մը տիպարին ինչպէս զայն սեւեռող աշխատանքին համար: Ի վերջոյ մոռնալու չենք որ մարդեր սեւեռելը կարօտ է տաղանդի մասնաւոր ձևի մը: Պէրպէրեան ոչ հեզնող մըն է, ոչ ալ վիպասան մը. այսինքն այս կրթանքներուն համար անհրաժեշտ էտարբեր տաղանդէ չէ ժառանգած: Անիկա գիրքերէ շինուած գրող մըն է: Վերցուցէք եղիայէն իր զգայնութիւնը, դուք պիտի ունենայիք նոյն տիպարը գրողին: Ինչ զուգարկայութիւն որ իր ընկալուչ ու արտագրող երկտարրութեան օրերուն Միշտո Չերազն ալ պարզէ նոյն տկարութեան ազդակները, իրաւ մարդեր գծելու արարքին համար մնալով այնքան անբաւարար (Չերազի Միշտոնքը կենդանագիրներ չեն: Յետոյ գրուած են 1920էն վերջ, որով դատումներ ըլլալու տեղ վերլուծումներ են, ու ամէնքս ալ տկար ենք յիշատակներու հետ): Խառնակի զարոյցէն մեզի եկած գրողներու սախմարակին համար գիրքը ամէն բան է. կեանքը՝ անոր հասնելու պատրուակ: Ահա թէ ինչու Իրապաշտները այնքան անողոք հետեղականութեամբ մը հալածեցին այս մարդերը: Պէրպէրեան իր տրամադոյն ինչպէս ուժեղ բռնութիւն չէ խնայած խարանդու համար Աբէլէսը (որ թերթն է Արփիարեանին) և Մաշէր (որ Լեւ թիւճեանէն անցած է Իրապաշտներուն):

Կենդանագիրներու մէջ սա անբաւարարութիւնը աւելի զօրաւոր չափով մը կը կրկնէ ինքզինքը մանաւանդ իրողութեանց հանդէպ: Իւրաքանչիւր նամակ մէկէ աւելի հարցեր կը շօշափէ, ինչպէս կ'ըսեն, ու զանոնք ներկայացնելու արարքը կը վերածէ տեսակ մը . . . դասախօսութեան: Պէրպէրեանին քրօնիկը թեթեւցած ասեմաբանութիւն մըն է. այնքան այս մարդուն մէջ խօսքի կիրքը ուժով ապրեցաւ: Տասնըհինգերորդ նամակին մէջ անիկա կը պաշտպանէ խօսքը, հաւանաբար ընդդէմ Արփիարեան-

նին որ հսկողութեան գէժ իր գալուցովը չէր վախճած հսկողութեան վրայ փոխադրելու: Երկու տարիներու հանրային կեանք մը նկատելի է այդ նամակներուն: Ու գոյախոսութիւն է ըսել որ այդ գիրքն ալ կը կրկնէ Հայկական Նախաձեռնութիւն վրիպանքը: Այսինքն հարցերու շուրջ թեթեւ, թուուցիկ, անբաւական նկատողութիւններ որոնք ալժամէութեան օրերուն հանդուրժելի, թեւեւ սրտաւրէյ, բայց ժամանակին մէջ տարօրէն արագ կը ցրտանան, կը մարին, եթէ երբեք ձեռք մասնաւոր շնորհ մը չպաշտպանէ զանոնք, և կամ վաւերացրած թուրք մը մեզ չընէ գիշտականաց իրականութեան: Պէտքէրեան այդ հարցերը չէ տեսած, ինչպէս չէր տեսած մարդերը: Անոնք որոնք ուղղակի կը շահագրգռեն գիրքը — կրկնելու խնդիր, կրթական խնդիր, գրական խնդիր — գտած են աւելի տաք վերաբերում բայց չեն նուաճուած: Համարձուած իրիւք ճեմանի մահը անոր առիթ պիտի ընծայէ կրթական իրողութիւնը ուսումնասիրելու: Կը զրկեմ ձեզ խնդրոյդ նամակին: Զեր գտածը ընդհանուր խօսք է հոն: Որքան տարբեր պիտի ըլլար պարագան եթէ երբեք այդ հարցը դրուած ըլլար իր բոլոր բնութագրական մէջ իր հիմնական երևոյթներուն տեսակարար կնիքով: Այսօր մենք կրնայինք գաղափար մը կազմել մեր գաղութներէն, այդ 1880ի դռներուն: Նման բարեք մը, գէշ գրող Զօրայեանը այդ մարդէն քառորդ դար առաջ ունի արձանագրած իր յիշատակին: Նախաձեռնութիւն (Կառավարական) (Ն. Զօրայեան) թէ և թուուցիկ ձևով մը: Կուտայ մեզի քիչ մը ճաշակ այդ գաղութական հոգեխոսութեան: Որեք գրական յաւակնութենէ գերծ Կ. Իսթիւճեան իր գաղութական կեանքէ յուշերուն մէջ յաջողած է սեկտիւ 1830-1840ի մեր գաղութներուն ներքին նկարագրելը: Այդ մարդը լրագրող մըն էր, բայց անխառն՝ ըսել կ'ուզեմ առանց գրական մեծամտութեան: Ստորագրողներուն, աւելի յաւակնոտ, նուազ մօտ է յաջողութեան: Մ. Մամուրեան, մեծ գրագէտի իր ձրի տխուրներն մեզիքն է որ կը քաւէ երբ քանի մը տարիներու վրայ երկարած գոյութիւն իր յուշերուն մէջ (Արեւելեան Մամուլ, 1896, 7-8) անկարող կը մնայ այդ 1830ի հոգեբանութիւնը մեզի կտակող զօրք մը արտադրելու, մահուան տնային մօտիկ, այսինքն այն չըջանին ուր մեր յիշատակները կը չորնան ու հսկողութեան օրերուն կը մնան, առով կրկնապէս սրտառու ընկու իրենք գիրքին: Այս նկատողութիւնները գործողութիւն են Պէտքէրեանի բոլոր քրոնիկներուն համար ալ: Խօսեցայ Եղիայէն: Որքան քիչ է սակայն Մարտի և Իբրի Պ. նամակը որ իր նկատ

կ'առնէ Օտեանէն, Եղիայէն: Խղճամիտ, անյաւազնոտ քրոնիկագիր մը այդ գոյզին առաջին անունին հետ ունէր բախտը Օսեան երեսօյքը զճառագէտ սեեոելու: Մեծ վստահողիկն (հոս Օտեանն է, թէն գործածած է այդ որակականը Խրիմեանին համար ալ) ամենէն խորհրդաւոր, հէքեաթունակ անձնաւորութիւններէն մէկն էր Պէրպէրեանը կանխող սերունդին, ունեցած ըլլալու էր պատանի Պէրպէրեանին վրայ խորունկ ազդեցութիւն, քանի որ այդ ազդեցութիւնը ընդհանուր էր որքան տիրական 1860-70ի ամբողջ պոլսական շարժումներուն վրայ: Առնուազն անձնական ապրումներ հիմա պիտի ստանային վաւերագրական արժանիք: Դ. Նամակը սովորական խօսքերու յաջող հանդէս մըն է, չունենալով ոչ մէկ փշրանք այն ամենէն որոնցմով զոյաւոր են մարդոց իրաւ, խորունկ, ներքին անձնաւորութիւնները: Իր ասպարէզին — ու ինչ փառաւոր — վախճանը ողջունելու վրայ, իր դերը կատարած, իր ամբողջ տարուղութեամբը կերպագրուած Օտեանը ի՞նչ գեղեցիկ առիթ որպէսզի թարմ իմացականութիւն մը սերունդի համադրական փորձէ մը ըլլար առնուած: Պէրպէրեան իրերուն ինչպէս մարդոց առջեւ կեցած է առնարանի մը հոգիով. այսինքն անոնցմէ օգտուիլ՝ իր խօսքը շինելու, իր նամակը լեցնելու տարօրինակ առաջադրութեամբ մը: Իրեն համար էականը՝ իր ըսելիքներուն ծաւալն է ամէն բանէ առաջ: Այս տեսակ մտայնութեամբ մը մենք մեզ կը վերլուծենք, ուրիշները առիթ բռնելով՝ իայց քրոնիկագիրը չի նմանիր գրագէտին որ ուրիշները ըլլալէ առաջ ինքզինքն է, պարտաւոր է ըլլալ: Քրոնիկագիրը միշտ կը շահի բռնիկը ընելով, կարելի եղածին չափ հարագատ, հաւատարիմ բռնուին: Ի՞նչ աւելորդ կուգան մեզի Մարգէի և Իբի բոլոր մտածումները, այսինքն գիրքին երկու երրորդը: Ինչ երախտապարտ պիտի ըլլայինք իրեն, այդ մտածումներուն, տեսութիւններուն, հասարակ-տեղիքին փոխարէն եթէ երբեք մեզի ըլլային տրուած մարդեր, իրենց վաւերական կնիքներովը, հարցերը՝ իրենց բաւարար ողջունածումներովը: Ոչ մին և ոչ միւրը մենք կը գտնենք այդ գիրքին մէջ: Այն թեթեւ շահեկանութիւնը որ այդ էջերէն երբեմն կ'անցնի մեզի, դարձեալ մարդերուն շուրջը իր նշմարներն են: Գոված է. ու մենք կրնանք այդ գովեստէն զեղչելու courtois, գլխաւորապէս նկատումներուն բաժինը և գոհանալ գովեստը թելադրող տարրերուն բարիքովը: Պարտաւած է. ու մենք կը տարուինք իր կիրքին հետ, ու գեղչելով հանդերձ բաժինը յաւելումին, կը գոհանանք յատկաւ

տարրերով։ Ուրիշ օրինակ մը, աւարտելու համար սա վերապահումներու շարքը։ Ութերորդ նամակը թելադրուած է Տիկին Տիւսարի Մայրացին։ Ինչ երանելի շրջան է այդ 1880ը որպէսզի այդքան հասարակ դօրծ մը արթնցնէ այդքան ընդարձակ շահագրգռութիւն։ Պէրպէրեան Ուշաբուրձէն է Կ. Պոլսը ոչ միայն կը գովէ, այլև կ'ընէ յատկանշական խոստովանութիւն մը երբ կ'առաջարկէ այդ գիրքը գնել ամէն Պոլսեցիի ձեռքը, որպէսզի Պոլսեցիք իրենց քաղաքը ճանչնան։ Օ՜ն անգիր Խօսած եմ, իր տեղը, այդ հատորին և անոր նախադասին՝ Հայկազ Նապաստիկին վրայ։ Ձիւղբողեցնողը հոս Ձիւրիկիւրեանի կենդանագիրն է՝ Տիկին Տիւսարէն, որ իր կարգին անգրագարծած է Պէրպէրեանի վրայ։ Ի վերջոյ ամէն մարդ Ձօհրապ չէ որպէսզի ընկերութեան մէջ շատ բարձր գիրք մը գրաւող bas-bleuի մը երեսին ըսուին իրաւ, վիրաւորիչ, կործանարար խօսքեր (Ձօհրապն իսկ չափը յարգած է պատշաճութեան)։ Ու կ'ունենանք Պէրպէրեանի ութերորդ նամակը ուր Մայրան խմտոտասիրական վէպ մը կը մկրտուի, ինչպէս Եղիայի յօդուածները կ'ըլլան խմտոտասիրական, նոյն ու մէկ խաղարկութեամբ։ Ա՛րդ, Մայրան կարկտան գիրք մըն է. ըսել կ'ուզեմ խակ ու հասարակ գաղափարներու հաւաքում մը, կատարուած առանց ալ ճաշակի։ Այդ հաւաքումները Տիկին Տիւսար տեղաւորած է աւելի քան տարօրինակ, այնպիսի եղելութեանց շարանի մը ներսերը։ Պէրպէրեան կը հիանայ այդ հաւաքումներուն ներքին արժէքին (իր կարգին աս ալ ուրիշ խոստովանութիւն որուն արժէքը պիտի իշխայ գնահատման երբ մտածող Պէրպէրեանը վերլուծման ենթարկեմ) րայց կը լռէ գիրքին իրր վէպ պարզած ահաւոր կամին վրայ։ Ութը էջ ընդհանուր խօսք կին յղացքին վրայ (չմտնալ որ այդ նիւթը իրեն թելադրած է մէկէ աւելի ատենախօսութիւններ, յօդուածներ, ազգիկներու վարժարաններու հանդէսներուն մէջ հուսկ - բանքի նախաձեռնութիւններ) ուր անշուշտ մուտք ունենալու է կանչուած գեղեցիկը, կիներու պատմական գերին վրայ պատմական հասարակ-տեղիք։ Այր և կին տարագին հետ գուզորդ բոլոր ընթերցողներուն արձագանքը։ Կարծես թէ այդ ամէնը Սէփրաֆաւ հանգէսին ընթերցողներուն համար նորութիւններ կը կազմէին, փոքրիկ է գրական յղացքը։ Արդ, ընդգէմ այդ ու նման գուզիտներուն, Մայրան գրական դօրծ մը չէ. չէ կրցած ըլլալ։ Մենք ոչ խոտապահանջ ենք ոչ ալ ապերախս։ Մենք աւելորդը, անտեղին, անբաւարարը կ'ատենք։ Իր բոլոր սեթեթեթալ յիմարութեանը մէջ եւ չեմ կրնար կործանել Ալաֆրաշէն (Եար-Պէյ)։

վասնդի այդ galimatias/ին մէջ առնուազն մարդու բեկորներ կան, բայց ջուրին տուած եմ այդ մարդուն բոլոր քնարերգական շողջողուն, տօնազարդ պոսկները: Կը գրեմ այս սողները խորունկ ցաւով անշուշտ, քանի որ քիչիկ մը ողջմտութիւն, քիչիկ մը նուազ գովասանքի փոյթ, այդ կինը թերեւս զնէին ուղիղ ճամբուն: Ունէր խելք, դարգացում, համբերութիւն, իր ժամանակին ոճը գործածելու ճկունութիւն: Ունէր մանաւանդ աշխարհէն լայն ճանաչում, տիպարներ, կիրք ու զգայնութիւն: Այս տարբերով Եսայեան վարժարանէն շրջանաւարտ ամէն աղջիկ ի վիճակի էր իւր վիպը գրելու: Ու փոխանակ ընելու այս պարկեշտ պարաքը, Տիկին Տիւսար անգոյ հարցերու ցուցակով է կանգնած: Ու կորսնցուցած է ասիթը մարդեր, ժամանակ մը, իրաւ ապրումներ սեւեւելու: Ունինք աւելի հետաքրքրական օրինակ մը, դարձեալ կին գրող է մը: Օրիորդ Ալիս անունին տակ Տիկին Սիպիլ գրած է Աղջիկն էր Երբ վէպը: Այդ վէպին մէջ կայ Տիկին Տիւսար մը, իր ուսման թիւ մով, կայ Տիկին Տօնեւեան մը (Սիպիլի առաջին ամուսնական անունը) իր իրական ապրումներով: Վէպին առաջին մասը գրուած է Պէրպէրեանին սկսած շողջողուն ոճովը՝ Երկրորդը՝ Իրապաշտներուն պահանջած չոր կերպովը: Այսօր մենք կ'անդիտանանք այդ վէպին առաջին մասը, բայց կը գուրգուրանք երկրորդին վրայ: Ու ասիկա վճռական է: Պէրպէրեան այդ սողները երբ ստորագրեց՝ գոյութիւն ունէր ժիւ: Գարու եւրոպական վէպին ամբողջ հասակը: Անշուշտ նոր կը սկսէր Սթանտալի փառքը, բայց իրապաշտ եւրոպական վէպը տապալած էր Հիւկոն, անվերադարձ: 1885ին խօսիլ թշուառ երու վրայ Պէրպէրեանին ոճովը կը նշանակէ մնալ հաւատարիմ պատանեկան զգայնութիւններու:

Մարտի և Իբը կը պարունակէ օրուան այժմէութիւններուն շուրջը արձակ խօսքեր, որոնք շատ դիւրաւ պիտի չափաբերուէին եթէ ուզէր մէկը ընել ասիկա: Տասներորդ նամակը կը խօսի նոր տարիք: Ու դուք կ'ունենաք գասական պատկերները պոլսական կողանդի մը, այնքան ընդհանուր, աւելի ճիշդ բառով մը՝ գասական յօրինուածքով, տեղական գոյնէ, համէ, օրուան իրաւ յոյգերէն ընդարձակ նիհարութեամբ մը: Մարդ դիւրաւ այդ հանդէսը կը փոխադրէ աշխարհի վրայ որեւէ տեղ, որեւէ ժողովուրդի մէջ պատահելի: Իսկ տրտում է տասնըջորսերորդ նամակը որուն նիւթն է Մայիսը: Ստիպուած եմ արտագրել . . . «Տե՛ս այս տղաքներ, ի՞նչպէ՛ս՝ գառնուկներու նման զուարթ՝ կը խալտան մարդաց վրայ, կը վաղվզեն խնդա-

գին, զալար խոտերու վրայ կը թաւալին ու խենդի պէս մէկ ծաղկէն միւսին գիմելով փռնջ կը կաղմեն երկներփեան՝ իւրեանց փափկաձայն սիրուն աղաղակները խառնելով թռչնոց դայլալիկներուն»։ Մարդերը և իրերը դատող էջերու վրայ մարդ զարմանքով կը հարցնէ տեղը այս աժան գարնաներգութեան։ Բայց քիչ մըն ալ տեսնենք երիտասարդը . . . «Ի՞նչպէս քաղցր է իրեն այն ատեն բնութեան ծոցը ուր հեշտութեամբ կը հոսեն իւր արցունքներ, ուր կը կարծէ համակիր էակներ տեսնել, սոսկիին երգոյն՝ զեփիւսին սոյլին՝ տերեւոց սօսափունին ու ալեաց միմունջին մէջ սիրով՝ մշտով կամ երջանկութեամբ հառաչող ու իր հոգւոյն պատասխանող ձայներ գտնել և զգալ թէ իւր սիրտն ալ ուղկէանին նման կ'ընդարձակի ու երկնից պէս կ'ասաղաղարդի և թէ ինքն ալ իբրեւ բոյր մը կը ցնդի կը խառնուի համագոյից հետ ու սիրոյ երգ մը զարձած կը կորսուի տիեզերական ներդաշնակութեան մէջ»։ Անշուշտ կը յիշեմ Սէթեանը որ նման պահերը պիտի տաներ աւելի նրբասուրբ նկարչակահութեան։ Դուք մի հարցնէք թէ ինչ գործ ունին սա պատկերները, քանի որ Կրտսեր Ռոմանթիքներուն համար զրելը շատ յաճախ նման պահեր ստեղծել ու օգտագործել կը նշանակէ։ Եթէ արտաքին աշխարհին համար սա հասարակ դոյները և գիւծերը ձեզի կը թուին նեղիչ, ալ աւելի տառապաղին զգացումներով լեցուիք պիտի երբ միտքերու աշխարհին վրայ եղանակը գտնէք նոյն ահաւոր անզգածութեամբ։ Ահա անկէ ալ նմոյշ մը ձեզի . . . Ձեռն ամէն եղանակի մէջ բնութիւնը կենդանի է ու գործօն, թէև ամէն եղանակի մէջ նա ունի իր զեղեցկութիւնքն ու հրապոյրները, բայց մանաւանդ գարնային եղանակի մէջ հրասքանչ է նա, կենդանորդ և բազմահրապոյր, որպէս կինն իւր կուսական տիոց մէջ կը զարդարուի իւր չքնաղաղոյն շնորհներով ու քօղարկեալ աչերուն մէջ ունի ամենէն աւելի զիւթութիւն ու ձայնին մէջ սրտահաճոյ քաղցրութիւն։ Երկիրն, իւրեւ թագուհի մ'որ կը զարդարուի, կը բանայ իւր գոհարատու փերն ու սապատներն ու կը պճնուի ճոխապաճոյճ, և ամենուրեք կը զարթնու կեանքը. խոտոյն տակ միջատներ, օդոյն մէջ թիթեռներ, տերեւոց ետե թռչունք կան. արշալոյսն իր ցօղաղին քրքումթոյր ճաճանչներն ունի վերստին, վերջալոյսն իր լուսաթառն մեղամաղձիկ ստուերներ, պուրակն իր խոհալից հովանին, ծործօրն իր գզգզ առուակ, և ամէն ինչ սէր է ու սիրով կը գրկախառնի, զեփիւսն գտերեւ կը փայփայէ, սոխակն զվարդ կ'երգէ և ուղկէան՝ հանդարտ՝ երկնի լոյսերն կ'օրօրէ իւր

ծոցոյն մէջ: Քանի՞ օր...» և այլն...» Կը խորհիմ թէ ըստ էն այս ասուերը:

Պէրպէրեանի քրոնիկը աւելի վերջը, դէպի 1900, անշուշտ պիտի ազատի այս մանկական բանաստեղծութիւնէն, բայց դարձեալ պիտի չգտնէ սեռին իրաւ փառքը կազմող այն չորսութիւնը, գիծէ, կարկանդակ սրութիւնը որով տեսիլներն ու դէմքերը կը մնան սեւեռուած մեր մտքին մէջ երբ կը կարգանք Արփիարը, ոչ ալ պիտի ճարէ իրեն այն սրտայայտ, իրաւ, համակրական բանաստեղծութիւնը որով կը լրջանան Հրանդի, Թլկաւորի յոյնասեռ գրուածքները: Ռազդատեցէք 1900էն վերջ գրուած Կարգաձեւը (Ռ. Զարգարեան) այս բանաստեղծութեան հետ ու դուք պիտի աւագէք ճաշակը որ մեղապարտ բանի մը վերածած է Կրտսեր Ռոմանթիքներու խառնուածքն ու ասուանդը:

Պէրպէրեանի քրոնիկը ի՞նչ ժամանակին մէջ: Չեմ ճապարկեր: Կան Չերազի Դեպի Կարգաձեւը, Եղիան՝ իր ծպտուածներով, աւելի վար՝ Մամուրեանի, Ծերենց, Զիլինկիրեան: Պէրպէրեանի համար նուազագոյն արժանիք մը չէ կանոնաւոր լեզուն, յօդուածը կառուցանելու զգայարանք մը, երբեք տաքնալու, կըրքոտելու գիւրութիւն մը: Այս գիտով է որ Աբեղի խմբակին վրայ իր յարձակողականը (ԺՆ. Մամալի) համով տողեր ու խոստ լիտողութիւններ իրարու կը խառնէ, հետեւէն հետեւ թեւադրելով Արփիարի խածան եղանակը:

Ինքնիր մէջ Մարգի և Իրք միջակ գիրք մըն է, նոյն միջակութեամբ որով գրուած են Մամուրեանի Հայկաձեւ Նախաձեւն և Զիլինկիրեանի Ուղեւորութիւնն է Կ. Պոլսը: Զայն այսօր անհար է կարգաւ մէկէ աւելի պատճառներով: Ատոնցմէ զօրաւորագոյնը անշուշտ լեզուն և ոճը չեն կազմեր, ոչ ալ նիւթը, քանի որ այդ լեզուն լեզուն էր այդ օրերուն և նիւթը՝ մեր կեանքին քանի մը հիմնական երեսները և դայն յուզող հանգամանաւոր դէպքերը և մարդերը: Չեն կարգացուիր վասնդ լրագրական իրենց ճակատագրէն չեն ազատագրուած, չեն դտած անձնական կնիք: Չունին վաւերագրական տարողութիւն: Չեն նուաճած, ամբողջական նուաճմամբ մը, ոչ մէկ հարց: Չեն սեւեռած, տիրական կատարելութեամբ ոչ մէկ դէմք: Երկու կտորէ խօսեցայ ձեզի: Կան գիրքին մէջ ուրիշ երկուք ալ, բայց քրոնիկէն տարբեր սեռի մը պատկանող: Անոնք մաս կը կազմեն Պէրպէրեանի միւս աշխարհին, խօսքի աշխարհին: Քեթիպիականին և Հիւսիսի մահերուն վրայ խօսքեր են անոնք: Առաջինը մեզ կը յուզէ ոչ անշուշտ մահուան, բարիքի, գութի, ճակատագրի հասարակ-

տեղիքներուն վրայ քնարական ջերմ գեղունիքովը, այլ այն տարբեր առաքինութեան պատճառով որ շատ մեծ անձնաւորութիւն և շատ բարձր ու եղբրական ճակատագիր մը քանի մը էջի վրայ կը նուաճեն խօսողը ինչպէս կարգացողը: Պիտի խօսիմ, աւելի անդին, Հիւսկոյի վրայ իր ճառէն:

Կուգամ Պէրպէրեանի իմացականութեան, այսինքն այդ մարդուն մէջ մեծութիւնի հէքեթին: Համապատասխան ջրաքանի նուիրուած գիրքին մէջ լայնօրէն կը վերլուծէ մեծութիւնը յղացքին մեր մէջ գեեցած կերպարանքը: Պէրպէրեանի առիթով իմ ըսելիքներս կը բաղկանան այդկերպ յղացք մը հանդերձող քանի մը հանգամանքներէ: Գրականութեան մը մէջ որ սկզբնական իր թափին, խանդավառութեան մէջ իրեն ունէր սահմանած որոշ, անհրաժեշտ առաջադրութիւններ (*), իրաւ գաղափարը էր կըլնար ոչ թէ զարգացում, գոյութիւն իսկ ունենալ: Գիտական յօդուածներ ու գրքոյկներ (Իլիւրիի դպրոցէն Գ. Կոստանդին պրօֆէսորները, մեր օրաթերթերուն ու հանդէսներուն մէջ քրօնիկի ձևով աւօրեայ գրութիւններ այնքան աղերս ունին իրաւ մտածումին հետ որքան Եղիա, Չերազ, Պէրպէրեան երիտասարդութեան գրական galimatias՝ այս շփոթութեան հեղինակները դարձեալ այդ դպրոցին տղաքը կը մնան) չեն պատկանիր դարձեալ մտածում յորջորջուած կրթանքին:

Եւ սակայն իմաստեղի դպրոցէն Պէրպէրեանն է որ ամենէն աւելի զբաղեցուց մեր հրապարակը իր մտածման փորձերով: Իր քրօնիկները, ճառերը, գեռ մատաղ երիտասարդութեան օ-

(*) Դարձեալ այս մասին ըրած եմ լայն ցուցմունքներ, Ջարթոնի Սերուդին նուիրուած էջերուն մէջ, չոս կը գոհանամ անոնցմէ հիմնականները անգամ մըն ալ զնելով ընթերցողի ուշադրութեան: Ա. ԵՆԵՏԻ ԿԷՆ մենք ժառանգած ենք բարոյախօսական, հայրենասիրական, պատմական ռոմանթիզմը որ այնքան քիչ իրաւ գաղափարներու կը կարօտի: Զարթօնքի Սերուդէն մենք ունեցանք մեր լրագրութիւնը, ընկերային վերանորոգչական առաջին սկզբունքները: Մեր Ռոմանթիքները երգ միայն ունէին մեզի տալիք, եթէ չյիշենք ուղորմելի թատրոնը: Մեր իրապաշտները մեր կեանքին վերարտադրումը ունէին իրենց հանդանակ: Պէրպէրեան երբ գրիչ կը շարժէ, մեր գրականութիւնը իրի գաղափար գրեթէ փրանսալի ռոմանթիքներուն Melange Littéraires et Philosophiques-ները ունի զինքը օնուցանող: Հաստատ գաղափարը մեզի համար գրեթէ չունի գոյութիւն: Շատ շատ գրական զարգացումներ որոշ մթերք մը՝ Զօպանեանով, իրաւ գաղափարը, իմաստասիրականը մենք պիտի ունենանք Շահան Պէրպէրեանով:

բերէն անոր վրայ բերին ծանրութիւն մը, չուք մը որ խոտոր կը համեմատէր այդ եռանդուն, աշխատասէր բայց բարձրագոյն կրթութեան մը բարիքէն չբարերարուած ազուն իրական արժանիքներուն հետ: Երկար տառն մեր մէջ իմաստասէրներ նկատուեցան Ռիսաքեան, Ռամբեան, Եղիշէ եպիսկոպոս Դուբեան, Տիրան Զրաքեան, Եղիա, Պէրպէրեան: Բւրաքանչիւր անունի առիթով Համապօկէրը կուտայ իրական տարողութիւնը այս փառքերուն: Առայժմ կը սեղմեմ վերլուծումը ու կը մօտենամ Պէրպէրեանի մէջ մեծապայծառ իմացականութեան խորհրդաւոր հարցին:

Այդ իմացականութիւնը (որակականը կը գիջիմ Զրաքեանի երախտագէտ զգացումներուն ու մտքին նախնական կառույցին, գոհանալու համար աւելի պարզ, համեստ բառով՝ խեղճ ու սրուն գրական մէկ կերպարանքն է խոշոր այդ տարազը) անշուշտ գործած է մեր շրջանակներուն մէջ: Անոր դպրոցը խելքի փաստ մըն է ամենէն ատաջ: Այդ իմացականութիւնը ինքզինքը իրագործած է դարձեալ գիրով: Ինծի կը մնայ լիշեւ առաջին իրականութիւնը, զայն արժեւորել իրեն պատշաճ չափովը ու ծանրանալ գիրով մեզի հասած վկայութեանց: Այդ գիրը զգեցած է քանի մը տիրական կերպարանքներ: Ասոնցմէ քրոնիկագիրը անցաւ վերլուծումէ: Ասոնցմէ գրադասք կամ գրական մտածողութեան սպասաւորը պիտի անցնի վերլուծումէ ուրիշ բարակրանի մը մէջ: Ասոնցմէ աւետարանը որ իր խօսքը միշտ գրելու պարկեշտութեամբ մըն ալ մնացած է ուշագրաւ, նիւթը կուտայ այս բարակրանին:

Կը յիշեմ այդ խօսքը իրագործող շնորհները: Ձեմ լսած զինքը: Ըրած եմ մտիկ իր աշակերանները, խորհող մը կշռելու կարող անձնաւորութիւններ: Ըստ այդ վկայութեանց, Պէրպէրեան ատենաբան մը յարգարող հիմնական տուրքերէն մէկ քանին տիրապետած ըլլալ կը թուի: Ձայն, զուսպ շարժումներ, կուրովի կառուցում: Ձէ յոգնեցուցած, չէ յարգի բոցով խանդավառած: Ասոնք անհրաժեշտ նկատողութիւններ են, բայց գլխիցին կրնար աւելի բռնել քանի որ իմ կեցուածքը գործերը միայն ունի նկատի:

Յատուկը այդ խօսքին:

— Ահա իմ նպատակը: Պէրպէրեան, խօսելը ընտրած ըլլալու հանդամանքովը իսկ իր մտածումին իրրի գահաւորակ, որդեգրած է այդ խօսքը իր հասցէին անաշխորդելու ստիպողական պայմանը: Ատիկա, իմ կարծիքով, մօտիկ մնալն է զինքը մտիկ

ընողներուն խելիքն: Երկու զլիսաւոր մարդերու վրայ անիկա կիրարկած է խօսքին կրթանքը. ա) — ժողովրդական համախմբումներ (զանազան միութիւններու կողմէ սարքուած հանդէսներ, պարզեաբաշխութիւններու առիթներ), բ) — քննարկի մը համար կազմակերպուած խօսքի հաւաքոյքներ (իր ճառերը — նշանաւոր հուսկ-բանքերը իր վարժարանին ընթացքը աւարտող տղոց ուղղուած, օրաթերթերու մէջ իր բարոյախօսական ճառերը կիրակնաւուր վերտառութեամբ): Եթէ ասոնց վրայ աւելցնէք նաեւ դազալներու վրայ արտասանուած խօսքերը, դուք կ'ունենաք Պէրպէրեանի մեծագոյն խմբականութեան ցոյցերը:

Այս բաժանումներուն մօտենալէ առաջ աւելորդ չեմ նկատեր երկու խօսք Պէրպէրեանի մօտածումները ընդունելու կանչըւած մարդոց մտայնութեան: Ժողովրդական համախմբումները այդ օրերուն կը բաղկանային քանի մը հօտանու տղոցմէ, ընդհանրապէս այդ միութիւններուն վարչականները սրտնք պիտուէին փակելու, հանգանակելու, իրենք զիրենք գործի վրայ ցոյց տալու աւելի կամ նուազ անխոստովանի փոռասիրութիւններով կը հաւաքէին թաղին երկսեռ երիտասարդութիւնը, նորութեան հետքերը չափահասները, ու մանր մունր ուրիշ միութիւններ: Կուգամք այս զանգուածը ճշմարիտ ծարաւովը առնալ խօսք մը ունկնդրելու, ինչպէս է պարագան այնքան յաճախ օտարներու մօտ: Կը կասկածիմ: Ատենախօսը իր առջեւ ունէր այդ խայտաբղէտ, անձեւ, անհոգի, անկնիք առնուողն՝ ամբոյր: Եւ ունէր իր մօտադ հօտանդը, չըսելու համար փոռասիրութիւնը, իր ունեցած քիչը, չառը այդ մարդոց հասցնելու: Ուրիշ: Գրեթէ չատ քիչ բան (իր երկրորդ եղանակը, ընտրանիին ուղղուած խօսքերուն մօտածումը, հասուն, իրաւ ձեռնարկ մըն է): Այնպէս որ այն նաւերը սրտնք մուտք են ունեցած Աւաջէն Կիւրեանի մէջ (խօսած եմ այդ զիրքին առիթով այդ մասին), աւանդին հրատարակուած գրքիկները (Երեւ Բնախմբութիւն, Թշուառութիւն և Դոմ, Գեղեցիկ և Գեղարուեստ, Ժողովրդական շէնքեր, Մարտի և Իրի մէջ կրթական տիրող ստանդարտները սրտնքմէ երկուքը կը պատկանին հուսկ-բանքի շարքին), ուղղուած ըլլալով որոշ մտայնութեամբ մարդոց խումբերու, կը կրին, անուղղակի անշուշտ, այդ նախապայմանին կնիքը: Անոնց մէջ Պէրպէրեան չէ յարգած անշուշտ զինքը մօրիկ ընողները, խնայելու համար անոնց չհասկցուած, օտար բաներու թաւալումէն ծագած անխուստովի ձանձրոյթը խօսքէն, բայց չէ ալ կրցած միայն մօտածող մարդու հանդարտ այլուրութեան մէջ, իր նիւթը սպա-

ուելու միայն ուշադիր, անկէ դուրս ուրիշ ոչ մէկ նկատումի ենթարկելով իր խօսքին գնացքը: Անշուշտ այդ ատենախօսուած թիւնները բառամարտ մը չեն, ինչպէս ուղած են ներկայացնել Արվիրարեանք: Բայց ժամանակի մը մէջ ուր մեր բեմերը հայ-րենասիրական հոեադուծութիւն միայն կը մատուցանէին ապշահար ամբոխներուն, Պէրպէրեանի ընտրած նիւթերն իսկ կը մատնեն աւելի բարձրորակ առաջագրութիւններ: Այս մարդը կը հաւատայ թէ իր խօսքը լրացուցիչ մըն է իր դպրոցին: Սորվեցնել և ոչ թէ խանդավառել: Ազնուացնել և ոչ թէ հրահրել: Այսպէս պարզեցուած՝ Պէրպէրեանի խօսքը գրական կերպարանքի մը կարիքն ալ ունենալու չէր, քանի որ այդ գարդարուն յօրինուածքը խօսուածքի մէջ կ'անցնէ անհետանք: Անոնք որ Պէրպէրեանի գրականութիւնը կը գատապարտեն, հաւանաբար ազդուած են այդ խօսքերուն գրական այդ կերպարանքէն, ու կը մոտենան թէ խօսքն ու գիրք տարբեր (*) բաներ են շատ յաճախ: Տարիներ վերջ երբ մարդ աչք մը կը նետէ այդ դովուած խօսքերուն յատակին, կը զարմանայ անոր պարզութեան, չըսելու համար ազգաստութեան: Յետոյ կը հարցնէ թէ Գեղեղէնի և Գեղաբեկի յորջորջուած բանախօսութիւնը (արտասանեալ ի լատարնի Ընթերցասիրաց Ընկերութեան Օրագրիւղի 1876 Ապրիլ 24, ինչպէս կ'ենթատողէ հեղինակը իր վերնագիրը) ի՞նչ արամադրութեամբ ընդունուեցաւ այդ ամբոխէն: Պէրպէրեան միշտ իր խօսքին հաւաստի ունի: Ըսի ասիկա: Պէրպէրեան ուր որ ալ ըլլայ, ինքզինքը իր դպրոցին, իր գատարանին մէջ զգալու ուրիշ հաւատքն

(*) Տրամաբանական գեանի վրայ մարդիկ պիտի հաւասար ընեն իրարու այդ երկու իրողութիւնները, քանի որ խօսքը թեի ելած գետ մըն է ըստ սահմանի: Բայց խօսողները միայն փորձն են առած այդ ի յառաջագոնէն ընդունուած հաւասարութեան: Ակադեմական խօսքը կըրնայ ակադեմական հետաքրքրութիւն մը ստեղծել: Պէրպէրեան կը խօսէր սանկ ու նանկ մարդոց, որոնք թերեւ կ'ափսոսային այդ խօսքը ունկընդրելու վատնուած ժամին ալ վրայ: Ու հարկին տակն էր բան մը բռնելու: Իր նիւթերը անշուշտ ժամանակին հետ լայն ազդրանք չեն պարզեր, քանի որ քաղաքական ծանր հակողութիւն մը կը սանձեր մամուլն ու բեմը: Այդ է պատճառը որ Պէրպէրեան չէ արհամարհած գրական կերպարանք մը: Կարդացէք եօթնասնական թուականներու Ծերենցի բանախօսութիւնները: Ակնբա՛խը՝ որ խօսքին հիմնովին զերծ մնալն է գրականութենէ, այսինքն ըլլա՛լը միայն ու միայն ասեմալու: Տասը տարի վերջ ամէն համախմբում վախին մէջն է դուրսէն ակամքին, լրտեսին: Այդ է պատճառը որ ճիւղ, ինչպէս մատուցում ենթարկուին գրականին որ հոս կը նշանակէ զարգարանք ու քիչ ուրիշ բան:

ալ ունիւ իմասեցէք այդ նիւթին վրայ ձեր տղոցը, գրականութեան դասի մը առիթով, դուք պիտի ստեղծէք անշուշտ լայն հետաքրքրութիւն, երբեմն խանդավառութիւն (*): Բայց թափեցէք ձեր բոլոր կորովը, բունի (verbe) ուժն ու շնորհները շուկայիկ մարդոց տարտղնուած տրամադրութեան վրայ, դուք պիտի զգաք թէ որքան քիչ է ձեր մատուցածը այդ հոգիներուն: Ձեռք երթար առաջ՝ Պէրպէրեանի մէջ խօսքի ածպարար մը հնութադրելու (ատիկա տեսեր եմ Պարթեհանին վրայ որ իր սքանչելի շնորհները verbeէ, խօսքէ, գոյնէ բաւ կը դաւանէր հոսկէ հոսկէ հաւաքուած միամիտներու զխօսել թափելով ու իր պերճանձին նուքան փարթամ ձայնին հմայքներով փրկելու կապուքիւնը, բան մը չըսելու արհեստը, խաչագոյնութիւնը վերածելով արուեստի), բայց կը ձգեմ կասկածի տակ իր նպատակին տարողութիւնը: Ի վերջոյ հասկնալի է որ գրականութեան ուսուցիչ մը ըլլայ որոշ ընդունակութիւններով նաեւ ուսուցիչ քաղաքական գիւտագիտութեան (Պէրպէրեան, Մամուրեանին պէս հրատարակած է թարգմանչական գիրք մը, Հատուտ Բազմապէս Տնօրէնութեան անունով) ու խօսի դարձեալ սանկ ու նաեւ մարդոց դրամի վրայ: Բայց գեղարուեստը դրամ չէ: Այս նկատողութիւնները անոր համար որ, խօսքը Պէրպէրեանի գրականութեան ոչ միայն յատակը կուտայ, այլ անոր խառնուածքն ալ է, temperamentը, ինչպէս կ'ըսեն: Պէրպէրեան արիւրուն մըն է, առանց բեմի: Ըսել կ'ուզեմ՝ խօսած է, ամէն բան քաղելով իր մեջէն: Ձէ պաշտպանուած ամէն ատենաբան (իրաւը) խօսքի ճպուռ մը ըլլալէ արգիլող մեծ կիրքերէ, տագնապնիրէ, որոնք չըջան մը կը յուզեն, կ'ընեն տակնուվրայ ու կը ստեղծեն զիրենք վարող

(*) Պէրպէրեանի աշակերտները սովորութիւն ունէին իմաստասիրութեան պատմութեան վերջին դասը ընդունիլ խլացուցիչ ծափահարումով մը, ա'լ աւանդութեան կարգ անցած տեսակ մը արարողութեան վերածելով այդ ինքնաբոյս պոռթկումը: Կ'երեւակայեմ դասախօսը որ այդ նիւթերուն խառնուցած խորհուրդը ճարտար մատուցողութեամբ լման տարի մը իր հետ պտտուցած, վերջին դասին կը քակէր անոր կապանքները ու տղաքը կ'սուներ իր ետեւէն, արդար ու անգիմադրելի սլացքի մը մէջ, գէպի գաւառները իսթալիանին, ուրիշ բառով մը՝ ճեսպիանին, ուրիշով մը՝ ճագեպաւսիանին, որուն խորունկ մատենութիւնն ունէր ինքը, խօսողը և որուն պեղեցկութիւնը ամենէն աւելի զգալու սքանադիր էին այդ պատանիները, կեանքէն զեռ ոչինչ տեսած, ու իրենց կարգին՝ ուսուցչին չափ ու թերեւս աւելիով հաւատարմող այդ քաղցր երկնադաւառին: Բայց Օրթագեղի լսարանը ուր, Պէրպէրեան բարձրագոյն դասարանը՝ Ե՛ւր:

աւելի կամ հուշագ խմատուն, յիմար, ուսեալ կամ անուս բայց միշտ ազգեցիկ զէմքերը: Չեմ իջնար հիները մինչև: Մեր աշ- քերուն առջև տեսանք անհաւատալի, գրեթէ հրաշքներու կալ- ուածին պատկանող ահաւոր իրականութիւններ: Խօսքի գործա- րանէն բացառիկ ձեռք մը օժտուած մարդեր կայսրութիւններ ստեղծեցին, կործանած, կորած ժողովուրդները ընկող ընդու- նակ հակայական գոհարեմանց, արարքներու: Անտեղի չէ այս իրողութեանց հոս յիշատակումը: Բաղդատութիւն չեմ ընել: Ռեթէոս Պէրպէրեան վայելած է վարկը շատ մեծ հոստորի մը: Չունիմ առարկութիւն: Բայց բախան ուզած է որ այդ խօսքը հասնի մեզի: Ու երբ կը կարգաք այդ խօսքը, այն տան չէք կրնար չտալ ճակատագրական հարցումը. — Ի՞նչ է ուժը, ինք իր մէջ, ու խօսքերուն, որպէսզի անիկա, իր մէջ տանկող *rendement*ին ալ բարիքը ունենար այդ հակայ բարիքը:

Պէրպէրեանի ժողովրդական, հանդիսական, թաղամանական, տօնախմբական ատենադասութիւնները, իրենց ժամանակին մէջ լու յօթնուած, լու մասուցուած (ինչպէս կը վկայեն իր խօսքը լսողները) մանաւանդ խօսքի հանդէսներ են: Բացի քաղաքա- կանէն՝ քիչ խօսք կը վայելէ մեր վրայ ազգեցութեան մը բախ- տը: Ու ըստ տեսութեան, Պէրպէրեանի ատենադասութիւններն ալ պատշաճակամ խօսքերու իրենց դերէն անդին քիչ բան փա- ռասիրած են: Այն միակ կտորը ուր մեզի կը տրուի իրաւ մարդ մը զգալ, իր յարեկանին առիթով արտասանուած խօսքն է որ Վալթըր Լ Վալթըր-Ֆէն հատորին 176րդ էջին վրայ կը կրէ ձա- Յոթէ- լէն-Կան վերտառութիւնը, 1901 Հոկտեմբեր 25, իր դպրոցին հաս- տատման քսանհինգամեակին աթիւ սարքուած հանդիսու- թեանց տան: Կը հասկցուի որ պահը ըլլայ իրաւ, խորունկ, յուզիչ: Կը հասկցուի որ մարդու մը աշխատանքը վարձատրելու համար հոն հաւաքուած ազգին ամենէն հանգամանաւոր անձնաւ- ըրութեանց, այդ մարդէն երախտաւորեալ հարիւրաւոր աշա- կերտներու — հիմա իրենց կարգին տարիքն առած ու ընկերու- թեան մէջ որոշ գիրքի, վարկի բարձրացած — առջև խոնարհ իր ծագումը յիշէ այդ ուսուցիչը, քառորդ դար առաջ, երբ զօ- րաւոր կիրքէ մը ընդառաջ նետուած, փորձեր էր ծանր արկա- ծախնդրութիւնը իր հասկցումին պէս գործ մը սկսելու: Ու այդ քառորդ դարը, կրնա՞ք մտապատկերել, թէ գումարն է ամէն մարդու ամենէն գործն ապրումներուն, ոսկեգարը անհատի մը ուժին: Չեմ զգար կարիք այդ քառորդ դարը տարադնել, յօրի- նելու համար՝ անոր փշրանքներով՝ օրերը այդ վարձապէսին որ,

իրր այս գծուար պիտի շահագրգռէր զիս, քանի որ իմ գործը պատմութիւնն է հայ գրականութեան: Բայց գրական ալ սպասէ որ ոչ անորժակէնէր այդ վարժապետը կը զատեն շարքէն: Սակէ զատ, Պէրպէրեան չի նմանիր Թէրզեանին որ, թերևս աւելի կատարեալ, ձեռնհաս ուսուցիչ, չէ ձգած ոչ մէկ հետք հայ գրականութեան վրայ, կասկածելի արժէքով իր գործէն դուրս: Պէրպէրեանի շունչէն կուգան արեւմտահայ գրականութեան քանի մը ամենէն խոռովիչ անունները: Մինակ Ջրաքան պիտի բաւէր այդ անունը սերունդներու յարգանքին պարտադրելու: Անշուշտ հոս չեմ լայնաոր այդ ազդեցութիւնը վերլուծելու: Իմ թիւազրեւ ուղածս հոգեկվիճակն է յորեկեարին ու տակէ բիւլիք հանդէսը որ ամենէն աւելի կ'ընէ զիս ուշադիր, երբ գրողներու գործին ընդմէջէն կը ջանամ գործաւորը վերականգնել: Յորեկեարեան ճառը հոն է սակայն: Մեր գրականութեան համար ճառերը վատնու են եղած, զրեթէ չարիք մը, եթէ կ'ուզէք: Չուր է ձեր սպասումը՝ այդ հանգիստաւոր պահէն գտնելու այն հիմնական գաղափարադրութիւնը որուն ցուցմունքին տակ մարդիկ կը փակեն իրենց դարը: Պէրպէրեանի ճառը դպրոցական ճառ մըն է: Հոն դպրոցը, կրթութիւնը ըմբռնելու իր եղանակը անիկա զրոյս է շատ յատակ կերպարանքի մը տակ: Իսկ գրականը՝ — Ան ալ պիտի փնտռենք ուրիշ տեղ:

Անշուշտ աւելորդ պիտի ըլլար թէ կուզ տալանդաւոր վարժապետի մը վառտակին յատկացնել քանի մը տող: Բայց արեւմբտահայ գրականութեան սպասարկուները մեծ մասով կը ջուր ուին այդ մարդէն ու երբեմն ալ գրագէտը և ուսուցիչը իրարու խառնուած կ'ապրին, ի վիստ անշուշտ գրագէտին: Այսպէս է եղած բախտը ելիլեի Գուրեանին որուն իմացականութիւնը — իրապէս մեծապայծառ — չէ կրցած ազատագրել ինքզինքը ուսուցչական պարտքերու ճնշումէն ու մանրած ինքզինքը, փոխանակ անշուշտ իրագործելու իր ճակատագիրը: Պէրպէրեանը: Մօտիկ բախտ մըն ալ՝ աս մարդունը: Բայց կայ երանգ մը: Առէք Պէրպէրեանը իր դպրոցական զբաղումներէն ու զրէք եղբայրն քովիկը, Չերազին քովիկը, այս անգամ խմբագրական աշխատանոցէ մը ներս: Ի՞նչ պիտի ունենայինք արդեօք: Ապա հովարար շատ աւելի մնայուն բան մը քան Պէրպէրեանի ճառերը: Կ'ըսեմ ասիկա խորունկ համոզումով մը: Իր ուսուցչութենէն ազատագրուածով մըն էր որ եղբիւնէ կ'սկսուար Գուրեան հեղինակը դարձաւ Հովսէփեան Սէնքին, որ շահ մըն է հայ գրականութեան համար, անշուշտ պղտիկ: Բայց շահ մը վերջապէս:

Տեսանք Պէրպէրեանի ֆերրուածները (որոնք համարժէք են եղիշէ վարդապետ Դուրեանի քերթուածներուն), քրոնիկները՝ որոնց հոտին Արփիարի մը չուքն իսկ անհնար է զգալ։ Կայ Դասադարձի Էջ Խաբէբը, հաւաքածոյ ճառերու, որ, ըստ անուան թիւադրանքին, մասնակի կրթանքէ մը եկող դործ մըն է, առանց գրական յաւակնութեան։ Յետո՞յ, Կայ Դաբոյ և Դաբոյի մեծ զի հատորը որ կը բովանդակէ անոր հաւերը, յօդուածները, մեծ մասամբ դարձեալ գալոցական։ Դաբոյի (Պէրպէրեան զայն կը գործածէ belle-lettresի տեղ) հարիւր յիսուն էջեր կը գրաւէ այդ հատորէն։

Չեմ կրնար աւելի գրադիլ ատենական մարգանքներովը Պէրպէրեանին։ Բաւ է ըսել միայն որ ամէն բանախօսութիւն, այդ մարդէն, ունի հաստատ մթերք մը՝ հաստատ, չըսելու համար ընթացիկ գաղափարներու։ Նոյնն է մարդը որ կը խօսի Օրթաքէօյ, Ռասքէօյ և Սկիւտար, իր վարժարանին մէջ։ Այդ ճառերուն մէջ անիկա չի պարզեր աշխարհահայեացք մը, քանի որ ճառերը, ըսի անգամ մը, անուրջ ձեռնարկներ էին և են մեր մէջ։ Այս վառնը յաղթահարած է Պէրպէրեան, մասնաւորութեամբ մասնակիին մէջ ու տրուած նիւթէ մը կարելի առատութեամբ ընթացիկ արդիւնքներ ապահովելով։ Ծիշոյ է որ երբ կ'աւարտէ իր մէկ ճառը, շահողը գուք չէք, բայց գոհ կը մնաք ի հաշիւ խօսողին։ Այդ պայմաններուն մէջ, այդ կարգէ հասարակութեան մը գիմաց, մանաւանդ նման նիւթերու վրայ՝ աւելին։ Ատենարանը հագիւ թէ գրագէտ է ուրիշ ժողովուրդներու մէջ, ինչ որ համազօր կ'ըլլայ իրաւ ատենաբանին։ Դարձեալ չեմ կրնար բացնալ այդ գաղափարներուն հանդէսը ընկու։ Պէրպէրեան պահպանողական մըն է, ըլլալէ ետք թուեց ազատական մը։ 1870ին անիկա կրակ ու բոց կը ժայթքէ պահպանողական Տէրոյնցի դէմ։ 1880ին արդէն գաղտնացած է։ Պատճառը — Մեր ընկերային կարգուսարքին, մեր հասարակութեան հոգեգրութեան մէջ երեան եկած խորունկ յեղաշրջումէր հաւանարար։ Բախտորոշ թուականը՝ 1878։ Մեծ սահմանափակումը՝ վաթսուներեքերորդ յօդուածը։ 1880էն սողին ազգին միտքը կ'ընէ սոսիին մեծ հերձուածը։ Անցեալին կը պատկանին Ձարթօնքի Սերունդին շքեղ դէմքերը, ինքնարեւարար, ի չգոյէ հզօր, սնունդի։ 1880էն վերջ եահապեա Ռուսինեան մը ողորմելի դարձած Թէրզեան մը պիտի ըլլար, ինչպէս է արդէն, առանց ալեւալի այդ Թէրզեանը, երբ կը խուսափի ազգային կրկնէն ու պետական վարժարաններուն մէջ ֆրանսերէն կը սոր-

վեցնէ։ Ձէլն փնտուռեր իր դասերը։ Չունինք նման փաստը։
Ընդհակառակն փաստը ուրիշ է այդ փախուստին։ Պէրպէրեան
իր տոաջամարտիկի գերը տակաւ պիտի մեղմէ։ Դպրոցը՝ ասոր
հոգեբը։ Եթէ ոչ ներքին համոզում մը՝ հեղինակը այս շրջա-
փոխութեան։ Բայց կը յիշեմ Ոսկանը որ լքեց մեզ դեռ 1867ին.
Մամուրեանը՝ որ անցած է Պէրպէրեանին փարախը։ Չերազը՝
որ լքեց Պոլիսը։ Ասոնք հանդամանաւոր անձնաւորութիւններ
են։ Ազգին մտքին մէջ գոյութիւն տուած երկրորդ հերձուածը
յեղափոխական — ազատական խմբակցութիւնն է, Արփարեանով
գլխաւորուած։ Պէրպէրեան կը զգա՞ր վտանգը ուր կը գիմէին
այդպէս գլխաւորուած տղաքը, եթէ ոչ ներքին, հոգեկան յար-
գարանք մը զինքը կ'ընէր անատակ ատոնց կողքին զիրք բո-
նելու։ Նոյն տարին է ծնած անիկա զրեթէ այդ Արփարեանին
հետ։ Բայց Մաքսիէ և Խէթի տասնըհինգերորդ նամակը կ'ըսէ.
«Թողունք կարիճներուն կատարել իրենց խալթիւս պաշտօնը»։
Կարիճը Արփարեանն է։ Յտա՞կ։ Անշուշտ։ Ահա թէ ինչու
Պէրպէրեանի ճտուրը, զրականութիւնը հազիւ թէ կը պատկա-
նին երիտասարդութեան այն հատուածին որ իր պարտքին մէջը
կը զգար շարունակել Չարթօնքի Աերունդին սկսածը. — լիա-
կատար ազատագրութիւնը իր ժողովուրդին։ Պէրպէրեան՝ խմ-
բակէն զգացած իր զարչանքը փոխադրած է իր ամենէն սրբա-
զան հոգեւունը ու զիրք բոնած՝ այդ միտքին ղէմ։ Անիկա ան-
շուշտ չէր կրնար արհամարհել իր ժողովուրդին ազատագրու-
թիւնը, բայց խորունկ էր իր համազումը միւս խմբակին անատա-
կութեանը վրայ նման դեր մը յաջողութեամբ ի կատար ածելու։
Ասկէ՞ իր ճատերուն և գրութիւններուն անիկա յատակ յարդա-
րեց մարդկայնական (humaniste) ուսումներէ։ Վարժապետութիւնը
զինքը կը պաշտպանէր, զպրօցին հոգերուն կծիկը զնելով անոր
սեղանին, անոր զլանալով վտանգաւոր արեւածախնորութիւն-
ները։ Այն օրէն որ հատուածը, հերքումը, եղան կատարեալ այդ
երիտասարդութեան մէջ, Արփարեանականները — հոս կրնանք
տալ այլեւս ճիշդ անունը՝ յեղափոխականները — ընդամենին
ամէն գուշաւորութիւն։ Կրակին դօտին կը մօտենայինք։
1885ին, իր աշակերտներուն ուղղած վերջին խօսքերուն մէջ,
Պէրպէրեան կրցածին չափ ինքզինքը կը մեկուսացնէ տղայա-
կան, զպրօցական մտահոգութեանց շուրջ։ Ասկէ՞ սկիզբը հոսկի-
բաններուն որոնք պահպանողական դատարարքին ոսկիմատեան-
ները կազմեցին։ Լման քառորդ մը դար այդ իմաստութիւնը
լրումը նկատուեցաւ քաղաքական կատարեալ առաքինութեանց։

Պէրպէրեան գերագանց դատարարակն էր: Սուլթանը անոր յօ-
րեւեանին առիթով Օրմանեանի ձեռքէն անոր հասցուց իր պատ-
ուանշանը: Ասոնք կենսագրական չեն, այլ տարրեր՝ հասկնալու
համար քիչ մը մեր հասողութենէն անդին իրողութիւններ: Ձի-
րաւեր մեր իմացական վիճակին խոնարհութիւնը հիմ առնել
բացատրելու համար միանձնած ան վատքը մարդու մը որ անշուշտ
զիտէր իր դատախօսածը, ունէր ներշնչող ուսուցչի տուրքեր
բայց որուն իմացականութիւնը կը պահէր իր ծագումին անդաւ-
ման զրկանքները: Դեռ այդ երիտասարդութեան գլխուն մէջ
համալսարանական կրթութեան մը բարիքը, դուք պիտի չգտաք
գիտարութիւն յստակ տեսնելու այդ վատքէն ներս: Հետե-
լինձմէ՝ տպուչ հիացումը այդ համալսարանական կրթութեան:
Բայց համոզուած եմ որ բոլոր իրենք զիրենք յորինողները
(քանի մը անուն՝ Եղիշէ Դուրեան, Մինաս Չերազ, Եղիա այդ
սերունդէն և Արուեստադէտները ինչպէս Իրապաշտները իրենցմէ
առաջ, գրեթէ առանց բացառութեան, չեն անցած նոյնիսկ կա-
նոնաւոր երկրորդական կրթութենէ մը) այդ յորինման արարքին
են վատնած աներեակայելի ուժ, ներքին խելութիւն, որոնք
աւելի վերջը պիտի պակսին իրենց իրազօրծումներուն: Սհաթէ
ինչու այնքան շատ է այդ իրազօրծումներուն գումարը Ձառ-
թօնքի Աերունդին վաստակին մէջ, բացի գրականէն որ հազիւ
թէ աղերս ունի կրթականին, իմացականին հետ: Ըսել կ'ուզեմ՝
որ կը բանայ իր ակօսը, ինք իր գլխուն, տարեբային ու անդի-
մադրելի: Երեսնան զպրոց մը չէր տեսած կանոնաւոր:

Այնպէս ինչպէս որ կ'երեւայ այսօր Պէրպէրեանի իմացա-
կանութիւնը, հաստատ, առողջ, իրատես, զործնական միտքն է
մեր միջին քաղքենիին (*): Չմոռնալ ասիկա: Այդ քաղքենին էր

(*) Ատեն է որ յիշուի իր առիթով անունը ուրիշ ուսուցչի մը որ
Պէրպէրեանին անհետացումէն յետոյ ջանաց վտխարինել կորուստը, իր
կարգին զպրոց մը բանալով: Իմ յարգանքը Հինդլեանի պարկեզարան:
Բայց այսքան, Ասիկ անդին իր նոր դպրոցը, հարուստներու տղոց համար
հիմնուած, ուրիշ բան չէ եթէ ոչ աւելի տնավարի, աւելի ածաս Ռոպերթ
Դոշէն մը: Դարձեալ կը զիջիմ այդ մարդուն համբաւ մը իր դասերէն:
Բայց չեմ կրնար ներել որ կատակի ելլէր խմաստաւորսիս որակուած
կրթաւքին հետ որուն կցեց ահաւոր ածական մըն ալ, — զօրճնակն ի-
մաստաւորսիս: Այս վերնադիրին ներքեւ անիկա տարիներով յօղուած-
ներ ստորագրեց, ինչպէս ըրեր էր Ռ. Պէրպէրեան: Արդ, իմաստաւորու-
թեան զործնականը այդ յօղուածներուն մէջ ուրիշ բան չէ եթէ ոչ Պէր-
պէրեանի հօտիկ-լուսնեբուն աւելի լրագրացած կապիւումը: Մանկավար-
ժական թացիկ յաւակնութիւնները վարժապետներէ զեկաւարուած գրա-

որ ապրեցուց այդ գալրոցը, բայց տուաւ նոյն տտին զայն վա-
րողին ալ միտքին տեսակարար ծանրութիւնը: Այդ միտքը մար-
դիկ սովոր են գտնել հուսկ — բանգերու շարքին մէջ: Իմ սովո-
րական անկեղծութեամբս կը յայտնեմ հոս իմ խորունկ պատ-
րանաթափութիւնը այդ շատ գովուած խօսքերէն: Անարդար
բան է խօսքը դատել գիրի վրայ: Բայց միամտութիւն է նոյն-
քան անարդարանալի գրադէտի վարկ մը ճարտարապետի թէ-
կուզ ամենէն օրակեալ խօսողին երբ այդ խօսքը հոտի է նման
յաւակնութիւններ պաշտպանելէ: Պիտի ընդունիմ որ պահը,
չըջանալը, խօսողին ընդոժին շնորհները միջամտին այդ պատ-
րանքին ստեղծումին: Բայց Պէրպէրեանի հուսկ — բանգերը ով-
սաննայուած էջեր էին. զանոնք թերթերու, հանդէսներու մէջ
հիւրընկալելը՝ պատիւ մըն էր, հասարակութեան մատուցուած
հեշտանք մը:

Իմ գտածը:

— Լրագրական հասարակ-տեղիք մը զրեթէ: Արժանիք՝ այդ
հասարակ-տեղիքը (ամէն հուսկ — բանգ կառուցուած է ատոնցմէ
մէկուն վրայ: Ահա ձեզի նիւթերու ցանկ մը. — Մադէլ և Իբէն-
անդերնագիր երկու խօսքեր, առանց տիրական զաղափարի մը:
Դաստիարակ էջ խաւքէն՝ Նըջան-թիւն, Հաւաթ, Յոյս և Սէր, Տեւ-
լան, Ճշմարիտ յաջողութիւն, Անյնաբահութիւն, Կենաց Նպաստը, Փորձ,
Հոգեպաշտութիւն և Նիւնապաշտութիւն, Աղբիւր, Աղէն-կէտէր: Դպրոց
և Դպրութիւնէն՝ Կարաբէլաբորժոմ, Պարսխանաբորժոմ և Կէտէր,
Պարէլ) հետտիրական ամուր յօրինուածքի մը բարիքով մա-

կանութեան մը մէջ — ինչպէս է զժրախտարար արեմտահայ գրականու-
թիւնը — երկար տտին պատրանք ստեղծեցին միտքերու մէջ, հարազատ
գրականութիւնը հակաշուքու: Պէրպէրեանի Դպրոց և Դպրութիւն
ստուար մասը նիւթը կ'առնէ այդ աման, պատրաստ, ամենուն մատչելի
կրթանքէն: Առնել եւրոպական, ամերիկեան հազարաւոր հանդէսներ,
գրքոյկներ, ընել ատոնցմէ խելացի խալաւմ մը ու քշել մեր օրաթերթե-
րուն, հանդէսներուն մէջ իբր հարազատ ապրանք: Այս արտում ասոր-
մանքները ազերս մը չունին անշուշտ գրականութեան հետ: Բայց Պէր-
պէրեանի, Հինդիեանի և ուրիշ աւելի ճճի փառքերու վարկը ծագում
կ'առնէ այս ամենուն շուրջը ճարտարօրէն հեղինակուած պատրանքէն,
իմ ամբողջ համակրանքը՝ այդ մանկավարժական գրականութեան, առանց
այլ ալի: Բայց պայմանով մը միայն. — այդ գրուածքներուն հեղինակ-
ները պարտաւոր են միայն իրենց չափին մէջ ու զստատու չդառնան մեր
զխոսուն հոն ուր իրենց իմացականութիւնը հիմնովին կը մնայ անբաւա-
րար: Հինդիեանի գործնական իմաստասիրութիւնը աւեսպրեքեան բաջա-
զանք մըն է և ոչ ուրիշ բան:

տուեցանել մարդոց։ Ձեռ գիտեր։ Գիտեմ միայն որ խելքը գլուխը որևէ միջին կրթութենէ անցած ուսուցիչ պիտի կրնար նուաճել նման պարտականութիւն մը։ Մեր մատուլը, մօտ հաւրիւր տարի կայ, իր ընթերցողներուն այս կարգէ հազարաւոր նիւթեր հրամցուցած է, առանց զանոնք մշակողներուն ներսը գրագէտի փառասիրութիւններ մշակիլէ։ Ուրիշ խնդիր՝ երբ այդ հասարակ-տեղիքին մշակը է նոյն ատեն գրականութեան ալ սպասաւոր մը, ինչպէս է արդէն ստուար թիւ մը մեր գրողներէն։ Լուսկ-բանքերուն տարողութիւնը իբր գրական յաջողութեամբ — Տարիքը որ քնարական աւելնը տակաւ կը մեղմէ, միջամտած է այդ խօսքերուն, տալու համար անոնց յօրինման հետզհետէական կանոնաւորութիւն, համեմատականութիւն, ամբողջութիւն, բայց չէ կրցած զանոնք վերածել գրական իրագործութեան, ինչ որ արդէն խնդրոյ նիւթ չէր կրնար ըլլալ Պէրպէրեանին մտքին մէջ եթէ երբեք մեր հրապարակը անոր մէջ չարթնցնէր նման ալ արժանաւորութիւններ։ Խորքէն անպաշտպան, ձեռք հասարակ այս խօսքերը (*) կ'ընկղմին բարոյախօսական ընթացիկ գրութեանց մոլուցքին մէջ։

Ունինք Պէրպէրեանէն տակաւին հաշիւը իր մէկ զեղծանումին։ Եզրին մեղադրեցին որովհետեւ գրական անուշ խորհրդանշան մը — Նիւլանան — առանցուց, չըսելու համար գռեհկացուց, զայն տեղի ու անտեղի գործածելու չարաշահութեամբ մը։ Պէրպէրեան մեր մէջ հասարակութեան լայն խաւէ

(*) Մենք ունինք Պէրպէրեանի տղուն, Շահան Պէրպէրեանի քանի մը հոսկ-բանքերը։ Ասոնց մէջ խորքը գեղեցիկ նմոյշ մըն է նորոգուած հառաւակ-սեղիի, քանի որ, ուղեք չաւգենք, ստիպումին տակն ենք մեր խօսքը առնելու այդ շտամարանէն։ Բայց Պր. Շահան Պէրպէրեանի մօտ այդ խօսքը կ'ենթարկուի որոշ նորոգման, որ քսաներորդ դարու իմացական մեծ սխիլքիներուն յաճախութեամբ կազմուած մտքի մը գործողութիւնն է։ Անշուշտ հոգին չի փոխուի։ Բայց այդ հոգին տեսնելու, հասկընալու, բացատրելու կերպերը կը մնան ենթակայ մնայուն շրջափոխման մը։ Իր իմացական սնունդը 1840-50ական բարեխառնութենէ մը ճարած (Փրանսացի բուսնութիւնները, Բուդէնը իր ընտրողական իմաստասիրութեամբ — բարին, նեւարիք, գեղեցիկը սին տարազներով, քիչ մը դուրեցերիական մանկավարժութիւն ու զպրօցներու մէջ դասախօսելի իմաստասիրութիւն) Ռեթէոս Պէրպէրեան մեր հրապարակին վրայ չէ իրապարծած ոչ մէկ նորոգում։ Տղան նոյն նիւթերը անցուցած է արդի, բողբոլին նոր մտաւորական ձգտումներուն ցանցէն։ Սրդիւնքը՝ վճռական է։ Կը կարգանք Պր. Շահանի խօսքերը ու կը մտածենք, ինչպէս ինք մտածեր էր զանոնք, կը կարգանք Ռ. Պէրպէրեանի խօսքերը և կ'անցնինք անդին։

րուն իջեցուց Քուզենեան զեղեցիկը, հեմարիսը, բարին հոհտուրական տարազը: 1840ին այդ տարազը իրեն անուն ունեցող զիրք մը 1880ին մեր մէջ ընել օրակարգի հատոր մը՝ Իրապաշտաները չներեցին. իրեն: Ի՞նչ փոխ: Պէրպէրեան ամէն առիթ բարեօք համարեց այդ նշանաբանով նիզակ ձօձելու հուսկ-բանֆերուն ինչպէս անջատ գոտախօսութիւններուն մէջ. այնքան որ հրապարակագրական որեւէ յօդուած, այդ թուականներուն, իրմէն թէ ուրիշներէ, պիտի գլխէր մոզական տարազին: Եւ սակայն Պէրպէրեան պարտքին տակն էր կարդացած ըլլալու Les Philosophes Classiques du XIX siècle հատորը (Թէն), կարդացած ըլլալու էր նաեւ Գոնգի, Լիրթրէի վերլուծումները:

Հուսկ-բանֆերը չեն պատկանիր արեւմտահայ գրականութեան հաստատ փառքերուն: Բայց վաշխած են իրենց փառքը: Ունեցած են ազգեցութիւն՝ կերտումին մէջը այն սերունդին որ երկու դարերու հանգուցին կ'իյնայ: Հոս է որ կը սկսի տարակոյսը: Անուրանալի է որ Պէրպէրեան վարժարանը կերտած է դաս մը մարդերու, թիւով շատ աւելի կարեւոր քան ուրիշ որեւէ կրթական հաստատութենէ մեր ստացածը: Ըսի թէ ինչքիչ բան կը պարտինք Ռապերթ Գուլէճին: Ի՞նչ կը պարտինք Պէրպէրեանին: Գրականութեան համար այս հարցումին յստակ ու կարճ է պատասխանը: Բայց ընկերային գետնին վրայ: Պէրպէրեանի վարժարանէն ուսուցիչներ, բժիշկներ, զբօղներ, առեւտրականներ, նոյնիսկ զիտուններ, պաշտօնականներ, այսինքն ազատական ասպարէզներու նուիրուած մարդեր, փաղանգ մը կազմելու չափ բազմաթիւ են: Այս մասին ոչ մէկ տարակոյս: Ունի՞ն այս մարդերը կնիքը իրենց վարժարանին: Ուրիշ խօսքով՝ առած են, վկայականը ծոցերնին երբ մտիկ կ'ընէին ներշնչեալ ուսուցիչը իր վերջին խօսքերուն մէջ, այն բարոյական, իմացական հաւասարակշռութիւնը որ մեր երիտասարդութիւնը կը հանդերձէ իր դերին: Հոս, հաստատումը կը մնայ խնդրական: Չեմ լաշնար, դեղագործի մը փայլուն, արժանաւոր անձնաւորութիւնը (Պէրպէրեանէն շրջանաւարտ) բացատրելու համար խնդրական տեսութիւններու: Ունիմ աւելի դիւրաւ շրջագծելի մարդ մը. — գրական մարզն է առիկա: Ի՞նչ ունին իրարու հետ համերաշխ Սեակն ու Ջրաքեանը, Ջրաքեանն ու Բաշալեանը, Թէքէեանն ու Արամանթօն: Ուրիշ խօսքով՝ սօքրատեան տեսակարար ուժ է անցած այս տարազներուն կազմաւորման համար վարժարանին գլուխէն: Փորձեցէք պատասխան մը ճարել ու պիտի համոզուիք որ այդ անուններով մեզի հասած

գրականութիւնը հիմնովին կը հակասէ վարդապետին ոգիին ինչպէս արուեստի հաւատալիքներուն: Բան մը զոր կրնանք առանց ալլեալլի յայտարարել, ատիկա ալ՝ գրական սպասի համար երկտասարգներու մէջ արամադրութիւն ստեղծելը պիտի ըլլար ու եղած է ատիկա: Ռուսերթ Գոլէճը այդ քանին ալ անընդունակ մնաց:

Պէրպէրեանի ճառերէն հանդիսական որակուածները, որոնք Վադիւրայի մը խոսքերն էին և Վադիւրայ և Վադիւրային մէջ տեղ են գտած, աւելի աժգոյն համոզութիւններն են հոսիլ բանին: Կիւրակնաւոր խօսքերը (Վադիւրայի մը խոսքեր) կը պատկանին նոյն շարքին ու լրագրի յօդուածներն են, գրուած՝ որոշ ջերմութեամբ մը, չըսելու համար հոյսով մը: Այս բոլոր խօսքերը դուրս կը մնան գրականութենէ: Կայ հրաժեշտի խօսքը, որուն աւելի հասարակ անունն է դաւբանականը: Բոլոր ասոնք եթէ մարդը ճանչնալու կը ծառայեն, չեն ծառայեր անոր գրական արժանիք մը ճարելու:

Վադիւրայ և Վադիւրային հատորին երկու երրորդը կը զբաղի զբարբոյժ, զայն վարելու կանչուած ոգիով, անոր սպասը ընելու սահմանուած մարդերով, հոն տիրող կարգութեամբ ժամանակակից տուեալներովը: Արդար մթերք մը, այդ մարդին վրայ, գործնական, օգտակար գաղափարներու: Պէրպէրեան չէ ծածկած իր աստիճանական զարգացումը այդ ուղղութեամբ ու իր յօդուածները մեղի կը յայտնեն նորութեանց հետամուտ տիպարը ուսուցչին: Բարոյական ամուր խորքին վրայ ընդարձակ սա հետաքրքրութեանց բարքերը թերեւ կերպով մը գահաւորակը եղան անոր փառքին: Յետոյ, ինչպէս ճառերուն, մանկավարժական այդ յօդուածներուն ալ մէջ Ռեթէոս Պէրպէրեան միշտ աւելի է քան մասնագետ, մասնաւորուած, իր կալուածէն անդին չնայող տիպարը: Ընդհանուր գաղափարներու հետ ինչալ ելլելու սա վարժութիւնը անոր ողնուղիդն էր թափանցած: Ինչ փոյթ թէ զուտ գրական (*) նկարագիր մը չըլլայ անոնցմէ արտահանելու:

(*) Վադիւրայ և Վադիւրայինը ունի Պատուիլին և Հրաչիայի պատիւը պատկերը, թերեւ մէկ հատիկ արձակ իր այն էջը որ անոր հաւաքութեան կար գրագէտ մը դառնալու: Կտորը լաւ կը գծէ պատուելիին տիպարը, բայց կը նուազի ատկէ դուրս, զարոյցական շարադրութեան մը վերածելու աստիճան թերեւ իրաւ, ապրուած այդ պատահարը: Դարձեալ այդ հատորին մէջ Յորիլինական հաւար ունի անձնական մասեր, շատ մօտիկէն գրագէտ մը թեւադրող: Գրեթէ գրական էջ մը՝ իր

Համապատասխանաբար մը չէր կրնար ըլլալ՝ Ռեթէսո Պէրպէրեան, լաւագոյն խոկ արգիւն քննարկող մեր իմացական զարգացման կրկէսին համար, պիտի չառնէր ինձմէ աւելի քան յիշատակութեան մը զիջումը, եթէ երբեք որոշ չափով բերած չըլլար իր բաժինը արեւմտահայ գրականութեան ընդհանուր արգիւնքին։ Բոլոր գովեստները, յորելեանները, մեծագործութիւնները մարդու մը օրերուն վրայ քաղցրութիւններ են։ Մարդ մը ազատագրող, յիշատակարանի մը փառքին, խորհրդանշանի մը արժանիքին բարձրացնող տարրերը չեն պատկանիր վերի քաղաքներուն։ Զգած է Ռ. Պէրպէրեան մեր գրականութեան գործեր որոնք կարգացուէին այսօր ալ, եթէ ոչ իրենք իրենց ներգոյակ ուժին, զէթ իրենց վաստին համար մեր գրականութեան շրջափոխումը լուսաւորող։ Այս հարցումին պատասխանը չի կրնար տալ Աւաջէն Տէրէքը։ Բայց կայ Խոհէ Եւսէքը։ Աւելի՛։ Այսինքն արձակները։

Կանխող էջերը, իրենց մեծ բաժանումներուն մէջ պարզեցին որոշ կողմերը այդ արձակին։ Ինծի կը մնայ գրագէտ Պէրպէրեան մը ենթարկել վերլուծման։ Անշուշտ իր բոնիկներն անբաւական պիտի գային նման ծանր վերադրում մը արդարացընելու։ Վերերը ըսի թէ Պէրպէրեան մնանաւ է գրական հարցերու վրայ։ Այս հետաքրքրութիւնը առնուազն գրական քննադատի հով մը կը ճարէ իր համբաւին։ Այնքան քիչ է ոտնով ծագործականին բաժինը Ս. Չօպանեանին վաստակին մէջ, բայց այնքան մեծ՝ այդ մարդուն գերը մեր գրականութեան ճակատագրին վրայ։

ժամանակ մը (1895-1905) երբ բռնապետութեան ահը տարտըղներ էր արեւմտահայ գրականութեան վաւերական մշակները, Պոլսի կը գուրգուրար Պէրպէրեանի խելքին վրայ, այդ հարցերուն շուրջ ասոր լուրջ պատրաստութենէն նուաճուած։ Սրտաւ չէս Յարութիւննանէն, Յովհաննէս Ասպետէն ու Գրիգոր Մալխասէն առաջ կար կարծիքը Պէրպէրեան էֆէնտիին, ու կը հաս-

գարոցին պատմականը ընող յողուածը, դարձեալ այդ հատորին մէջ։ Դրական յիշատակները (Դպրոց եւ Դպրութիւն) քիչ անդին կը զբաղեցնէ զիս։ Երեսունէն աւելի տարիներ, գրիչի սա աշխատանքը տալական չկայ որ բարիք մը եղաւ շատ մը մտքերու։ Ինչ սրտառու է սա հաստատումը երբ անմիջապէս աւելցնեմ որ այդ բարիքը անկաւանկաւորող միաց ընելու իր խոկ անձին։ Իր յիշատակը ինչո՞ւ պաշտպանուէր յիշողութեամբ, երբ զօրմ մը կրնար զայն տիրական ընծայել մեր հիացումին։

կընաք՝ գրական իրողութեանց վրայ: Թերթ մը, հանդէս մը թերեւս անոր մէջ գրգիռ գոռնային նոր գործունէութեան մը: Բայց երկրորդական վարժարան մը կարի ծանր բեռ մըն է որեւէ միաքի վրայ:

Պէրպէրեան ստորագրած է գրական — քննադատական էջեր իր և օտարներու գիրքերը յառաջարանող: Առաջին րեքերին նախարանը գրեթէ գրական մանիֆեստ մըն է ուր գժրաստարար լեզուական հարցը կը գրուէ առիւծի բաժինը: Այդ էջերէն մօտ երեսուն տարի վերջ Ներաշխարհին սկիզբը գրուած իր քանի մը էջերը կը փակեն կարծես այդ ձև գրականութեան մը շուրջ իր հետաքրքրութիւնները: Չեմ ըսեր որ Պէրպէրեան չէ հասկցած Ներաշխարհը: Բայց իր սերունդին չափերովը չափած է այդ գիրքը: Չրաքեան կը յաւակներ անով մեր մեջ անկարելի գլուխգործոյ մը հարստապետած ըլլալ: Ասիկա իր բերանացի, յետոյ բարեկամներով մեզի հասած խոստովանութիւնն էր ու Պէրպէրեան զիտէր ատիկա: Այն առեհ: Այսինքն ո՛ւր պարտաւոր էին նայիլ լոյսերը այդ էջերուն: Ներաշխարհի յառաջարանը լուրջ, որոշ չափով մը թափանցուն, գումար մըն է տարրերու ուր գրականը կը մնայ անկշիռ (այս մասին խօսած եմ ուրիշ տեղ, հետեւաբար չեմ կրկնէր ինքզինքս): Ասկէ զատ, մէկու մը գրական տարողութիւնը փնտռել ու գտնել սա քիչ չատ հանգիստաւոր տեղերու վրայ, ինչպէս են տարեցոյցները, յառաջաբանները (Սուրէն Պարթևեան անորակելի արտմութիւններու տարաւ այդ կնքահայրութիւնները՝ ուրիշներու գործերը հանրութեան ներկայելու), առողջ, առնուազն պարկեշտ եղանակ մը չէ այդ տարողութիւնը բնորոշելու:

Պէրպէրեանի գրական արդիւնքը մենք կը գտնենք 'Խաբար և 'Խաբար-Ռէն հասարակ մէջ ամփոփուած: Այդ գիրքին աւելի քան հարիւրյիսուն էջերը աւելի կամ նուազ չափով մը կը գրադին գրական հարցերով: Ասոնցմէ ոմանք հազիւ թէ կը պատկանին բուն գրականութեան (ժողովրդեան և գրաբէրէն աշխարհագրութեան, 'Բարբար լեզու և 'Բարբարեան, Տաղաւաճական խնդիր մը), քանի որ այս հարցերուն կորիզը կուգայ լեզուէն: Ասոնցմէ ուրիշ մաս մը (Հէլէն դասական դպրոց-Ռէնէտ և արաբագիր, Պէրճախոս-Ռէնէտ, Լիշական պէրճախոս-Ռէնէտ, 'Ռաբերգո-Ռէնէտ) հանրապրտական յօդուածներէն զոր ամէն գալուածեանց ուսանող համապատասխան ձեռնարկներէ (traité) ի վիճակի է արտահանելու: Ուրիշ կտորներ (1902 Փետր. 2 — Ինթերնէնէ «Մատեն»-ն յանձնակէն աւելնող —, Մատենաց Եղեկոյն, Մարտիտ Մատենէտ, 'Բարբարէ վրայ դարձեալ եր-

Կո-գրո-մէ-նէ-ր, Մէ-մար Աբբայէ Էրհարէ-բաթալէն ձեռք) Պէրպէրեանի մասնաւոր կնիքովը կենդանագիրներ են, ինչպէս մենք տեսանք անոնց նախատիպարները Մարգէլ Լ Իրէին մէջ։ Կան փոքր թիւով ուրիշ կտորներ։ Ասոնք այլապէս ժամանակակից հարցերու շուրջը (Նոր գրողները, Վաղահին գրականութիւնը (երկու յօդուած), Փաշանա-կակիշ Չէպի Ի Ֆրանսա) Պէրպէրեանի գրական զգայարանքը կը հա-մադրեն։

Այս ամփոփ ուրուագիրը բաւ է սակայն Պէրպէրեանի մէջ ընդունելու գրական իրողութիւնը իր սրտին մօտ ունեցող մարդէ մը որոշ վկայութիւն։ Հասկնալի է որ զիս գրեթէ անտարբեր ձգեն լեզուական խնդիրները։ Թէեւ ստիպուած եմ յայտարարելու որ լեզուական տաղնապը ծանր տաղնապ մըն է Պէրպէրեանի սերունդին համար։ Զարթօնքի մարդերը մեր աշխարհաբարը կանոնաւորելու իրենց մտադրութիւնը յաջողած էին պահել իր արժանաւոր չափին վրայ։ Նահապետ Ռուսինեան, իր Ուղախոսութիւնին տապալումէն վերջը շարունակեց զրել իր ժամանակին աշխարհաբարը ու ազգէն իր գտած հալածանքը չընդհանրացուց, ինչպէս պիտի ընէին 1880ի մարդիկը որոնք Պարագաշով գլխաւորուած՝ պիտի կազմակերպէին ընդարձակ խաչակրութիւն մը աշխարհաբարի դէմ։ Ո՞վ չկայ այդ մարդոց կուշտին։ Տիւսարէն սկսած մինչև Գուրգէնը։ Եղիայէն մինչև Եղիշէ վարդապետ Դուրեանը։ Յատկանշական է որ խումբը ներկայացնող անուններէն շատ քիչեր պիտի անցնին արեւմտահայ գրականութեան հարազատ փառքերու շքացանկին։ Եւ իրողութիւնը ունի մէկէ աւելի թելադրանքներ։ Ամենէն առաջ փաստ է որ զրաբարի յետաշրջումին հերոսները հազիւ թէ գրականութեան կը պատկանին։ Կրսսեր Ռամանթիքներ կոչուած խումբը անոնց մէջ ամենէն հանդամանաւորն է նորէն ու դուք տեսաք թէ ինչ դժուարութիւններու դուռ կը բանայ ցեղային արժէքներու սրբաբանին համար այդ անուններէն մեկի հասածին ճակատագիրը։ Լեզուն անշուշտ ոչինչով է մեղաւոր։ Բայց կայ աւելի գաղտ մեղքը՝ շեշտ անոր վրայ դնելու։ Երբ մարդիկ տկար են ստեղծագործութեան մէջ, կը մեկնեն, կը փաստարկեն, վէճերու կուտան ծնունդ, կերպով մը ամօքելու համար ներքին տրտմութիւն մը։ Քանի մը տարի առաջ, տեսայ եղիայի երկաթ-գնալին մէջ Դուրեան Սրբազանի կողմէ կատարուած լեզուական սրբազրութիւններ որոնցմով 1880ի որձեկդ բարբառով լոյս տեսած կտորներ վերածուեր էին 1900ի վճիտ աշխարհաբարին։ Թիշատակութիւնը անկէսորիք ըլլալէ աւելի է մտքիս մէջ։ Դուր-

եան Սրբազան, այդ իսկ սրբազրուհներով կ'ապացուցանէր թէ կը հաւատար այդ յօդուածներուն, այսինքն անոնց խորք վաճառուած ոգիին: Ու չէր կոսկածեր որ Ա. Ռ. Գ. Գառն փաստաբանուած կտորը լրագրական հասարակ filet մըն էր, ոչ աւելի ոչ պակաս, թէն զրուած ամենէն մաքուր աշխարհարարով: Նոյն պէս Գառն Ե. Գառն-Բէն հատորը զոցող հոսկիւրանք. — Պարտաւորութեան Զայն, 1906ին, իրեն ոգի կը մնայ տարօրէն հաւատարիմ քառորդ դար անաջան ճանկուն: Հեղուհն՝ այս արարքները չի բաւեր բացատրելու: Գործարարութիւն է որ գրական բաժինին կէսէն աւելին գրուեն սա լեզուական խնդիրները: Մօտ կէս դար է անցեր այդ օրերուն վրայէն: Արեւմտահայ գրականութիւնը տակաւ կը ջանայ ազատագրել ինքզինքը վարժապետներուն ճաշակէն ու լուծէն: Բայց Հայագրութիւնը զուրկուրանք ունի զէմքերուն, գործերուն չափ մտայնութեանց ալ վրայ: Պէրպէրեանի մօտ լեզուականը կը սնանի գրաբարի պաշտամունքով մը: Գրաբարի պաշտամունքը անոր մօտին մէջ կ'ապուած է զգայնութիւններու, մարդերու, Վեցեցիկ — Վիեցեցա յղացքներուն: Գարագաշեանի^(*) զիւտ օսկիզնիկ գրաբարին,

(*) Պէրպէրեանի սակաւթիւ կենդանագիրներուն մէջ ամենէն յաջողուածներէն մէկն է հասանարար ինչ որ նուիրած է անիկա նախկին վիսնականին: Յորեկանական ճառին մէջ արտայայտ խօսքեր ուղղած է անիկա այդ մեծ ուսուցչին: Իր դամբանականը, անոր վրայ, դարձեալ ցոյց մըն է խորունկ պաշտամունքի, ինչպէս փաստ մը՝ մատնաքանդ զոր միշտ կ'առնեն նկատի: Թարթու վանանդացի իր պատասխանը, միշտ Գարագաշին առիթով, յաւելեալ վկայութիւն: Այս խորհուածութիւնները և Գարագաշի վայելած ընդարձակ վարկը բաւարար պատճառներ չեն անշուշտ որպէսզի կատարուի զիջումը: Զիջումը կ'ընեն՝ վասնզի Մատթիա Գարագաշ աշխատած է մեր մշակոյթին Ալիշանին չափ ու հար-Պէլին չափ, առնուազն իրմեանէն աւելի գիտակցուած կորովով մը: Մինչև խոր ծեծութիւն կրկէսէն չէ հեռացած պատուական Միւրթարեանը: Ու ինչ որ զիս մղած էր զիջումի վերի անուններուն առջև, ատիկա գիտակցութիւնն էր՝ ահա այդ աշխատանքին տարողութեան: Ինչ փոյթ որ իմ կարուն մեր թուները չկարգան Պատյիկ և Թուրքիկը: Այդ հատորիկին էջերը մեր հոգիին պատմութեան մասերը կը թելադրեն տեսնել կրցողին: Մատթիա Գարագաշ այդ գիծէ հեռանդուն, խտտահաւատ աշխատաւոր մըն է, ուղեղով մը զոր վանական շատ լուրջ կրթութիւն մը տարած է կարելիութեան սահմաններուն, անոր խորը պապարեկիւր շատ ընդարձակ հետաքրքրութիւններ: Այս հետաքրքրութեանց նկարագիրը: Հոս կը սկսի գծուարութիւնը: Լուղովիկոս Հոսկիւրունքը գրաբար (օսկիզնիկ երանէն) թարգմանութիւն մը (քերթուած) անշուշտ ինձի համար հաւասար է իր փեւակաւորիւններուն, ոճի աճով կամ ոչ, տրամաբանութեան դասակարգութեան, աշխարհագրութիւններուն և ուրիշ տասնեակներով դպրոցական

Հիւրմիւզ + Բազրատունի եզրերուն ընդդէմ Դաթըրճեան + Մատաթիա Գարապաշ ուրիշ եզրերու: Այնպէս որ այս էջերը անոր համար պատահութիւն են զգայնութեան փաստին: Չափը անցնել⁶ քառորդ դարու արձակի մը նկարագրէր ընդունիլ ինչ որ անջատ անջատ զգալի է Դեպի Իսլամականութիւնը

յօրինումներուն. — այսինքն զիս կը ձգեն անտարբեր. այնքան որքան իր զիւսը ոսկեղարու առաջին կէսին մէջ գործածական բուն հայերէնին: Գործը որ բանասիրականէն անդին կը նայի, ատիկա ապահովաբար իր Քննական Պատմութիւնն է: Չամչեանի, Ալիշանի զէմ գիրք բռնողի մը հոգեբանութիւնը տեսնել այդ գործին մէջ՝ պիտի նշանակէր Գարապաշի լրջութիւնը ձգել կասկածի: Գարապաշեան 1850ին հազորդ է դերման քննական ոգիին որ նորոգեց բնագիրներու ուսումնասիրութիւնը: Սուրբ Գիրքին մեկնարանումովը սկիզբ առած այդ շարժումը (որ կը սկսի Ժ. Կարու վերջէն ու կը հասնի մինչև ԺԹ. ին կէսը) անշուշտ սրբագրեց ըստ պատրանքներ, բայց շունեցեալ իր ետին հարազատ գրադէտի մը պաշտպանութիւնը և վերածուցեալ գիտական չոր ստուգումներու կրթանքի մը: Այդ ոգին ոգին է դարձեալ Մատաթիայի միտքին օրօրանը եղող հաստատութեան (Վիկենտայի Միսիթարեան վանքը)՝ վիճակիկ ամենեւեպ, ըստ խղճահարուող հայրենասիրական հոգեբանութեան զիմաց սա կեցողածքը անշուշտ քայլ մըն էր զէպի առաջ: Բայց, ինչպէս ըսի, շարժումը չպաշտպանուցեալ գրադէտէ մը: Կ'արժէ կարգալ նկարագրութիւնը այն հանդիսաւոր երեկոյթին սրուն ընթացքին Մատաթիա, Գաթըրճեան իրենց նոր գտած գրաբարով ճառեր կը կարդային հիացում ու վարմանք ստեղծելով ունկնդիր արբաններուն մտքին մէջ: Դրագէտ մը ապահովաբար պիտի անցնէր աւելի անդին: Պիտի չգէշր այդ Ե. դարու լեզուով: այլ այդ լեզուն ստեղծող պատմական վայրկեանը, Բաղադարական կեդարանը (Վերաբերել, վերագտնել պիտի փառասիրէր: Կը զգաք խոռվիշ գեղեցկութիւնը սա փառասիրութեան որ նորահասակ երիտառարդները պիտի վառէր, անոնց մէջ զնկով անէջջ հետաքրքրութիւնը կեանքին, զոր ապրեր էին այդ դարու հակառակը: Ես փորձը ըրի Սահակ մը գտնելու (Սիւն, Կեանք և Սրուհա) ու այդ մարդուն պատանութիւնն իսկ հօր լուսնումներու տարաւ զիս: Շինել այդ մարդերը՝ ոչ հոռոտրական շողիքով (վիկենտիկեան զարոյց) ոչ ալ քննադրային առաքումներով, ճշգրտներով (վիկենտայի զարոյց), այլ կեանքին ձայներուն, յոյգերուն, շարժքին ու գոյներուն ընդմէջէն: Ուրիշ խօսքով՝ ենթարկել վերլուծման այդ գարը, անշուշտ օգտագործելով հոն ապրող ուրիշ ժողովուրդներու ձգած բոլոր վաւերագրական փաստերը: Անցնիլ, ասոնցմով զինաւոր, մահէն անդին, այսինքն մոռնալ աւանդականին մեզի ձգած կասկածելի մոխրն ու փոշին, ու կեցնել այդ մարդերը մտքիդ լոյսերուն մէջ: Նախիլ անոնց աչուքներուն, մարմինին, ձեռքերուն: Բանալ անոնց ուղեղները, այսինքն՝ անոնց միտքը peupleր ընող կենդանի գաղափարներու միտքը որպէսզի ըլլային հասկնալի իրենց գործունէութիւնները: Արքունիք, նախարարներ, ժողովուրդ, զրացի պետութիւններ, կրօնական կազմակերպութիւններ, բոլորը վերածել կեանքի անդէսի մը: Ահա թէ

մէկ աշխատաւորին մեկի ձգած ոչ-քերթողական գործերուն ներսը: Ծերենցի Էրոնիկները, Մամուրեանի նամակակնից, Տիւսարի վէպերը, Խրիմեանի քարոզները, Իւթիւճեանի հայհոյութիւնները ունին իրարու հետ հասարակաց ինչ որ Ռեթէսս Պէրպէրեան կը համախառնէ իր գործին ընդհանուր կերպարանքին

ինչ էր ըլլալու Գարազաշի փառասիրութիւնը, Այդ 1850ին այս կրթանքը ի զօրու էր եւրոպայի մէջ, Կեանքի ղդայարանքը անդիտող Գարագա՞ջ մը: Իր Քննական Պատմութիւնը այս մեղքով է ահա մեղաւոր: Մեր պատմութիւնը անուներու շարան մըն էր մինչեւ Ալիշան, Կ'ընդունիմ: Այդ անուներուն շուրջ ինքնաբերաբար կազմուած ազաւարութենքը, սխալները սրբադրել յաւակնիլ՝ արժանիք մը: Թուականները իրենց տեղերը դարձնել, գրողներուն կեանքերը կարելի է ներելի դարեւու փոխադրել՝ միշտ արժանիք: Օտար ազդեցութիւններու լայն, աննախապաշար, խղճամիտ օգտագործումով զէպքերը, որոնք յօրինած են մեր աւանդական պատմութիւնը մօտեցնել իրենց հաւանական կերպարանքին՝ ուրիշ բարիք: Այս ամենուն համար հզօր լծակ՝ բանասիրական առողջ, հաստատ կրթանքը, կիրքը, բայց երբեք տիրական ազդակ մը: Վիեննացիները մոռցած են ահա այս տարրական պարտքը: Կը կարգաք հաղորէջեայ Պատական Հայկուհի (Տաշեան) ու կը հիւանաք հոն իրական հմտութեան փաստին, բայց ակամայ կը հարցնէք. ո՞ւր է ժողովուրդը որ հեղինակն էր այդ հայերէնին: Բանասիրական ամբողջ զրահանքը ես կը նկատեմ նախատարր պատրաստութիւն՝ աւելի կարեւոր աշխատանքի մը, միջոցներ՝ հարազատ, իրաւ կեանքին հասնելու: Ու գիտնալու էք որ հարազատ, իրաւ կեանքը առաւելապէս նուաճելի է ջիւղերով քան թէ ուղեղով: Ուրիշ խօսքով՝ առեւտրագէտի զգայնութիւնն է հարկաւոր բանասիրական աշխատանքները աղատագրելու համար մեռելադատական ճակատագրէ մը: Երբ Գարագաջ կը գրէր իր Քննական Պատմութիւնը, գտնուած էին, դարձեալ իր մեթոտներով, եզրպտական, առօրական, փիւնիկեան քաղաքակրթութիւնները, իւր հոյակապ, սրտառուչ հանդէսներ, մեծատարած որքան ահաւոր ուղերթութիւններով հերձուած կեանքի հանդէսներ: Ու կը յօրինուէին, այսինքն իրենց հարազատ կերպարանքին կը դառնային յունական պատմութիւնը, Հռովմէականը, միանգամ ընդ միշտ աղատագրութեամբ զարեւոտն սնտովքովը ու կրօնական միամտութիւններով աղբջ հասկացողութեան պատշեցուած կերպարանքներէն: Ամբողջ շքեղ աշխատանք մը պիտի ըլլար զնել սեղանի վրայ, որուն զինն էր պոսմակակնի վերանորոգումը 1850ին: Կիզօ, Թոգլի, Միշլէ՞ գաղղացիներէն, Մոմսէն, Ռասքէ՞ գերմաններէն: Փառնող դար վերջ՝ Ռեյնան, Թէյն, Պիւսթիլ տը Գուլանթ, Կիսթոն Քարի: Այս բոլոր անունները սրբագրած են զարեւոտն մանկամտութիւնները: Ու կը հարցնեմ դառնութեամբ. — Ինչ է ըրածը վիեննացիներուն որոնց մեծագոյն զէմքերէն է ապահովաբար Մ. Գարագաջեան: Այս հարցումին պատասխանը Քննական Պատմութիւնը չէ որ պիտի յաւակնէր տալ: Ուրիշ, Այսինքն Ազգային Մասնադատանի հարիւրէ աւելի հրատարակութիւններուն գումարը, երբ այս դարու մուտքին պատմութեան վրայ կ'աւելնար

մէջ, Չափէն անցնելով՝ դարձեալ այդ կերպարանքը ընդունելով ո՞ն մը, արձակիկ պահելու մը, սերունդի մը արտայայտութիւնը կերպագրող, Դուցէ՛, Բայց կայ տիրական արեւմտահայ զրաւան վաստակին մէջ պատկառելի մթերք մը որ ուղղակի չպատկու-

ամերիկեան ալ կնիքը, այսինքն հմտութիւն եւ կեանք իրարու համադրող մեթոտին բարիքը, վիեննացիներէն հրատարակուած այդ գիրքերով դուք պիտի ճանչնա՞ք մեր ժողովուրդը, Պատասխանը պարզ է, Այդ գիրքերը գրուած են արուեստին, կեանքին կամաւոր, չըսելու համար չարակամ օտարութեամբ մը, թշնամական իսկ ոգիով, Ու չքեղ այդ ճիւղը, այդ իսկ խօթութեամբ, մնացած է անրտական՝ նուաճելու իր առաջադրութիւնը որ հայոց կեանքն էր անշուշտ ամէն աշխատաւորի մտքին մէջ, Մատաթիա Գարապաշ 1870ին տիրական դէ՛մք, Պէրպէրեանի ընկալուչ երեւակայութեան վրայ այդ հմտութիւնը տպաւորիչ էր անտարակոյս, Բայց 1900ին, այդ «չափու հասեալ» և «յցեալ իմաստութեամբ», նոյն այդ Պէրպէրեանը a rebours հուսկ-բանք մը թերեւս կ'արտասանէր իր ուսուցչին յիշատակին, Մատաթիա Գարապաշ աշխատած է: Յարգանք իրեն, Մատաթիա Գարապաշ գտած է ն. դարու առաջին կէսին հայերէնին քերականութիւնը բայց չէ գտած ն. դարու հայ մշակոյթը, Մատաթիա Գարապաշ գործած է իր գիւտին բարիքը լայնօրէն ստուերող չարիքներ՝ միշտ մեր գրականութեան վրայ, Պէրպէրեան մը, իր անուարանալի զգայնութեամբ, ի վիճակի էր իրաւ գրագէտ մը դառնալու, Մնաց զըքուենակ soule, գրեթէ տափակ արծակագիր մը, միշտ կնիքին տակը իր վարպետին նկարագրիչներուն (ոճէ), Ուրիշ անմոռանալի չարիք՝ իր աշխարհաբարը, 1890ին իրմէ թարգմանուած **Նոր Կառկարտուն** մկրտած էին բոլորտ, Ու հիմա կը զարմանամ թէ մանուկի այդ տպաւորութիւնը ինչ դժբաւոր ապրումներու գինն էր, ինչպէ՞ս հաշտուելու մեծ մարդու գաղափարին երբ բարբարոս տողերուն մեղքը ամէն էջի կը հարուակ յայդ մարդուն յիշատակը, Արեւմտահայ գրականութիւնը Մատաթիա Գարապաշին ահա այս մեղքերը եղաւ պարտական, 1870էն մինչև 1900 մեր գրականութիւնը ծանր լուծին տակն է քերականական և տրամաբանական լուծումները մտքի մեծագոյն յաղթանակներ դաւանողներուն, Դրադէտը պարտքին տակն է ամենէն առաջ կանոնաւոր գրելը: Կ'ընդունին իմ Բայց ասիկա ընելու անընդունակ գրող, Չունին, Այն ատեն, Ո՞վ է իրագէտը, Ան՝ որ կրտսեր Ռոմանթիքներուն նման ամենէն հասարակ զոգրութիւններուն կը հաղցնէ իր վարժապետական գիտութիւնը թէ ան որ հոգիի հզօր պոռթկումներ կը նետէ իրմէ դուրս, հոգ իսկ չընկուով լեզուին, Ծիծաղելի գիրք մը պիտի չըլլա՞ր Վ.Է.Ր. Հայաստանին թէ երբեք անոր հեղինակը վիեննայի կամ վիեննա գիւտն ըրած ըլլար ն. դարու ոսկեղնիկ հայերէնին և ըստ այնմ հեղինակէր, այսինքն գրէր իր գլուխ-գործոցը, Առանձին գլուխ մը անբաւարար պիտի գար սպառելու այն խնդիրները որոնք ծագում կ'առնէն երկու Միթիթարեաններու պատմութեան հանդէպ կեցուածքներէն, Մատաթիա Գարապաշ չի պատկանիր արեւմտահայ գրականութեան հարապատ փառքերուն, բայց կը մնայ երախտառատ աշխատաւոր մը մեր մշակոյթին գիւտին նուիրուած:

ներսով հանդերձ ստեղծագործական սեռերու, ոչ նուազ քախտու-
 րոշ դեր է ունեցած այդ գրականութեան ճակատագրին վրայ: Դուք
 կրնաք մոռնալ Յաշէկէ Լաշէկէ-ալին աղ-պղպղ ոճը, որ կը
 պահէ նախնական քաղցրութիւն րայց անընդունակ է ծանր ճիւ-
 գին որուն պիտի ենթարկուի արեւմտահայ արձակը՝ Գարապաշի
 գործերով, այսինքն արամաբանական, ուղիղ, ապահով գործիքի
 մը գերին որով լեզու մը կը բարձրանայ քաղաքակրթական ար-
 ժեհափի մը: Եղիան, իր ազկազկ ուղեղով, չունէր կարողու-
 թիւն այդ փորձը հանդուրժելու (ուրիշներու լեզուին ուսասար-
 կութիւնը չենք կրնար մոռնալ այդ մարդէն): Ձերադ՝ իր լե-
 ղուն ունենալու փառասիրութիւնը պիտի ներէր իրեն, անշուշտ
 ահաւոր իր համբաւէն ու ժաւորութեամբ: Պէրպէրեան կը մնայ հեռ-
 քին վրայ Վիեննացի վարդապետին (Պէրպէրեան Գարապաշը,
 հակառակ կարգաթող մը ըլլալուն, նկատած է սորվեցնող մը,
 վարդապետ մը) որուն հզօր միտքը, պարօցներու վրայ բացա-
 ռիկ հեղինակութեամբ, Պոլսոյ մէջ իր նմանը չունի այդ օրե-
 րուն: Գրարարութեան աշխարհաբարը այդ միտքին մէկ նուէրն
 է մեր գրականութեան, Մատաթիա Գարապաշ ունայնամիտ մէկը
 չէր: Բայց Ե. Գարու առաջին կէսին գրարարը մարդ զուր տեղը
 գտած չի կրնար ըլլալ: Այդ գիւտին հմայքին ընդմէջէն անիկա
 քերականութիւններ գոտագրեց ու այդ գիւտին մասամբ հաւա-
 տարիմ մնալու համար՝ սեղծեց իր լեզուն: Որչափ մեղան, որ-
 չափ կիրք: Ողջմտութեան յաղթանակը տաղանդին յաղթանակն
 էր հմտութեան, պատրաստութեան վրայ: Չմոռնալ որ զպրօցին
 պետը չէ ձգած իր ժամանակը դոհացնող որեւէ տիրական գործ:

Պէրպէրեանի գրական զաղափարաբանութիւնը կը սնանի
 Գարապաշեանէն որ արամաբանութեան, յստակութեան, պար-
 ղութեան, հաստատ մտածումին առաքեալը եղաւ այս յատկա-
 նիշներուն հակառակներովը հարուստ, առնուազն քերթողական
 սանձագերծութեամբ մը ինքզինքը վտանգող գրականութեան
 մը մէջ: Եղիային քմայքները կը զուգադիպին Գարապաշի փոռ-
 քին: Արդ, ի՞նչ կերպով արժեւորել Պէրպէրեանի աղօսելը, նոյն
 իսկ այն պարագային երբ անոր նիւթը չի գար ուղղակի կեն-
 դանի իրականութենէն: Խօսեցայ քոնիկներէն, հուսկի-բանքերէն:
 Անոր գրական յօգուածները կարգացող մը ունէ՞ր անոնցմէ իւ-
 րացուելիք իսկութիւն: Նման հարցում մը շատ յստակ անգրա-
 դարձում պիտի ունենար երբ կատարուէր Արփիարեանին հա-
 մար: Արչակ Չօպանեան արեւմտահայ գրականութեան մէջ — ը-
 սեր եւ յաճախ — սեղծականին նիհար մթերքին ընդդէմ ըրած

է այլապէս բարեբեր վաստակ, ողիէ, գաղափարարարանութենէ : Վերը զիտել տուի որ Պէրպէրեանի ընթացքը բոլորով ամէն տղայ, երբ անցաւ արեւմտահայ գրականութեան սպասին, վըճաւարար նետեց իր վրայէն այդ մարդուն ոչ միայն շուքը, այլ ընտրեց սորվածին ճիշդ ներհակը եղող գրական ալ ուղղութիւն : Հոս կը սկսի ու կը վերջանայ մեծապայծառ իմացականութեան հէքեաթը : Տարազին հեղինակը, իր գիրքին (Ներաշխարհ) ամէն մէկ էջին վրայ կը հերքէ այդ կանոնաւորութիւնը, արամարանական պարզ ու հաստատ յօրինումը ու Եղիան իսկ խաւարի մէջ ձգող քաղքներու անձնատուր՝ մեր լեզուն կ'ենթարկէ տառապագին փորձի մը : Այլեւս զիս չի կրնար երկար իրմով գրադեցընել Պէրպէրեանի գրական գաղափարարարանութիւնը, զիտաւարարար այն պատճառով որ անիկա որեւէ հետք չէ ձգած ոչ միայն իր շրջանին ընդհանուր ճաշակին, այլեւ իր իսկ ձեռնասուն աւակերտներուն գրական յօրինման մէջ :

Դպրոց Լ Դպրոցէն հատորին մէջ տեղ մը (էջ 295) Պէրպէրեան կ'ընէ յատկանշական սահմանում մը գրականութիւն յայտարարելու : Ըստ այդ սահմանին գրականութիւնը աւելի համապարփակ տարազ մըն է, քանի որ իր մէջ կ'ընդգրկէ արուեստներ (որոնց կը պատկանին վէպը, թատրոնը, բանաստեղծութիւնը, ըստ այդ սահմանին) : Շարունակելով օգտագործել սահմանին հետեւութիւնները, անիկա ոչ միայն գերադաս կը դաւանի գրականութիւնը, այլեւ կ'երթայ առաջ անով գոհանալու, գոհացնելու ինքզինքը և շրջանի մը ցանկութիւնները : Ունենալ ըսելիք մը : Այո՛ : Այդ ըսելիքը ըսել ամենէն պարզ, տալիս անակաճ իմաստով մը : Պէրպէրեան չի տառապիր որ այդպէս ընդլայնուած սահմանէն ներս իրենց մուտքը կ'ընեն բոլոր գիտութիւնները, գրութիւնները : Եւ սրովհետեւ, իր օրերուն գեռ մեր արձակ գրականին մէջ հզօր նուաճում մը չէր իրագործած, առիկա բաւէր իրեն համար հաւատալու հակառակ վաստին — անարուեստ (այս բառը կը նշանակէ առանց արուեստի) արտայայտութեան : Մինչև 1900 մեր արձակը պահեց այս սկզբնական մղումին կնիքը : Իրապաշտները մտքէ իսկ չանցուցին արձակ ֆերուածով փառաւորութիւն, թէն իրենցմէ մէկն էր այդ մեղքը մեղի մատուցանողը (Ա. Չօպանեան) : Ու արձակ քերթուածը ըստ սահմանի խնամուած արձակ մը կը նշանակէ ամենէն առաջ :

Իրենց ժամանակին մէջ այդ գրական յօդուածները որոշ, չըսելու համար մեծղի հետաքրքրութիւններ էին : Անոնց ներսը ընթացիկ գաղափարներու մթերքը — ճիշդ ինչպէս էր պարա-

գան ճառերուն, հրաժեշտի խօսքերուն, հուսկ — բանկերուն — հաճելի անուշոգ մըն էր սերունդի մը որ գրականութիւնը չէր մատնաւորեր. իրեն մատուցուած խմբագրականները հեշտազին մարտումի պահեր կը նկատուէր. կը մտածէր այդ խմբագրականներուն խելքովը և ինքզինքը կը զգար լիռլի բաւարարուած: Յետոյ կային իրաւ փառքերը Նորայրի, Գարագաշի, Այաքնեանի. Վենետիկէն, այսինքն իր ուսման թիղմէն յազեցած Պալիսը, իրեն յատուկ խանդով ու կիրքով կը հետապնդէր Վիեննայի փառքը, առանց կասկածելու որ այդ փառքին գործաւորները խորունկ արհամարհանք մ'իայն ունէին գրականութեան հանդէպ, զայն նկատելով անլուրջ զբաղանք, ուժով գլուխնէրու անվայել: 1860ի քերթողական լուսապսակը 1890ին կը փոխարեկէր մանկամիտ տաղտալով: Վերի անուններուն սա արմատական անընկալնութիւնը արուեստէ՝ դեր մը ունի. անշուշտ սա զաւաճումին մէջ: Միւս կողմէ՝ Իրապաշտներուն ալ ելոյթը, օգային նկատուած սա բանաստեղծութեան դէմ, տաղնապը խորացուց: Պէրպէրեան, որ իմաստասիրական ախորժակներ յայտնարեցով միտք մըն էր, ու անցեր էր քերթողականին հեշտանքներէն, անշուշտ պատրանաթափ, գրական իր հասկցած կրթանքը փառասիրեց. նոյն եռանդով որ իր նկարագրին մասը կը կազմէր պարմանութեան օրերէն իսկ, եւ ունեցանք Վիեննական ոսկեղարը, Վենետիկէն ետքը: Իմ գործը չէ գատել արգիւնք մը որ հազիւ կը շահագործէ հարազատ գրականութիւնը: Բայց իմ պարտքն է այդ կրթանքով ստեղծուած գրական գառածումը ընել մատնանիչ: Յաճախ ըսեր եմ. — Արեւոյնայ Գրականութեան Համադարձքը նուիրուած է իր հարազատ մշակներուն: Անհուն հմտութիւնը Բիւզանդացիի մը, լայնածաւալ իմացականութիւնը Գարագաշի մը բարեքներ են անշուշտ բայց կը պատկանին հայ մշակոյթին պատմութեան:

Պէրպէրեան վաղուան գրականութեան զբաղէճին մէջ բերած է սանկ վերէն մասնակցութիւն մը: Չեմ ըսեր թէ հարցը արհամարհած է: Ատիկա պիտի նշանակեր սխալ Պէրպէրեան մը գատել: Բայց հարցը շահագործած է սեպհական նպատակներու, չըսելու համար փառասիրութիւններու: Իր յայտնած գաղափարները, լեզուէ, նիւթէ, խորքէ, ոչինչ ունին անձնական, քանի որ կը պատկանին արգէն իր սահմանած գրականութեան: Բայց զանոնք այդ կերպարանքին տակ ներկայացնելու բարձրամիտ պարկեշտութիւնը կը մասնէ յաջողած մարդու զգուշաւորութիւնը: Ան որ 1885ին Նորայրը խարանելու համար չէր խնա-

յամ իր բառերուն, 1900ին Արտաշէս Յարութիւնեանի յաւակնոս ելոյթը չափած է թեթեւ հեղեանքով մը, զգալով անշուշտ նորերուն խտեռանդութիւնը որով ամենէն պարզ կրթանքները անոնք կիրքի, դուպարի կը վերածեն, աշխարհի սկիզբէն իսկ Վաղուան գրականութիւնը խորքի հարց մըն էր։ Ու զայն բանաձեռներուն խտապահանջ հերքումներէն անկախաբար, ունէր իր ծոցը շատ առողջ սերմեր։ Ահա կէս դարի մօտ ժամանակ է անցեր այդ օրերէն։ Պէրպէրեանի ու զպրոցին (գրականը) մեզի ձգած քերթումները դուրս են մեր հետաքրքրութենէն։ Նոյն այդ զպրոցին արձակը գարձեալ չի շահագրգռեր մեզ աչն գլխաւոր պատճառով որ այդ արձակը ոչինչ կ'ըսէ մեր սիրտին, միտքին, ըլլալով թերեւս վայելուչ զգեստ մը միտքի մը վրայ։ Այդ Պոլիսէն մեր գրականութիւնը ժողովրդած է սակայն իրաւ գործեր։ Ինչո՞ւ այդ իրաւներուն մէջ առաջին զիծի չգային տրամաբանական, կանոնաւոր, որոշ խնամքով գործադրուած արձակին նուաճումները։ Պանդոֆթէ կեանքէն (1888) երկու երեք տարիով կը գատուի Մարքէի և Իբէն։ Անկարելի է կարդալ Պէրպէրեանի Վաղաքը (Մարքէի և Իբէ), ոչ թէ լեզուն համար, այլ խորքին անկանգնելի տափահոթեանը պատճառով։ Բայց տօնուած էք ձեր սիրտը ամուր բռնել։ Հնկուիլ, ձեռքէ ձգել սակայն Հրանդի քրտնիկները (Պանդոֆթէ կեանքէն), գրուած շատ աւելի ազկազկ, անկանոն ոճով մը։ Վաղուան գրականութեան հարցը հայեցի գրականութեան հարցն էր։ Ու մեզի պէս կեանքէն նիհար ժողովուրդի մը համար գրական կեանքին նպաստը շատ թանկագին է։ Ինչ որ Պոլսեցիները ձգած են մեզի Պէրպէրեանի գրական հասկացողութեամբը գրուած, չի պատկանիր մեր հետաքրքրութեան։ Ու Հոռի մը (Չօպանեան այսպէս կ'անուանէ Հրանդը) փշրանքներն իսկ այնքան թանկ կ'արժեարուին, ցեղային պահեստին տաղնապը տաղնապողներուն հոգին խորը։ Մուշի Դեղամը անհունապէս աւելի բարերար անուն մըն է մեր գրականութեան մէջ քան հանձարային Եղիան։ Ասիկա կրնար չկոտկածիլ Պէրպէրեան։ Բայց պարտաւոր էր զիտնալ թէ իր անկնիք արձակը, միշտ Գարագաշին տրամաբանութեամբ կառուցուած, որոշ ուժով ալ պաշտպանուած, կէս դար վերջը պիտի չունենար մեր երախտագիտութիւնը իրեն հետ, քանի որ այդ արձակը ոչինչ կը ծածկեր իր տակը մեր ժողովուրդին խոր, ստույգ ապրումներէն։ Ինք կը խոստովանի որ Գարագաշի ազդեցութեամբ Բագրատունին, Հիւրմիւզը զազրած էին իրենց հմայքէն՝ իր մտքին վրայ։ Դժբախտութիւնը հոն է որ այդ բարերար

աղդեցութիւնը իր կարգին պիտի դառնար աւելի իրաւ չարիք մը, քանի որ արուեստի զգայարանքը այդ աղդեցութեան մէջ մեկուսացուած էր գրականութիւնէն: Պէրպէրեան ունայնամիտ, անհոգի տաղաչափ մը չէր: Պէրպէրեան կեանքի որոշ հասկացողութիւն, զայն դիտելու շնորհներէ զուրկ հրապարակագիր մը չէր, ինչպէս էին Մամուրեան, Քէչեան, Կ. Փանոսեան: Դրանց կան խառնուածք անոր մէջ պահած է ինքզինքը, անշուշտ շատ նուազուն, քնացուած ըլլալով վիեննացիներուն չարաղէտ հիացումէն: Եւ սակայն այդ մարդը դժուար է դասել մեր գրականութեան երախտաւորներու շարքին: Մարդոց կեանքը կ'անցնի, գործը կը մնայ, ըսեր է մեր ժողովուրդը: Յոյց տուէք ինծի (Խաչ և Յաչէն զուրս) գրուածքը ուր հաստատուէին գրող մը ողջունձեւող տուրքեր: Ինծի չի խօսիր չեղուն, որ միշտ միջոց մըն է ու երբեք նպատակ: Ինծի չի խօսիր գրականութեան սահմանած իր դերը, երբ խօսքի տեղ անիկա ինծի պիտի տար կեանքը:

Պէրպէրեանի օտար գրականութեանց նուիրուած յօդուածները, ըսի անգամ մը, հրապարակագրական էջեր են: Ունէին իրենց շահեկանութիւնը երբ գրուեցան: Ձեռն ալ բացարձակ փոխադրումներ, ուսուցողական նպատակներու միայն սպասարկող: Ի՛նչ որ Թէրզեան փառասիրած է ընել իր յարմարեւել գեղեցկագիտական յօդուածաշարքով — որ նախ քան այս դարու սկիզբը Բազմալէկի մէջ լոյս տեսնելը, նիւթ է կազմած վարժարանային դասախօսութեանց —, Պէրպէրեան ըրած է աւելի պարկեշտ ոգիով մը: Գրականութեան հիմնական սեռերուն շուրջը այդ չափուած ձեւուած խօսքերը ազատ ալ գիտցած է պահել դասարանէն պարտադրեալ պարզեցման մը վտանգէն: Եւ սակայն այդ կտորներուն ետին գրեթէ կայ ընդհանուր դէմքը մարդոց որոնք իրենց լրագիրներուն բեմէն ամենօրեայ խօսքեր ունէին ըսելու մեր ժողովուրդին: Բիւզանդ Քէչեան մը, աւելի հին չըջանէ՞ն՝ Կ. Փանոսեան մը, Օգսէն Խոճասարեան մը, Գրիգոր Զիլինկիրեան մը տարբեր չեղան: Ձեռն տար անունը Մամուրեանին որուն մօտ հրապարակագիրը աւելի է քան գրագէտը, կրնամ ըսել նոյնիսկ՝ քան մարդը:

Պէրպէրեանի դամբանականները մեռելագրական գրականութեան չեն պատկանիր, քանի որ սեռին համար անհրաժեշտ զգայնութիւնը չէր պաշտպանած գինքը: Ամուր իր արձակ կարծես անյարմար ալ պիտի գար խօսքի կերպի մը օւր ինքնաբերութիւնը, ջերմութիւնը, դեղումը կը միան առաջնակարգ

ազդակներ, քան անդաճուած, կանոնաւոր խօսքերուն յատուկ սեղմութիւնը, հաստատ յատակի մը բարիքը: Մեռելներու վրայ խօսիլ՝ ողջ մարդեր ներկայացնելուն ամենէն բարատեսալ մէկ եղանակը կը մնայ: Ու մենք դիտենք թէ Պէրպէրեան որքան քիչ մարդեր գիտէ տալ: Այլապէս մահուան մասին հասարակ-տեղիքը, որքան ալ հեղինակաւոր բերանէ թափի մեր վրայ, մեզ կը ձգէ անտարբեր:

Տխուր այո ամէնը՝ մեծապայծառ որակուած խմացականու-թիւնէ մը:

— Մեր բախտն է տալիս:

ԺԱ.

Կրսեւ Ռումանիքները չեն գրական դպրոց մը, ինչպէս Զարբոնի Սերունդը, Իրապետները, Արուեստագետները: Չեն ալ փաղանգ մը մարդոց որոնք զաղափարներու մերձաւոր խնամու-թեամբ մը կը գործեն, հոգ չէ թէ իբարմէ հետու, բայց իրենց վաստակին գումարը կը հաշտեցնէ, կը համադրէ իրենց դէմ-քերը հասարակաց կերպարանքի մը տակ: Եւ սակայն եղան ա-նոնք արեւմտահայ գրականութեան առնուազն քառասուն տարի-ներուն, փոփոխակի բախտով մը: Անոնցմէ ոմանք ինքնակալի մը փառքովը փակեցին իրենց աչքերը:

Երբ կը փորձեմ համադրել իրենց վաստակը, կը զգամ ինքզինքս պաշարուած հազար ու մէկ նկատումներէ, նկատու-ղութիւններէ: Չունիմ տարակոյտ մերձաւոր ապագային վճիռէն որ այդ չորս բանաստեղծներուն գործերը պիտի ենթարկէ խե-ցիվճոխ: Բայց այդ ապագային վրայ շահարկութիւն մը աննե-րելի միամտութիւն մըն է: Կանխող հարիւր հօթանասունէ ա-ւելի էջերը անոնց անունով մեզի հասնող գործին ետին կը փոր-ձեն գտնել առնուազն մարդեր, որ մը օրանց ապրած, ժողո-ւրդի մը ծոցը ու ատով հաղորդ այդ ժողովուրդին տագնապ-ներուն: Ու զուք տեսաք թէ ինչ ապերախտ դեր մըն էր իմ վերցուցածը: Բացի Աճէմեանէն, որ իր ապրումներուն տափա-կութեամբը, հասարակութեամբը միայն կը պատկանէր այդ ժո-ղովուրդի մէկ պահին, միւսները չեն պատկանիր մեր ապրում-ներուն: Խաչ Եւ Յաշիւր ամէն ժամանակներու համար արժող վկա-յութիւն մըն է անշուշտ: Բայց այնքան անբաւական՝ բանաս-տեղծի դեմք մը պարտադրելու մեր գրականութեան:

Եւ սակաւ չնոյն ինչ իրաւ տպրումներու, խռովքներու, յայ-
զերու, կիրքերու հանդէս մըն էր այդ մարդոց կէս դարը։ Գոնէ
անոնցմէ ոչ մէկը չմնաց անհաղորդ բոլոր այն զգացումներուն
որոնք արեւմտահայ գրականութեան մէջ ի վիճակի էին մեծար-
ուեստ իրազօրծումներ իրրեւ կերպարանք առնելու։ Անոնցմէ
մէկը մեր գրականութեան երկու հիմնական կրթանքները — քնա-
րերգութիւն և թատերերգութիւն — իր պարմանութեան ամենա-
թաւմ օրերուն, տեսաւ իրենց ծնունդին իսկ խորհուրդին մէջ
ու բերաւ այդ խորհուրդին իր ուժերուն մատաղ աւելներ։ Ոչ
յիմար մըն էր ոչ ալ սնամիտ խաչագող մը պատանին որ երե-
սուն չմտած տուեր էր մեր առաջին ուսման թիւք քերթուածները
և խաղերը։ 1870ին Թովմաս Թէրզեան արուեստագիտական
tourné մըն ալ ունի աւելցնելիք իր տաղանդին։ Բայց արեւ-
մրտահայ գրականութիւնը այնքան նպաստաւորուած այս մար-
դէն ահա կը գթուարանայ անունն իսկ պահել կարենալու։ Վա-
սընդի մարդոց զործները կ'ապրին, իրենցմէ շատ աւելի արդար
իրաւունքով մը։ Ու Թովմաս Թէրզեանին swatwանը, բասերա-
կան repertoire, բարգմանչական խաղերը կրնային պակսիլ մեզի,
առանց վերաւորելու ոչ միայն արեւմտահայ գրականութեան
ընդհանուր կերպարանքը, այլև թերեւ յիշատակն ալ պարկիշտ
վարժապետին որ իր դասերը տալու քաղցր հոգիով, վատնեց
իր կէս դարը աս ու ան սպասին ու իրեն յանձնուած մնասը հետը
հոգ իջեցուց, առանց տոկոսի։ Ինչո՞ւ չունենայինք իրմէ գոնէ
տասնհակ մը քերթուածներ որոնց ներսը մեզի տրուէր զգալ
տրուիլ իր սերունդին, այնքան յորդ կիրքերու ինքզինքը հան-
դիսարան ընծայած։ Ինչո՞ւ ես չկարենայի, երեք քառորդ դար
վերջը իր ստեղծուելէն, Թէրզեանի մէկ քերթուածին մէջ վե-
րակազմել մեր 1870ը, ինչպէս կ'ընեմ ատիկա, այնքան հարա-
զատ ու կենդանի կերպով մը, Պէշիկթաշլեանի, Դուբեանի տա-
ղերուն վրայ։ Բացէք մեր ժամագիրքը։ Սուք անկէ Մայր Սոսք
քարոզը, զրեցէք սև տախտակին։ Այդ եօթը տուն աղօթքին
առջև ես ամենամեծ գիւրութեամբ ու բնականութեամբ պիտի
գտնէի պատեհութիւն վերարտադրելու երկու եօթը դարերը իմ
ժողովուրդին, իր տպրումներուն ամենէն խորունկներէն մինչև
իր երազանքներուն ամենէն քաղցր երկինքները։ Կարդացէք
աղօթքը այս կանխապատրաստութեամբ։ Ու դուք, իբր թէ կա-
խարդական փոխակերպութեամբ մը, իւրաքանչիւր բառի ետին
գեղ մը, լման աշխարհ մը կշտացնող իրողութիւններ պիտի
զգաք։ Ժամերով վերլուծում անբաւական պիտի դար սպառու-

լու անոնց ծածկած կեանքէն միշտ իրաւ, միշտ կենդանի թեւադրանքները: «Անեցուցանել յերկրի մերում զբաղցր բխումն արբերաց», տող մըն է այդ աղօթքէն տունէ մը: Բայց ընդարձակ այնքան՝ որ ոչ միայն մեր քրիստոնեայ մտայղացքները կը թելադրէ, այլև կ'իջնայ աւելի վարերը, դարերը ուր ամէն աղբիւրի ակունքին մէջ մենք կը հաւատայինք թէ աստուածուհիներ էին մտած, մեզի բերելու համար մայր երկրին ընդերքներէն ինչ որ կեանքին ամենէն մատչելի կերպարանքն է մեզմէ դուրս: Էջեր չեն բաւեր սպասելու համար տողին քանի մը բառերուն թելադրանքները: Փորձեցէք եղանակը կրտսեր Ռոմանթիքներէն մեզի հասած որեւէ քերթուածի ոչ թէ մէկ տունին, այլ էջերուն իսկ վրայ: Դուք տեսաք ասոր փաստը: Ու հիմա կը հասկնաք թէ չի բաւեր բան մը ըսելը: Ըսել՝ ի՞նչ ժողովուրդին հոգիէն: Ահա անհրաժեշտը: Անիրա՞ւ եմ այդքան փառաբանուած, լուսապլուսակուած գրագէտներէ այսքանն ալ պահանջելով: Չեմ կարծեր:

Ու կը մտածեմ, տրտում ու դառնացած, այդ մարդոց զգայարանքներուն, ասոնցմով սեւեռելի զեղեցկութիւններուն քանակին ինչպէս որակին: Ահա այս տողերը խոսուած պահին իսկ այդ ժողովուրդը կը պակսի մեր հաւաքական կերպարանքին: Ու կը հասկցուի թէ որքան թանկ կը զնահատեմ ես այն ամէնը որ մեզի մնացած է այդ անցեալէն, հերիք է որ այդ մնացորդացը չըլլար բաղկացած բառարանային տարրերէ: Ինչե՛ր, ինչե՛ր, ինչե՛ր ապրեցան այդ մարդերը 1850-1900 մինչև: Միայն ցեղային հաւաքական զգայութեանց դաշտին վրայ, անոնց զգայարանքները ամբաւ գումար մը ունեցան անմոռանալի բոլորներու, քանի որ հայեր էին, խառնուած ամենէն տարօրինակ մարդոց քմայքներուն, կիրքերուն, ամէն առիթով դատապարտուած իրենց գերութեան ճախճախուտքին դառնալու, նախելով ետեւէն ուրիշներու արձակ կեանքերուն, նոյն այդ հողերուն վրայ, ստեղծելով ձեռքերը կապ, ոտներուն շղթայ, զըրկուելով, մարսելով նախատինքն ու թուքը, բայց պահելով ցեղային ամենանուիրական պատգամը. — Ապրիլ:

* * *

Ատեն է որ վերջ մը տամ սա նկատողութեանց ու չաճեցընեմ իմ ցաւը, այս ամենուն կորուստէն: Արեւմտահայ գրականութիւնը դատապարտելի է թերեւս այս գետինին վրայ, իր այսքան հսկայ անբաւարարութեամբը: Բայց մեռելներու հասցէին վճիռները ոչինչ կը փոխեն:

Թովմաս Թէրզեան, երբ կը թելադրուին այս տողերը, անոնք մըն է, բառարանի բնակիչ մը: Անոր փառքը դուրս է մեր զգայնութիւնէն: Անոր գործէն մեղի գալիք յոյզին, ապրումներուն միջերքը՝ աննշանակ, չըսելու համար անգոյ: Անիկա իր ժամանակէն յայտարար է գէշ սովորութիւններու: Անով մեր գրականութիւնը չէ գացած ոչ մէկ նոր երակի: Անկէ մեր գրականութիւնը չի ժառանգած ոչ մէկ փերուած: Անոնք որ հակառակը կը պաշտպանեն՝ պարտաւոր են ցոյց տալ այդ փերուածը: Այսինքն՝ գրուածք մը ուր ինծի տրուէր հաղորդք ըլլալ առնուազն բանաստեղծին իւրայայտուկ յոյզերուն: Դուրեանի ամենէն անյաջող կտորին վրայ նման փորձ մը զիս պիտի ձգէր նկուն ու ամօթահար: Զի բաւեր պարծենալ տղերով: Իրաւ բանաստեղծի մը պարտքն է ոչ թէ լաւ տղեր ձգել մեզի, այլ ոչ մէկ գէշ տղ պրծնել չըլլալ:

Յովհաննէս Աթթեան խառնուածք մըն է որուն զլացուած է բախտը ինքզինքը իրադրութիւն: Ո՞վ հսկեր է այս տղուն խանձարուրին որպէսզի մինչև խոր ծերութիւն՝ անոր մուսանմայ հաւատարիմ անդրանիկ պատանութեան ակորթակներուն: Անոր առաջին քերթուածները բանաստեղծ մը կը թելադրեն երբ հեղինակը դեռ բաւական ասղին կը մնայ քսանին: Ու անոր վերջին քերթուածները (Ֆրանսերէններն իսկ) չեն յաջողիր գնել այդ պատանութեան ինքնաբոլս արդիւնքները: Երկու թուականներուն մէջտեղ թխմուած կէս դա՞րը: Այո՛ւ. աւա՛ղ: Ատիկա դուք գրէք մականին տակը տաղաչափութեան: Ու ցաւեցէք ինծի հետ թէ ո՞ր սատանան կնքած է այս մանուկը, այս աստիճան մերկ ու մինակ ձգելով անոր զգայարանքները որպէսզի անոնք չգողային յիսուն տարիներու տաքէն ու պաղէն, Պոլիս, Գահրիէ . . . : Աթթեանի արձակները անքաւելի մեղքեր են, առանց վերաքննութեան բախտէ մը իսկ:

Մկրտիչ Աճէմեան՝ ուրիշ ողբերգութիւն: Բայց որուն գիծերը քաջուած ըլլան նոյն մեղանէն, այսինքն կրկնեն հասարակութիւնը, սնոտիքը իր ընկերներուն: Բանաստեղծութիւնը, առաջին երկուքին համար հրապարակագրական, դասախօսական թեթեւ ակորթակներու գրգիռ մը իբրև, Աճէմեանին մօտ անորակելի զուարճութիւն մըն է: Տարիներ անոր մուսան խոր քունի մէջ ինքնզինքը մոռնալէ վերջ՝ կ'արթննայ յանկարծ ու քանի մը ամսուան մէջ կ'ածէ իր քերթուածները, կրկին քաջուելու համար իր անձակ քունին: Ո՞ր ժողովուրդին ցաւերն են այս մարդուն ցաւերը: Ո՞ր Պոլիսին խռովքները՝ այս «զմայլուած»

Պոլսեցիներն սողերովը ինկած ըլլան սեւեւման։ Հարցուցէք ու մի փնտռէք գոհացնող պատասխանը, վասնզի չկայ տօրկաւ։ Սովորութիւն մը, վարժութիւն մը այդ մարդը կը դաւանին բանաստեղծ։ Կրնայ ըլլալ որ, հարիւր տարի վերջ այս սողերէն, հետաքրքիրներ ձեռք տոնեն իր գիւտնը։


Զիջում մը Պէրպէրեանին համար, որ այդ Պոլսին ու աւսոր այդ շրջանին ամենէն հանգամանաւոր զբաղէտը կարծուեցաւ. անցաւ փառքէն և ուրացումէն (1885ին այս մարդը Պոլսոյ ամենէն շքեղ անունն է. տասը տարի վերջ՝ մօայլ համբաւ մը. շատ կը յարգեն, սակայն առանց գիտնալու թէ ինչու) քաղաքի մը, քաղաքականութեան մը, մտայնութեան մը ու ազգային հոգեբանութեան մը խորհրդանիշ մէկ կերպարանքը իրեն. ունեցաւ շատ քիչերու գիշուած apotheose մը, իր ողջուցը, իր դպրոցին իբր անդրադարձ վարձատրութիւն մը, ձեռնադրուեցով մեծ գրագէտ, անգղեզական ուսուցչապետ, մեծապայծառ իմացականութիւն։ Հարունակելը ձեզի։ 1910ին խաւարած լուսընկայ մըն էր։

1950ին Ռեթէոս Պէրպէրեան կը յուսամ թէ կ'ըլլայ գտած իր վերջնական հաւասարակշռութիւնը։ Մեր գրականութեան պատմութիւնը կը յիշէ իր անունը. կուտայ անունն ալ իր գործերուն։ Կ'ըլլայ աւելի լայն, այդ գործերէն մէկուն մէջ գտնուու համար մարդ մը, բայց ոչ ժողովուրդ մը, գործին ետին պարկեշտ բանուոր մը, բայց ոչ բացառիկ իմացականութիւնով օժտուած հզօր ուղեղ մը։ Կը տանի իր արդար փառքին այս մարդէն իր միւս գործը, կրքականը որուն շուրջ քնարական ջատագովութիւնն ալ կը ջանայ հասկնալ արդիւնքին գեղեցկութեամբը որքան գործաւորին խկական արժանաւորութեամբը։ Բայց ասոնք մարդարէութիւններ են։ Ու մարդարէն ամենէն անպէտք արարածն է գրականութեան գետինին վրայ։ Շինել աւնոր կենդանադիրը, իր փայլին և ստուերին մէջ, գործն է ըլլալու այդ մերձաւոր ապագային։ Արեւելահայերը մեծ փառքերու առաջնորդեցին զրախան ճիշդ արդիւնքով բայց զարգացական չքեղ փաստերով անուններ։ Միքայէլ Նալպանտեան անշուշտ հեղինակն է Աշոֆ Ասոֆ ոտանաւորին։ Բայց Ռ. Պէրպէրեանին Աշոֆն ալ այդ ոտանաւորին չափ հոգակ էր վայելած ու երգուած սանկ քսան մը տարի։ Այդ ոտանաւորէն զուրա Նալպանտեանի արձակները Մարգէլ Է Իրէն, կամ հողագործութեան վրայ, հողագործներու ուղղուած հոգակ-բանեք։ Կ'ըսեմ ասիկա խորունկ լրջութեամբ։ Մէկը իր ժողովուրդին համարման ու եւ

րախտագիտութեան որքան որ արժանաւոր ընծայեց ինքզինքը, մատաղ մատաղ զրկանքի սղոցէն ալիւր դարձած սիրտով մը իջնելով գերեզման. միւսն ալ զահեց իր ուժերը ամենէն ապերախտ ասպարէզին վրայ: Դրագէտ մը կար այս մէկուն մէջ որ արգիլուեցաւ ինքզինքը գտնելէ:

Կրտսեր Ռոմանթիքներէն չորսին համար ալ (վատուած Եար-Պէլը ուրիշ ողորդութիւն մը կանչուած էր ապրելու) ժամանակը տուաւ, քիչ տարբերակներով, գնահատման, հիացման, ուրացումին և արհամարհանքին հակադիր փաստերը: Հանդուրժեց Սէթեանը բայց մոռցաւ անոր վարկը ստեղծող ազգակնէրուն արժէքը: 1901ին, ձիւրենաւոր քերթողը Մասէ հանդէսին մէջ բացուած նորազէպի մրցումի մը ժիւրիէն հազիւ յիշատակութեան նօթ մը կրցաւ խելի, ոչ թէ մրցանակ ժամացոյցը: 1908ին Պալեան անունով մարդ մը զմայլանքը վճարեց Սէթեանին քերթողական փառքին: 1900ին Թովմաս Թէրզեան կը վախճար որ քիչ մը շատ խօսէին իր վրայ, քանի որ ատկապիտի շէշաէր Բիշ մը աւելի շատ իր հայութիւնը, այդ օրերուն այնքան վտանգաւոր մանրամասնութիւն մը թուրքերու վարժարաններուն մէջ Ֆրանսերէն սորվեցնող շատ համով վարժապետին վրայ: 1901ին Ռեթէոս Պէրպէրեան, ապահովարար չորսին ամենէն խելացին ու քիչ բանաստեղծը, ազգային փառք մըն է: Մեռան, սակայն, խաղաղ կամ քիչ խոով հոգիներով: Գահ էին որ հողք կը տանէին զրազէտի իրենց վարկերը անաղարտ ու կանանչ: Անոնց վրայ մեռելներու արցունքը իջաւ ու քանի մը պոսկներ չորցան անոնց շիրիմներուն վրայ: Ու կ'այցուիմ հակադիր ալ պատկերներէն որոնք զիս կը բզբտեն, կը բռնանան ու կը յառնեն իմ մտքի գաշտին, Սեակը՝ իր կոշկոճամահ գլուխովը, Զրաքեանը՝ ամայքի մէջ միս մինակը, կուրծքին տակը թուրքին կրունկէն կտարտած սիրտովը, վարուժանն ու Հրանդը, Սիւսմանթոն ու Զարդարեանը, . . . Գեղամն ու Արտաշէսը, բոլորը որոնք Կրտսեր Ռոմանթիքներէն վերջ անցան մեր գիրլին ու միտքին սպասին ու փակեցին իրենց աչքերը թշնամիին սուրին ներքեւ:

Աս ալ յապաղած ռոմանթիկմը իմ սերունդէն՝ այդ մարդոց յիշատակին:



891. 99
0 - 55

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՇԱՐՔԷՆ ՑԱՐԴ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ Ս. ԱԹՈՒՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

		ԷԶ	ՇԻԼԻՆ
Ա. ՀԱՏՈՐ — ԶԱՐԹՕՆԻՑԻ ՍՆՐՈՒՆԴ	(Տպ. 1945)	368	12
Բ. > — ՌՈՄԱՆԹԻՐՆԵՐ	(Տպ. 1954)	448	17
Գ. > — ԿՐՏՍԵՐ ՌՈՄԱՆԹԻՐՆԵՐ	(Տպ. 1954)	184	10
Ե. > — ԻՐԱՊԱՇՏՆԵՐ	(Տպ. 1952)	484	15



Դիմել՝

ARMENIAN CONVENT PRINTING PRESS

P. O. B. 4001

OLD CITY — JERUSALEM — JORDAN

ՀԱՍ Յիմարար Գիտ. Գրադ



FL0255036

2. 11. 1957

A. 7702